

ԿԱԶԳԵՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԱՆ

ԱԿՆԱՐԿՆԵՐ
ՀԱՅ ԲԱՌԱՐԱՎՐՈՒԹՅԱՆ
ՊԱՏՍՈՒԹՅԱՆ





809.198.1 - 3

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
Հ. ԱԹԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԱՐԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍԻՏՈՒՏ

ՎԱԶԳԵՆ ՑԱՄԲԱՐՁՈՒՅԱՆ

ԱԿՆԱՐԿՆԵՐ
ՀԱՅ ԲԱՆԱՐԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

(XVII դ. վերջ - XIX դ.)

A 9/801

Հատոր 1



ԵՐԵՎԱՆ - 2006

**Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Դ. Աճառյանի անվան լեզվաբանության
ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ**

ՀՏԴ 809.198.1(091):941(479.25)

ԳՄԴ 81.23 դ + 63.3(23)

Ն 205

Պատասխանատու խմբագիր՝ բանասիր. գիտ. թեկն. Ն. Գ. Ղովհաննիսյան

**Գրախոսներ՝ բանասիր. գիտ. դոկտ., պրոֆեսոր Գ. Կ. Խաչատրյան
բանասիր. գիտ. թեկն., դոց. Դ. Ս. Գյուրջինյան**

Համբարձումյան Վ. Գ.

**Ն 205 Ակնարկներ հայ բառարանագրության պատմության (XVII դ. Վերջ – XIX դ.)
(Պատ. խմբ. Ն. Գ. Ղովհաննիսյան) – Եր.: «Զանգակ-97», 2006. – 140 էջ:**

Աշխատությունը նվիրված է հայ բառարանագրության առանձին խնդիրների, ինչպես նաև տարբեր ժամանակներում երևան եկած հայերեն ոչ ծավալուն (հիմնականում՝ ծեռագիր) բառարանների ուսումնասիրությանը:

Ներկայացվում են հայ բառարանագրության արդի փուլի որոշ հարցեր, մինչև այժմ անհայտ մնացած և մասնակիորեն ուշադրության արժանացած հայերեն ոչ ծավալուն բառարաններ, որոնք գնահատության են արժանանում ոչ միայն ինքնին, այլև տվյալ բնագավառի և առհասարակ հայոց լեզվի բառապաշարի պատմության տեսակետից:

Գիրքը նախատեսված է բանասերների, բառարանագրության և հայոց լեզվի պատմության մասնագետների, հայ գրավոր մշակույթի հարցերով հետաքրքրվողների համար:

**Ն 4602020100
0003(01)-2006 2006 թ.**

ԳՄԴ 81.23 դ + 63.3(23)

ISBN 99941-1-272-4

© «Զանգակ-97» հրատ., 2006 թ.

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայոց գրավոր մշակույթի գանձարանը բավականին հարուստ է բառարաններով: Տարբեր ժամանակներից մեզ ավանդված բառարանները մի տեսակ վկայությունն են մեր գրավոր լեզվի անընդհատական զարգացման ու գործառական կատարելագործման: Բառարան կազմելը մեզանում եղել է յուրօրինակ արվեստ, որին ի սպաս են դրվել եռանդուն մարդկանց՝ հայերենագետ ազնիվ և ներիուն մտավորականների իմացական կարողությունը և ամենօրյա նվիրաբերումը: Նրանց ջանքելով մեզ են ավանդվել տարբեր բնույթի ու կառուցվածքի, զանազան շափերի ու ծավալի բառարաններ:

Բառարանագրությունը մեզանում երկար պատմություն ունի: Իսկ բառարանների ուսումնասիրությունը համեմատաբար նոր է: Այն այսօր ևս հայերենագլուխության կայլալագույն բնագավառներից է: Ընդունված է ասել, թե հայոց լեզուն սքանչելիորեն աշքի է լնկնում իր բառարանների առատությամբ, բազմազանությամբ և ճոխությամբ: Անցյալի շատ բանասերներ իհացել են հայերեն այս կամ այն ինքնատիպ բառարանով:

Բառարանագրությունը հայ լեզվաբանության ժամանակակից վիոլի կարևոր ճյուղերից է: Հայերենագետներն այլ գործերին զուգընթաց զբաղվելիս են եղել նաև բառարանագրության հարցերով: Նրանց ջանքերի շնորհիվ կուտակվել է բառարանների ուսումնասիրության ուշագրավ, օրինակելի փորձ, որի օգտագործումը կարտդ է առաջ մղել հայ բառարանագլուխությունը: Սակայն հայերեն բառարաններն ոչ լվացնելու և լսու ամենայնի են ուսումնասիրված ու մեկնաբանված: Ավելին, մեզանում այսօր ոչ բոլոր բառարաններն են, որ արժանացել են լիարժեք և բազմակողմանի վերլուծության ու գնահատության: Մյունչև այժմ շունենք հայ բառարանագրության պատմությանը նվիրված մանրամասն և լիածավալ ուսումնասիրություն, թեև եղածները մինչև հիմա դիտվել են միանգամայն բավարար: Համեմատաբար լավ է հետազոտված հայերեն ձեռագիր բառարանը:

Եղած ուսումնասիրություններն, որքան էլ հայտնի են, ընդարձակ, այլուհանդերձ, կարծում ենք, խորությամբ ու ընդգրկումով դեռևս չեն սպառում

հայերեն բառարանները: Նշենք թեկուզ այն փաստը, որ հայերեն բառարանների մի որոշակի մասը տարբեր պատճառներով դրւու է մնացել այլ ուսումնասիրությունների շրջանակից: Այնուհետև, բառարանների մեծագույն մասի քննությունը, կապված բառարանագրության պատմության կոնկրետ խնդիրների հետ, երբեմն կրում է ակնարկային քնույթ: Քիչ չեն դեպքերը, երբ այս կամ այն ծավալուն և նշանավոր բառարանի մասին համապատասխան ուսումնասիրություններում խոսվում է մեկ-երկու էջի սահմաններում:

Թվում է, թե մի տեսակ հակասություն կա վերև ասվածի մեջ: Դա այդպես չէ: Բանն այն է, որ եղած ուսումնասիրությունները մեզանում ստեղծված բառարանների ներկայացման՝ բովանդակային վերիանման, գիտական վերլուծության և ճանաչողական գնահատության մի մասն են միայն, թեկուզ մեծ մասը: Այս նշանակում է, որ մինչև այժմ երևան եկած ուսումնասիրությունները, որքան էլ աննախադեպ ու արժեքավոր, դեռևս լիովին չեն արտացոլում հայերեն բառարանների պատմությունը: Դա այդպես է, որովհետև հայ բառարանագրությունը քնորոշվում է ոչ միայն երկարատև գոյությամբ (5-րդ դարից մինչև մեր օրերը), այլև քանակի և տեսակների տարբերությամբ (դրանք բազմազան են և բազմաբովանդակ): Հայերեն բառարանն ամենապարզ, տարրական ձևից՝ տողամիջյան կամ լուսանցքային բառամեկնությունն՝ «բառարաններից» հասել է կատարյալ և համապարփակ ձևի՝ հանրագիտարան-բառարանների: Սա, անշուշտ, մշակութային մեծ ծեռքբերում է, ազգային և մարդկային քաղաքակրթության նվաճում:

Ուստի այսօր խիստ անհրաժեշտ է ամենից առաջ նկատի ունենալ առարկայական այդ հանգամանքները: Եվ մշակույթի բոլոր ասպարեզների առաջընթացին զուգընթաց անհրաժեշտ է առաջ մղել հայերեն բառարանների համապատասխան զարգացումը: Այդ նպատակով էլ, ահա, հարկավոր է ամենայն երկյուղածությամբ, հետազոտական բարեխսղճությամբ և պատասխանատվությամբ մոտենալ՝ ոչ միայն մեծ և ծավալուն բառարաններին, այլև հայերեն ձեռագիր մատյաններում, հնատիպ գրքերում, ինչպես նաև առանձին ավանդված բառարանային նմուշներին, թեկուզ դրանք լինեն մեկ-երկու էջի սահմաններում ամփոփված բառարանային «փորձեր» (տե՛ս, օրինակ, Մաշտոցի անվան Մատենադարան ձեռ. 3475, թ. 1625, էջ 284ա-285ա), հատորներ կազմող գրքեր (օրինակ՝ Ալ. Խուդաբաշյանի «Հայութերեն բառարան»): Դրանք արժանի են գիտական լուրջ հետազոտման և գնահատության:

Բառարանների գիտական ուսումնասիրությունն ամենից առաջ հետապնդում է հայերենի բառապաշտի պատմության վերիանման նպատակ: Լեզվի բառապաշտի այն ոլորտն է, որում ամբարված և ծավալված է այն կրող

Ժողովրդի պատմոթյունը։ Քանի որ ամեն մի ժողովրդի պատմոթյուն ամենասերտ կապերով կապված է ամենից առաջ իր լեզվի պատմոթյան հետ, ուստի առաջին հերթին ծագում է այդ լեզվի պատմոթյան հետազոտման, լսու որում նրա բառապաշտի քննության խնդիրը։ Վերջինիս լուծման գործում կարևոր են գրավոր հուշարձանները՝ վկանագիր կամ մատենական։ Եվ դրանց քում որչակի տեղ ունեն բառարանագրական հուշարձանները։ Ահա ինչու է առաջանում բառարանի գիտական ուսումնասիրության խնդիրը, դառնում խիստ արդիական։

Այդ նպատակի իրագործման համար հարկավոր է ծավալել գիտական անդրու աշխատանք։ Այս իմաստով թերևս անհրաժեշտ լինի գրել ոչ միայն բառարաններին նվիրված տեսական աշխատություններ, այլև կոնկրետ այս կամ այն բառարանի գիտական վերլուծությունը ներկայացնող հետազոտություն։ Հայերեն բառարանների գիտական հետազոտությունը, կարծում ենք, մեր օրերի հայերենագիտության առաջնակարգ խնդիրներից է։

Մեր այս աշխատանքը նվիրված է հայ բառարանագիտության արդիական մի քանի խնդիրների առաջքաշմանը և վերլուծությանը, ինչպես նաև հայերեն ձեռագիր և տպագիր որոշակի բառարանների առանձին քննությանն ու արժեքավորմանը։ Առանձին բառարանների քննությունը կատարված է թե՛ զուտ բառարանային, թե՛ դրանց առնչվող հայոցերի և կնճռու խնդիրների բացահայտման սկզբունքով։ Բառարանագիտական վերլուծությունը կատարվում է այն հաշվով, որ բառարանն իբրև հայ բազմադարյան գրավոր մշակույթի մի ինքնօրինակ նմուշ պարունակում է լեզվական, հատկապես բառապաշտի անփոխարինելի տարրեր, որոնք ունեն արմատական կարևորություն թե՛ հայերենի և թե՛ նրանով տարրեր ժամանակներում հաղորդակցական իր կարիքները հոգացող ժողովրդի պատմոթյան համար։ Բառարանը քննարկվում է որպես գրավոր մշակույթի առանձնահատուկ աղբյուր։

Աշխատանքի սկզբում վերլուծության են առնվում արդի հայ բառարանագրության կարևորագույն խնդիրները, որոնց լուծումը, կարծում ենք, անհետաձգելի է, որովհետև դրանցից է կախված մեր օրերում բառարանների ուսումնասիրության արդյունավետությունը, դրանցով է պայմանավորված նրա հաջողությունը։ Կոնկրետ դեպքում առաջ են քաշվում մի շարք խնդիրներ և տրվում են դրանց հնարավոր լուծումը, նշվում պարզաբանման ուղիները։

Առանձին ուշադրության առարկա են բառարանի այնպիսի տիպեր, որոնք մեզանում մինչև այժմ կա՞մ բացակայում էին, կա՞մ անվանվում էին ոչ ստույգ՝ բառարանագիտական մոտավոր անվանումով։ Այս առումով քննության են

առնված Արիստակես Համադանեցու վաճկաբառարանը (անվանումը մերն է), ինչպես նաև նորահայտ հայերեն ձեռագիր բառակազմական բառարանը:

Հայերենին առնչվող լատիներենը շատ քիչ է դարձել զուգադրական (այլ կերպ ասած՝ բարգմանական) բառարանի զուգակից մաս: Հայերեն-լատիներեն առաջին բառարանը վերաբերում է շատ իին ժամանակների (այն այստեղ առանձին ուսումնասիրության առարկա չի լինելո): Այստեղ քննության ենք առնում նաև համեմատաբար ուշ շրջանի (18-րդ դարի երկրորդ կեսի սկիզբ) հայերեն-լատիներեն ձեռագիր մի բառարան, որն, անշուշտ, ներկայացնում է որոշակի հետաքրքրություն՝ կապված այդ երկու լեզուների զուգադրական բառարանագրության (բառարանակազմության) հետ:

Առանձին հետաքրքրություն են ներկայացնում հայ-ռուսական բառարանագրության, այսպես կոչված, առաջնեկները: Մեր օրերում դրանք, կարծում ենք, արժանի են ավելի մանրամասն, խորագնին և փաստական ստույգ վերլուծության ու գնահատության՝ կապված ոչ միայն հայ բառարանագրության, այլև հայկական մշակույթի պատմության առավել խորը վերհանման արդիական խնդիրների հետ: Այս նկատառումով էլ ուշադրության առարկա են հանդիսացել մի կողմից Կղեռպատրա Սարաֆյանի և Գրիգոր Խալդարյանի մշակութային գործունեությունը, այդ բվում նրանց կազմած թարգմանական բառարանները, մյուս կողմից Եղիազար Առնջեցու ոուսերենին առնչվող հայերեն մատենակից բառարանը: Դրանից բացի Եղիազար Առնջեցին հեղինակ է մեկ այլ համառոտ բառարանի, որին ևս անդրադառնում ենք այստեղ:

Սույն աշխատանքով պարզաբանվում են մինչև այժմ անհայտ մնացած բառարանային որոշ նմուշներ (նկատի ունենք՝ ձեռագիր հայերեն-լատիներեն բառարանը, բառակազմական բառարանը, վաճկաբառարանը), այլև անդրադառնում ենք բառարանագրության պատմությանը քիչ կամ ամբողջապես անձանոք բառարանագիրների գործունեությանը (օրինակ՝ Արիստակես Համադանեցի, Եղիազար Առնջեցի):

Բառարանագիտական վերլուծությունը կատարվում է համեմատաբար մանրամասն ձևով. հաշվի են առնվում բուն և հարակից հանգամանքները՝ բոլոր դեպքերում ձգտելով հասնել նյութի սպառիչ և ամփոփ վերլուծության ու գնահատության: Այս տեսակետից հատուկ ուշադրություն է հատկացվում այն հանգամանքին, թե տվյալ բառարանն ինչ նշանակություն կարող է ունենալ մեր օրերի հայերենի ուսումնասիրության, նրա բառապաշտի համար:

Բառարանագիտական մեր վերլուծություններն ու գնահատությունները արվում են ոչ միայն փաստական նյութի, երևույթի առարկայական վերլուծության հիման վրա, այլև նկատի ենք առել բոլոր այն տեսակետներն ու

կարծիքները, որոնք արտահայտվել են տարբեր առիթներով թե՛ ընդհանուր բառագիտական աշխատություններում, թե՛ բառարանագիտական վերլուծություններում և առանձին բառարանների քննության դեպքում։ Մեզանում կուտակված բառարանագրական և բառարանագիտական վերլուծությունների փորձը բավականին հաջողված է, ուստի կարող է հիմք հանդիսանալ հետազա նոր ուսումնասիրությունների ձեռնամուխ լինելու համար։

Այս աշխատանքն այդ փորձի ըստ հճարավորին օգտագործման և ինքնուրույն հետազոտության արդյունք է։ Ինչպես ամեն մի գիտություն, այնպես էլ բառագիտությունը, հատկապես բառարանագիտությունն ունի կուտակված փորձի հիման վրա նոր աշխատանքներ կատարելու նպատակ։ Մենք հետապնդել ենք հայերեն դեռևս անձանոք կամ ոչ ամբողջովին ճանաչված ոչ ծավալուն բառարանների գիտական ուսումնասիրության, ըստ այդմ հայոց լեզվի բառապաշտի պատմության լիարժեք պարզաբանմանը նպաստելու նպատակ։

Մեր շնորհակալությունն ենք հայտնում բանասիրական գիտությունների թեկնածու Ն. Գ. Հովհաննիսյանին՝ սույն աշխատանքը խմբագրելու համար։

Եվ սիրով կը նդունենք ամեն մի անաշառ դիտողություն և առարկություն։

ՀԱՅ ԲԱՌԱՐԱՎԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅԵՐԵՆԻ ՈՉ ԾԱՎԱԼՈՒՆ ԲԱՌԱՐԱՆԵՐԸ

Հայ բառարանագրությունը հայոց գրավոր մշակույթի, մասնավորապես հայերենագիտության մի յուրաստեսակ բնագավառն է: Բառարան ստեղծելը մեզանում ունի մեծ ավանդույթ, հանդես է գալիս հայ նոր գրավոր մշակույթի գրեթե արշալույսին: Բառարանի նախնական օրինակ են հանդիսանում բնագրի այս կամ այն բառին զուգահեռ, ինչպես նաև լուսանցքներում արփող բացատրությունները («մեկնությունները»), ինչպես նաև ավելի ուշ՝ բնագրի վերջում բերվող բառացանկերը: Դրանք ի հայտ են գալիս ոչ այն ձևով, ինչպես որ ընդունված է մեր օրերում, և ինչպիսին որ պատկերացնում ենք այժմ: Ուստի նման բառային «մեկնություններն» ու բառացանկերը, այսպես կոչված, «խանձարութային» (ինկուբացիոն) բառարաններ են:

Բառարան կազմելու արվեստը հայոց մեջ գնալով անընդհատ զարգացել է և կատարելագործվել՝ հասնելով այժմյան ճակարտակին: Բառարանագիտության համար բոլոր դեպքերում՝ թե՛ ամնապարզ և թե՛ ամենածավալուն ու կատարյալ բառարանագրական նմուշները հավասարապես ուշագրավ են և արժանի նույնական մոտեցման: Այս նկատառումով էլ, ահա, կարելի է ասել, որ մեզանում բառարանագրական աշխատանքը սկիզբ է առել գրեթե նույն ժամանակում, երբ ստեղծվել են գրավոր հուշարձանները՝ ինքնուրույն երկեր և բարգմանություններ: Հայ բառարանագրության պատմության ուսումնասիրությանը նվիրված աշխատությունները հիմնական ուշադրության առարկա են դարձել հայերենի ծավալուն բառարանները, իսկ ոչ ծավալուն բառարանները կամ դուրս են մնացել ուշադրությունից, կամ քննության են առնվել առանձին դեպքերում¹:

Բառարանագրությունն ավանդաբար դիտվել է լեզվի ուսումնասիրության մի ենթաճյուղ, որ մտնում է բառագիտության բաժնի մեջ: Շիշտ է,

¹ Հ. Ամալյան, Սիցնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձանները (V-XV դդ.), Երևան, 1966: Նույնը, Սիցնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձանները (XVI-XVII դդ.), Երևան, 1971: Գ. Գասպարյան, Հայ բառարանագրության պատմություն, Երևան, 1968:

բառագիտությունը բառականին կարևոր բնագավառ է ամեն մի լեզվի բառապաշտի ուսումնասիրության առումով, սակայն հայերենագիտության մեջ այն միայն վերջին ժամանակներս է դարձել առանձին ուշադրության առարկա: Իսկ մինչ այդ բառապաշտի ուսումնասիրությունը գերազանցապես ուներ այսպես կոչված բառարանային բնույթ: Մինչև վերջերս գրեթե չունեինք ոչ միայն առհասարակ բառագիտությանը, այլև մասնավորապես բառարանագիտությանը նվիրված առանձին տեսական ուսումնասիրությունները: Այժմ այս բնագավառում խիստ ուշագրավ են ոչ միայն տարբեր կարգի գիտական հոդվածներն ու կոնկրետ աշխատանքները, այլև տեսական բնույթի հետազոտությունները²:

Մինչև նման աշխատությունների երեան գալը մեզանում բառարանագրություն ասելով, ընդ որում ավանդույթի ուժով, հասկանում էին բառարան կազմելու տեսական ու գործնական աշխատանքները: Այժմ արդյունական խնդիր է դառնում այդ աշխատանքների առանձնացումն իրարից, ընդ որում տալով դրանց գիտական բնութագիրն ու սահմանումը, պարզելով դրանց միջև գոյություն ունեցող առնչությունը: Բառարան կազմելն ըստ էտիքյան գործնական աշխատանք է, որ պահանջում է տեսական լայն պատրաստվածություն, տվյալ լեզվի բառապաշտի պատմության որոշակի իմացություն, բառարանի ստեղծման տեխնիկայի տիրապետում: Այնինչ այս կամ այն բառարանի, ինչպես նաև առհասարակ գոյություն ունեցող բառարանների գիտական վերլուծությունն ու գնահատությունը այլ բան չեն, քան բառարանագիտության խնդիր: Նման խնդիրների լուծումը պահանջում է տեսական ավելի խորը գիտելիքներ, լեզվի բառապաշտի պատմության լայն իմացություն և այլն: Այսօր առանձնացվում է բառարանագրությունը բառարանագիտությունից, և դա միանգամայն ճիշտ է ու տեղին:

Հայոց լեզվով և անցյալում, և մեր ժամանակներում ստեղծվել են զգայի բվով, ըստ որում նշանավոր բառարաններ: Դրանք այս կամ այն շափով ընդգրկելիս են եղել հայ իրականության բազմաթիվ կողմեր ու հարաբերություններ, ներկայացնում են մեր լեզվի տվյալ փուլի բառապաշտի ողջ հարստությամբ ու բազմազանությամբ: Առհասարակ բառարանագրությունը հայ գրավոր մշակույթի մի որույն, կարելի է ասել ինքնատիպ մասն է: Ինչպես ամեն մի լեզվի, այնպես էլ հայերեն յուրաքանչյոր

² Տե՛ս, օրինակ, Է. Աղայան, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Երևան, 1984, գ. Զահոնիկյան, Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, Երևան, 1990, G. Djahukian, Armenian Lexicography "Dictionnaries. An international Encyclopedia Lexicography", New York-Berlin, 1991 և այլն:

բառարան, անկախ իր ծավալից ու բնույթից, մեծ կարևորություն ունի մի ժողովրդի պատմության և հատկապես գրավոր մշակույթի իմացության գործում:

Տվյալ լեզվի ամեն մի բառարան, եթե այն կազմված է ժամանակի բառապաշարի ընդգրկմամբ, ներկայացնում է այդ նույն լեզվի առաջընթացը: Նրանում պարզորոշ արտացոլված է լինում այդ լեզուն կրող հանրային զարգացման մակարդակը, մտածողության աստիճանը, բարեշրջությունը (էվոլյուցիան) ժամանակի ընթացքում: Իսկ բարեշրջությունը անհրաժեշտ է շեշտել, որովհետև այն կատարելագործման ձգտող անընդհատ գործընթաց (պրոցես) է: Այս տեսակետից էլ պատահական չէ այն մտածողությունը, որ ժամանակին համակել էր մեծանուն բառարանագիր Ստ. Մալխասյանցին: Հայոց լեզվի բառապաշարի լվարժեք և սպառիչ ուսումնասիրության նկատառումով նա գրում է. «Բառերի միջոցով մենք կարող ենք հասկացողություն կազմել որևէ ժողովրդի քաղաքակրթության ընթացքի մասին... Եթե հնարավոր լիներ հայոց լեզվի այնպիսի մի բազմահատոր բառարան կազմել, որի յուրաքանչյուր հատորը պարունակելիս լիներ լեզվի մեջ գործածված բոլոր բառերը, սկսած ութերորդ դարից Քր. առաջ մինչև մեր օրերը, ապա 27 հատորները միմյանց հետ համեմատելիս, մենք կկարողանայինք ճշգրիտ գաղափար կազմել, թե որ դարում ազգը ինչ բանում ինչ հառաջադիմություն կամ հետադիմություն է արել և որ դարում ո՞ր ազգի ազդեցության է ենթարկվել: Բայց այսպիսի բառարան մինչև հինգերորդ դարը Քր. հետո՝ ունենալ չենք կարտդ... Հինգերորդ դարից հետո արդեն կարելի է դարից դար բառարաններ կազմել և նրանց միջոցով ուսումնասիրել ազգի քաղաքակրթության և կրած ազդեցության ընթացքը»³:

Մալխասյանցի այս երազանքն իրականացնողը մասնակիորեն եղավ ոչ այլ ոք, քան ինքը՝ առաջին հերթին, հեղինակելով «Հայերեն բացատրական բառարանը» (հի. 1–4, Երևան, 1944–1945), որն իր տեսակի մեջ նշանակալից երևույթ է հայ բառարանագրության, առհասարակ հայ գլուխոր մշակույթի բնագավառում: Այդ նկատառումն ինչ–որ շափով իրագործվեց հետագայում, երբ հրապարակ հանվեց «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանը» (հի. 1–4, Երևան, 1969–1980), ինչպես նաև է. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանը» (Երևան, 1976): Այդուհանդերձ, այս առումով դեռևս կան շատ անելիքներ: Մեծ շափերի հասնող հայ գլուխոր

³ Նշում ենք ըստ «Ստեփան Սարգսի Մալխասյանց (կենսամատենագիտություն)» գրքում (Երևան, 1962) գետնղված է. Աղայանի «Կյանքի և գիտական գործունեության համառոտ ակնարկ»–ի (էջ 14–15):

հուշարձանների (մատյաններ, վլմագրություններ, տպագիր գրքեր և այլն) գոյությունը, տարբեր դարերից ավանդված լինելը և այլն, այսօր առավել ևս դնում են հայոց լեզվի ամբողջական բառարանի ստեղծման պահանջ, մոտավորապես այնպիսին, ինչպիսին (որ տեսանք վերը) երազում և նկատի էր առնում Ստ. Մալխասյանցը (այսինքն՝ պատմականորեն, դար առ դար, մեկ առ մեկ և իմաստ առ իմաստ):

Հայ բառարանագրության ուշադրության հիմնական առարկան եղել է բառարանների կազմումը, ուստի ամենից առաջ հետապնդվել է լեզվի այս կամ այն փուլի բառապաշարի մեկնաբանությունը՝ ինքնին կամ այլ լեզուների հետ զուգադրված: Բառարանագրությունը մեզանում նախապես ունեցել է բառամեկնողական ուղղվածություն, այնուհետև ծեռք է բերել որոշակի ինքնուրույնություն՝ բարձրանալով առանձին բառարանների կազմման ու զիտական մեկնաբանման աստիճանի: Իսկ հետագայում, կարելի է ասել ամենավերջում, հայ բառարանագրության անդաստանում երևան են գալիս աշխատություններ, որոնցում հեղինակները գրադրում են նաև բառարանների տեսության հարցերով:

Առաջին տիպի՝ տողամիջյան կամ լուսանցքային բառամեկնողական բնույթի «բառարանային աշխատանքի» մասին Գ. Գասպարյանը նշում է հետևյալը. «Հայ առաջին պատմիչների և բարգմանիչների գործերում մենք հանդիպում ենք բառարանային աշխատանքների: Այդ գործիչներն իրենց աշխատություններում օգտագործված քիչ թե շատ խրթին համարված բառերը ջանացել են բազմապիսի ձևերով բացատրել, մեկնաբանել, հաճախ ստուգաբանել և դարձրել են ավելի պարզ, հասկանալի ու մատչելի»⁴: Թե դա ինչպես էր արվում, կարելի է համոզվել մեկ այլ ավելի մանրակրկիտ և հանգամանալից դիտողությունից. «Չեռագրելով գրադրուներին հայտնի է, թե ինչպես են գրվում լուսանցքի մեկնությունները: Դրվում է մի հավասարության նշան բնագրի բառի վրա և մի ուրիշը լուսանցքում, որին կից կամ որի տակը գրվում է մեկնությունը կամ բարգմանությունը: Դժբախտաբար, միևնույն նշանը գործ է ածվում՝ երբ բառը սխալ է, և պետք է այդ փոխարինենք լուսանցքի ուղիղ բառով, և կամ երբ մի բառ պակաս է, և պետք է լրացնել լուսանցքում դրվածով: Այստեղից և ահազին շփոքություններ ծեռագրերի մեջ: Շատ անգամ մեկնությունն ընդունվում է իբրև պակաս բառ և ներմուծվում է բնագրի մեջ: Լինում է և ավելի վատ: Բնագրի ուղիղ բառը դուրս է ծգվում և փոխարինվում է լուսանցքագրությամբ»⁵:

⁴ Գ. Գասպարյան, նշվ. աշխ., էջ 13:

⁵ Գ. Տեր-Մկրտչյան, Հայագիտական ուսումնասիրություններ, գիրք 1, Երևան, 1979, էջ 132–133:

Իսկ ինչ վերաբերվում է բառարանագրության տեսության հարցերին, ապա ամենից առաջ նշենք, որ այն դեռևս նոր է իր համար ուղիներ հարթում: Այսպես, ըստ ոռուս լեզվաբանության մեջ ընդունված սահմանման, բառարանագրությունը նշանակում է՝ ա) գիտություն բառարաններ կազմելու վերաբերյալ, բ) բառարանների կազմումը՝ իբրև տվյալ լեզվի բառապաշտի նկարագրություն և գ) բառարանների ամբողջություն՝ առնված տվյալ լեզվի կամ գիտության բնագավառի հարաբերությամբ⁶: Մեզանում բառարանագրությունն առանձնացվում է փոքր-ինչ այլ սահմանում: Այսպես, Է. Աղայանը գրում է, որ «բառարանագրությունը բառարաններ կազմելը և բառարանների տարբեր տիպերի կազմության սկզբունքների, եղանակների մշակումն ու դրանց գործնական կիրառությունն է»⁷: Մյուս սահմանումները հիշյալից շատ քիչ բանով են տարբերվում: Ա. Սուրիասյանը փոքր-ինչ այլ կերպ է բնորոշում բառարանագրության խնդիրը՝ սահմանման մեջ շեշտելով նաև «բառարանների տեսության հարցերը»: Ըստ այդմ «բառարանագրությունը լեզվաբանության բաժիններից մեկն է, մտնում է բառագիտության մեջ, զբաղվում է բառարանների կազմությամբ, ինչպես նաև բառարանների տեսության հարցերով»⁸:

Բառարանների տեսության հարցերը մեզանում առանձնացնում է Է. Աղայանը, ըստ որում հիշյալ աշխատության մեջ՝ կապված բառարանների կառուցվածքի, բառերի ընտրության, դասավորման, բացատրության, բնագրային վկայակոչումների հետ առնչվող կոնկրետ խնդիրների առաջքաշման և լուծման հանգամանքների հետ: Ըստ Է. Աղայանի՝ հենց դրանց հետ կապված հարցերն են կազմում բառարանագիտության ուսումնասիրության առարկան: Իսկ բառարանագիտությանը տրվում է հետևյալ բնորոշումը. «Բառարանագիտությունը ուսումնասիրում է բառարանների տարբեր տեսակները, նրանց գիտական և գործնական նպատակադրումն ու դրան համապատասխան՝ նրանց կազմության ընդհանուր սկզբունքներն, ինչպես և՝ բառարանագրության պատմությունը»⁹: Այսուհետև, Է. Աղայանը ոչ միայն առանձնացնում, այլև գիտականորեն բնութագրում է բառարանագիտությունը, իբրև երևոյթի (բառարանների)

⁶ О. С. Ахманова, Словарь лингвистических терминов, М., 1969, № 215:

⁷ Է. Աղայան, Բառարանագիտություն. – Գ. Զահովյան, Է. Աղայան, Վ. Առաքելյան, Վ. Քոսյան, Հայոց լեզու, I մաս, Ա պրակ («Ներածություն, հնչյունաբանություն, բառագիտություն, դարձվածաբանություն»), Երևան, 1980, № 512:

⁸ Ա. Սուրիասյան, Ժամանակակից հայոց լեզու («Ներածություն, հնչյունաբանություն, բառագիտություն, բառակազմություն»), Երևան, 1982, № 397:

⁹ Է. Աղայան, Աշվ. աշխ. :

ուսումնասիրության տեսական կողմ, որով այն հակառակում է գործնականին (պրակտիկ կողմին), այսինքն՝ բառարաններ կազմելուն: Ծիշտ է, այս հակառակությունը կտրականացն չի դնում է. Աղայանը, սակայն այն իր շարունակության մեջ այդպես է, և միանգամայն կարող է բնական լինել: Այլ կերպ ասած՝ եթե շարունակելու լինենք է. Աղայանի տեսական դիտարկումը, ապա իրավաճար բառարանների ստեղծման գործնական աշխատանքը, կոնկրետ բառարան կազմելը կարելի է կոչել բառարանագրություն, իսկ եղած և ստեղծվելիք բառարանների մասին կատարվող գիտական, լսու որում ընդհանուր տեսական կամ մասնավոր ու առանձին վերլուծությունները անվանել բառարանագիտություն:

Դրանք, մեր օրերի պատկերացմամբ, ունեն ոչ միայն ընդհանուր գծեր ու շփման սերտ եզրեր, այլև ծեռք են բերում որոշակի տարբերություններ, ինչպես նաև պարունակում են հետազոտական աշխատանքի որոշակի առանձնահատկություններ: Ըստ այդմ տարբերվում են բառարանագիր և բառարանագիր հասկացությունները. բառարանագիրն այն անձն է, որ զբաղվում է բառարան կազմելու գործով՝ այդ բնագավառում իրականացնելով համապատասխան գիտական աշխատանք, իսկ բառարանագիրն ուսումնասիրում և գիտականորեն վերլուծում է եղած բառարանները, մասնակցում է կազմվելիք բառարանների «պլանավորմանը», դրանց սկզբունքների ստեղծմանն ու մշակմանը: Ամեն մի բառարանագիր ինչ-որ չափով նաև բառարանագիր է, սակայն գործնականում, այնինչ բառարանագիրը կարող է ամենին ել բառարան կազմած շինել. Վերջինս առավելապես զբաղվում է բառարանի մասին տեսական և գործնական գիտելիքների ուսումնասիրությամբ, բառարանների կազմության պատմության և այլն հարցերով: Չեն բացառվում նաև այն դեպքերը, երբ այս կամ այն բառարանի հեղինակը լավագույնս տիրապետում է բառարանագիտությանը: Փաստերը ցույց են տալիս, որ հայոց լեզվի լավագույն բառարանների հեղինակները (Սխիթար Սերաստացի, ՆՀԲ-ի հեղինակներ, Մ. Զախարյան, Նորայր Բյուզանդացի, Առ. Մալխասյանց, Հ. Աճառյան, Է. Աղայան, Հ. Քարսեղյան, Ա. Սուքիասյան, Ա. Գալստյան և ուրիշներ) միաժամանակ հայերեն բառարանների լավագույն տեսարաններ են: Ավելին, Գ. Զահուկյանը, թեև չի հեղինակել որևէ բառարան (ընթացքի մեջ էր և, ցավոք, ընդհատվեց նրա ստուգաբանական բառարանի կազմումը), հայ բառարանագիտության հարցերի հմուտ ուսումնասիրողներից էր: Ուստի մեզանում քիչ չեն այն հեղինակները, որոնք հայտնի են իբրև բառարանագիրներ, կան նաև այնպիսի լեզվաբաններ, որոնք զբաղվում են բառարանագիտության տեսական հարցերով՝ առնված ոչ միայն այս կամ այն բառարանի գիտական

վերլուծության, այլև հայոց լեզվի բառարանագրության պատմության ուսումնասիրության մեջ: Վերջին տարիներին բառարանագիտության բնագավառ են մուտք գործել բոլորովին նոր մասնագետներ, ոլոնք իրենց գիտական ուսումնասիրությունների առարկա են դարձնում բառարանագիտությանը վերաբերող տեսական հարցեր¹⁰:

Բառարանագիտությունը զբաղվում է ոչ միայն բառարանների տեսական ուսումնասիրության, այլև բառարանագրության պատմության հարցելով: Այս դեպքում կարելի է ընդգծել այն հանգամանքը, որ բառարանագիտություն տերմինը գործածվում է լայն առումով: Իսկ երբ այն առանձնացվում ն հակադրվում է բառարանագրություն տերմինին, ապա այդ դեպքում բառարանագիտությունը գործածվում է նեղ, կոնկրետ իմաստով, իբրև բառարանագրագործության հականիշ, հակադիր տերմին: Իսկ երբ այն ոչ թե հակադրվում է, այլ ընդհակառակը, ընդգրկում է նաև այդ՝ բառարանագրություն բնագավառը, այսինքն՝ բառարանագիտությունը դիտվում է իբրև գիտություն, որ ուսումնասիրում է բառարանների կազմությունը, տալիս է դրանց գիտական արժեքավորումը, ինչպես նաև դրանց ստեղծման պատմությունը, վերջիններիս հետ կապված մյուս հարցերն ու դրանց լուծումը, ապա այդ դեպքում բառարանագիտությունը ստանում է լայն առումով գործածվելու հնարավորություն: Ըստ այսմ, ինչպես ամեն մի գիտություն ենթադրում է իր հետազոտության առարկան՝ մեկ ամբողջության ու ընդհանրականության մեջ, այնպես էլ բառարանագիտությունը ենթադրում է իրենը, այսինքն՝ բառարանների կազմման տեսական սկզբունքներն ու գործնական խնդիրները, դրանց կոնկրետ իրականացումն այս կամ այն բառարանը կազմելու ընթացքում և այլն:

Բառարանագիտության առանձնացումն ու գերադասումը բառարանագրությանն ամենից առաջ նշանակում է նոր մոտեցում հանդես բերել բառագիտության այդ ենթաբաժնի վերաբերյալ, այսինքն՝ ուսումնասիրության առարկայի նկատմամբ դրսերել ավելի հստակ և միանգամայն որոշակի հայեցակետ և սկզբունքներ: Այլ կերպ ասած՝ բառարանագիտությունը զբաղվում է տվյալ հանրության կյանքում երևան եկած լմբոնումների, իրույթների (ուշալիանների) և նրա լեզվում գործածաված կամ գործածվող բառերի համաժամանակյա բառարանագրման ու գիտական գնահատման,

¹⁰ Հմմտ. Լ. Ա. Տեր-Գրիգորյան, Фразеологические единицы и их отражение в словарях современного армянского языка (автореф. канд. дис.), Ереван, 1988. Փ. Գ. Մելքիսեդեկյան, Հայերեն նոր բառերը (բառարանագրական նյութի հիման վրա), (թեկնածուախոսության սեղմագիր), Երևան, 1991 և այլն:

ինչպես նաև դրանց տարածամանակյա (պատմական) վերլուծության ու արժեքավորման հարցերով:

Դժվար չէ նկատել, որ բառարանագիտական ուսումնասիրության ժամանակ ուշադրության կենտրոնում է երեք կարգի աշխատանք՝ գործնական, տեսական և պատմական, ըստ որում կենտրոնական օդակը տեսականն է: Ոնենում ենք հետևյալ բաշխումը. գործնական բառարանագիտությունը (այլ կերպ ասած՝ բուն բառարանագրությունը) զբաղվում է բառարանների կազմման աշխատանքով, իսկ տեսական բառարանագրությունը (այլ կերպ ասած՝ բառարանագիտությունը) հետաքրքրվում է կազմվելիք բառարանների սկզբունքների մշակմամբ, կազմված բառարանների գիտական վերլուծությամբ: Այնինչ պատմական բառարանագրությունը (այլ կերպ ասած՝ պատմական բառարանագիտությունը) հանդես է զալիս տվյալ լեզվով, ինչպես նաև տարբեր լեզուներով ստեղծված բառարանների պատմությամբ, դրանց պատմական առաջացման տեսական վերլուծությամբ:

Բառարանագիտական սույն դրաւյթները և ելակետային հարցադրումները, տեսական բաշխումն ու տարբերակումը լիովին վերաբերում են նաև հայերենի բառապաշարն այս կամ այն կերպ ընդգրկող բառարաններին և դրանց վերաբերյալ եղած գիտելիքներին:

Վերը կատարված տարբերակման մեջ, ինչպես նկատելի է, տեսականորեն առանձնացնում ենք ոչ միայն երկու ճյուղերը՝ տեսական և գործնական բառարանագիտությունը, այլև դրանցից յուրաքանչյուրի մեջ մտնող մասերը՝ համաժամանակյա և տարածամանակյա (պատմական) բառարանագիտությունը: Տեսական բառարանագիտությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ բառարանագիտություն կոնկրետ, նեղ իմաստով, որն այդ հատկանիշով հակադրելի է գործնական բառարանագիտությանը, այսինքն՝ բառարանագրությանը բուն, ավանդական իմաստով: Իսկ համաժամանակյա բառարանագիտությունը, անկախ իր տեսական և գործնական մասերից, ինչպես նաև նեղ կամ լայն իմաստով ըմբռնվելու հանգամանքից, հակադրելի է տարածամանակյա (պատմական) բառարանագիտությանը: Վերջինս ևս կարող է ըմբռնվել իր նեղ կամ լայն իմաստով, ինչպես նաև բուն կամ երկրորդական դերով («նշանակությամբ»):

Մինչև այժմ եղած բառարանագիտական աշխատություններում հայերեն բառարանները քննության են առնվել գերազանցապես համաժամանակյա մուտեցումով: Չունենք այնպիսի ուսումնասիրություն, որում քննության առնվելին բառարաններն իրենց զարգացման պատմության մեջ, այսինքն՝ քննությունը կատարված լիներ պատմական բառարանագիտության հայեցակետից: Այս տեսակետից պետք է նկատի առնել, որ և եղած

բառարանների տեսակավորումն ու նկարագրությունը, և մանավանդ դրանց պատմությունն ըստ էության հեռու են պատմական բառարանագիտություն կոչվելոց: Ուստի հայ բառարանագիտության մեկ այլ արդիական խնդիրն էլ հայերեն բառարանների պատմական (տարածամանակյա) ուսումնասիրությունն է: Վերջինս մեծ նշանակություն ունի հայոց լեզվի, առանձնապես հայերենի բառապաշարի պատմական քննության առումով: Իսկ դա շատ կարևոր է, որովհետև մի ժողովրդի պատմական առաջընթացի մասին հնարավոր չէ այլ կերպ ավելի լավ պատկերացում ունենալ, քան այդ ժողովրդի լեզվի բառապաշարի համապատասխան ուսումնասիրությունը և նրանից բխող եզրակացությունների հանգելը: Բառերը լեզվական այն միջոցներն են, որոնք լիովին վկայում են տվյալ ժողովրդի քաղաքակրթության առաջընթացի վերաբերյալ:

Պատմական բառարանագիտությունն առանձնանում է ոչ միայն բառապաշարի պատմությունից, որը լեզվի պատմության մի մասն է, այլև պատմական բառագիտությունից և մանավանդ բառարանագրության պատմությունից: Պատմական բառարանագիտության ուսումնասիրության առարկան տվյալ լեզվով գոյություն ունեցող բառարանների քննությունն է իրենց զարգացման ընթացքում՝ կապված ոչ միայն այն կրող հանրության գրավոր մշակույթի, այլև լեզվի բառապաշարի զարգացման հետ: Այս տեսակետից ավելորդ չեն նկատել, որ պատմական բառարանագիտությունը ծեռք է բերում ընդհանուր (մշակութաբանական) նշանակություն: Եթե ամեն մի ժողովրդի պատմական անցյալի վերհանման գործում էական նշանակություն է հանդես բերում նրա լեզուն, հատկապես վերջինիս բառապաշարը, ապա այդ բառապաշարը պատմականորեն ավանդված է լինում գրական հուշարձաններում և բառարաններում: Ուստի վերջիններս ստանում են ցանկացած գրավոր հուշարձանին համարժեք կարերություն: Եթե պատմականությունը (պատմություն ունեցող) մի ժողովրդի քաղաքակրթության վկայությունն է, ապա դրա հավաստումը կայանում է նրա պատմության ընթացքում երևան եկած բառարաններում՝ իբրև նրա պատմության խոսուն, գրավոր հուշարձանի:

Հայ բառարանագիտության արդիական խնդիրներից մեկը, զիտության նոր պայմաններից ելնելով, մեզանում տարբեր ժամանակներում ստեղծված զանազան կարգի և ծավալի բառարանների պատմական, մշակութաբանական հետազոտությունն ու գնահատությունն է: Հայոց լեզուն, իբրև յուրահատուկ բառապաշար, ամբարված է հայ մշակույթի պատմության տարբեր փուլերում ստեղծված բառարանների մեջ: Բանալ և բացահայտել այդ շտեմարանը

Աշանակում է լստ հնարավորին տեղեկանալ ու տիրապետել հայոց լեզվի անցյալի գաղտնիքներին, դրանով իսկ մեր ժողովութիւն մշակույթի գանձարանին:

Բառապաշտը յուրաքանչյուր լեզվի ամենազգայուն մասն է, այն ավելի արագ է ենթարկվում փոփոխության, քան նրա մյուս բաղադրիչները (ձեարանական, շարահյուսական և այլն միավորները): Դա տեղի է ունենում նոր բառերի առաջացման, եղածների կամ մոռացման, կամ իմաստային փոփոխության, զանազան տեղաշարժերի, օտար լեզուներից, ինչպես նաև տվյալ լեզվի նախորդ փուլերից կատարվող փոխառությունների և այլ երևույթների ձևով:

Այնուհետև, մինչև այժմ մեզանում երևան եկած բառարանագիտական ուսումնասիրությունները հիմնականում կրում են համաժամանակյա քննության բնույթ: Այդպիսին են նաև բառարանագրության պատմությանը նվիրված աշխատությունները, որոնցում առանձին-առանձին, նկարագրական եղանակով ներկայացվում են տարբեր ժամանակներում ստեղծված բառարանները: Բառարանների համաժամանակյա քննության դեպքում ուշադրության կենտրոնում են պահպում նրանց կառուցվածքի, ծավալի ու ընդգրկման, տեսակի ու կազմության սկզբունքներին վերաբերող հարցերը: Իսկ ինչ վերաբերում է միևնույն կամ տարբեր տեսակի բառարանների պատմական քննությանը, ապա վերջինս ինչ-որ չափով անտեսվում է, մովում երկրորդական պլան: Այնինչ, հայերենին առնչվող բառարանների պատմական բառարանագիտական վերլուծությունը մեծ նպաստ կարող է բերել հայոց լեզվի պատմության ամբողջական ուսումնասիրության գործին: Մյուս կողմից, նման ուսումնասիրությունը ենթադրում է ոչ միայն ծավալուն, լայն ճանաչում գտած բառարանների, այլև մինչև այժմ անտեսված ձեռագիր կամ հնատիպ, առանձին կամ մատենակից «բառարանների» (բառացանկեր, բառերի ոչ ծավալուն ցուցակներ և այլն) պարունակած բառապաշտի ուսումնասիրություն:

Մեզանում որոշակի ավանդույթ է ստեղծվել բառարանագիտական աշխատանքը կամ ուսումնասիրությունը պատկերացնել ոչ այլ կերպ, քան որևէ բառարանի առանձին, այլև մի քանի բառարանի հետ առնված պարզ նկարագրություն և գնահատություն: Մեր օրերի հայ բառարանագիտության կարևորագույն խնդիրներից մեկը, մեր կարծիքով, հայերենի բառապաշտին այս կամ այն ժամանակում, այս կամ այն չափով ու ձևով ընդգրկող ամեն կարգի (ծավալուն և ոչ ծավալուն) բառարանների ուսումնասիրությունն է՝ վերցված ոչ միայն ինքնին, այլև հայոց լեզվի ողջ բառապաշտի պատմական քննության հայեցակետից:



Հ/Ձ/80/1

Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ ի տարբերություն է. Աղայանի և Ա. Սուքիասյանի բառարանագրական վերլուծությունների, ոյտնը մեր օրերում համապատասխան աշխատանքի ուշագրավ երևոյթ լինելով հանդերձ կրում են համաժամանակյա քննության բնույթ, Գ. Զահուկյանը արևելահայ բառարանագրության հարցերին ամենից առաջ մոտենում է պատմական (տարաժամանակյա) հայեցակետից¹¹: Ավելի կոնկրետ դեպքում՝ ա) նշվում է այն հանգամանքը, որ ի տարբերություն քերականությունների արևելահայ բառարանագրությունը բավականին ուշ է հանդես գալիս (18-րդ դ. 80-ական թթ.), բ) արևելահայ բառարանագրությունը բաժանվում է երկու շրջանի՝ «կախյալ զարգացման շրջան (18-րդ դ. 80-ական թվականներից մինչև 19-րդ դ. վերջերը) և անկախ զարգացման շրջան (19-րդ դար)»¹², գ) քննվում են արևելահայ բառարանագրության կոնկրետ նմուշներ՝ ըստ նախորդ կետում նշված շրջանների (1-ին շրջանում՝ Կղ. Սարաֆյան, Հովսեփ Արցախեցի, Լ. Տիգրանյան, Ա. Հովհաննիսյան, Կ. Յաղուբյան, Ա. Տեր-Աբրահամյան և ուրիշներ, իսկ 2-րդ շրջանում՝ Հ. Դադրաշյան, Ա. Տեր-Ղազարյան, Մ. Հարությունյան, Խորելիդահայ բառարանագիրներ), դ) գրվում է, որ «արևելահայ գրական լեզվի հաղթանակը գրաբարի նկատմամբ երկար ժամանակ անհետնանք է մնում իայ բառարանագրության մեջ: Մինչև 19-րդ դ. 80-ական թվականների վերջերը իրատարակված ընդհանուր բնույթի երկլեզվյան բառարանների հայերեն մասի լեզուն գրաբարն է, թեև ոուսերեն բառերի բացատրությունների մեջ անհրաժեշտորեն տեղ է տրվում նորակազմ բառերին»¹³: Ինչպես նկատելի է տարաժամանակությունն ամենից առաջ բխում է արևելահայ գրական լեզվի գնահատության պատմականությունից՝ առնված արևելահայ բառարանների նկատմամբ: Եվ եթե դա բուն իմաստով պատմական բառարանագիտություն չէ, ապա շոշափելի ևս է նախապատրաստում նման հայեցակետով բառարանագիտական ուսումնասիրությունների ձեռնամուխ լինելու և հաջողությամբ իրագործելու համար: Ուստի Գ. Զահուկյանի վերակիշյալ ոլոտարկումներն այս առնչությամբ ստանում են առանձին կարևորություն:

Բառարանագիտական ուսումնասիրությունները, կախված ընդհանրացվածության աստիճանից, ինչպես նաև մեկից ավելի լնգուների բառարաններ նկատի առնելու հանգամանքից, բաժանվում են երկու տեսակի՝

" գ. Զահուկյան, Ներածություն. – գ. Զահուկյան, Ե. Աղայան, Վ. Առաքելյան, Վ. Քոսյան, նշվ. աշխ., էջ 73-83:

¹² Պ. Զահորեան, Աշվ. աշխ., էջ 74:

¹³ Գ. Զահորեան, նշվ. աշխ., էջ 77-78:

ընդհանուր և մասնավոր: Մասնավոր բառարանագիտությունն ընդգրկում է մեկ առանձին լեզվի բառարանների գիտական ուսումնասիրությունը: Իսկ տարբեր լեզուներով գոյություն ունեցող բառարանների մասնավոր կամ առանձին բառարանագիտական ուսումնասիրություններն ընդհանուր բառարանագիտության կարևոր նախապայման են: Ուստի կարելի է ասել, որ ընդհանուր բառարանագիտությունը զբաղվում է ոչ թե տվյալ լեզվի, այլ առհասարակ տարբեր լեզուներով ստեղծված բառարանների ընդհանուր տեսության հարցերով, ինչպես նաև մշակում է տեսական ընդհանուր սկզբունքներ, համապատասխան մեթոդներ ու հիմունքներ առանձին լեզուների բառարանների ստեղծման և գիտական վերլուծության ու գնահատության համար: Այսպես, օրինակ, Ստ. Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարան» ուսումնասիրությանը նվիրված յուրաքանչյուր վերլուծություն իր գնահատումների մեջ ամենից առաջ ունի մասնավոր բառարանագիտական արժեք¹⁴: Այնինչ տեսական նման գնահատություններն առաջնակարգ նշանակություն ունեն տարբեր լեզուներով գոյություն ունեցող, ասենք, բացատրական բառարանների ընդհանուր ուսումնասիրության գործում: Ուստի ինչպես լեզվաբանական այլ խնդիրների, այնպես էլ բառարանագրական հետազոտությունների դեպքում կարևոր է դրանց դիտարկումը ընդհանուրի և մասնավորի փոխհարաբերության մեջ: Այստեղ ևս գործ ունենք խմացաբանական այն հարաբերակցության հետ, որն առկա է լեզվաբանության մեջ առհասարակ:

Այս տեսակետից մեր օրերի հայ բառարանագիտության առաջնակարգ խնդիրներից մեկն էլ այն է, որ անհրաժեշտ է հայերեն բառարանները քննության առնել ոչ միայն մասնավոր, այլև ընդհանուր բառարանագիտության ուշադրության առարկա լինելու հայեցակետից: Նման տարբերակված ուսումնասիրությունը կարող է ապահովել այն առավելությունը, որ ըստ այդմ ավելի ամբողջական է դառնում ուսումնասիրվող երևոյթը, առաջ է գալիս հստակ և գրեթե սպառիչ պատկերացում ուսումնասիրության առարկայի վերաբերյալ:

Մինչև այժմ ուսումնասիրողների ուշադրության կենտրոնում է եղել հայերեն բառարանների մասնավոր, առանձնակի քննությունը, ըստ որում ոչ միայն հայոց լեզվի բառապաշարի առումով, այլև սոսկ հայերեն բառարանների շրջանակում: Լեզվաբանական որոշակի խնդիր է հայերեն

¹⁴ Տե՛ս Լ. Պետրոսյան, Ստեփանոս Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարան»: – «Լեզվի և ոճի հարցեր» (հոդվածների ժողովածու), հ. 1, Երևան, 1960, էջ 382–407: Ո. Ղազարյան, Նոր հայկագյան բառարանը. – «Բանբեր Երևանի համալսարանի», 1968, N2, էջ 234–238 և այլն:

բառարանների ուսումնասիրությունը թե՛ իրենց փոխհարաբերության և առնչության, դրանց պատմական զարգացման ու կատարելագործման, թե՛ եղած բառարանների տիպերի կամ տեսակների առնչությամբ, ինչպես նաև այն հաշվով, թե դրանք այլ լեզուներով ստեղծված բառարանների ինտ ինչպիսի ընդհանրություններ ունեն և ինչպիսի առանձնահատկություններ են հանդես թերում: Կարծում ենք, որ մեզանում գոյություն ունեցող բառարանագրական ուսումնասիրություններն ընձեռում են բավարար հիմքեր նման ինտագուտության համար: Այսպես, հայերեն ծեռագիր բառարանների ավելի մանրամասն ուսումնասիրությունից պարզվում է, որ մեզանում ունեցել ենք, այսպես կոչված, բառակազմական բառարանի օրինակը՝ ի դեմս 18-րդ դ. ստեղծված ոչ ծավալուն մի բառարանի¹⁵:

Հայ բառարանագիտության կարևորագույն հարցերից է հայոց լեզվի և հայ իրականության զարգացման տարրեր փուլերում երևան եկած զանազան կարգի բառարանների գիտական դասակարգումը, որի հիմքում պիտի ընկած լինի ինքնուրույն բառարանների գոյությունը: Այդ նշանակում է, որ դասակարգման ելակետ պետք է դիտել ոչ թե որիշ լեզուների բառապաշարի ընդգրկմամբ ստեղծված բառարանների տեսակավորման փորձը, այլ դասակարգումը պիտի կատարվի հայ իրականության մեջ գոյություն ունեցող, հայերենի նյութն ընդգրկող բառարանների հիման վրա: Այս կետում առանձնահատուկ ուշադրության պիտի արժանանա հայ բառարանագրության ավանդական տարրերությունն այլ լեզուներով ստեղծված բառարանների համեմատությամբ: Եվ իրոք, ամեն մի լեզվի բառարան տարբերվում է մեկ այլ լեզվի բառարանից ոչ միայն նրանում տեղ գտած բառահոդվածների «լեզվական» կողմով, այլև բառարանային արժեքով ու առանձնահատկությամբ, այս կամ այն բառարանի հետապնդած նպատակով:

Ինչպես այլ դեպքերում, հայերեն բառարանների դասակարգումը և անհրաժեշտ է իրականացնել գիտական որոշակի չափանիշների հիման վրա: Ըստ այդմ պետք է գործադրել անխափան սկզբունքներ և ըստ այդմ առանձնացնել ու դասակարգել հայերեն բոլոր կարգի բառարանները: Այնուհետև դասակարգման համար կարևոր են ոչ միայն այս կամ այն բառարանի բնույթի և կառուցվածքի ինտ կապված հարցերի հատակ ներկայացումն ու իրական պարզաբանումը, այլև հայերեն բառարանների ստեղծման պատմությունը, նրանց երևան գալու իրական պայմաններն ու արտաքին հանգամանքները, խաղացած դերն ու հետապնդած նպատակը,

¹⁵ Տես Երևանի Մաշտոցի անվան Մատենադարանի ծեռագիր № 2110, էջ 113ա-146բ:

ինչպես նաև առհասարակ հայ բառարանագրության պատմության անցած ուղին: Այլ կերպ ասած՝ հայերեն բառարանների գիտական դասակարգման համար անհրաժեշտ է թե՛ եղած բառարանների տեսության և պատմության հարցերի հստակ իմացություն, թե՛ դրանց դասդասման ու տեսակավորման, միմյանցից առանձնացնելու և իրար առնչակցելու որոշակի սկզբունքների մշակում, դասակարգման շափանիշների ընտրություն և սկզբունքային գործադրում: Հիշյալ բոլոր հանգամանքները պետք է հաշվի առնել հատկապես բառարանների դասակարգման ժամանակ, որպեսզի ըստ հնարավորին այն լինի ամբողջական և լիարժեք, զերծ մնա հնարավոր բացրողումներից և վրիպումներից: Հայ բառարանագրության առանձնահատկություններն այնպիսին են, որ դասակարգման մեջ կարող են թերացումների տեղիք տրվել դասակարգումը դարձնել ոչ լիարժեք, խոցելի: Դասակարգման բազմակողմանիության և լիարժեքության երաշխիքը բոլոր հանգամանքների և բառարանային առանձնահատկությունների ընդգրկումն է:

Հայ բառարանագրության մեջ մինչև այժմ եղած դասակարգումները կատարվել են ըստ տեսակի, այսինքն՝ այդ անվան տակ խմբավորվել են հայերեն գրեթե բոլոր ծավալուն բառարանները՝ տալով դրանց սեղմ բնորոշումներ ու բնութագրեր: Այդ նշանակում է, որ մինչև այժմ չունենք հայերեն բառարանների գիտական, բազմակողմանի դասակարգում: Ըստ դեպքերում դասակարգումը հանգեցվում է տարբեր խմբերի մեջ բառարանների բվարկմանն ու մատնանշմանը: Ըստ տեսակի դասակարգումը տարածված հիմունք է ոչ միայն հայերեն, այլև այլ լեզուներով ստեղծված բառարանների համար: Այսպես, օրինակ, ոուս լեզվաբանության մեջ կարևոր տեղ է հատկացվում դրան¹⁶: Ուուսերեն բառարանների դասակարգման օրինակով էլ շատ դեպքերում կատարվում է հայերեն բառարանների դասակարգումը, թեև միաժամանակ հաշվի են առնվազ նաև հայերեն բառարանների առանձնահատկություններն ու բնութագրական կողմերը:

Հայերեն բառարանների դասակարգման հանդիպում ենք Է. Աղայանի՝ վերը հիշված աշխատություններում, ինչպես նաև Հ. Պետրոսյանի հայերենագիտական բառարանում¹⁷: Ավարտելով բառարանագրության և բառարանագիտության տեսական բնորոշմանը նվիրված հատվածը՝ Է. Աղայանն իր ուսումնասիրության մեջ տալիս է կարևորագույն բառարանների տեսակների առանձնացումն ու սեղմ բնութագիրը, ամենից առաջ նշում է երկու

¹⁶ О. С. Ахманова, Указ. соч., с. 420 – 421.

¹⁷ Հ. Պետրոսյան, Հայերենագիտական բառարան, Երևան, 1987:

տիպ, այն է՝ հանրագիտական և բանասիրական կամ լեզվաբանական¹⁸: Համեմատաբար քիչ տեղ է հատկացվում հանրագիտական բառարանների բնորոշմանը, ոլովիետև նման բառարաններին առհասարակ սակավ են մեզանում: Իսկ բանասիրական կամ լեզվաբանական բառարանները վերաբաշխվում են մի քանի խմբի՝ բացատրական, բարզմանական կամ գուգաղրական, բառագիտական և տեղեկատու-գործնական: Նշենք, որ բառագիտական բառարան է համարվում ստուգաբանական բառարանների տիպը, որտեղ և բնորոշվում է Հ. Աճառյանի հայտնի բառարանը: Այնուհետև, տեղեկատու-գործնական բառարանների մեջ կատարվում է վերաբաշխում՝ առանձնացնելով ևս մի քանի խումբ՝ հոմանշային, հեղինակային (կամ համարբառաներ), ուղղագրական-ուղղախոսական և հանգաբառարաններ (կամ հանգարաններ):

Ա. Սութիասյանը բառարանների տեսակներն անվանում է տիպ, և դասակարգումը կատարում է համեմատաբար ավելի մանրամասն ձևով: Այստեղ առանձին տիպերի ներսում ներկայացվում են հայերեն առավել աշքի ընկնող բառարանները, և ամեն անգամ նշվում են դրանց բնոլուշ առանձնահատկությունները, ընդգծվում այդ բառարանների խաղացած դերը հայոց լեզվի և առհասարակ հայ մշակույթի զարգացման ու առաջընթացի գործում¹⁹: Ծիշտ է, թերվող առանձնահատկությունները լրիվ և սպառիչ չեն, սակայն ներկայացնում են բառարանների էական կողմը, դրանց բուն էությունը: Ուշագրավ է նաև այն իրողությունը, որ Ա. Սութիասյանն առանձին-առանձին քննարկում է այն առնչությունները, որ հանդես է թերում բառարանագրությունը բառագիտության, իմաստաբանության, ստուգաբանության և ոճաբանության հետ²⁰: Այս դասակարգումը ևս, ոչ անկախ է. Աղայանի դասակարգումից, սկսվում է երկու տիպի առանձնացումով՝ հանրագիտական և բանասիրական կամ լեզվաբանական: Թե՛ մեկ և թե՛ մյուս տեսակի մեջ առանձնացվում են նաև ենթատեսակներ՝ իրենց հատուկ բնութագրումներով և համապատասխան օրինակների (բառարանային նմուշների) թվարկումով: Ծիշտ է, հանրագիտական տիպի բառարանների մի մասը, կարծում ենք, թերևս ոչ ամբողջովին է այդպիսին, սակայն ներառում է բանասիրական տիպին բնորոշ հատկություններ, ուստի չի խանգարել, որ նման բառարաններն առավելապես դիտվեն հանրագիտական տիպի մեջ: Այսպես, Ա. Սութիասյանը, նկատի առնելով Հ. Աճառյանի «Հայոց անձնանունների բառարանի» (իհ. 1–5, Երևան,

¹⁸ Է. Աղայան, նշվ. աշխ., էջ 113–124:

¹⁹ Ա. Սութիասյան, նշվ. աշխ., էջ 401–436:

²⁰ Ա. Սութիասյան, նշվ. աշխ., էջ 397–400:

1942–1962) այս դեպքում հանդես եկող Երկակի բնույթը, գրում է. «Այն կազմված է բանասիրական–լեզվաբանական և պատմական–հանրագիտական տեսանկյունով և, փաստորեն, իրենից ներկայացնում է բանասիրական (լեզվաբանական) և հանրագիտական բառարանների կազմության սկզբունքների միավորմամբ ստեղծված բառարանի մի նոր տիպ, որտեղ բերվում են հայերեն անձնանունների թե՛ լեզվաբանական–ստուգաբանական և թե՛ նրանց պատմական–մատենագիտական մանրամասն, անհրաժեշտ և կարևոր տվյալներ, տրվում բնութագրումներ»²¹: Ստացվում է այնպես, որ հայերենում զանազանվում են ոչ միայն սովորական տիպերի մեջ մտնող, այլև այսպես կոչված առանձին, միջին տիպ ներկայացնող «առանձնատիպ» բառարաններ:

Այնուհետև, բանասիրական (կամ լեզվաբանական) տիպի բառարանները Ա. Սուքիասյանը վերաբաշխում է «երկու մեծ խմբի մեջ՝ միալեզվյան» և «բարգմանական»²²: Առաջին ենթատիպի բառարանների մասին հակիրծ խոսելուց հետո մեկ առ մեկ նշվում ու բնորոշվում են բացատրական, զավառական (բարբառային), օտարազգի բառերի, դարձվածաբանական, հեղինակային, իոնանիշների, մասնագիտական, ստուգաբանական, ուղղախոսական–ուղղագրական (ենթատիպ ներկայացնող) բառարանները, ինչպես նաև հակադարձ բառարանները (կամ հանգարառարանները): Համեմատաբար քիչ տեղ է հատկացվում բարգմանական բառարաններին, անկախ այն բանից, որ դրանք մեզանում մեծ քիվ են կազմում, ինչպես նաև հանդես են բերում ակնհայտ տարրերություններ, կազմված են հայերենի հետ ամեն անգամ զուգայրվող բազմաթիվ, տարբեր կարգի լեզուների ընդգրկումով և այլն: Եվ ի հակադարձություն դրա՝ բավականին լայն շարադրանքով խոսվում է բացատրական բառարանների մասին: Եվ վերջապես, հարկ է նշել որ Ա. Սուքիասյանը որոշակի ուշադրություն է դարձնում բառարանների ստեղծման ժամանակներին՝ կապված մեզանում գրաբար թե աշխարհաբար, հնատիպ և նոր հրատարակությամբ բառարանների գոյության հետ²³: Դա, ինչ խոսք, օրինակելի և խրախուսելի մոտեցում է, որ անհրաժեշտ է հաշվի առնել հայ բառարանագիտության, առանձնապես բառարանների դասակարգումների ժամանակ:

Թե՛ Է. Աղայանի և թե՛ Ա. Սուքիասյանի աշխատություններում, այսպիսով, լայն տեղ է հատկացվում բառարանների դասակարգմանը՝ հատկապես դրանց

²¹ Նույն տեղում, էջ 403:

²² Նույն տեղում, էջ 408:

²³ Նույն տեղում, էջ 409–412:

տեսակավորման, վերլուծության և բնութագրման հետ կապված: Եվ եթե նկատի ունենանք, որ հեղինակների բուն խնդիրը եղել է ոչ թե բառարանների գիտական վերլուծությունը և դասակարգումը, այլ դրանք ուշադրության են առնվում այնքանով, որքանով բառարանագրությունն առհասարակ կազմում է բառագիտության մի ենթարաժինը, ապա արվածը միանգամայն բավարար է, նույնիսկ շատ նպաստավոր դեր ու նշանակություն է ստանում այդ ուղղությամբ հետագա աշխատանքներին օժանդակելու, ուղղություն ցույց տալու առումով: Հիշյալ դասակարգումներն, իհարկե, խաղացել են իրենց այդ դերը, և դա որոշակիորեն նկատելի է հետագա աշխատություններում:

Վերը շարադրվածից հստակ կերպով նկատելի է դառնում, թե մեզանում որքան մեծ ջանքեր է ի սպաս դրվել բառարանագրության, լայն իմաստով՝ բառարանագիտության զարգացման ուղղությամբ: Ըստ այդմ պարզվում է, թե որքան մեծ են ձեռքբերումն ու նվաճումը, որքան որոշակի է ներդրումը հայ գրավոր մշակույթի ուսումնասիրման բնագավառում: Եվ այդ ամենը, կարելի է ասել, միանգամայն բավարար է հատկապես նոր հետազոտությունների ձեռնամուխ լինելու առումով:

Այդուհանդերձ, մինչև այժմ հայերեն ոչ բոլոր բառարաններն են, որ արժանացել են առանձին, մանրամասն՝ քննության: Մինչև հյումա տարբեր առիթներով խոսվել է հայերեն մեծածավալ բառարանների մասին: Իսկ այսօր խիստ անհրաժեշտ են ոչ միայն նման ծավալի, այլև մեզանում տարբեր ժամանակներում ստեղծված այլ կարգի, հատկապես ոչ ծավալուն բառարանների ուսումնասիրությունն ու արժեքավորումը: Վերջիններս ևս պարունակում են հայոց լեզվի բառապաշտի որոշակի, անզերագնահատելի տվյալներ: Այս տեսակետից առավել ևս մեծանում է արդի բառարանագիտության անելիքը: Նման բառարանների ուսումնասիրությամբ ավելի են ընդլայնվելու հայերենի բառապաշտի, դրանով իսկ հայ գրավոր մշակույթի մասին մեր լեզվական պատկերացումները:

Այնուհետև, փոքրիշատե անտեսվել է եղած, նույնիսկ առանձին ուշադրության արժանացած բառարանների, այսպես կոչված, զուգաղիք կամ առնչակից ուսումնասիրությունը: Այսպես, հայերեն ծավալուն բառարանների լեզվական իրողությունների հիմնական մասը կրկնվում է և փոխանցվում բառարանից բառարան: Իսկ ոչ ծավալուն բառարանների շատ իրողություններ այդպես էլ տեղ չեն գտել հայերեն ընդարձակ բառարաններում՝ առհասարակ: Ծավալուն բառարանների հեղինակները թերևս չեն ունեցել լայն հնարավորություն, որպեսզի ընդգրկեին հայերեն գրավոր հուշարձանների մեջ տեղ գտած ողջ բառագանձը, այլև տարբեր ձեռագրերում անփոփոխ մատենակից բառարանների լեզվական տվյալները: Դա հիմնականում

բացատրվում է նրանով, որ հայերեն ծեռագիր և տպագիր, այլև վիմագիր հուշարձանները բավականին շատ են, զրեք անշափելի ու անընդորկելի, սկսված տարբեր վայրերում:

Այսպես, այնպիսի մի լնդարձակ աշխատանք, ինչպիսին է «Նոր բառացիք հայկացյան լեզվի» (Վենետիկ, հի. 1-2, 1836-1837) բառարանը, որի հեղինակները ճգտել են ըստ հնարավորին ամբողջական ձևով ընդգրկելու հին հայերենի բառապաշարը (5-12-րդ դդ. բառապաշարն անխտիր, իսկ մինչև 18-րդ դ.՝ ընտրովի), այնուամենայնիվ ունի լուրջ բացքողումներ, որոնք վերաբերում են ոչ միայն բառարանի հեղինակներին անհայտ կամ անմատչելի ծեռագրերին, այլև նույնիսկ իրենց ծեռքի տակ եղած և օգտագործված գրավոր աղբյուրներին²⁴:

Այս բառարանի վերաբերյալ հարկ ենք համարում նշելու, որ հայերենագիտության մեջ լայն տարածում է գտել այն կարծիքը, թե հեղինակները ստիպված են եղել զգալիորեն կրծատելու բառարանը, որպեսզի հնարավոր լիներ իրատարակելու: Այնինչ այդ բառարանի ավելի հանգամանալից քննությունը, ինչպես նաև բառարանի հեղինակներից մեկի և վերջինիս տպագրությունը հովանավորող Հ. Տյուզյանի միջև այդ առիթով եղած նամակագրությունից պարզվում է, որ հեղինակները մտադիր են եղել ոչ թե կրծատելու բառարանը (ծեռագիր շուրջ 12 հատոր կազմող) բառահոդվածների հաշվին, այլ դիմելու տեխնիկական, հատկապես տպագրական հնարավոր միջոցների գործադրման: Ուստի տեղին է նշել, որ բառարանի երախտավոր հեղինակներ Գ. Ավետիքյանը, Խ. Սյուրմելյանը, մանավանդ Մ. Ավգերյանը (բառարանի իրատարակման ժամանակ նախորդ երկուսը վախճանված էին) մեծ ջանքեր են գործադրել ոչ միայն բառարանը կազմելու, այլև ծեռագիրը ոչ նյութական կորուստների (բառահոդվածների սեղմում կամ կրծատման), այլ իրատարակչական միջոցների հմուտ օգտագործմամբ լույս ընծայելու համար:

²⁴ Այսպես, Հովհաննես Օձնեցու այն երկերը, որոնք օգտագործվել են հավաքական աշխատանքում, պարունակում են զգալի թվով բառեր, որոնք դրսություն են մնացել բառարանից: Տե՛ս Հովհաննես Օձնեցի, Երկեր, զրաբարից բարգմանությունը, առաջարանը և ծանոթագրությունները Վ. Համբարձումյանի, Երևան, 1999, էջ 257-310:

ԱՐԻՍՏԱԿԵՍ ՀԱՄԱԴԱՆԵՑՈՒ ՎԱՆԿԱՔԱՌԱՐԱՆԸ

Սույն աշխատանքը հայ բառարանագրության պատմության մեջ մինչև այժմ չի արժանացել որևէ ուշադրության, որովհետև այն մեզ է ավանդվել առանձին ձեռագիր վիճակով և ունի բավականին սահմանափակ ծավալ: Եվ քանի որ հայ բառարանագրության պատմությունն ընդգրկում է հիմնականում ծավալուն և լնդիանուր ճանաչում գտած բառարանների հետ կապված հարցերի քննարկումները, ուստի նման բառարանները կարող են դուրս մնալ հետազոտողների ուշադրության շրջանակից: Իսկ դա բոլորովին չի նշանակում, թե այս և մյուս կարգի փոքրածավալ բառարանները չունեն բառարանագիտական որևէ արժեք և ոչ մի նպաստ չեն բերում հայոց լեզվի պատմության ամբողջական ուսումնասիրության գործին:

Արիստակես Համադանեցին քիչ հայտնի անուն է հայ գրավոր մշակույթի, հատկապես հայ բնագրագիտության (տեքստաբանության), առավել ևս հայ բառարանագրության բնագավառում: Սակայն եղած սակավ տվյալների հիման վրա ել տեղեկանում ենք, որ նրա ձեռքով են գրվել և մեզ են ավանդվել երկու ձեռագիր՝ Երևանի Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագիր (այսուհետև՝ ՄՄՁ) № 2301-ը և № 5040-ը: Նա հայտնի է որպես ստացող (այսինքն՝ ձեռագրի պատվիրատու, հանձնարարող՝ ձեռագրի ստեղծման): Տվյալ դեպքում Արիստակես Համադանեցին ինքը միաժամանակ իր գրած մատյանների ստացողն է: Այդ ամենից բացի, որն այստեղ ամենակարևորն է, նա հեղինակն է այդ ձեռագիր աշխատությունների:

Նա կազմել է նաև մի փոքրիկ բառարան (բառացանկ կամ «բառագրքույկ»), որը գետեղված է իր գրչագիր մատյաններից առաջինում: Դատելով հիշյալ ձեռագրերի ժամանակից՝ Արիստակես Համադանեցին 18–19-րդ դդ. ապրած անձնավորություն է, ըստ այսմ ել հիշարժան անուն հայ մատենագրության և գրավոր մշակույթի պատմության բնագավառում:

Երևանի Մաշտոցի անվան Մատենադարանի «Յուցակ ձեռագրաց»-ում (հ. 1, էջ 771) № 2301 ձեռագրի վերաբերյալ տեղեկանում ենք, որ ժողովածու է, որում գետեղված են Տերոն և Արիստակես Համադանեցի գրիչների արտագրած գործերը: Դրանք ըստ էության երեքն են (թեև նշվում է ևս մեկը): «Մասն

տրամաբանության», 17-րդ դարի վիլլսուփա և քերական Սիմեոն Զուղայեցու «Քերականութիւն» և «Տրամաբանութիւն» աշխատությունները: Նշվում է նաև մեկ այլ գործ՝ «Արխտակիսի Համադանեցոյ Աստիճանք բառից»: Զեռագիրը թվագրվում է 1699 թ., իսկ վայրը՝ Համատան, ունի երկու և ավելի հիշատակարան:

Մատենադարանի մյուս՝ ձեռագիր № 5040-ի մասին հիշյալ ձեռագրացուցակում նշվում է հետևյալը. այն «Մաշտոց» է՝ գրած 1705-1706 թթ.: Գրչության վայրը՝ Համատան, գրիչ և ստացող՝ Արխտակես Համադանեցի, ունի մի բանի հիշատակագրություն:

Երկու ձեռագիրն ել ծավալով բավականին մեծ են, պարունակում են երկնիշ 303 և 179 էջ:

Այս տվյալները որոշակի պատկերացում են տալիս Արխտակես Համադանեցու, ինչպես նաև նրա գործի վերաբերյալ: Այստեղ հիմնականում նշված է գործերից մեկի՝ «Աստիճանք բառից»-ի և վերջինիս հեղինակի մասին: Մատենադարանի «Ցուցակ ձեռագրաց»-ի տվյալների համաձայն այդ գործի հեղինակը Արխտակես Համադանեցին է:

Դա է հավաստում նաև մեկ այլ աղբյուրագիտական վկայություն: Հ. Անասյանը «Հայկական մատենագիտություն» գրքում այս հեղինակի և նրա «Աստիճանք բառից» երկի մասին հետևյալն է գրում. «ԺԷ դ. քերական: Կազմել է մի բառարան՝ բաժանված վեց մասի, որոնց մեջ բառերը խմբավորված են միայն լրաց վանկերի քանակի՝ այբբենական կարգով: Աշխատությունը խորագիր չունի, բայց ելենով նրա բնույթից՝ կարելի է այն անվանել «վանկային բառարան»: Սահմանված լինելով գրագիտություն սովորողների համար վանկատման վարժություններին օժանդակելու՝ այս բառարանը գերազանցապես ունի մասնավարժական մեթոդական նշանակություն»²⁵:

Ասենք, որ այս հակիրճ բնութագրի մեջ միանգամայն ճիշտ են որոշված բառարանի բնույթն ու տեսակը («տիպը»), ինչպես նաև բուն նպատակը: Անվանի մատենագետը հեղինակին համարում է քերական, որը թերևս պիտի հասկանալ լայն լիմասոնվ, այսինքն՝ ելենով այն բանից, որ նա հեղինակել է քերականական-բառարանագրական աշխատանք: Ավելի ստույգ լինելու դեպքում հեղինակը պիտի կոչվեր բառարանագիր, որովհետև հեղինակել է կոնկրետ բառարանային աշխատանք:

Այնուհետև, ավելի հստակ դարձնելու համար այն, թե բառարանն ինչ բնույթի է, գուցե հարկ կա անվանումը փոխելու: Թերևս կարելի է այն կոչել

²⁵Հ. Անասյան, Հայկական մատենագիտություն, հ. 2, Երևան, 1976, էջ 767-768:

«վանկակազմական բառարան» կամ որ ավելի համարձակ կարող է հնչել՝ «վանկաբառարան» (հմնտ. նոր ժամանակներում կազմված ունենք «հանգաբառարան»)²⁶: Նախընտրելի է երկրորդը: Ուստի կարելի է ասել, որ մեզանում հայերեն վանկաբառարան կազմելու առաջին փորձը, որքանով քոյլ են տալիս գրավոր աղբյուրների տվյալները, պետք է համարել Արիստակես Համադանեցու սույն բառարանը:

Այդ բառարանը ծավալով այնքան էլ մեծ չէ, ընդամենը՝ 11 էջ (տե՛ս հիշյալ ձեռագիր, էջ 167թ – 172թ): Նման մի բառարանի մասին, անշուշտ, չի կարելի գնահատության խոսք ասել միայն ծավալը նկատի առնելով: Այն արժանի է որոշակի դրվատանքի բոլորովին այլ տեսանկյունից: Ամենից առաջ իր բնույթով: Սույն բառարանի հիմքում դրված է բառի վանկատման սկզբունքը: Նրանում խմբավորվում են տարբեր վանկեր պարունակող բառերը: Ըստ այդմ գործ ունենք ծավալով սեղմ, սակայն բնույթով ինքնատիպ, յուրատեսակ մի բառարանի հետ: Բառարանն այսօր ուշագրավ է հատկապես իր այդ բնույթի տեսակետից:

Արիստակես Համադանեցու վանկաբառարանն ունի հետևյալ կառուցվածքը: Այն ներկայացնում է վեց բաժին, այսինքն՝ առանձին բաժիններ են մեկից մինչև վեց վանկ ունեցող բառերը: Այդ բաժինները անվանվում են նկարագրական եղանակով: Օրինակ, առաջին բաժինն ունի հետևյալ վերնագիրը՝ «Առաջներորդ աստիճան բառից, որք լինին ի միտյ վանգէ» (էջ 167թ), երկրորդը՝ «Երկրորդ աստիճան բառից, որք լինին ի յերկուց վանկից» (էջ 169ա) և այլն: Դժվար չէ նկատել, որ Արիստակես Համադանեցին բաժինների բաշխումը կատարում է ըստ բառերի վանկաբանակության հատկանիշի, որպեսզի ըստ այդմ էլ ընդգրկի կամ ներկայացնի համապատասխան քանակով բառեր²⁷: Ուստի բառարանում առաջին «աստիճանի» բառերը գրադարձնում են էջ 167թ–169ա, երկրորդը՝ էջ 169ա–170թ, երրորդը՝ 170թ–171թ, չորրորդը՝ էջ 171թ–172ա, հիգերորդը՝ էջ 172ա–172թ, վեցերորդը՝ էջ 172թ:

Յուրաքանչյուր բաժնում բառերը թվարկվում են նուրբ այբբենական սկզբունքով, ըստ որում ամեն անգամ ձեռագրի ընդհանուր տեսքից տարբերվում են (այլ բանագով են գրված) այբուբենի տառերը: Դրանցով էլ ըստ էության մատնանշվում է բառերի խմբավորումը տվյալ բառի տակ: Նկատելի է այն, որ առաջին բաժնում այբուբենի տառերը գրված են

²⁶ Տե՛ս Հայոց լեզվի հանգաբառարան, Երևան, 1967:

²⁷ Թերևս դա է եղել պատճառը, որ բառարանի ընդհանուր վերնագիր է դրված «Աստիճանը բառից» անվանումը: Տե՛ս «Յուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի», հ. Ա, Երևան, 1965, էջ 771:

անվանումներով (օրինակ՝ այբ, բեն, գիմ, դա, եչ, զա և այլն), մյուս բաժիններում դրանք բերվում են սուկ տառերով (օրինակ՝ ա, բ, գ, դ, ե, զ և այլն): Դրանք, ինչ խոսք, ունեն դիլակտիկ-մեթոդական կարևորություն, որը հետապնդում է հատուկ նպատակ:

Բառարանում բաժինների ծավալային համամասնությունը գրեթե պահպանված չէ, այլ կերպ ասած՝ դրանցում ընդգրկված են ոչ հավասարաշափ քանակով բառեր: Եվ դա միանգամայն բնական է, եթե նկատի առնենք հայերեն բառերի վանկերի քանակությունը, կամ այլ կերպ ասած՝ բառակազմական բաղադրվող, «նախագաղափար» (ելակետային) հիմքերի քանակական տարրերությունը: Հայերենում առհասարակ հայտնի իրողություն է, որ առաջին աստիճանի հիմքերն ավելի պակաս վանկեր են ունենում, քան հաջորդ՝ երկրորդ, երրորդ, չորրորդ և այլն աստիճանի հիմքերը (օրինակ՝ բարի, բարեկամ, բարեկամություն, քաղաք, քաղաքական, քաղաքականություն, հեռու, հեռագիր, հեռագրասյուն, հեռագրասյունաշար և այլն): Սա ոչ այքան առանձին որքան ընդհանուր բառակազմական երևոյթ է: Ավելին, բառակազմական հիմքերի ամբողջականությունից կարելի է հստակորեն որոշել դրանց կազմության համաժամանակյա կամ հստակորեն որոշել դրանց կազմության համաժամանակյա կազմակերպությունը: Տարածամանակյա (պատմական) կազմակերպվածությունը, բաղադրությունը: Այսպես, վերը բերված օրինակներում համաժամանակյա կտրվածքում, հայերենի տվյալ փուլում (ասենք ժամանակակից հայերենում), ունենք անտրոհելի, ամբողջական ելակետային («նախագաղափար») բարի, քաղաք և հեռու բառերը, որոնց հաջորդում են բարեկամ, քաղաքական և հեռագիր հիմքերը, հաջորդ քայլում ունենք բարեկամություն, քաղաքականություն բառերը, որոնք այդ շարքում վերջնական են, իսկ մյուսը՝ հեռագրասյուն, որը բառերը, որոնք այդ շարքում վերջնական են, իսկ մյուսը՝ հեռագրասյուն, որը վերջնական չէ, այլ հիմք է հանդիսանում հեռագրասյունաշար բառի համար: Ուստի բառակազմորեն ելակետային միավորներից որքան գնում ենք դեպի աջ, այդքանով կազմում ենք նոր բառեր, ըստ որում նախորդը դառնում է հիմք հաջորդի համար՝ ըստ բառակազմական հնարավորության իրականացման աստիճանի: Այնինչ, տարածամանակյա (պատմական) կտրվածքում ելակետային («նախագաղափար») հիմքերը, իբրև առանձին բառեր, տրոհելի են միայն երկու դեպքում՝ բարի>բար-ի, հեռու>հեռ-ու (հմնտ. հեռ-ի, հեռ-ա-նամ և այլն): Ուստի որքան բառը բառակազմորեն աճում է, նույնքան մեծանում է նրանում վանկերի թիվը: Թերևս այս է այն հիմունքը, որ Արիստակես Համադանեցու բառարանում վեցվանկանի բառերի քանակը ավելի քիչ է, քան հինգ, չորս կամ երեք վանկից բաղկացած բառերինը:

Բավականին հետաքրքիր է բառարանն իր պարունակած բառերի որակական կողմով: Այս կետում բառարանը ձեռք է բերում մեծ կարևորություն՝

իբրև հայերեն բառապաշտին ամփոփող մատյան: Այն հանդիսանում է խսկական աղբյուր գրավոր մեզ ավանդված բազմաթիվ բառերի, որոնց գոյության փաստն իմբնավորող այլ աղբյուր կամ այսօր մեզ հայտնի չէ, կամ էլ պարզապես գոյություն չունի: Ուրեմն սույն բառարանին ևս պետք է, ինչպես այլ դեպքերում, մոտենալ իբրև գրավոր հարաբերականորեն անփոխարինելի աղբյուրի, եթե նրանում զետեղված գտնենք թեկուզ մեկ բառ կամ բառի խմաստային մեկ յուրօրինակ կիրառություն, որ այլ աղբյուրներում չի հանդիպում: Այսպիսի սկզբունքի դրսերումը լրիվ իմբնավորում է մեր օրերում յուրաքանչյուր գրավոր աղբյուրի ուսումնասիրության, առավել ևս ցանակացած տիպի բառարանի գլուխական գնահատության անհրաժեշտությունը, որա արդիականությունը:

Արիստակես Համադանեցու բառարանն աշքի է ընկնում նաև այլ առումներով: Ամենաուշագրավ կողմերից է այն, որ բառարանում տեղ են գտել իր ժամանակի հայերենի լեզվական վիճակը ներկայացնող առանձին բառեր: Դրանք թե՛ գրաբարյան և թե՛ ոչ գրական, այսինքն՝ աշխարհաբարյան կամ ժամանակի խոսակցական լեզվից եկող բառեր են: Այդ առումով Արիստակես Համադանեցին բառնտրության խտրականություն չի դնում: Այսպես, բառարանում ազգ, ախտ, ակն, ծիծաղախիտ, ձեղունազարդ և այլն կանոնավոր գրաբարյան բառերի կողքին տեղ են գտել տարբեր կարգի բառային զանազանություն պարունակող զգալի բվով բառեր: Վերջիններս, եթե նկատի առնենք դրանց ժամանակը, այլև որակական տարբերությունը, արժանի են հատուկ ուշադրության՝ կապված նկատվող որոշ առանձնահատկությունների հետ:

Այսպես, ոչ գրական (աշխարհաբար կամ ժամանակի խոսակցական) բառերի մի մասն այլ բան չէ, քան գրական բառերի արտասանական-գրչագրական տարբերակներ: Օրինակ՝ վտանկ, (փխ. վտանգ), վանգ (փխ. վանկ), ընկույզ (փխ. ընկոյզ), վատսուն (փխ. վաթսուն), դաստիրակ (փխ. դաստիարակ) և այլն: Նման շեղումները վկայում են ոչ այնքան հեղինակի անտեղյակություն, որքան ժամանակի գրական հայերենի անմիակերպ, չնորմավորված վիճակի մասին:

Դրանից բացի, մի խումբ բառեր ներկայացնում են ժամանակի ոչ հարկի փոխառությունների գոյության փաստը, հատկապես ժողովրդախոսակցական հայերենում գործածվող: Օրինակ՝ թուխ, թուք, թօփ, թամուզ, օրտակ, շմշատ և այլն:

Ծիշտ է, թվով քիչ, սակայն կան բառեր, որոնք հայերենում առհասարակ եվլուպական փոխառություն են՝ ինչ կամ նոր: Օրինակ՝ սորե, աղին, լստին, ֆուանկ և այլն:

Բառարանում տեղ են գտել նաև հատուկ անուններ, ըստ որում տեղանուն կամ անձնանուն: Օրինակ՝ Աքկար (փխ. Աքդար), Գանգէս, Ափրիկայ, Թաթիօն, Վըրդանէս (փխ. Վըրանէս) և այլն:

Վաճառքառարանը հետապնդում է վաճկերի տրոհումով բառերի ուսուցման նպատակ, ուստի կարեորություն չի տրվում այն բանին, թե դրանք ինչպիսին են՝ հասարակ թե հատուկ, կարեորը դրանց գոյությունն է կամ ել գործածականությունը:

Այնուհետև, հայտնի է, որ հայերենում կան բառեր, որոնցով քիչ, զրեք աննշան բանակով բառեր են սկսվում (հատկապես՝ թ, ւ տառերը): Արիստակեսը ծզտել է դրանցով ևս բառեր քերել, որպիսով ստեղծվել են անսովոր և անօրինակ բառերի շարքեր: Օրինակ՝ փոք (փխ. հիոք), փոք (փխ. հիոք), բախ (փխ. ուրախ) և այլն: Արիստակեսը հայոց այբուբենի մեջ է առել նաև հավելյալ օ, ֆ տառերը, հաճախ դրանցով քերել ավանդական գրությամբ բառերը, այլև անսովորները: Օրնակ՝ օծ, օդ, ֆիլ (փխ. փիլ), օղերծական (փխ. ուղերծ կամ ուղերծական) և այլն²⁸:

Նման հատկանշական երևոյթների սեղմ դիտարկումն անգամ վկայում է այն մասին, թե ինչպիսին է եղել Արիստակես Համադանեցու բառարանում բառերի ընտրության և բառարանային մշակման մոտեցումը: Այս դեպքում ընդհանուր տպավորությունն այն է, որ հեղինակը ոչ այնքան հմուտ, «զրի» մարդ է, որքան զրի և մայրենի լեզվի կարեռությունն ու հարկը գիտակցող անձնավորությունն, որ հոգածություն է ունեցել ոչ միայն ձեռագիր արտագրելու, ձեռագիր մատյան ստեղծելու, այլև փորձ անելու ինքնուրույն, թեկուզ և ամենևին ոչ ծավալուն և խորունկ, սակայն ինքնատիպ և ինքնուրույն գործ ստեղծելու, այն էլ հայ բառարանագրության բնագավառում: Մեզանում խոր հարգանքի, եթե ոչ նաև ակնածանքի է արժանանում յուրաքանչյուր ոք, ով իրեն նվիրել է հայոց զրին ու մշակույթին: Ուրեմն դրվագալից է նաև Արիստակես Համադանեցու գործը:

Հայերենի բառապաշտի պատմության համար առավել արժեքավոր են բառարանի վերջին երեք բաժինները: Դրանցում տեղ են գտել ոչ միայն հայտնի, նախկինում գործածված բառեր, այլ նաև այնպիսիները, որոնք չենք գտնում հայերենի ծավալուն բառարաններում, օրինակ՝ «Նոր բառզիրք հայկագեան»-ի (հհ. 1–2, Վենետիկ, 1836–1837) էջերում: Սա երևի թե շատ կատար շափանիշ է Արիստակեսի բառարանը որպես նման բառերի աղբյուր դիտելու համար:

²⁸ «Նոր հայկագյան բառարան»-ը (հ. 2, Վենետիկ, 1837), օրինակ, օղերծ բառը իրավամբ հանգեցնում է ուղերծ-ին:

Բառարանում, մեր ստույգ հաշվումներով, գրանցված է 63 այնպիսի բառ, որ բացակայում է վերը նշված բառարանում: Դրանք, ըստ այդմ, նոր բառեր են, այսինքն՝ չեն գործածվել հայ հին գրականության մեջ, ուստի և չեն արձանագրվել հիշյալ բառարանում:

Արխստակես Համադանեցու բառարանը, կազմված լինելով 17-րդ դարի վերջին (1699 թ.), կարևոր աղբյուր է իր ժամանակի հայերենում առհասարակ գործածված որոշակի թվով նման բառերի համար: Հազիվ թե դրանք կարելի լինի համարել հեղինակի ձեռքով ստեղծված բառեր, այսինքն՝ հեղինակային նորաբանություններ: Կարծում ենք, որ այդ բառերը լայն կիրառություն ունեցող բառապաշտի միավորներ են (գոնե հիմնականում), որոնք բառարանի ստեղծման բերումով ընդգրկվել են որպես որոշակի քանակի վանկեր ներկայացնող տարրեր: Այս բառարանը, այդպիսով, կարևոր աղբյուրի դեր կարող է կատարել այնքան ժամանակ, մինչև որ մեզանում առանձին-առանձին կրացահայտվեն դրանում տեղ գտած նոր բառերի ավելի կոնկրետ, ստույգ բնագրային աղբյունները, եթե դրանք, իհարկե, գոյություն ունեն կամ պահպանվել են:

Այստեղ ուշագրավ է այդ կարգի բառերի բառակազմական հիմունքը: Այսուհետև, առաջին անգամ բառարանագրված բառերը հետաքրքրիր են նաև իրենց բառային իմաստի տեսակետից: Բառարանում եղած «նոր» բառերի բառակազմական և իմաստային վերլուծությունից պարզվում է հետևյալը:

Համեմատաբար քիչ են բառարանում բառավանկ կազմությամբ կամ հեղինակի կողմից այդպիսին դիտվող նորակերտ բառերը: Դրանք մեծ մասամբ ունեն բարդ կազմություն, մասամբ ներկայացնում են ածանցական բաղադրությամբ բառ կամ բառածե: Օրինակ՝ ձեղունազարդ, կաղամախիտ, ջնարաքատակ («ջնարակերպ, ջնարածե»), դողանջաբան, ձօնաւորեալ, շարահիւող, չարահաւան, չարադատիչ, ռետնաճաշակ, բոպէաբնակ, ցաւագնասիրտ, փարթամաբան, քանքարագիւտ, օղերձական («ուղերձական»). բոլորն էլ՝ էջ 172ա):

Ի տարբերություն նախորդի՝ շատ են հնգավանկ այն բառերը, որոնք «Նոր հայկացյան բառարան»-ի (այսուհետև՝ ՆՀԲ) տվյալների հետ համեմատած՝ նորակազմություն են: Դրանք մեծ մասամբ բաղադրված են ածականակերտ – ական ածանցով: Օրինակ՝ դատաւորական, էութենական, ինքնագրաւական (երեքն էլ՝ էջ 172ա), ձայնաւորական, մարմնաւորական, պարաւանդական (պարաւանդ՝ «ձեռքի կամ ոտքի կապ»), ուազմահատական (չորսն էլ՝ էջ 172բ): Եվ երբեմն հանդիպում ենք բառեր, որոնք բաղադրված են –աբար, –ապէս, –օրէն ածանցներով: Օրինակ՝ արտասուեղաբար (էջ 172ա), խորիրդակցաբար (ն. տ.

), բէնականապէս (իմա՝ օրէնականապէս. էջ 172թ), բիւրապատկօրէն (էջ 172ա) և այլն:

Առանձին հետաքրքրություն է ներկայացնում այն հարցը, թէ նման կազմոթյան բառերի բաղադրական հիմքերը, իբրև առանձին բառեր, հայերենում առհասարակ գոյություն ունեցե՞լ են, թէ՞ ոչ: Այդ տեսակետից նկատելի է հետևյալը: Բառերի մեծ մասի բաղադրվող հիմքերը նախկինում հանդես եկած առանձին բառեր են: Դրանք վկայված ենք գտնում իին գրավոր ալբյուրներում, բառարանագրված են ՆՀԲ-ում: Օրինակ՝ ընդաբուսական (էջ 172ա), ձայնաւրական (էջ 172ա), բիւրապատկօրէն (ն. տ.), խորհրդակցաբար (ն. տ.) և այլն: Իսկ մի մասը ներկայացնում է այնպիսի բաղադրվող հիմք, որն ինքնուրույն գործածված չէ: Օրինակ՝ գերազուարճական (էջ 172ա), դողանջանողական (էջ 172թ), ներկրթական (ն. տ.), շարամանական (ն. տ.), քառագարդական (ն. տ.) և այլն: Որոշ դեպքերում բաղադրվող հիմքը ՆՀԲ-ում վկայված չէ, որովհետև այն ոչ թէ ինքնուրույն բառ է, այլ որևէ բառածն: Օրինակ՝ ջախջախողական (էջ 172թ)²⁹:

Անհամեմատ մեծ թիվ են կազմում այն բառերը, որոնք բաղկացած են վեց վանկից և վկայված չեն, օրինակ, ՆՀԲ-ում: Դրանք նույնապես առանձնանում են բառակազմական մի քանի հատկանշական կողմերով:

Դրանց մեծ մասը ածական է, որը կազմված է –ական ածանցով: Օրինակ՝ խորանայարկական (էջ 172թ), հաւաքարանական (ն. տ.), ճշմարտաբանական (ն. տ.), մեծահոչակական (ն. տ.), պարապնդողական (ն. տ.), սրոբէապարական (ն. տ.), օրինաբանողական (ն. տ.) և այլն:

Հանդիպում են բառեր, որոնք կազմված են բաղադրվող հիմքին մակրայակերտ ածանցի ավելացումով: Օրինակ՝ բաղդատականապէս (էջ 172թ), գերադրականաբար (ն. տ.), դատողականաբար (ն. տ.), էականապէս (ն. տ.), ընդհանրականաբար (ն. տ.), քուալրականապէս (ն. տ.), լայնածաւալօրէն (ն. տ.), կարծողականապէս (ն. տ.), դամպարափայլաբար (ն. տ.), շատաշարժողապէս (ն. տ.), ունակականապէս (ն. տ.), չարակցականաբար (փխ. բ-ով, ն. տ.), ռետնաճաշակօրէն (ն. տ.)³⁰, վերազդեցողաբար (ն. տ.), տարատրոհորէն (ն. տ.) և այլն:

Վերը թվարկված նորակազմ բառերից մի քանիսը բաղադրված են, իբրև ինքնուրույն բառ, նախկինում կամ երբեկցէ գործածված բառերի հիման վրա: Այսպէս՝ ՆՀԲ-ում վկայված են հետևյալ բառերը՝ բաղդատական, գերադրական, դատողական, քուալրական, ընդհանրական, լայնածաւալ, գերադրական, դատողական, քուալրական, ընդհանրական, լայնածաւալ,

²⁹ ՆՀԲ-ն ունի՝ ջախջախում, ջախջախումն, ջախջախուն և այլն, բայց ոչ՝ ջախջախող:

³⁰ Վերը հանդիպում է ռետնաճաշակ-ը:

խորանայարկ, կարծողական, դամպարափայլ, ունակական, չափակցական և այլն:

Մնացած մասը կազմված է այնպիսի բառակազմական հիմքերով, որտեղ ոչ թե ինքնուրույն, առանձին բառեր են, այլ բառի որևէ կարգի հիմք: Օրինակ՝ շատաշարժողապէս բառը թվում է, թե պիտի կազմված լինի շատաշարժ-ից գոյացած շատաշարժեմ կամ շատաշարժող ձևերի հիման վրա: Այնինչ, ՆՇՀ-ում, օրինակ, չունենք շատաշարժ, շատաշարժող և նման ձևերը: Նշանակում է, որ այսպիսի դեպքում կամ դրանք բառարանագրորեն առհասարակ վկայված չեն, կամ էլ ավանդված չեն մատենագրության մեջ: Եերենք այլ օրինակ՝ ծեղունազարդաճեմ բառը ենթադրել է տալիս, որ նախապես, իբրև բաղադրվող հիմք, պետք է եղած լինի ծեղունազարդ-ը: Այնինչ, այդպիսի բառ չենք հանդիպում, օրինակ, ՆՇՀ-ում: Դա, սակայն, չի նշանակում, որ այն հայ մատենագրության մեջ առհասարակ ավանդված չի կայտող լինել: Եվ պետք է ավելացնել այն, որ առանց այդպիսի բառակամքի հազիվ թե հնարավոր լիներ կազմել ծեղունազարդաճեմ բառը: Ուստի եթե շատաշարժողապէս բառի դեպքում կարելի է ասել, որ այն կայտող էր կազմվել առանց միջակա օղակի՝ շատաշարժող ձևի, որովհետև վերջինս առանձին բառ չէ, այլ բայածե, որը հնարավոր է շրջանցել նոր բայ կազմելիս (հմմտ. ընտիր>ընտրել>ընտրողական, խնայել>խնայողական և այլն), ապա ծեղունազարդաճեմ-ի դեպքում այդ միջակա օղակը առանձին բառ է, ոչ թե բառածե, այսինքն՝ բառակազմորեն ոչ շրջանցելի: Առաջին դեպքում գործ ունենք բացքողումային, երկրորդ դեպքում պարտադիր բառակազմական վիճակի («օղակի», «բայի») հետ:

Նման դեպքերում, ինչպես այլ լեզուներում, հայերենում ևս կարելի է ասել, որ բառակազմությունը տեղի է ունենում, այսպես կոչված բացքողումային (ելիպտիկ) բաղադրվող հիմքի դեպքում³¹: Եվ ի տարբերություն այլ լեզուների՝ հայերենում բացքողումային հիմքերը կարող են առավել բազմազան լինել, որովհետև հայերեն ոչ բոլոր բառածերն են, որ հանդիպում են գրավոր առյուրներում, ուստի որանցով բաղադրված բառերը առայժմ մնալու են որպես այդպիսին և ոչ թե կոչվելու խառը տիպի կազմություններ:

Այնուհետև, մեկ-երկու բառի դեպքում Արխատակեսը թույլ է տվել գրագրական չնշին շեղում: Օրինակ՝ յաւէժնուագական (էջ 172թ, փխ. յաւէժանուագական, կամ՝ յաւէրժանուսգական), քրէօթախըմբական (ն. տ.,

³¹ Հմմտ Է. Ա. Խալիֆման, Տ. Ս. Մակեева, Օ. Վ. Պաևսкая, Словообразование в современном французском языке, М., 1983.

սովորականը՝ քրովբեախումբ՝ որպես հիմք), լայնածաւալրէն (ն. տ., ուղղում ենք՝ լայնածաւալօրէն) և այլն:

Վերը բերած վեց վանկից բաղկացած բառերից միայն մեկն է գոյական՝ բաղադրիված –ութիւն ածանցով. բարունապետութիւն (էջ 172թ):

Բայկականին ուշագրավ է այն հարցը, թե Արիստակես Համադանեցու սույն վանկաբառարանում տեղ գտած նորակազմ կամ հարաբերականորեն այդպիսին համարվող բառերից քանիսն են կենսունակ եղել, ունեցել հետագա գործածություն՝ պահպանվելով մինչև մեր օրերը, դառնալով ժամանակակից հայերենի բառապաշարի միավոր: Այսպես՝ առանց համապատասխան բառարաններից օգտվելու էլ կարելի է նկատել, որ դրանցից այսօր էլ գործածական կարող են լինել, օրինակ, ձեղունագարդ, շարահիւսող, չարսհաւան, դաստաւորական, էութենական, ճայնաւորական, մարմնաւորական, խորհրդակցաբար, լայնածաւալօրէն, ընդիւնրականաբար և այլն: Էլ չենք խոսում այն մասին, որ չի բացառվում, որ մնացած բառերից կլինեն այնպիսիները, որոնք կարող են հեղինակային տեղին գործածության միջոցով վերակենաւունականալ և դառնել նոր հայերենի գործուն միավորներ:

Արիստակես Համադանեցու վանկաբառարանում միայն մեկ դեպքում հանդիպում է լատինաբան կազմության բառ, այն է՝ զօրաւորագունեղ (էջ 172թ): Հարկ ենք համարում նշել, որ ծեռագրում այն գրված է գրչագրական չնչին վրիպակով, որն անշուշտ հեշտորեն ուղղելի է: Գրված է զօրագունեղ, որը պիտի լիներ Ա-ով, ոչ թե Ե-ով: Այս ուղղումը տվել է մատենագետ Հ. Անասյանը, որը միանգամայն ճիշտ է և ընդունելի³²: Լատինաբան այդ ծեր ներմուծվել է բառարան ոչ թե որոշակի լմբոնումով, այլ ինքնաբերաբար: Այն առանձին բառ չէ, այլ զօրաւոր բառի գերազական աստիճանը՝ –գունեղ մասնիկով (նշանակում է «ամենազորավոր»):

Մինչև այժմ մենք խոսում էինք Արիստակես Համադանեցու բառարանի այն առանձնահատկությունների մասին, որոնք դրականորեն էին բնութագրում այն՝ ի ցույց դնելով նրա կարևորագույն արժանիքները: Սակայն բառարանը միշտ չէ, որ աշքի է ընկնում իր արժեքավոր կողմերով: Կան տեղեր և դեպքեր, որոնք նկատելի թերացումներ են, այլև սխալներ ու վրիպումներ: Դրանք, ճիշտ են, քիչ են, չնչին, բայց և այնպես ոչ ամենին անտեսելի կամ անուշադրության արժանի:

Առհասարակ նման բառարան կազմելն այնքան էլ անհնարին մի գործ չէ: Այս դեպքում կարևորը և առաջնակարգը բառարանի ծեր, բնույթի

³²Տե՛ս Հ. Անասյան, նշվ. աշխ., էջ 758:

մտահղացումն է, որը դրականորեն է իրագործել հեղինակը: Դա այդպես է, մանավանդ եթե հաշվի առնենք այն, որ նման տիպի մեկ այլ բառարան, որը ան մեզ հայտնի է, նախկինում գոյություն չի ունեցել:

Իսկ ինչ վերաբերում է բառարանում տեղ գտած անպատճեռություններին, ապա մասնավորապես կարելի է նշել հետևյալը: Արիստակեսն նրբեմն այս կամ այն «աստիճանի» բառերի մեջ բերում է բոլորովին էլ ոչ այդպիսին հանդիսացող բառեր: Օրինակ՝ միավանկ բառերի մեջ բվարկում է նաև կրումն (էջ 168թ), լերինք (ն. տ.), լստ որում վերջինս, շգիտես ինչու, հոգնակի ձևով, ինչպես նաև՝ ձմեռն (ն. տ.), ծնունդ (ն. տ.) և այլն: Այնուհետև բառավանկ է դիտվում ոչ այդպիսին հանդիսացող բոպեաբնակ (էջ 172թ) բառը, որն անշուշտ հինգ վանկից է բաղկացած:

Ընտրվում են նաև այնպիսի բառեր, որոնք ոչ միայն առհասարակ ունեն բռնազբուխիկ կազմություն, այլև անհանձնարարելի են, քանի որ նախատեսված է նման մի բառարանի օգտագործումը: Օրինակ՝ այբուբենի բ, և տառերով սկսվող բառեր թվարկելու ժամանակ հեղինակը դիմում է անհասկանալի ձևերի: Իբրև բառերի բուա (թերևս՝ տրուա. էջ 168թ), բամ (թերևս՝ երամ. ն. տ.), ֆարտ (էջ 169ա), ֆրնայ (ն. տ.) և այլն: Այս կարգի բառարանները կոչված են ավելի շուտ ծառայելու ուսուցողական նպատակի, ուստի նրանում գետեղվող կամ ընտրվող բառային միավորները համեմատարար պիտի բավարարեն լեզվական այդ շրջանի նորմայից բխող պահանջները: Բերված բառերը հազիվ թե համապատասխանելիս լինեին ժամանակի գրական հայերենի նորմային:

Եվ վերջապես, բավականին հետաքրքիր է այն հարցը, թե ինչ նպատակ է հետապնդել նման մի բառարանի կազմումը: Այդ մասին հատուկ հիշեցում ունի հեղինակը հիշատակարանի մեջ. «Այս նորեկ մանկանց ուսոյ (փխ. ուսո՛ – Վ. Հ.) և զեղկելի Արիստակես էրեց յիշեա» (էջ 172թ): Ուրեմն այս փոքրիկ, բայց ինքնօրինակ բառարանն ունեցել է գործնական՝ կրթական-ուսուցողական նպատակ: Այդ եղանակով՝ մանուկները մի առանձնահատուկ ձևով կարող են սովորել և տիրապետել մայրենիին, իրենց լեզվական հաղողակցման հիմքերի հիմքին: Ինչպես տեսնում ենք, բավականին ազնիվ է հեղինակի նպատակը, և միանգամայն ոլրվատելի և ընդօրինակելի է նրա գործը: Նման բառարանի ստեղծումը թե՛ հնում, թե՛ մեր օրերում կարևոր է հայերենի բառապաշարի յուրացման ու տիրապետման գործում:

Իբրև եզրակացություն հարկ ենք համարում նշելու հետևյալը: Արիստակես Համադանեցու վանկարառարանը հայ բառարանագիտության մեջ ուշագրավ է ոչ այնքան իր բառապաշարի ճոխությամբ ու ներկայացված ծավալով, որքան իր բնույթով, կառուցվածքի առանձնահատկություններով և խաղացած դերով: Այդ բառարանը կարող է օրինակ ծառայել մեր օրերում հայերենի

բառապաշտի գործնական ուսուցման նպատակով ավելի ծավալուն
բառարաններ կազմելու գործին:

ՀԱՅԵՐԵՆ-ԼԱՏԻՆԵՐԵՆ ԶԵՌԱԳԻՐ ԲԱՌԱՐԱՆԸ

Սույն բառարյանին ժամանակին անդրադարձել ենք համեմատաբար սեղմ շարադրանքով՝ չունենալով հարցի լայն ներկայացման հնարյավորություն³³: Այժմ քննության ենք առնում այդ կարևոր հարցն ավելի հանգամանալից ձևով՝ նկատի ունենալով նախկինում լույս տեսածի մեջ առաջ քաշված հիմնական դրույթներն ու բուն մոտեցումը:

Հայոց լեզվի պատմությունը հասնում է մինչև վաղնջական ժամանակների: Այն կազմում է հայ մշակույթի անկապտելի և անբաժան մասը: Իր բազմադարյան պատմության ընթացքում հայ մշակույթը շփվել է զանազան ժողովուրդների մշակույթների հետ: Այդ շփումներն իրենց խորլ հետքն են թողել նաև հայոց լեզվի վրա: Կարելի է ասել, որ հայոց լեզուն այլ լեզուների և տարբեր մշակույթների հետ եղած առնչությունների լավագուն վկայությունն է: Տեղին է հիշել Պարույր Սևակի մի դիպուկ ձևակերպումը. «Գալով անհիշելի ժամանակներից, անցնելով բազում դարերի միջով, շփվելով բազմաթիվ ազգերի լեզուներին, հայոց լեզուն մի յուրահատուկ հանրագիտական է անհիշելի ժամանակների»³⁴:

Հայոց լեզվի պատմությանը նվիրված են բազմաթիվ գիտական և հանրամատչելի աշխատություններ: Դրանք գրվել և կազմվել են հայ և այլազգի գիտնականների, գիտության տարածողների կողմից: Մեր օրենտում և շարունակվում են բուն ուսումնասիրություններն այդ բնագավառում: Այսպես Գ. Զահորեանն իր «Հայոց լեզվի պատմություն» ծավալուն աշխատության մեջ մեկ առ մեկ առանձնացնում, ըստ ամենայնի քննում և բնութագրում է հայերենի և տարբեր լեզուների առնչությունները³⁵: Եվ ի թիվս դրանց նա անդրադառնում է նաև հայերենի և լատիներենի առնչության հարցին՝ կապված հայ-հոոմեական պատմաքաղաքական հարաբերությունների հետ³⁶:

³³ Տե՛ս «Կուլտուր-լուսավորական աշխատանք» (ամսագիր), թ. 8, 1987, էջ 15-17:

³⁴ Պարույր Սևակ, Երկերի ժողովածու, 6 հատորով, հ 5., Երևան, 1974, էջ 155:

³⁵ Գ. Զահորեան, Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987:

³⁶ Նույն տեղում, էջ 630-632:

Հայ-հռոմեական, ավելի նեղ իմաստով՝ հայ-լատինական մշակութային և լեզվական առնչությունները, կապված ժամանակի և ընդգրկման զանազանության, փոխազդեցության տարբերության հետ, երկու կարգի են: Առանձնացվում են հայ-հռոմեական կամ հին (մ.թ.ա. 66-մ.թ. 429 թթ.) և հայ-լատինական կամ նոր (13-18-րդ դարեր) հարաբերություններ: Մյուս դեպքում հարաբերությունները հիմնականում կրում են ուղղական-քաղաքական բնույթ, իսկ մյուս դեպքում այդ հարաբերություններն ունեն առավելապես մշակութային ուղղվածություն³⁷:

Հայ-հռոմեական հին լեզվական առնչություններին ժամանակին անդրադարձել է Ա. Մեյեն: Նա, ուսումնասիրելով հայերենում տեղ գտած լատիներենից կատարված փոխառությունները, գտնում է, որ հին հայերենը լատիներենից փոխ է առել շատ քիչ թվով բառեր³⁸: Ա. Մեյեն այդպիսին է համարում արկղ, սկուտղ («մետաղյա աման, ափսե»), սիտղ («ջրաման, լույլ»), կառը, դենջակ (գրվում է նաև՝ դենջեակ «գոգնոց», սրբիչ, անձեռոցիկ») բառերը³⁹:

Այնուհետև, այդ հարցին անդրադարձել է Հ. Աճառյանը, որ իր նկատառումները և լրացումները անում է իր նախորդների՝ հատկապես Հ. Հյութշմանի և Ա. Մեյեի քննությունների տվյալների օգտագործմամբ: Աճառյանն ավելացնում է կայսր, բաստեռն («զահավորակ»), լկտիք («զահավորակ»), մարգարիտ և պան («մի տեսակ կլոր հաց») բառերը: Վերջիններիս քննության անդրադարձել է Աճառյանն իր Արմատական բառարանում և հայոց լեզվի պատմությանը նվիրված աշխատության մեջ⁴⁰:

Հայ-հռոմեական հարաբերություններն, այսպես կոչված, կենդանի հարաբերություններ են եղել, այսինքն՝ այդ շրջանում հայերը, լինելով հարեաններ, ուղղական և քաղաքական անմիջական շփումներ և առնչություններ են ունեցել հռոմեացիների հետ: Այդ պարագայում անգամ հայերենը սակավ փոխառություններ է կատարել լատիներենից: Ավելին, հայերենը և հայ մշակույթն առհասարակ քիչ բանով են ազդվել հռոմեականից:

Բոլորովին այլ է վիճակը հետագայում, երբ բուն Հայաստանի որոշ գավառներում, նաև Կիլիկյան հայկական թագավորության սահմաններում հիմք են դնում միարարական (ոնիթոռական) շարժման գործիչները, և այդ

³⁷ Վ. Համբարձումյան, Հայերը և հռոմեացիները. Լեզվական շփումներ. «Երկիր», 13-ը նոյեմբերի, 1991, էջ 4:

³⁸ Ա. Մեյե, Հայագիտական հետազոտություններ, Երևան, 1978, էջ 130-133:

³⁹ Նոյն տեղում:

⁴⁰ Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հհ. 1-4, Երևան, 1971-1979: Նույնը, Հայոց լեզվի պատմության, հ. 1, Երևան, 1940, էջ 324-330:

ժամանակից (14-րդ դարի 20-ական թվականներ) իւ վեր երևան են գալիս հայլատինական նոր հարաբերությունները: Այս դեպքում հիմնական նպատակ է դիտվում հայերին կաթոլիկ դարձնելը, այսինքն՝ հեռացում լուսավորչական դավանանքից, Հռոմի պապի գերիշխանության հաստատում հայոց հոգևոր կյանքում:

Դրանից բացի միարաբները ծավալում են մշակութային այնպիսի գործունեություն, որի հետևանքը լինում է այն, որ մեզանում երևան են գալիս զիտության և մշակույթի զանազան բնագավառներին վերաբերող, հաճախ ժամանակի եվրոպական առաջադիմական մտքի արտացոլումը հանդիսացող կարևորագույն աշխատություններ: Դրանք, անշուշտ, հարստացնում են հայ մշակույթը, այլև գիտությունը: Այդ նոր շարժումն առայսօր միակողմանիորեն գնահատված է իբրև բացասական երևոյթ, որ այնքան էլ ճիշտ չէ: Այդպիսի մոտեցման հետևանքով հայ-լատինական հարաբերություններին վերաբերող շատ հարցեր, մշակույթի, ընդ որում հայերենագիտության և հայ բառարանագրության շատ արժեքներ և երևոյթներ չեն արժանացել լուրջ, անկողմնակալ ուշադրության, եթե ոչ մատնված եղել խուլ մոռացության⁴¹:

Հայ-լատինական նոր հարաբերությունների հետևանքով հատկապես 17-րդ դարում և 18-րդ դարի առաջին կեսին հայերենը զգալապես ազդվում, հիմնականում խճողվում է: Դա առանձնապես հիմնավորվում է այն իրողությամբ, որ միարարական գրականության լեզուն ենթարկվում է լատիներենի քերականության կաղապարներին: Այդ միտումը երևան է գալիս հատկապես 14-րդ և հետագա դարերի թարգմանական ու ինքնուրույն այն երկերի լեզվում, որոնց հեղինակներն այս կամ այն շափով հարում են միարարական շարժման պարագլուխների մտայնությանը:

Այս եղանակով մեզանում առաջանում է լեզվական մի այնպիսի տարրերակ, որ հայերենագիտության մեջ ընդունված է կոչել լատինաբան հայերեն:

Հայերենի ներսում տեղ գտած լատինաբան ազդեցությանն ընդիմանում են Վենետիկի Միհթարյան դպրոցի ներկայացուցիչները, որոնք սկսած Միհթար Սեբաստացու ժամանակներից գրաբար բնագրերը հրատարակելիս «խմբագրում» և «սրբագրում» են դրանցում եղած լատինաբան ձևերը, իրենց երկերում հրաժարվում են նման ձևերի գործածությունից: Ըստ այդմ ժամանակի ընթացքում հայերենի մեջ տեղ գտած լատինատիպ

⁴¹ Հմտ. Լ. Խաչիկյան, Զոնայի հոգևոր-մշակութային կենտրոնը և Հովհաննես Զոնեցու գիտական գործունեությունը. – «Յովհաննես Զոնեցի, Յաղագս քերականին», Երևան, 1977, էջ 5-51:

նորամուծությունները հաղթահարվում են 18-րդ դարի 20-ական թվականներից սկսած մինչև 80-ական թվականներն ընկած ժամանակահատվածում:

Բավականին ուշագրավ են այլ շրջանից մեզ հասած գրեթե յուրաքանչյուր նորահայտ վավերագրի՝ գրավոր հուշարձանի, առանձին աշխատության քննությունն ու գնահատությունը:

18-րդ դարի հայ մտավոր շարժումն բուտն կերպով ծավալվում է մշակութային բազմաթիվ կենտրոններում, ընդգրկում է ժամանակի հայագիտության տարբեր բնագավառները: Դա զարգացման մի շրջան է, երբ շարունակաբար երևան են գալիս ինքնուրույն և բարգմանական երկեր, ստեղծվում են հայերենագլուխական զանազան մեծ ու փոքր աշխատություններ:

Ուշագրավ է այն հանգամանքը, որ դրանցում որոշակի տեղ են գրավում տարբեր բնույթի և ծավալի, բազմազան խնդիրների ծառայող բառարանները, գործնական նպատակ հետապնդող բառացանկերն ու տերմինարանները: Այդ շրջանում երևան են գալիս նաև հայերենի և նրան զուգադիր որևէ այլ լեզվի բառամթերքն ընդգրկող երկլեզվյան բառարաններ, որոնք մեզ են հասել տպագիր և ձեռագիր վիճակում: Դրանցից շատերը մինչև այժմ չեն կորցրել իրենց նշանակությունը հայ մշակույթի զարգացման պատմության համար:

Մեզանում բավականին մեծ ուշադրություն է դարձվել հայերենի ծավալուն, ընդ որում թե՛ ձեռագիր և թե՛ տպագիր բառարաններին: Ձեռագիր բառարանների ուսումնասիլությունը գրավում է առանձին, կարելի է ասել ուրույն տեղ: Սակայն հայ գրավոր մշակույթի ամբողջացման առումով նշանակալից են յուրաքանչյուր տեսակի ու ծավալի բառարանային աշխատանքի վերլուծումն ու գնահատությունը:

Տարիների ընթացքում կատարած մեր ուսումնասիլությունից պարզվում է, որ մեզանում դեռևս կան զգալի թվով ձեռագիր և տպագիր բառարաններ, որոնք առայսօր չեն արժանացել որևէ ուշադրության կամ քննարկման:

Այդպիսի մի գործ է, ահա, Երևանի Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագիր № 7560-ում տեղ գտած հայերեն-լատիներեն փոքրիկ բառարանը, որն ավելի շուտ պետք է կոչել քերականական տերմինարան (այն զբաղեցնում է ձեռագրի 41ա-64թ էջերը):

Սկզբից ևեր նկատենք, որ ընդամենը 42 էջ ունեցող սույն տերմինարանն աշքի է ընկնում ոչ միայն իր բնույթով, այլև հայերեն և լատիներեն նյութի լնդրկման յուրահատկություններով: Տերմինարանը խիստ ուշագրավ է հայ բառարանագրության պատմության մեջ, յուրովի լրացնում է մեզանում ստեղծված երկլեզվյան (բարգմանական) բառարանների թիվը: Եվ որպես այդպիսին, այն կարեոր է այսպես կոչված հայ-լատինական

բառարանագրության պատմության առումով: Հայտնի են հայերեն-լատիներեն տպագիր մի շարք բառարաններ (օրինակ՝ Ֆր. Ռիվոլայի, Հ. Վիլուտի և ուրիշների), սակայն ծեռագիր նման բառարանների քանակը, որքան մեզ հայտնի է, այնքան էլ շատ չէ: Այնուհետև, նման բառարաններն երևան են գալիս ոչ միայն ուշ ժամանակներում, այլև ավելի վաղ շրջանում: Եվ այդպիսի երկլեզվյան բառարանների նախատիպ թերևս հանդիսանում է «Հայերեն-լատիներեն հնագույն բառացանկը», որ հայտնի է 9-10-րդ դարերից (հրատարակել է Օ. Կարիերը)⁴²:

Տվյալ դեպքում մեզ հետաքրքրող հայերեն-լատիներեն բառարան-տերմինարանը հետաքրքիր է առհասարակ հայ գործի (տվյալ դեպքում՝ ծեռագիր մատյանի) պատմական ճակատագրի, նրան հասած փորձությունների ինչպես նաև պարունակած երկի բովանդակության և արժեքի տեսակետից:

Սույն բառարանի մասին մատենագիտական աղբյուրների լինձեռած տեղեկությունները, ցավոք, բավականին սույն են: Հայտնի է, որ այն կազմված է մի անհայտ հեղինակի ծեռքով: Ձեռագիրն ավանդված է 1756 թվականից, գրված է եղել Մադրասում, հնդկահայ մշակութային գործիչների միջավայրում: Հիշյալ ծեռագրում այն անմիջաբար հաջորդում է բառարանագրական մեկ այլ աշխատության: Խնդրո առարկա բառարանը, որքանով մեզ հաջողվել է պարզել, այլ բան չէ, քան 17-րդ դարի նշանակոր մշակութային գործիչ, միարարական շարժման մասնակից և աշքի ընկնող գիտնական Կղեմես Գալանոսի հայտնի տերմինարանի մի ծեռագիր տարբերակը:

Ամենից առաջ հարկ ենք համարում նշել, որ սույն հայերեն-լատիներեն ծեռագիր տերմինարանը մինչև այժմ չի արժանացել որևէ ուշադրության: Հայ բառարանագրության պատմությանը նվիրված ուսումնասիրություններում այդ մասին որևէ խոսք չի ասվում: Ոչինչ չենք գտնում նաև հայերենագիտության հիշյալ ճյուղին վերաբերող առանձին աշխատանքներում: Դա թերևս բացատրվում է նրանով, որ մեզանում անկախ լուրջ ծեռքբերումներից դեռևս շատ անելիքներ կան հայերեն ծեռագիր մատյաններում տեղ գտած բառարանների հայտնաբերման և դրանց արժեքի վերհանման, և առհասարակ հայկական բառարանագրության պատմության ավելի լայն ուսումնասիրության բնագավառում: Մեր մշակույթն, ինչ խոսք, աշքի և ընկնում

⁴² Սույն բառարանին անդրադառնալու ենք հետագայում, առանձին՝ կապված նրանում տեղ գտած հանգուցային, այսօր բավականին կնճռոտ մի շարք հարցերի պարզաբանման և ըստ հնարավորին լուծման հետ:

նաև իր բառարանագրությամբ։ Եվ Վերջինիս պատմության լիարժեք ուսումնասիլումը կարևոր խնդիր է մեր օրերի հայերենագիտության համար։

Վերն արդեն ասվեց, որ հայերեն-լատիներեն տերմինարանն աշքի է ընկնում առաջին հերթին իր բնույթով։ Եվ իրոք, եթք մանրազնին քննում ենք նրանում պարունակվող տերմինները, որանց գուգաղրումը, բառարանագրական հաջորդականությունը, թեմատիկ առանձնացումը և այլն, ապա նկատելի է դառնում, որ գործ ունենք մի հետաքրքրական բառարանագրական աշխատանքի հետ։ Ծիշու է, այն բոլոր դեպքերում արժեքավորվում է տերմինարանի սահմաններում, սակայն անժխտելի է, որ այլ ձևով կարևոր դեր է խաղացել հայերենի և լատիներենի գուգաղրական ուսումնասիլման, առավել ևս՝ հնդկահայոց շրջանում լատիներենի ուսուցման գործում։ Հայտնի է, որ հնդկահայ գաղութը ժամանակի ընթացքում բոլորովին անմասն էր մնացել միարարական (ունիթոռական) շարժման ազդեցությանը։ Այս տերմինարանի երևան գալն այդ միջավայրում վկայում է, որ այդ ազդեցությունն, այնուամենայնիվ, եղել է, որն էլ այս դեպքում արտահայտվել է ոչ անմիջականորեն, այլ երկրորդաբար։

Տերմինարանը քողնում է այն տպակորությունը, որ կազմված պիտի լինի լատինատիպ ինչ-որ քերականության նյութի հիման վրա, որովհետև նրանում քերականական տերմինները, իբրև բառահոդվածներ, քերվում են ոչ թե այբբենական հաջորդականությամբ, այլ թեմատիկ կարգով։ Վերջինս լիովին համապատասխանում է քերականական աշխատություններում սովորաբար առանձնացվող բաժինների, գլուխների և վերնագրերի, ինչպես նաև որանցում առհասարակ շարադրվող քերականական երևույթների հերթականությանը։ Այսպես, օրինակ, գոյական խոսքի մասին վերաբերող տերմիններից հաջորդաբար, իբրև բառահոդված, քերվում են՝ նախ, հոլովները՝ ուղղական, սեռուսկան, տրական, հայցական (կամ՝ կրողական), բացառական (կամ՝ սոռողական), պատմական, գործիական, պարառական, ներգոյական (կամ՝ կացողական), կոչական, այնուհետև՝ մյուս կարգային (կատեգորիալ) երևույթների անվանումները՝ տեսակ, հոլովմունք, նախադասական (իմաներական հոլովում), ստորադասական (իմա՝ վերջադրական հոլովում), սեռ, բիո, հոլով, տեսակ (լատ. species), ձև (լատ. figura) և այլն։ Բերված տերմիններից հայցական-ը, բացառական-ը և ներգոյական-ը, ինչպես նկատելի է, ունեն իրենց համարժեքները՝ կրողական, սոռողական և կացողական, որոնք, ինչպես գիտենք, հայերենի լատինատիպ քերականությունների տերմինաբանության պատմությունից, ակնհայտ պատճենում են լատիներեն համարժեքների (լատ. accusativus, ablativus, circumlativus)։ Այս փաստը երկրորդաբար ապացույց է այն բանի, որ՝ ա) սույն

տերմինարանի հեղինակն առաջին հերթին քերում է քերականական հասկացությունների հայեցի անվանումները, երկրորդաբար նշելով (իմաստուրբ տալով) դրանց լատինատիպ համարժեքներին, բ) վերջիններս ապացույց են նաև այն բանի, որ սույն տերմինարանը կազմվել է լատինատիպ քերականության համապատասխան նյութի՝ տերմինների բառարանագրման համար:

Այնուհետև, ավելացնենք, որ սույն տերմինարանը ստեղծված պիտի լինի որևէ հայերեն-լատիներեն զուգայրական քերականության լնդգրկած նյութի օգտագործմամբ, որովհետև այն, ինչպես նշվեց, երկեզրվան է, նրանում զուգայրվում են հայերեն և լատիներեն քերականական որոշակի քվով տերմիններ: Այս հանգամանքը շատ կարևոր է, ընդ որում ոչ այնքան տերմինարանի բնույթը որոշելու, թեև դա ևս գտնվում է մեր ուշադրության կենտրոնում, որքան բառարանագրական կամ քերականական աշխատությունների հետ նրա ենթադրելի առնչությունները պարզելու տեսակետից:

Այդ իսկ նկատառումով անհրաժեշտ համարեցինք մեր ձեռքի տակ եղող տերմինարանը բնագրորեն համեմատել միմիայն լատինատիպ քերականությունների նյութերի հետ: Ձեռագիր մատյաններում սույն տերմինարանը գտնելուց հետո որոշակի անհրաժեշտություն էր առաջացել պարզաբանելու նաև նրանում ամփոփված նյութի, քերականական տերմինների լեզվական արժեքը, դրանց առանձնահատկությունները հայերեն քերականություններում տեղ գտած տերմինների առնչությամբ: Վերը նշված կարգի տերմինային միավորների համեմատությունից որոշակի դարձավ այն մտածումը, որ ամենից առաջ պետք է ուշադրություն դարձնել լատինատիպ քերականություններին:

Դրանից հետո, կարծում ենք, որ նման դեպքում հարկ չկա սահմանափակվելու մշակութային այս կամ այն օջախով, այլ հարկավոր է լնդգրկել բոլոր կարգի լատինատիպ քերականական աշխատությունները: Չէ՞ որ մեզ հետաքրքրող նյութերը կարող են քաղված լինել այնպիսի մի քերականությունից, որը գրված է եղել մշակութային այլ կենտրոնում, իսկ այս ձեռագիր տերմինարանը կազմված լինի և պահպանվի մեկ այլ կենտրոնում:

Մեր երկարատև որոնումները վերջապես տվեցին ցանկալի արդյունք: Պարզվեց, որ սույն հայերեն-լատիներեն տերմինարանը կազմված է 17-րդ դարի նշանավոր հայագետ, լատինաբան հեղինակ Գալանոսի ամենահայտնի աշխատության՝ «Քերական և տրամաբանական ներածություն» (Հռոմ, 1645)

զրի քերականական նյութի հիման վրա⁴³: Դա ապացուցվում է մի շաբթիոնիկ փաստերով և որոշակի կողմնակի տվյալների օգնությամբ:

Հայտնի է, որ Կղ. Գալանոսի հիշյալ աշխատությունն այլ բան չէ, քան
լատիներենի զուգադրությամբ շարադրված հայերենի քերականություն⁴⁴: Մեր
քննությունից պարզվեց, որ ամեն դեպքում գործ ունենք լեզվական նյութի
դասակարգման և մեկնաբանման նույնական սկզբունքների ու շափանիշների
հետ: Տերմինարանը կազմված է քեմատիկ նույն սկզբունքով, տերմինների
բառարանագրման նույն հաջորդականությամբ, ինչ դրանք կիրառվում են Կղ.
Գալանոսի քերականության մեջ: Ըստ որում տերմինների բառարանագրական
հաջորդականությունը, ինչպես ենթադրում էինք, ճիշտ և ճիշտ
համապատասխանում է հիշյալ քերականության բաժինների, գլուխների և
նրանցում մուծված լեզվական երևոյթների նկարագրության
հերթականությանը: Այսպես, Կղ. Գալանոսի «Քերական և տրամաբանական
ներածութիւն» երկում, ասենք, քննվում են գիրը, վանկը, ինչպես նաև
հնչյունաբանական, ուղղագրական և տաղաչափական երևոյթներ՝
օգտագործելով համապատասխան տերմիններ և գիտակարգային
անվանումներ: Եվ երբ նայում ենք մեր ձեռքի տակ եղած տերմինարանը, ապա
նկատում ենք, որ այդ տերմիններն ու գիտակարգային անվանումները
հաջորդում են իրար ճիշտ այնպես, ինչպես որ գործածված են Կղ. Գալանոսի
քերականության մեջ: Ուստի և հարցի այս կարգի, այլև լրացուցիչ
քերականության մեջ: Ուստի և հարցի այս կարգի, այլև լրացուցիչ
բանասիրական-բնագրագիտական ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ
մինչև այժմ անհայտ մնացած սույն հայերեն-լատիներեն տերմինարանը
կազմված է եղել Կղ. Գալանոսի հայտնի քերականական աշխատության
նյութի հիման վրա:

Նման փաստերը շատ են, որոնք նույնն են հիմնավորում: Նշենք թեկող այն, որ վերը բերված տերմիններից հայցական, բացառական և ներգոյական հոլովներին համարժեք տերմինները՝ կրողական, առողական և կացողական,

⁴³ Գրքի ընդհանուր վերնագիրն է՝ «Քերական և տրամաբանական ներածութիւն առ իմաստասիրութիւն շահելոյ», իսկ կոնկրետ, մեզ հետաքրքրող ենթավերնագիրը՝ «Համառու քերրողութիւն քերականութեան՝ շարակարգեալ ի կարգէ Թէարինոսայ Կղեմէս վարդապետէ, ներում կատարելապէս պարունակին արհեստը չորք, այսինքն՝ ուղղագրութիւն, բանաստեղծութիւն, արտաքրութիւն և շարադրութիւն, արտահանեալ ի քերականութեանցն հայոց, յունաց և լատինացոց»։ Գրքի վերջում դրված է «բառարան» (էջ 1-28), որի մասին նշվում է նաև վերնագրի լատիներեն ձևակերպման մեջ («addito vocabulario armeno-latio omnium scholasticarum dictionum», լատիներեն ձևակերպման մեջ («addito vocabulario armeno-latio omnium scholasticarum dictionum», իմա՝ «հավելված ողջ ուսումնական («իմաստասիրական») նյութերի հայերեն-լատիներեն բառացանկ»), այլև իր տեղում՝ «Բառզիրք ամենայն իմաստասիրական բառից հայոց և լատինացոց»)։

⁴⁴ Տես Գ. Զահորեան, Գյաբարի քերականության պատմություն, Երևան, 1974, էջ 25–62:

գործածում է հենց Կղ. Գալանոսն իր քերականության մեջ: Դրանք Գալանոսն իր քերականության մեջ գործածել է լատիներեն համապատասխան տերմինների պատճենումով, այսինքն՝ մինչև այդ հայերենում եղածները «մոռացության» են մատնվել: Իսկ տերմինարանը կազմողը, որն ի դեպ ձեռագրում ոչ մի տեղ չի նշում իր մասին, նոր ստեղծված, ավելի ստույգ՝ պատճենված տերմիններն երկրորդաբար նշում է իրենց բուն համարժեքների կողքին:

Ուստի և ուզում ենք շեշտել այն հանգամանքը, որ մեր այն կարծիքը, թե սույն տերմինարան-բառարանը կազմված է Կղ. Գալանոսի քերականության մեջ ամփոփված նյութի հիման վրա, հաստատվում է ոչ միայն բանասիրական-բնագրագիտական (տերստաբանական) տվյալներով ու փաստերով, այլև լեզվական փաստերի բառագիտական ու բառարանագիտական քննությամբ:

Այսպես, քիչ չեն այն դեպքերը, երբ որոշակիորեն առկա է լատիներեն համարժեք այս կամ այն տերմինի բացքողում հայերեն տերմինի կողքին, որովհետև տերմինարան կազմողը, հավանաբար, քերացել է քերականական աշխատության էջերում գտնել այդ համարժեքը: Այլ կերպ ասած՝ լեզվական փաստերը ցույց են տալիս, որ տերմինարանի հեղինակը կամ բացահայտ կերպով դժվարացել է գտնել հայերեն տվյալ տերմինի համարժեքը լատիներեն բնագրում, որի պատճառով նա ստիպված է եղել համապատասխան տեղերում բաց քողնել՝ թերևս իետագայում լրացնելու պայմանով, կամ էլ առհասարակ անտեսել է լատիներեն համարժեքները: Հետևանքն իրականում եղել է այն, որ տերմինարանում հայերեն որոշ տերմիններ չունեն լիրենց գուգայլելի լատիներեն ձևը: Օրինակ՝ անգայտ («նոսր, ոչ խիտ, ոչ հոծ»), արտաքերութիւն, մեծասար («երկվանկ բառ, որի մի վանկը երկար է, մյուսը՝ կարճ»), շարամանութիւն («շարակայուսելը, շարակայուսում, շարակայուսություն») և այլն:

Լեզվական փաստերից քերենք ևս երկուսը:

Կղ. Գալանոսն իր աշխատության մեջ առանձնացնում է ածանցական անունների 16 տեսակ, ըստ որում թվարկման ընթացքում բաց է քողնված դրանցից պակասական տեսակը, որը չի խանգարում, որպեսզի իետագա շարադրանքում (իր բուն տեղում) այդ տեսակը մեկնարանվի և բնութագրվի: Իսկ տերմինարանի հեղինակն իր աշխատանքում դրանք բերում է ոչ միայն նույն հերթականությամբ, այլև իր հերթին վերականգնում է պակասական տեսակը: Դժվար չէ նկատել, որ տերմինարանի հեղինակը կոահել է, որ այդ տեսակի բացքողումը սոսկ տպագրական վրիպում է եղել: Հարցին այլ կողմից մոտենալու դեպքում կարելի էր կարծել, թե տերմինարանի հեղինակը Գալանոսի նման պիտի բաց քողներ ածանցական անունների այդ՝ պակասական տեսակը, որի հիման վրա էլ ավելի ճիշտ կլիներ ասելու, թե այդ

Երկու աշխատություններն իրար հետ այդ հարցում ևս համարաշխ են: Սակայն դա այլ մոտեցում է, որը չի հակասում մեր՝ վերը տված բացատրությանը, այն է (կրկնում ենք)՝ տերմինարանի հեղինակը կռահել է քերականական աշխատության մեջ տեղ գտած վրիպումը և իրավամբ ուղղել, այսինքն՝ պակասը. թերին լրացրել: Այս փաստը լրտվին և նրբորեն հավաստում է ձեռագիր տերմինարանի հեղինակի որոշ հմտության մասին, ինչպես նաև այն, որ տերմինարանը հարազատորեն առնչվում է Կղ. Գալանոսի քերականական աշխատությանը:

Այնուհետև, լեզվական մյուս փաստն այն է, որ Կղ. Գալանոսի կողմից քերականության մեջ դասակարգված նախդիրները և դրանց վերաբերող օրինակները նույն հերթականությամբ և գրեթե նույնալիսի ուղղագրությամբ, մեկ առ մեկ նշվում են սույն տերմինարանում: Ընդ որում դրանց լատիներեն համարժեքներն ել երկու դեպքում ամբողջովուն համընկնում են: Այս փաստը ևս վկայում է, որ հայերեն-լատիներեն տերմինարանի կազմման նախօրինակը եղել է Կղ. Գալանոսի քերականությունը:

Հայերեն-լատիներեն տերմինարանն ունի շատ մատչելի, միանգամայն պարզ կառուցվածք: Այն, իրոք, տերմինարան է, այսինքն՝ ներկայացնում է երկու լեզուներով քերականական տերմինների ցանկեր: Եվ ինչպես ամեն մի տերմինարան, այս դեպքում ևս բառահոդվածներն ունեն նախնական (պլիմիտիվ) կառուցվածք. նախ տրվում է հայերեն այս կամ այն տերմինը՝ ծախս սյունակում, այնուհետև աջում քերվում է նրա լատիներեն թարգմանական համարժեքը: Օրինակ՝ հարցական (interrogativus), գոյական (substantivus), յարιաբերական (relativus), դէմ (persona) և այլն: Տերմինարանի հեղինակն երբեմն լատիներեն տառերով տրվող համապատասխան տերմինների կողքին հայերեն տառերով նշում է դրանց տառադարձված ձևը⁴⁵: Օրինակ՝ ներգոյական կամ կացողական (circumlocutivus-սիրկումլաթիտուս), կոչական (vocativum-վօկաթիտում) և այլն: Հարկ ենք համարում նշելու բանասիրական հետևյալ նրբին դիտարկումը. բառահոդվածի հայերեն մասը գրված է ոչ նույն գրչի («ձեռագիրը գրողի՝ արտագրողի») ձեռքով, ինչ լատինական մասը: Այս ձեռագիրը գրված (կամ արտագրված) է երկու (առնվազն երկու) գրչի ձեռքով: Այնպես է ստացվել, որ նախ կազմվել է տերմինարանի հայերեն տերմինների ցանկ, այնուհետև՝ աջ կողմում դրանց լատիներեն համարժեքների ցանկը: Որ դա այդպես է, որոշակի կերպով ապացուցելի է հետևյալ դիակուկ փաստով: Հայերեն հոլովների անուններից

⁴⁵ Հայերեն տառադարձման մեջ նկատելի է խոլ բաղաձայնների շնչեղացում, պայթականների շփականացում և այլն:

երկուսի՝ պատմական և գործիական հոլովների լատիներեն համարժեքներն արտազրելիս շփոթված են, այսինքն՝ լատիներեն գրողը հայերեն պատմական հոլովի դիմաց լատիներեն գրել է *instrumentalis* (փխ. *narrativus*), իսկ գործիականի դիմաց՝ *narrativus* (*փխ. instrumentalis*):

Այդ նույն փաստը երկրորդաբար հուշում է այն մասին, որ լատիներեն գրողը («գրիչը») հավանաբար չի իմացել (կամ պարզապես չի իմացել) այդ երկու հոլովների լատիներեն համարժեքները և շփոթել է որանք միմյանց ինտ: Եվ հետաքրքիր է, որ այդ երկու հոլովները ծեռագրում լատիներեն համարժեքների տառադարձումն ունեն, ըստ որում ոչ թե շփոթի շարունակումով, այլ ուղղումով, վերականգնումով: Ըստ այդմ էլ այդ բառահոդվածներն ունեն հետևյալ տեսքը՝ պատմական (*narrativus-narrativaթիւս*), գործիական (*instrumentalis-ինսթրումենտալիս*)⁴⁶: Շփոթը և վերջինիս ուղղումը, հասկանալի է, կատարվել է այն բանի հետևանքով, որ այդ երկու բառահոդվածները՝ տերմինային շարքերը տերմինարանում հաջորդում են միմյանց:

Հայերեն-լատիներեն տերմինարանի բառարանագիտական արժեքի մասին խոսելիս ամենից առաջ պետք է շեշտել Կղ. Գալանոսի քերականության արժեքը, որով սերտորեն պայմանավորված է տերմինարանի գնահատության հիմունքը:

Ինչպես հայտնի է, Կղ. Գալանոսի հիշյալ աշխատությունը նոր քայլ էր հայ քերականագիտության պատմության մեջ: Այն գրված է Ժամանակի գիտության մակարդակով: Նրանում հեղինակն օգտագործում է ոչ միայն հունարենի, լատիներենի և հայերենի քերականությունների արժեքավոր փորձը, այլև հայերեն գրավոր աղբյուրների համապատասխան տվյալները⁴⁷: Գալանոսի քերականությունը լատինատիպ է, այսինքն՝ հայերենի քերականական իրողությունների նկարագրության և վերլուծության ընթացքում բավականաչափ հաշվի է առնված լատիներենի համապատասխան իրողությունը: Հայերեն լեզվական այս կամ այն երևույթը բացատրվում է լատիներենի օրինակով, նրա համարժեքների ընդօրինակումով: Այդուհանդերձ, նկատելի է, որ հեղինակը նյութի շարադրանքի մեջ այնքան էլ մեծ տուրք չի տալիս լատինաբան ձևերի և արտահայտությունների գործադրմանը: Կղ. Գալանոսի աշխատությունն, ինչ խոսք, մեկ քայլ առաջ է հայ քերականագիտության զարգացման բնագավառում: Այն մինչև այժմ չի

⁴⁶ Տե՛ս Ամիսորդ ծանոթագրությունը:

⁴⁷ Հմմտ. Գ. Զահորկյան, Գրաբարի քերականության պատմություն, էջ 25–26:

կորցրել իր նշանակությունը հայերենի, հատկապես գրաբարի քերականական կառուցվածքի ուսումնասիրության տեսակետից:

Ըստ այդմ էլ Գալանոսի քերականության մեջ գործածված տերմիններն որոշակի կարևորություն են ներկայացնում հայերենի քերականական տերմինաբանության պատմության ասպարեզում: Եվ դրան համապատասխան, դեռևս իր ժամանակին, առանձին հետաքրքրություն է առաջացած եղել այդ քերականության մեջ գործածված տերմինների և տերմինային անվանումների նկատմամբ, և դրա լավագույն վկայությունը ՄՄՀ 7560-ում (էջ 41ա-64թ) տեղ գտած տերմինարանն է:

Վերև այդեն նշել ենք, որ սույն հայերեն-լատիներեն տերմինարանը գրվել է Մադրասում: Իսկ Կղ. Գալանոսի քերականությունը, որ երևան է եկել դրանից ավելի քան 110 տարի առաջ, չէր կարող ամենելին դուրս մնալ հնդկահայ գաղութի գործիչների ուշադրությունից: Կարծում ենք, որ այդ քերականությունը հասել էր նաև Մադրաս և հիմք հանդիսացել հայերեն-լատիներեն տերմինարան կազմելու: Հայերեն գրավոր հուշարձանների պատմությանն, ի միջի այլոց, խորթ չէ այն դեպքը, երբ տպագիր այս կամ այն աղբյուրի հիման վրա կազմում է որևէ ձեռագիր աշխատանք: Այս դեպքում ևս գործ ունենք նույն իրողության հետ. տպագրված գրքից առանձնացված են քերականական հասկացությունների անվանումները, և ըստ այդմ կազմվել է ձեռագիր փոքր ծավալի մի առանձին քառարան: Երկրորդաբար նշենք, որ սա հնարավորություն է տալիս խոսելու հայ նշակույթի համեմատաբար կարևոր օջախներից երկուսի՝ Հռոմի և Մադրասի գիտական շփումների և առնչությունների մասին:

Սույն տերմինարանի կառուցվածքի և հատկապես բովանդակության առումով պակաս կարևոր չէ հետևյալը: Հայերեն-լատիներեն ձեռագիր տերմինարանում, այնուամենայնիվ իր բնօրինակ քերականական աշխատության համեմատությամբ կան որոշ տարբերություններ: Այսպես, տերմինարանում փոքրիշատե մեղմացվել և վերանայվել նույնիսկ քաց են քողնվել Կղ. Գալանոսի աշխատության մեջ տեղ գտած լատիներեն քերականական տերմինները: Դա արվել է այն նկատառումով, որ հնդկահայ գաղութի գործիչներն ամենայն հավանականությամբ նման տերմինները համարել են հետագա շրջանի գրաբարի ընդհանուր կառուցվածքին խորթ երևույթներ: Այս իրողությունն, իր հերթին, հավաստում է, որ հնդկահայ կենտրոնի գործիչը, որ հեղինակել է սույն տերմինարանը, որոշակիորեն իրազեկ է հայերենի զարգացման պատմությանը, քաջատեղյակ է նախորդ դարերի գրաբարի համակարգի մեջ տեղ գտած լատինաբան միտումնավոր խճողումներին, ուստի դրանք իր կազմած տերմինարանում անտեսել է և

կրծատել: Մենք այդպես ենք ենթադրում, և մեր ենթադրությունը ժամանակի տեսակետից գուրկ չէ իրական իհմքից:

Բավականին տեղին է այն հարցը, թե ինչ նպատակով է կազմվել սույն երկլեզվյան քերականական տերմինարանը: Ասենք, որ պատահական չէ նման մի տերմինարանի երևան գալը ժամանակի հնդկահայ գաղութի միջավայրում: Հայտնի է, որ դա մի ժամանակաշրջան էր, երբ հնդկահայ գաղութի գործիչներն առաջինը հայ իրականության մեջ ձեռնարկեցին լուսավորության և կրթության գործին, հայ ժողովրդի հասարակական-քաղաքական զարգունքին: Այդայիսի պայմաններում, բնականաբար, պիտի զարկ տրվեր նաև հոգևոր մի շարք արժեքների, ընդ սմին լեզվի և գրականության գնահատությանն ու տարածմանը:

Քերականական գիտելիքների ձեռքբերման առունով նման առծեռն բառարանի ստեղծումը միանգամայն օրինաշափ երևույթ է: Եվ սույն տերմինարանի առայժմ մեզ անհայտ հեղինակը, հաշվի առնելով ժամանակի ճանաչում գտած քերականական հիշյալ աշխատությունը, նրա լինձեռած նյութի հիման վրա, այդ նյութի քննական օգտագործմամբ կազմում է իր բառարանը: Շնորհակալ գործ է արել մեզ անհայտ հեղինակը: Այն, ցավոք, մնացել է ձեռագիր վկանակում:

Կարծում ենք, որ սույն տերմինարանն այլուհանդերձ ժամանակին խաղացել է իր այն դերը, որի համար և կոչված է եղել: Այն կազմված է եղել գլխավորապես գործնական նկատառումով, իետապնդել է հայերեն քերականական տերմինների, ինչպես նաև դրանց լատիներեն համարժեքների յուրացման և ուսուցման նպատակ: Դա գործնական ուսուցման ուղի է եղել քերականության էռությունը լրիվ և լիարժեք հասկանալու համար:

Ըստ այդմ կարելի է նկատել, որ բոլոր դեպքերում լատիներենով իետաքրքրվել են նաև հնդկահայ գաղութի շրջանակում: Դրա ապացույցներից մեկն էլ այս տերմինարանի ի հայտ գալն է այդ կրթօջախում: Երկլեզվյան բառարանի օգնությամբ քերականական գիտելիքի ձեռքբերումը կա՞մ ունեցել է իր գործնական դրվագքը հնդկահայոց մեջ, կա՞մ անձնական գործածության համար մտահղացել է սույն տերմինարան կազմողը:

Հայերեն-լատիներեն սույն ձեռագիր բառարանը ժամանակին խաղացել է իր դերը նաև հայերենի իմացության գործում: Եվ Կղ. Գալանոսի քերականության հետ կապված՝ այս տերմինարանի մեջ ամփոփված տերմինները, լիբրե նոր շրջանի հայերենի (գրաբարի) բառապաշտի երևույթներ, մեծ արժեք են ներկայացնում հայոց լեզվի պատմության համար: Հայոց լեզվի լնդարձակ և լիարժեք բառարան կազմելու դեպքում հազիվ թե հնարավոր լինի շրջանցել գրավոր այս աղբյուրի տվյալները: Նրանում տեղ

գտած տերմինները և առհասարակ ողջ տերմինարանը թերևս կարողացել է պիտանի լինել իր ժամանակին:

Այսօր այդ տերմինարանն ունի սուկ պատմական նշանակություն: Այդուհանդերձ, այն բավականին ուշազրավ է և ինչ-որ չափով արժեքավոր հայերեն ձեռագրերի ուսումնասիրության, հայոց լեզվի և հատկապես հայ բառարանագրության ամբողջական պատմության համար:

ՀԱՅԵՐԵՆ ԶԵՌԱԳԻՐ ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆԸ

Յուրաքանչյուր բառարան՝ ծեռագիր կամ տպագիր, ունի առանձնահատուկ կողմ: Մեկը բնութագրվում է ծավալով, կառուցվածքի ճոխությամբ, զանազան լեզուների առնչվելու հնարավորությամբ: Մյուսն աշքի է ընկնում իր տեսակով, կիրառության կամ գործածության տարածվածությամբ, որոշակի նպատակի ժառայելու հանգամանքով և այլն: Կան նաև բառարաններ, որոնք ուշագրավ են, քանի որ այդ կարգի բառարաններից առաջինն են: Ուստի կարևոր են ոչ միայն բառայանի ներքին հնարավորություններն ու նպատակի իրականացումը, այլև բառարանի բնույթը և դրա հետ կապված նրա առաջնությունը: Հնարավոր է մի այնպիսի բառարան, որ բառարանագիտական պակաս կառուցվածք ու առանձնահատկություններ ունենա, սակայն խիստ արժեքավոր լինի նրանով, որ այս կամ այն տեսակի մեջ հանդիսանում է առաջինը:

Երևանի Մաշտոցի անվան Մատենադարանի ծեռագիր № 3110-ը ի թիվս Մխիթար Սեբաստացու «Ճարտասանութիւն» (էջ 2ա-73թ) և Մատթեոս Վարդապետի (Մատթեոս Մխիթարյան) «Հայաքումն բառից, որը նշանակութեամբ նոյն կամ մերձաւորը են» (էջ 75ա-112ա) գործերի ամփոփում է մեկ այլ հետաքրքրական բառարան (էջ 113ա-146թ):

Հայ բառարանագրության պատմությանը նվիրված կարևորագույն աշխատություններում սույն ծեռագիր բառարանի մասին, թերևս օբյեկտիվ (առարկայական) պատճառներով, ոչինչ չի ասված⁴⁸:

Ծեռագիր այդ բառարանը մասնագիտորեն մեկնաբանվում է Հ. Անասյանի «Հայկական մատենագիտություն» գլքում⁴⁹, ավելի կոկրետ՝ Վերջինիս «Բառարանագրական նյութեր» բառահոդվածի № 45-47-ում: Ըստ որում ինչպես նկատելի է էջերի համարակալումից, այն ներկայացվում է երեք առանձին մասերով: Այդ մասերը բերվում են համապատասխան վերնագրերով և օրինակներով: Այնուհետև, նշվում է, թե այդ «նյութերը» որտեղ են

⁴⁸Տես, օրինակ, Հ. Անասյան, նշվ. աշխ. : Գ. Գասպարյան, նշվ. աշխ. :

⁴⁹Հ. Անասյան, Հայկական մատենագիտություն, հ. 2, Երևան, 1976:

պահպանվում և ինչ բնույթի են: Տեղեկացվում է նաև, որ բացի ՍՍՀ-ի ֆոնդերից հիշյալ բառարանը տեղ է գտել նաև Երևանի հայկական մատենագիտական ձեռագրաֆոնդում (№ 1048, էջ 281–322, 325–360 և 363–377): Բառարանի հիշյալ երեք մասերից միայն առաջինն է ինչ-որ չափով բնութագրվում, և Հ. Անասյանն ի մասնավորի նշում է հետևյալը. «(Հեղինակը – Վ. Հ.) տալիս է, այբբենական կարգով, բաղադրյալ բառերի առաջին մասերը: Ընդգրկված են նաև ոյտշ թվով նախածանցներ՝ «Ան՝ անայցելու, անսայթաք...» կամ «Ապ՝ ապարդիւն, ապաժոյժ... են»⁵⁰: Դժվար չէ նկատել, որ սա սուկ բանասիրական–մատենագիտական գնահատություն է:

Մատենադարանի «Ցուցակ ձեռագրաց»-ի հեղինակները հիշյալ ձեռագրի բովանդակությունը լրացնելիս նշում են ամենաընդհանուր կողմեր: «Մխ. Սեբաստացոյ ճարտասանութիւն: Մատթէոսի վրդ. –ի Բառզիրը իոմանիշ բառից: Յանգարան»⁵¹ : «Յանգարան» ասելով, հավանաբար, նկատի են առնված ձեռագրի էջ 113բ–146բ-ում գետեղված «նյութերը», որովհետև դրան անմիջաբար նախորդողը նշում է իրեն Մատթէոս վարչապետի գործ: Դա ապացուցվում է «Ցուցակ ձեռագրաց»-ի վերջում բերվող տվյալներով, որտեղ անձնանունների ցանկում «Մատթէոս վրդ., Սխիթարեան, 1731-ից առաջ, բառարանագիր» նշումից հետո հիշվում է նաև ՍՍՀ 3110-ը⁵²: Այս վերջինը, բնականաբար, հիշվում է ոչ թե «Յանգարանի», այլ (կրկնում ենք) «Մատթէոսի վրդ. –ի Բառզիրը իոմանիշ բառից»-ի ծանուցման նպատակով: Որ դա այդպես է, հիմնավորվում է նաև ճիշտ հակադարձորեն: ՍՍՀ №№ 556, 775 և 873-ում, դատելով ձեռագրացուցակը կազմողների ընձեռած տվյալներից, ի թիվս այլ գործերի, հիշատակվում է «Մատթէոսի վրդ.-ի Բառզիրը նոյնանշանք»-ը, այսինքն՝ այդ ձեռագրում բացակայում է «Յանգարանարան»-ը: Եվ ստացվում է այնպես, որ «Ցուցակ ձեռագրաց»-ի հեղինակների նշած «Յանգարանարան»-ը, որ առկա է ՍՍՀ № 3110-ում, այլ քան չէ, քան Հ. Անասյանի գրքում 45–37-ի տակ իրեն «նյութեր» բերվող բառարանը⁵³: «Ցուցակ ձեռագրաց»-ի հեղինակները լիովին ունեն իրավունք, իրեն բանասերներ, այդ «նյութերը» հանգարան կոչելու, որովհետև դրանցում առերևույթ գործ ունենք այնպիսի բառային բաղադրությունների հետ, որոնք կազմված են կրկնվող այս կամ այն բաղադրիչի հիման վրա: Այդ

⁵⁰ Նույն տեղում, էջ 1197:

⁵¹ Տես «Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի», հ. 1, Երևան, 1965, էջ 1528:

⁵² Նույն տեղում, № 17:

⁵³ Հ. Անասյան, նշվ. աշխ., էջ 1197–1198: Ի դեպ, Անասյանը նույն տեղում, հաջորդ՝ № 48-ում, առանձին հիշում է Մատթէոս վարդապետի համապատասխան երկը և նախապատրաստում այն մատենագիտորեն հեղինակի անվան հետ կապված բառահողվածով մեկնարանելուն:

բաղադրիչները կալող են լինել անկախ բառեր, բառարմատներ, ինչպես նաև տարրեր կարգի ածանցնելու: Դրանք, իբրև բաղադրող կամ բաղադրվող իշխաններ, ամեն դեպքում սերում են նոր բառեր: Բաղադրյալ բառերում այս կամ այն բաղադրյալ միալար, անլոնդիատ կրկնությունը կարող է բնազրի առումով արտասովոր դիտվել, և նման տեսքով երևան եկած ձեռագիր «նյութերով» թերևս առաջին հայացքից կարելի է «Յանզարան» համարել: Սակայն ամբողջ հարցն այն է, որ տվյալ դեպքում ի տես, ակնհայտ գործ ունենք յուրօրինակ տիպի բառարանի հետ:

Ե՛վ Հ. Անասյանը, և «Յուցակ ձեռագրաց»-ը կազմողները ՍՄԶ № 3110-ը համերաշխորեն թվագրում են իբրև ԺԸ դարի գրչություն: Լրացուցիչ տվյալների բացակայության պայմաններում առայժմ որևէ առարկության չի կարող լինել, պետք է լիովին համաձայնել նման թվագրմանը:

Այնուհետև, Ն. Պողարյանի կազմած «Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց»-ի⁵⁴ (այսուհետև՝ ԵՄԶ) № 1038-ում (էջ 54, սյունակ 2), որի մասին տեղեկացնում է նաև Հ. Անասյանն իր վերը նշված գրքում, բերվում է հիշյալ բառարանի մատենագիտական նկարագրությունը, լստ որում նկատելի է դառնում ոչ միայն նրանում բառապաշարի լճագրկման բնույթը, այլև հարազատորեն նմանվելը ՍՄԶ № 3110-ին: Այսպես, նույնն են բառարանի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերի վերնագրերը, ինչպես նաև դրանց կից անմիջաբար տրվող նմուշ-օրինակները: Հմմտ. ԵՄԶ, էջ 54, սյունակ 2, վ. 4-9 և ՍՄԶ № 3110, էջ 113ա, վ. 1-6, ԵՄԶ, էջ 54, վ. 11-15 և ՍՄԶ № 3110, էջ 127ա, վ. 1-3, ԵՄԶ, էջ 54, ն. 15-18 և ՍՄԶ № 3110, էջ 140բ, վ. 134 և այլն⁵⁵:

Այսպիսով, եթե ամփոփելու լինենք Վերը շարադրվածը, ապա կարելի է նշել հետևյալը: Ձեռագիր բառարանի մասին առայժմ կան միայն բանասիրական և մատենագիտական տեղեկություններ: Դրանք լիովին բավարար են և որոշ հիմք են հանդիսանում հիշյալ ձեռագիր «նյութերով» լեզվաբանական-բառարանագրական հայեցակետից քննարկելու և ըստ այդմ գնահատելու համար: Ի դեպ, նման քննությունը խիստ անհրաժեշտ է ոչ միայն կոնկրետ հայ բառարանագրության, այլև առհասարակ հայոց լեզվի պատմության տեսակետից: Նման կարգի լեզվաբանական նյութերի վերլուծությունն ու գիտական գնահատությունը կարող են յուրովսանն նպաստել հայերենագիտության զարգացմանն արդի պայմաններում:

⁵⁴ Ն. Պողարյան, Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Հակոբյանց, հ. 4, Երուսաղեմ, 1969:

⁵⁵ ՍՄԶ №3110-ի էջ 140, վ. 2-ում գրված «և եզերին»-ը Հ. Անասյանի գրքում (էջ 1197, ն. 2) վրիպակով տպագրված է «տեղերին»: Նման բառածեր անհարիր է սույն գրաբար քնագրին:

Սույն ծեռագիր բառարանն ուշագրավ է մի քանի առումով: Նախ հարկ ենք համարում հատուկ նշել, որ այն այստեղ քննության ենք առնում ամենից առաջ իր բնույթի (բառարանագրական տիպի) և կառուցվածքի տեսակետից: Այսպես, ծանոթանալով բառարանին ըստ ամենայնի, նկատելի է, որ այն կառուցված է այսպես կոչված բառակազմական բառարանի հետ: Ընդհանուր դիտողությամբ կարելի է ասել, որ բառարանում իբրև բառակազմական բառարան է այս կամ այն պարզ կազմության բառը, բառարմատը կամ ածանցը և ոյրանց (իբրև բաղադրյալ հիմքի) հիման վրա առանձին բաժիններում բաղադրվում են բարդ և ածանցավոր բառեր: Ավելի մանրամասն ոյրանց կանոնադասնանք ստորև:

Իսկ մինչ այդ հարկ ենք համարում խոսել բառարանի կառուցվածքի մասին: Բառարանի հեղինակը սկզբունքորեն առանձնացնում է իինգ մաս⁵⁶: Դրանք տրվում են առանձին վերնագրերով: Այսպես, 1-ին մաս՝ «Մասնկունք բաղադրյականք, եւ սկսբնատառը (փիս. զ-ով գրելու - Վ. Հ.) բաղադրելեաց բազումք» (էջ 113-127ա), 2-րդ մաս՝ «Վերջաբառը բաղադրեալ բառից, բաժանեալը լստ ճայնաւոր տառիցն, որք ի վերջին վանկս նոցա» (էջ 127բ-140ա), 3-րդ մաս՝ «Ածանցականաց անուանց վերջը. լստ զանազան ճայնատրաց տառից, որք ի նոսա են և եզերին բաժանմամբ՝ եղեն ի մի վայր» (էջ 140բ-135ա), 4-րդ մաս՝ «Վերջը ածանցականաց, որք երբեմն զգօրութիւնս նշանակելոյ ունին իբր զընդունելութեանց, որք ի օղ (ընդգծումը մերն է - Վ. Հ.) եզերին» (էջ 146ա-146բ) և 5-րդ մաս՝ «Վերջը ածանցականաց, որք երբեմն զգօրութիւնս նշանակելոյ ունին զբայածականս, որք ի ումն (ընդգծումը մերն է - Վ. Հ.) եզերին» (էջ 146բ):

Ըստ այդմ դժվար չէ վերստին համոզվել, որ բառարանի 1-ին և 2-րդ մասերում, եթե չհաշվենք, բացառենք տեղ գտած վրիպումները և շեղումներն մասերում, այսպիսի բառերունք տեղում են բարդ, իսկ 3-րդ, 4-րդ և 5-րդ մասերում՝ ածանցավոր բառեր: Համեմատաբար ծավալուն են բառարանի 1-ին և 2-րդ մասերը: Այսպես, 1-ին մասն ընդգրկում է 302 բառարանի 1-ին և 2-րդ մասերը: Այսպես, 1-ին մասն ընդգրկում է 302 բառակազմական իմաստինքները բառակազմական իմաստինքները: Ամենափոքր բառակազմական իմաստինքները բառակազմական իմաստինքները: Հմմտ. գայլ-գայլաբարոյ, դար-դարահոս, է-էախնդիր, բաղադրյալություն, խորդ-խորդաբարոյ և այլն: Բառարանի այս մասում լուրջ-լուրջամիտ, խորդ-խորդաբարոյ և այլն: Բառարանի այս մասում ամենաշատը աստուած (24), ինքն (23) և այլ բաղադրվող իմքերով բարդություններն են (աստուածաբարձ, աստուածակիր, աստուածամերձ, աստուածասքանչ և այլն, ինքնիշխան, ինքնահաւան, ինքնակործան,

⁵⁶ Հ. Անասյանն իր գրքում վերջին երկու մասերը չի առանձնացնում, իսկ Ն. Պողարյանն անդադասնում է նաև այդ մասերին (էջ 54, ն. 3-8):

ինքնազօր և այլն): Բառաբայումամբ առաջացած բառերն ամփոփված ենք գտնում նաև բառարանի 2-րդ մասում, որտեղ ի տարրերություն 1-ին մասի բառաբարդումը հիմնականում տեղի է: ունենում բայարմատ բաղադրվող հիմք-գլխաբառով: Հմմտ. ասաց-դատարկասաց, խաղասաց, երգասաց, ժամասաց, այրեաց-կիսայրեաց, հրայրեաց, բաց-արատաբաց, բերանաբաց և այլն:

Բառակազմական բառարանում ածանցումներին նվիրված երեք մասերից համեմատաբար հայտնատ է 1-ինը, այլ կերպ ասած՝ բնդիանուր մասերից Յ-րդը: Այն մեր ստույգ հաշվումով պարունակում է 102 ածանցներով (և սխալմամբ այդպիսին դիտվող այլ կարգի մասնիկներով) բաղադրիված բառեր: Ըստ որում մեծ թիվ են կազմում -ակ (21 անգամ), -ական (18), -ան (11), -արան (24), -իկ(24), -ոտ (15), -որդ (16), -ու (18) և այլ ածանց-բաղադրիվող հիմքներով կազմությունները:

Երեք մասերից 2-րդը պայտանակում է 32 վերջածանցնելով (որտեղ համարժեք են -օղ մասնիկին) հիմնականում մեկական, այլև՝ երկուական -ակ, -իկ, -ուշ, -ուտ, -իչ ածանցնելով բաղադրյություններ, իսկ մյուս 17 նման արժեքով ածանձներն են՝ -ական, -ան, -անք, -ատ, -արան, -աց, -բայ (խաբերա՞յ), -եայ, -եաց, -կան, -աւոր, -ոտ, -որդ, -ու, -ուկ, -ուն և -ոյց (նաւակառոյ՞ց):

Երեք մասերից վերջինը՝ Յ-րդը, լնողակում է 9 վերջածանցներով (որոնք համարժեք են -ումն մասնիկին), բացառությամբ մեկի՝ -ած, մեկական բաղադրություններ (մյուս ածանցներն են՝ -ան, -ուած, -իւն, -մնի, -ունդ, -ունջ, -ուրդ, -ուց (ուռու^ցg):

Այնուհետև, բառարանում մեկ զլխաբառ-բաղադրիվող հիմքով սերվող բաղադրությունների միջին հաճախականությունը 5-6 բառ է: Սա ցածր ցուցանիշ չէ նման ծավալի մի խնդիրատիպ ու յուրօրինակ բառարանի համար:

Բաղադրվող իհմք հանդիսացող գլխաբառերը բառարանում ընտրված են կամայական մոտեցումով, թեև դրանց զգալի մասը գլաբարի բառապաշարի առավել և հաճախ գործածական միավորներ են: Այս իրադրությունն առավել ցայտուն ձևով նկատելի է ածանցների ընտրաթյան դեպքում: Ածանցները, իբրև բաղադրվող իհմքեր, լնդգրկվում են անխտիր, ընդ որում երբեմն դրանցից մի քանիսը դառնում է գլխաբառ բառարանի տարրեր մասերում: Այնուհետև, գլխաբառերը սովորաբար կազմված են կոշտ (ոչ նուրբ) այբբենական եղանակով, այսինքն՝ այբբենական կարգը վերաբերում է միայն բաղադրվող իհմք հանդիսացող գլխաբառերի սկզբնատառերին, իսկ, ասենք, 1-րդ, 3-րդ և հաջորդ դեպքում ստորակարգումն առհասարակ խախտված է: Դրանից բացի, նկատելի է, որ, օրինակ, բառարանի 2-րդ մասում գլխաբառերի այբբենական հերթականությունը մի քանի անգամ փոփոխվում է: Հմտ. Ա-Զ (էջ 127թ-132թ),

Ա-Տ (էջ 132թ-133թ), Խառն (էջ 134ա-թ), Ա-Տ (որոշ տառերի բացքալումով՝ էջ 134թ-137ա), Ա-Փ (որոշ բացքալումներով՝ էջ 137թ-138), Ա-Փ (Խառն, մեջլինյամեջ, որոշ տառերի բացքալումով՝ էջ 137թ-140ա): Գիտական բառարանագրաւրյան տեսակետից նման կազմությունը կամ մոտեցումը բավականին խոցելի է: Դա կոնկրետ դեպքում կարելի է բացատրել ոչ այնքան հեղինակի համապատասխան փորձի պակասով, որքան բառարանն ոչ վերջնական տեսքի բերված լինելու հանգամանքով:

Բայուսական մասերը բարված լինելու համար ենք նկատում նաև Բայուսարանի կազմնան հետ կապված խախտումներ ենք նկատում նաև գլխաբառերի ընտրության, դրանց՝ ըստ բառակազմական տիպերի դասակարգման, գլխաբառերից սերվող բառերի այբբենական թվարկման հարցերում: Ստորև անդրադառնում ենք թվարկված խնդիրներին վերաբերող առավել աչքի լնելող, առավել հատկանշական, բառարանագրական սկզբունքների կիրառման տեսակետից միանգամայն բնորոշ խախտումներին:

ա) Բառարանի 1-ին մասում իբրև գլխաբառ դրված են նաև մի քանի նախածանցներ այն դեպքում, եթե այդ մասում բուն սկզբունքն արմատական բառով, իհմնականում ինքնուրույն գործածություն ունեցող բառերով նոր բաղադրություններ սերելն է⁵⁷: Այսպես, այդ մասում հանդիպում են հետևյալ նախածանցներով բաղադրությունները. ան-~անայցելու, անսայթագ, անստացութիւն, անինչ, անստուած (չստա՞ծ-վ. Հ.), անժամ... անսասնակենցաղ⁵⁸, անարև և այլն (էջ 113ա), ապ-~ապարդիւն, ապաբան, ապատոհմ (ն. տ.), գեր-~գերաշխարհիկ, գերիմաստ, գերամբարձ և այլն (էջ 115բ), դժ-~դժկամակ (էջ 116ա), համ-~համաշխարհիկ, համատարած, համազգի և այլն (էջ 120ա), յար-~յարանուն, յարադրեալ, յարաթարաւ և այլն (էջ 123ա), նախ-~նախաշխատիդ, նախակապուտ, նախավախճան և այլն (էջ 123ա), յար-~յարառութիւն (էջ 123բ):

Հետևողական լինելու դեպքում հեղինակը նման բաղադրությամբ բառերը պիտի դներ բառարանի այն մասում, որը պարունակում է նախածանց-բառակազմական հիմքերով բաղադրված բառեր: Իսկ վրիպումի այսքան տարածված լինելը հազիվ թե հնարավոր լինի բացատրել անուշադրությամբ: Ըստ երևայթին տեղ է գտել ծեռագիրն արտագրելու և էջակալելու հետ կապված մի շփոթ, որն այս դեպքում այնքան էլ հեշտ չէ հստակ կերպով բացատրել: Իսկ վիաստն այն է, որ բարդ բառերի բառակազմական սերմանը

⁵⁷ Հմմտ. Հ. Անասյան, նշվ. աշխ., էջ 1197, ն. 19-22:

⁵⁸ Սիոլ է այդ բառն այստեղ նշելը: Այն բերվում է նաև իր ճշգրիտ տեղում՝ անասուն բաղադրվող հիմքով կազմություններում (էջ 113թ):

վերաբերող բաժնում տեղ է գտել ածանցափոք բառերի բառակազմական սերման դեպքը:

բ) Այդ նույն մասում, Երբեմն բաղադրիվող հիմքը անուշադրաբար կրկնվում է գլխաբառերի տեղադրման ընթացքում: Ըստ որում յուրաքանչյուր դեպքում մեջտեղ են բերվում այլ բաղադրություններ: Օրինակ՝ յորդ ~ յորդառատ, յորդահոսան, յորդախաղաց (էջ 123ա, վ. 2) և քիչ հետո՝ յորդ ~ յորդախօս, յորդահոս (էջ 123ա, վ. 5):

գ) Այնուհետև, բառարանի այդ մասում, որտեղ, ինչպես գլուխենք, առհասարակ գլխաբառ են դիտվում ինքնուրույն բառային միավորները (անկախ բառերը), հանդիպում են նաև բայարմատի գործածության դեպքեր: Այսպես, ապական-ը դիտվել է այդպիսին, թե այն բայարմատ է: Հմմտ. ապական-ել, ապականումն, ապականագործ, ապականաբոյս, ապականաբեր (էջ 114ա): Նման խախտումն այս բառարանում շատ աննշան երևույթ է, հազվադեպ է նկատվում: Դա չի բացառում, որ պետք է նման երևույթն անտեսել առհասարակ:

դ) Կոշտ այբբենական սկզբունքով են ներմուծված նաև տվյալ բաղադրիվող հիմքից սերվող բաղադրությունները: Կարելի է ասել, թե հեղինակն ի հայտ է բերել բառակազմական ներզգացական (ինտուիտիվ) մոտեցում, այսինքն՝ ընտրված գլխաբառից անմիջապես հետո բերվում են բաղադրյալ բառերն այն հերթականությամբ, որով հեղինակն անմիջապես մտարերել է: Սա ընդհանուր երևույթ է և վերաբերում է բառարանի գրեթե բոլոր մասերում տեղ գտած յուրաքանչյուր գլխաբառից սերվող բաղադրությունների հերթակարգությանը: Հմմտ. ծիրանի-ծիրանափայլ, ծիրանածայր, ծիրանածաւալ, ծիրանավաճառ, ծիրանածուէն (էջ 119ա), երանգ-երփներանգ, ծաղկերանգ, յոգներանգ, արիներանգ, գուներանգ (էջ 128ա), -աւէտ-ծաղկաւէտ, փրկաւէտ, ընչաւէտ, պտղաւէտ, շահաւէտ, կենաւէտ, երանաւէտ (էջ 142ա), -սկ-նախահոգակ, խնդրակ (էջ 146ա), -ած-կատարած, տոած (էջ 146բ) և այլն:

ե) Երբեմն բառարանում բաղադրիվող հիմքից սերված բառային բաղադրությունների շարքում երևան են զալիս բառակապակցական տիպի կազմությունները: Այսպիսի միավորները բառարանի մեջ լնդգրկելը վկայում է այն մասին, որ թվում է, թե տվյալ բառակապակցությունից դուրս բառն անկիրառելի է, հանդես է զալիս սոսկ որպես կայուն բառակապակցության բաղադրիչ: Մյուս կողմից նկատելի է, որ խախտվում է բառարան կազմելու բուն սկզբունքը, քանի որ բառակազմական բառարանի մեջ անհարկի ներմուծվում են բառակապակցություններ (մի բան, որ ավելի պատշաճում է այսպես կոչված բառակապակցական բառարանին): Նման միավորներն այս բառարանում այնքան էլ մեծ թիվ չեն կազմում, այլ շատ սակավ են հանդիպում

և չեն անողադառնում բառարանի ընդհանուր կառուցվածքի վրա: Հմմտ. գիշեր ~ գիշերսգ նաց, գիշերավարժ տքնութիւն, զիշերախառն (էջ 115թ), մսի ~ մահահամբոյր պատուհաս, մահահրաւէր թմրութիւն, մահահանգոյն և այլն (էջ 121թ), նոր ~ նորանշան սքանչելիք, նորակնունք և այլն (էջ 123ա), վարժ ~ ձրիավարժ, գիշերավարժ տքնութիւն, հմտավարժ, մասնկավարժ և այլն (էջ 131թ), քայլ ~ սիգ աքայլ երիվար, մեծաքայլ, հանդարտաքայլ (էջ 132ա), դէմ ~ մարդադէմ գազան, այլադէմ և այլն (էջ 134ա), կիր ~ աստուածակիր, մարզարէակիր հոգի, ջրակիր և այլն (էջ 136ա), նիշ ~ քառանիշ սայրասուր, խաչանիշ (էջ 136թ) և այլն:

զ) Բառարանում տեղ են գտել բառարանագրման անուշադրության դեպքեր: Մեկ-երկուսում տվյալ տառով դրված գլխաբառից սերելի բառերի հետ տեղ-տեղ բերվում են բոլորովին այլ բաղադրիչներով կազմություններ: Հմմտ. պահ ~ պահազգեստ, ջահազգեստ, ջահընկալ, պուր ~ պրասուն, հետո՝ ջրասոյզ, ջրապուրպուր, այնուհետև՝ ջրահեղձ, ջրասոյզ, ջրաբի, ջրադարձ, ջրաբեր, ջրաբուխ, ջրիեղեղ, ջրիու (էջ 124ա), պստիկ ~ պստկապահանջ, հետո՝ սաստկագին, սաստկահողմն (ն. տն): Մեկ այլ դեպքում բաց է բողնված գլխաբառի առաջին տառը, նույնը կրկնված է բաղադրյալ բառում՝ (ո)ամիկ ~ (ո)ամկածին (ն. տն)⁵⁹:

է) Վերը նշեցինք սույն բառակազմական բառարանի բառահոդվածի ընդհանուր կառուցվածքի մասին: Այն առհասարակ պարզ ձևակերպում ունի: Բերվում է գլխաբառը և հաջորդաբար թվարկվում են (կամ՝ սերվում են) բաղադրելի միավորները, ընդ որում վերջիններս գլխաբառից անջատվում են սույն միջակետով (մենք տալիս ենք ենթամնայով): Իսկ թվարկվող բաղադրություններից առաջինը գրվում է գլխատառով, ինչպես և գլխաբառը: Այսուհետեւ բառարանում բաղադրվող իիմքից սերվող մի բանի բաղադրությունների դեպքում հեղինակը հարկ է համարում տալ համապատասխան լրացուցիչ բացատրություններ՝ կապված տվյալ կազմության բաղադրման բնույթի, կոնկրետ եղանակի հետ: Այսպես, չափ-ից բաղադրված հասակաչափ բարդությունը, որին կից բերվում են բառակապակցություններ, բացատրելով՝ «շարակցեալք, ոչ բարդեցեալք», և թվարկում՝ «չափ ~ ոգով չափ, առնչափ (՝), մահու չափ, գոյիւ չափ, անձնաչափ» (էջ 130թ)⁶⁰: Այսուհետև, միտ ~ «մանկամիտ, որ է մանկախել» (էջ

⁵⁹ Ո-ի բացքողումը երեխ թե պետք է բացատրել ձեռագրի գլխատառերն այլ՝ կարմիր բանարով գրելու հանգամանքով: Գլխատառերը հետո կարմիր բանարով գրելիս գրիչը, հավանաբար, տվյալ դեպքում վրիպել է: Տես նաև էջ 144ա, 1-2:

⁶⁰ Բերված բաղադրություններից առնչափ-ը և անձնաչափ-ը, այդուհանդերձ, «բարդեցեալք» են:

136а), миаштпјց ~«պատարագ ամատոյց, կաթնամստոյց. լստ այս և այլ անցողական բայից արմատը. մրգ ամատոյց, ցողամստոյց, սերմանամստոյց, սրբամատոյց, նամակամատոյց» (էջ 138ա), ուն ~«զկայուն և զգայուն՝ ինչս. խրախսանս առնել. եռանդուն» (էջ 139բ) և այլն:

Առհասարակ հայտնի է, որ բառակազմական բառարանի ստեղծման կարևորագույն հիմունքներ են բառակազմական հիմքերի ճիշտ ընտրությունը, հստակ ձևակերպումը և ստույգ գործածությունը: Դրանից բացի, ժամանակակից բառարանագիտությունը նման տիպի բառարանի կազմման վերաբերյալ ներկայումս առանձնացնում է տեսական որոշակի դրույթներ և սկզբունքներ⁶¹: Սույն ձեռագիր բառակազմական բառարանի հեղինակը, ինչպես տեսնում ենք, հանդես է քերում ավելի շատ գործնական-բառարանագրական մոտեցում: Դա պայմանավորված է ժամանակի բառարանագիտության ընդհանուր մակարդակով: Այստեղ բառակազմական հիմքերի ընտրության, տեղաբաշխման և մեկնարանման խնդիրները լուծվում են նախնական ձևով, ոչ երկարատև մշակմամբ: Այս առումով հարկ ենք համարում ստորև նշել բառարանում տեղ գտած մի բանի, քերես ոչ պակաս կարևոր մանրամասներ:

Բառայրանում բաղադրվող հիմք-զլխարառները հանդես են զայխ հայերենին առհասարակ բնորոշ գրեթե բոլոր կարգի բառակազմական հիմքերով: Դրանից բացի այն ներկայացնում է հայերենի բառակերտման իրական միտումները, արտացոլում է մեր լեզվի բառակազմական միջոցները և եղանակները: Եվ դրանով իսկ վավերացնում է վերջիններիս կենսունակությունը լեզվի գործառության նոր պայմաններում: Մի կողմ քողնելով բառակազմական «մաքուր» հիմքերով բաղադրված բառերը՝ անդրադառնանք այստեղ երևան եկած մի բանի ձևավոր հիմքերով բաղադրություններին՝ կապված դրանց սերման օրինաշափությունների և առանձնահատկությունների, ինչպես նաև անհետեղականությամբ բացատրվող շեղումների հետ:

ա) Քանի որ բառարանը ավանդված է ձեռագիր վիճակում, ուստի նրանում երևան են եկել արտասանական տարրերակներ ներկայացնող հիմքեր, օրինակ՝ հանդարտ զլխարախից սերված բառերից մեկում այն գործածված է հանտարտ գրությամբ՝ հանտարտածայն (էջ 120ա):

բ) Հնչյունափոխական տարրերակներ հանդիսացող հիմքեր (հնչյունի անկում, փոփոխում և այլն). Երախտի-երախտամոռաց, երախտակորոյս (էջ

⁶¹ А. Н. Тихонов, Словообразовательный словарь русского языка, тт. I—II, М., 1985:

116p), թերի~թերալից, թերակատար, թերահաւաս, թերամիտ (էջ 117p), պիղծ~պղծալուր, պղծաշուրբն (էջ 124p), պստիկ~պստկապահանջ (էջ 124p), վերին~վերնագնաց ոգի, վերնաչու, վերնագաւառ (էջ 125p), տեր~տիրագիր, տիրամեծար (էջ 125p) և այլն:

գ) Զեաբանական տարբերակներ հանդիսացող հիմքեր. մեղք~մեղսաբաւիչ, մեղսակործան, մեղսասէր (էջ 122w), սերմանիք~սերմնաբան, սերմնացան, սերմնամատոյց (էջ 125w), փառք~մեծափառք, իրաշափառ, գերափառ, վեհափառ, սնափառ, բարեփառ (էջ 123w) և այլն:

լ) Գործառական տարբերակներ հանդիսացող հիմքեր. հայրեն~հայրենատեաց, հայրենատուր, հայրասպան, հայրախողխող, հայրազեղծ, հայրաբուխ, հայրասէր (էջ 120p), գիր կամ գիծ~գեղեցկագիր, արագագիր, աստուածագիր, անապարագիր և այլն (էջ 125w), հոգի~հոգեշունչ, հոգելից, ոգետանջ (էջ 120p) և այլն:

Այնուհետև, հարկ է նշել, որ բառարանում բառակազմական հիմքերի գործադրման հարցում նկատելի են աննշան վրիպումներ և անճշտություններ: Այսպէս, ունենք չըն (փխ. չին) ~ չնաշխարհիկ (էջ 124w), չըք (փխ. չիք) ~ չքմեղիկ (ն. տ.): Վրիպումներ են նաև հետևյալները. պեղծ ~ պղնծապատ, պղնծածիք (էջ 124w), հարցա~ (փխ. հարց) ~ հարցափործ, հարցաբան (էջ 120w) և այլն:

Երբեմն պատճառական սեռի -ոյց մասնիկը դիտվում է ածանց և դրվում է իբրև գլխաբառ-բաղադրվող հիմք՝ -ոյց ~ ստոյց, դառնարբոյց, անմատոյց, փափկասնոյց, նաևակառոյց (էջ 143p):

Ածանցման տեսակետից սխալ, նույնիսկ շփոթելի կազմություն են հետևյալ տիպի բաղադրությունները. -ակ ~ անքակ (էջ 140p), -բայ ~ երկբայ, խաբերայ (էջ 141w), -բղէտ ~ խայտաբղէտ (էջ 142w), -ին ~ երկիւղագին (էջ 141w), -անի ~ գովանի, բայց՝ ձմերայնի, սքանչանայի (էջ 142w) և այլն⁶²:

Ուշագրավ է նաև այն հարցը, թե այս կամ այն բաղադրվող հիմքով սերված բաղադրությունները հայոց լեզվի բառապաշտի պատմության տեսակետից առհասարակ ինչպիսի արժեք են ծեռք բերում:

Բառարանում տեղ գտած բաղադրյալ բառերը գրեթե գերազանցապես սերված են բնիկ հայերեն բառերի (բառարմատների) և ածանցների հիման վրա: Այս առումով թերևս միակ բացառությունն այն մի բանի փոխառյալ անուններն են, որոնք դիտվում են իբրև -անոս, -ոս ածանցական հիմքերով

⁶² Այստեղ, անշուշտ, կան գրչագրական վրիպումներ, որոնք այլ՝ գրչագիր օրինակ ծեռքի տակ չունենալու պատճառով, ցավոր, հնարավոր չելիքապես ճշգրտել:

բաղադրություններ: Նման բառերը նոր չեն, այլ ավանդված են շատ վաղուց, անոս ~Հերօդիանոս, արիանոս (էջ 143ա), -ոս ~տիտոս, կաթոլիկոս, գղերիկոս (փխ. կղերիկոս, էջ 144ա) և այլն:

Բաղադրյալ բառերը մեծ մասամբ գործածվել են իին գրական հայերենում՝ հանդես գալով իբրև նրա բառապաշտի լայն, կենսունակ շերտի միավորներ: Դա հիմնավորվում է ոչ միայն առաջին իսկ հայացքից, այլև նրանով, որ դրանք բառարանագրված են, ասենք, իին գրական հայերենի բառապաշտին ամփոփող «Նոր բառզիրք հայկագեան լեզուի» (ՆՀԲ) երկիատոր աշխատության մեջ: Բառակազմական բառարանում ավանդաբար հայտնի բաղադրյալ բառերից բացի հանդիպում են նաև այնպիսիները, որոնք չենք գտնում, օրինակ, ՆՀԲ-ում: Դրանք ամենայն հավանականությամբ հետազա կազմություն են, երևան են գալիս ուշ շրջանում և, բնականասար, դրուս են մնացել ՆՀԲ-ից: Ըստ այդմ, սույն բառարանը ստանում է, ինչպես նշել ենք այլ բառարանների դեպքում, հայերենի բառապաշտի պատմական ուսումնասիրության աղբյուրի արժեք:

Բավականին հետաքրքիր է բառարանում քերված բառերը ժամանակագրական տեսանկյունից քննելլ: Դա կարող է առանձին ուշադրության առարկա լինել: Այստեղ հարկ ենք համարում անդրադառնալու բառարանի տարրեր մասերի մի քանի բառահոդվածներում ամփոփված բառերին: Այսպես, անձն բաղադրվող հիմքով քերվում են 11 բաղադրյալ բառեր, որոնք կան ՆՀԲ-ում: Արդար-ից բաղադրված են 7 բառեր, որոնցից վերջին երեքը՝ արդարապատիժ, արդարահաս, արդարավճիռ, չկան ՆՀԲ-ում: Արժան-ից սերված է 5 բառ, որոնցից ՆՀԲ-ն չունի՝ արժանամոյտ, արժանամատոյց: Աղիւս-ից նշվում է երկու կազմություն, 1-ը չունի ՆՀԲ-ն՝ աղիւսարկու⁶³: Այսպես նաև՝ մարդարէ-մարդարէագիծ (չորսից մեկը), մարդ ~մարդադրամն, ևս 2-ը՝ իբրև անկախ բառ⁶⁴. մարդակոյտ, մարդապուր, զգ եստ ~արեգակնազգ եստ, իսկ աղքատազգ եստ-ի փոխարեն ՆՀԲ-ն ունի աղքատազգ եստեալ, սէր ~հակակասէր (12-ից միայն մեկը), դիր ~աղադիր, բանադիր⁶⁵, կարգադիր (13-ից միայն մեկը) և այլն:

Ածանցավոր բառերը համեմատաբար հայտնի բաղադրություններ են: Դրանք բառահոդվածներում քոլոր դեպքերում քիչ են բվարկվում, և դրա հետ կապված՝ բառարանի հեղինակը ներկայացնում է սովորական

⁶³ ՆՀԲ-ն ունի՝ աղիւսարկ, աղիւսարկութիւն:

⁶⁴ ՆՀԲ-ում մարդակոյտ-ը և մարդապուր-ը քերվում են միայն բառակապակցության մեջ՝ մարդակոյտ բազմութիւն, մարդապուր լինել՝ փախչել:

⁶⁵ ՆՀԲ-ն ունի՝ բանադրանք, բանադրեմ, բանադրութիւն:

կազմություններն, ավելի հեշտ, անմիջապես հիշվող բառերը: Այսպես, -աւոր հիմքով նշված 27 բաղադրություններից ՆՀԲ-ն չունի միայն մեկը՝ շքաւոր բառը:

Այն բոլոր բառերը, որոնք չենք գտնում ՆՀԲ-ում, պայմանականորեն և հարաբերականորեն համարում ենք նորաբանություններ, թեկուզ իրենց ժամանակի առումով: Իսկ որպես դրանց աղբյուր, բնականաբար առ այժմ, պետք է նշել սույն բառարանը:

Մյուս կողմից՝ այդ նորաբանությունների մի մասը հանդես է բերել ուրույն կենսունակություն: Այն գործածական է մինչև խսկ մեր օրերում: Օրինակ՝ արդարապատիժ, արդարավճիռ, մարդակույտ, աղքատազգեստ, կարգադիր և այլն: Ժամանակակից հայերենում գործածվող կամ գործածելի այդ բառերն իրենց ակունքներն են գտնում սույն բառակազմական բառարանի մեջ: Եվ այդ բառերի սյատմությանն անդրադառնալիս հարաբերականորեն պետք է վկայակոչել հիշյալ աղբյուրը:

Այսպիսով, բառարանում տեղ գտած և վերջինիս բառապաշարի յուրահատկություններին վերաբերող փաստերը ևս ցույց են տալիս, թե որքան մեծ արժեք ու նշանակություն ունի հայերեն ամեն մի գրավոր հուշարձան, եթե ամբողջովին դիտվի իբրև աղբյուր՝ հայոց լեզվի պատմական բառարանի ստեղծման ճանապարհին:

Ընդհանուր առնամբ ի՞նչ արժեք ունի սույն բառակազմական բառարանը, և նրա հեղինակը տվյալ դեպքում ի՞նչ նպատակ է հետապնդել: Այս հարցերը բնականորեն ծագում են այն բանից հետո, երբ հանգամանալից ծանոթացանք նրա կառուցվածքին, կազմության առանձնահատկություններին, ինչպես նաև նրանում տեղ գտած որոշ «քերացումներին»:

Իր բնույթով բառարանը բառակազմական է, որտեղ բառահոդվածները կառուցված են ելակետային գլխարարերից բառային նոր բաղադրություններ սերելու սկզբունքով: Նման տիպի բառարանի գոյությունն ավելի քան երկու հարյուր տարի առաջ, որքան հայտնի է մեզ առհասարակ, և որքանով հնարավոր է այն պարզել հայ բառարանագրության պատմությանը նվիրված աշխատություններից և կողմնակի աղբյուրներից, միանգամայն աննախադեպ իրողություն է: Այս հանգամանքը բառարանը դարձնում է եզակի և ինքնատիպ մի գրավոր աղբյուր հայ բառարանագրության անդաստանում: Այդ բառարանն այսօր արժեքավոր է ամենից առաջ հենց այդ տեսակետից: Չափազանցություն չի լինի ասել, որ այն հայ բառարանագրության մեջ առայսօր ինքնատիպ երևույթ է: Ուստի և պարզ է դառնում, որ բառարանն առանձին դիրք է գրավում հայերեն տարբեր տիպի և բնույթի բառարանների շարքում: Թեև այն ամենելին պատկառազգու չէ իր ծավալով (պարունակում է

լնդամենը 66 էջ), նույնիսկ չի զարմացնում բառարանագրական հմտություն և կառուցվածքի հստակության տեսակետից:

Իսկ այն հարցը, թե ինչ նպատակ է հետապնդել սույն բառարանը, բավականին ուշագրավ է հատկապես ժամանակի գրաբար հայերենի մշակման և կատարելագործման, ինչպես նաև նրա գործնական ուսուցման տեսակետից: 18-րդ դարը, ինչպես զիտենք, հայոց լեզվի զարգացման առումով սերտորեն առնչվում է նախորդ դարին: Դա այդպես է հայ մշակույթի առումով: Դա մի շրջան է, երբ ինքնուրույն կունի մեջ է դրվում հայ մշակույթի նորովի ուսումնասիրումը, նոր հեռանկար է բացվում մեր իրականության մտավոր, այդ թվում նաև լեզվի առաջընթացի համար:

Այսպես, ընդհանուր վերելքի պայմաններում ժամանակին կարևոր էր դառնում նոր գրական լեզվի խնդրի լուծումը: Հայտնի է, որ 18-րդ դարում հայերենը գործածվում էր գրական երկու տարրերակով՝ գրաբարով և գրական աշխարհաբարով: Ըստ որում գրաբարի գրավոր գործառության ոլորտներն ավելի լայն էին, քան գրական աշխարհաբարինը: Այդ շրջանում, օրինակ, գրաբար գրքերը, պարբերական մամուլը մի քանի անգամ գերազանցում էին գրական աշխարհաբարով ստեղծվածներին: Հետագայում է միայն, որ գրական աշխարհաբարն առարկայական (օրյեկտիվ) հանգամանքների պայմաններում, գործառապես ավելի է առաջայինում և 19-րդ դարի երկրորդ կեսից ի վեր այն դառնում է միահեծան գրական լեզու: Այդպիսով էլ այն անընդհատ կատարելագործվում է ոչ միայն ինքնուրույն զարգացման ճանապարհով, այլև ի հաշիվ գրաբարի արժեքավոր, նպաստավոր իրողությունների ընդունման և ընդօրինման⁶⁶:

Եվ նման պայմաններում է, որ գրաբարի կողմնակիցներն իրենց բոլոր զանքերն ի սպաս են դնում նախ գրաբարի ներսում տեղ գտած օտար ազդեցության, ինչպես օրինակ՝ լատինաբան ազդեցության հաղթահարմանը, որը տևում է 18-րդ դարի սկզբներից մինչև 80-րդ թվականներն ընկած ժամանակամիջոցում: Այնուհետև, ի հակառակություն ժամանակի գրական աշխարհաբարի, այս դարերում գրաբարն իր կողմնակիցների կողմից ենթարկվում է մանրակրկիտ մշակման և կատարելագործման, և դա տեղի է ունենում 18-րդ դարի 80-ական թվականներից հետո, մինչև 19-րդ դարի 60-ական թվականների սկիզբը: Վերջապես, գրաբարի կողմնակիցներն աստիճանաբար սկսում են գրաբարը ներքաշել գրական աշխարհաբարի մեջ, որովհետև անհնարին էր դառնում գրաբարն ինքնուրույն գրական լեզու

⁶⁶ Ավելի մանրամասն տես Վ. Գ. Համբարձումյան, Գրաբարի գործառությունը որպես գրական լեզու ԺՀ-ԺԹ դդ., Երևան, 1990:

դարձնելու խնդիրը, որն էլ կատարվում է 19-յուղ դարի 60-ական թվականներից հետո եկող ժամանակամիջոցում: Այս ամենը համառոտ թվարկում և մատնանշում ենք, որպեսզի պարզ դառնա, թե մեր ուշադրության առկա սույն բառակազմական բառարանն իր բառամթերքով ինչքանով է նպաստել կամ ծառայել իին կամ նոր գրական հայերենի զարգացմանն ու կատարելացմանը:

Եվ այդ տեսակետից, ահա, կարծում ենք, որ սույն բառակազմական բառարանը ստեղծված պիտի լինի 18-րդ դարի կեսերից մինչև դարի վերջերն ընկած ժամանակում, որտվիետև այն ամբողջովին կոչված է եղել նպաստելու գրաբարի բառապաշտի կանոնավոր (նորմատիվ) յուրացմանն ու առօրյա գործածությանը: Սա է հիշյալ բառարանի ստեղծման բուն նպատակը:

Այդ նպատակով հեղինակը դիմել է իր ժամանակի առումով բավականին յուրօրինակ միջոցի, այն է՝ Խորինել գրաբարի բառապաշտի ուսուցումն առաջ տանելու գործին ծառայող, ձևով ինքնատիպ և օգտագործման առումով խիստ մատչելի մի առձեռն բառարան: Նրանում տեղ գտած բառահոդվածների կառուցման բառակազմական սկզբունքը, գրաբարի բառակազմական միջոցների և եղանակների հիման վրա բառարանում առանձին մասերի առանձնացումը, գրաբարի բառապաշտի հայտնի, նախկինում ավանդված, ինչպես նաև հայերենի զարգացման փուլում կազմված բառերի մասնակի օգտագործումն այն արմատական հանգամանքներն են, որոնք լիովին հավաստում են, որ բառարանն ըստ ամենայնի նպատակ է ունեցել ծառայելու գրաբարի բառապաշտի գործնական ուսուցման նպատակին:

Վերջում ավելացնենք հետեւյալը: Ամենայն հավանականությամբ բառարանը կոչված է եղել բավարարելու գրաբարի բառապաշտի լավոցական ուսուցմանն ու յուրացմանը: Հեղինակը դիմել է բավականին յուրահատուկ միջոցի, այն է՝ բառապաշտին ուսուցանել մերուդական նման եղանակով: Բառարանի բառահոդվածների կառուցման նման սկզբունքը դրա լավագույն վկայությունն է: Իսկ այդ սկզբունքի իրականացման տեսական արժեքն այն է, որ արդյունքում ունենք նոր տիպի, բառակազմական սկզբունքով կազմված բառարան: Գործնականում եղած բառից նոր բառեր կազմելու եղանակով լեզվի բառապաշտի ուսուցումն որևէ դժվարություն չի հարուցում, ավելին՝ այն բավականին հետաքրքիր է:

Այսպիսով, իբրև ընդհանուր եզրակացություն կարելի է նշել հետեւյալը: Հայ բառարանագրության պատմության մեջ որոշակի հետաքրքրություն է ներկայացնում սույն ձեռագիր բառակազմական բառարանը, այն իր բնույթով, կառուցվածքով և հետապնդած նպատակով առանձնանում է մյուս կարգի բառարաններից, որպես այդպիսին՝ կարող է իիմք հանդիսանալ ոչ միայն ժամանակակից հայերենը բառապաշտը նույն սկզբունքով բառարանագրելու

գործին, այլև մեր լեզվի բառապաշտի դպրոցական յուրացման, ըստ ամենայնի տիրապետման և գործածության ամեն մի կոնկրետ ձեռնարկման, և բառապաշտի նորությունից բացի այդ հանգամանքները կազմում են ինքնույթույն տիպ ներկայացնող այս բառարանի կարևոր կողմերը:

ԿՂԵՇՊԱՏՐԱ ՍԱՐՎՅՅՅԱՆԻ «ԲԱՆԱԼԻ ԳԻՏՈՒԹԵԱՆ» ԳԻՐՔՆ ԻԲՐԵՎ ԲԱՌԱՐԱՆԱԳՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Այս աշխատությունն ամենից առաջ հայտնի է եղել իբրև բառարանագրական հուշարձան՝ կապված գրական աշխարհաբարի պատմության հետ: Եվ որպես այդպիսին՝ այն հայ բառարանագիտության ուշագրավ երևոյթներից է: Այդ գիրքը հանդիսանում է հայերենի և ռուսերենի զուգայրական ուսումնասիլության մի յուրօրինակ նմուշ, որին միաժամանակ վիճակված էր լինելու առաջինը մի շարք առումներով: Մեր օրերում ևս չի թուլանում հետաքրքրությունն այդ աշխատության նկատմամբ: Նրանում առաջայրված և ժամանակի կարիքների, պահանջների բավարարմանը ծառայած շատ խնդիրներ չեն դադարում այդպիսին լինելուց նաև մեր ժամանակներում, եթե իր ամբողջ սրությամբ շոշափվում է երկլեզվության հարցի կարևորությունը հասարակական հաղորդակցման գործընթացում:

Հայազգի օրիորդ Կղ. Սարաֆյանի «Գիրք որ կոչի բանալի գիտութեան» աշխատությունը տպագրվել է 1788 թվականին (օգոստոսի 1-ին), Պետերբուրգում⁶⁷: Գիրքը, լինելով հայերենի և ռուսերենի զուգայրական ուսումնասիլություն, ժամանակին ծառայել է իբրև դասագիրք, լսում որում լիովին խաղացել է իր այդ դերը երկու լեզուների ուսուցման և յուրացման գործում:

Այսօր, զյուքի տպագրությունից ավելի քան երկու հարյուր տարի անց, երբ հայացք ենք զցում հայ և ռուս ժողովուրդների հասարակական, քաղաքական և մշակութային շուրջ հազարամյա առնշությունների պատմությանը, պարզ է դառնում, թե ինչ տեղ է զրավում նման մի աշխատության տպագրությունն իր ժամանակի հայ գիտական և մշակութային կյանքում առհասարակ, ինչպես նաև թե այն ինչպիսի կարևորություն է ներկայացնում մեր օրերում:

⁶⁷ Գիրք որ կոչի բանալի գիտութեան: Ունի սա ընդ իր մասնաւոր այրբենարան, մասնաւոր բառարան և սկզբունք քաղաքական ուսմանց, արարեալ և բարգմանեալ ի ռուսաց լեզուէ ի հայ բարբառ, և ի հայոց լեզուէ ի ռուսաց բարբառ. Կողէօպատրայ դստեր առ ի Ծրիստոս հւանգուցեալ Մովսէսի Սարաֆեան ի յօգուտ մանկանց և ամենից որը ունին զկարօտութիւն և զպիտոյս: Ցամի Տեառն 1788, յօգոստոսի 1. ի Սանկտպետերբուրգ, 285 էջ:

Ամենից առաջ հայկ ենք համարում նշելու, որ այդ գլորքը մեզ համար արժեքավոր երևոյթ է տպագրաթյան վայրի, Ժամանակի և տպագրման հանգամանքների, հեղինակի և իր այդ աշխատությամբ նրա հետապնդած նպատակի, աշխատության բովանդակության, որունում արծարծված հարցերի, ինչպես նաև առհասարակ հայ գրքի պատմության, հայերեն ուսուելու երկլեզվության և հայերենի զարգացման պատմության առումով:

«Բանալի գիտութեան»-ը քերևս աննախաղեավ իրողություն է արեելահայ իրականության շրջանում ոչ միայն իր բովանդակությամբ, այլ նաև իր խաղացած դերի տեսակետից: Այն լիտվին նպաստել է հայերենի և ուսուելու ուսուցման գործին: Այդ ձեռնարկի միջոցով ուսուելու և հայերեն են սովորել հայկական գաղրօջախների շատ մանուկներ, այլազգի երեխաներ:

Կդ. Սարաֆյանի սույն աշխատությունը մինչև այժմ ոչ ամբողջական, մասնակի քննության է առնվել նոր գրական հայերենի, հայ բառարանագրության և հայ գրքի պատմությանը նվիրված հետազոտություններում: Այդ գրքի լեզվական, բառարանագիտական և մատենագիտական վերլուծությունը փոքրիշատե գտնում ենք հատկապես Գ. Զահուկյանի, Գ. Գասպարյանի և Ռ. Իշխանյանի աշխատություններում:

Անհրաժեշտ ենք համարում այդ մասին խոսել փոքր-ինչ ավելի լնդարձակ:

Գ. Զահուկյանն այդ աշխատությանն անդրադառնում է դեռևս իր ատենախոսության մեջ⁶⁸: Վերջինիս ուսուելու սեղմ շարադրանքը, որ զետեղված է նրա հետագա մի աշխատության մեջ⁶⁹, բավականին սույ, ավելի ճիշտ՝ ակնարկային վերլուծումն է Սարաֆյանի երկի: Զահուկյանը ուշադրություն է դարձնում այն կտրմին, թե Սարաֆյանի սույն գլորքն ինչ է բովանդակում. հատուկ ուշադրություն է հատկացվում նրան, որ այդ գրքում շեշտը դրված է այսպես կոչված «քաղաքացիական» հայերենի վրա, որանով ստեղծված են գրույցներ⁷⁰: Ըստ որում այդ գրքում «քաղաքացիական» հայերենն «ավելի է մոտենում գրաբարի բառապաշտին և քերականական ձևերին», նրանում գրաբարյան ձևերն ավելի հաճախակի են հանդես գալիս, քան իր նախորդների աշխատություններում (օրինակ՝ Յ. Շրյողերի): Այնուհետև, ընդգծվում է այդ գրքի նշանակությունը, այն, որ նրանում արտացոլված է խոսակցական «քաղաքացիական լեզվի» բառապաշտը, ըստ

⁶⁸ Գ. Զահուկյան, Հայ լեզվաբանական միտքը և աշխարհաբարի հարցերը 18-19-րդ դարերում (դոկտոր. ատենախոս., 1, ձեռագիր), Երևան, 1955:

⁶⁹ Գ. Բ. Ջայռյան, Общее и армянское языкоизучение, Ереван, 1978:

⁷⁰ Գ. Բ. Ջայռյան, Ուշակ, ս. 310:

որում մեծ տեղ է հատկացրել դրանում ամփոփված բառարաններին: Հատուկ ուշադրություն է դարձվում այն բանին, որ Կղ. Սարաֆյանն իր բառարաններում որոշ տեղ է տալիս ժամանակի խոսակցական «քաղաքացիական» հայերենում եղած փոխառություններին, այլև այն բանին, որ միտում է նկատվում դրանք հետզիետև փոխարինելու հայերեն համարժեքներով: Դրանից բացի, կարևոր են համարվում հին գրական հայերենի բառապաշտի տարրերը, որոնք կիրառվելիս են եղել «քաղաքացիական» հայերենի բառապաշտում՝ երբեմն խոսակցական ձևերի հետ կազմելով կրկնակներ: Այստեղ շեշտվում է, որ այդ բառային կրկնակները վկայում են նոր գրական լեզվի զարգացման ընթացքում եղած ներքին հակասության մասին:

Այնուհետև, Գ. Զահուկյանը «Բանալի գիտութեան» մեջ տեղ գտած բառարանների մասին խոսում է իր հիշյալ գրքի այն բաժնում, որտեղ քննության է առնում հայ բառարնագրության հարցերը՝ իրքև հայ լեզվաբանության մի առանձին բնագավառ⁷¹: Այդտեղ 17–18-րդ դարերի հայ բառարանների սեղմ վերլուծության մեջ (2 էջի սահմաններում) տեղ է հատկացվում Կղ. Սարաֆյանի գրքում լնդգրկված երկլեզվան բառարաններին՝ գրելով լնդամենը հետևյալը. «1788թ. Ս. Պետերբուրգում տպվում է Կղեռպատրա Սարաֆյանի «Բանալի գիտութեան» ուսումնական ձեռնարկը, որում նոր հայերեն լեզվով գրուցարանից բացի տրված են ոուսերեն–հայերեն և հայերեն–ոուսերեն բառարաններ, ըստ որում հայերեն մասն լնդգրկում է ինչպես գրաբար, այնպես և վաղ աշխարհաբար լեզվի բառապաշտը՝ արևելահայ տարբերակով: Ի տարբերություն «Բառզիրք հայկազեան լեզուի» երկրորդ հատորում զետեղված բառարանների նոր հայերենի բառապաշտը՝ Կ. Սարաֆյանի բառարանում ավելի կանոնավորված է, բացառված են նեղ բարբառային բառերը և թուրք–պարսկական նորագույն փոխառությունները»⁷²:

Գ. Զահուկյանը հետազում ևս ըստ անհրաժեշտության անդրադառնում է այդ հեղինակի գրքին՝ հատկապես կապված իրքև բուհական ձեռնարկ նախատեսված «Հայոց լեզու» գրքի ներածության շարադրման հետ⁷³: Եվ այստեղ էլ, ահա անդրադառնալով արևելահայ գրական լեզվի կառուցվածքի և տիպարանական բնութագրին, կազմավորմանը և ուսումնասիրության

⁷¹ Գ. Բ. Ճյայքյան, Ակադ. սու. ս. 299.

⁷² Նույն տեղում:

⁷³ Տես Գ. Զահուկյան, Ներածություն. – Գ. Բ. Զահուկյան, Է. Բ. Աղայան, Վ. Դ. Առաքելյան, Վ. Ա. Քոսյան, նշվ. աշխ. էջ 3–83:

պատմությանը, Գ. Զահուկյանը հատուկ ուշադրություն է դարձնում վաղ աշխարհաբարի՝ ներածության սահմաններում հարկավոր գնահատությանը (էջ 19–30), այլև բառարանագլությանը (էջ 73–83): Ուրայն ուշադրության առայլա է «քաղաքացիական հայերենի» երկու տարրերակի, նրա տարածման, գործառությունների շրջանակների զանազանության, խոսակցական հիմքերի հետ ունեցած փոխհարերերության և այլ հարցերը: Այդ առումով, այլև կապված Կղ. Սարաֆյանի երկի խաղացւած դերի հետ. Զահուկյանը նշում է հետևյալը (մեջբերում ենք ամբողջությամբ): «Քաղաքացիական հայերենի» երկու հիմնական տարրերակների ընդհանրացման և գրավոր գործածության շրջանակների ընլլայնման հետ միասին միտում է նկատվում արտամղելու բարբառներում տարածված բուրք-պարսկական նորագույն փոխառությունները, դրանք փոխարինելու հայերեն և հատկապես գրաբար համարժեքներուկ ու նորակազմություններով: Այդ միտումը հստակ կերպով արտահայտված է այդեն Կլեոպատրա Սարաֆյանի «Գիրք որ կոչի բանալի զիտութեան» աշխատության ուսերեն-հայերեն և հայերեն-ոստերեն բառարաններում, որոնց հայերեն մասն արտացոլում է «քաղաքացիական հայերենի» բառապաշտարը: Միաժամանակ Կլեոպատրա Սարաֆյանի տված նշումներում «քաղաքացիական հայերենի» արևելահայ տարրերակը ծեսաբանորեն ու բառակազմորեն զգալի չափով հակված է դեպի գրաբարը: Ուստանակ հայաբնակ քաղաքներում տարածված «քաղաքացիական հայերենի» այս տարրերակն էլ հետագայում հիմք դարձավ «Հյուսիսափայլ» ամսագրի լեզվի համար՝ Ստեփանոս Նազարյանի կողմից որակվելով որպես «հասարակաց հայախոսություն»⁷⁴:

Եվ դժվար չէ նկատել, որ այս երկու դեպքում էլ Գ. Զահուկյանի վերլուծությունն ու գնահատությունը լիովին բխում են ատենախոսության ընդհանուր ոլույթներից, ուստի ավելի հեռուն զնացող քայլ չի կատարված հետագայում, և դա մյանգամայն բնական է: Գ. Զահուկյանի դիտարկումներն ու տեսական արժեքավորումը, որոնք տրված են Կղ. Սարաֆյանի հիշյալ աշխատությանը, ներկայացնում են ոչ թե հայ բառարանագրության, այլ հայոց լեզվի պատմության հարցերի քննության շրջանակում, կազմում են հայ լեզվաբանության պատմության մի որոշակի շրջանում կատարված աշխատանքների արդյունքը: Այսպես, Կղ. Սարաֆյանի աշխատության լեզուն, իբրև ժամանակի «քաղաքացիական հայերենի» արտացոլում, իր ընդհանուր գծերով հիմք է համարվում հետազա շրջանի հայերենի՝ տեղ գտնելով, ինչպես

⁷⁴ Նույն տեղում, էջ 21–22:

նշում է Գ. Զահորկյանը, «Հյուսիսափայլի» մեջ՝ դառնալով «հասարակաց հայախոսության» կազմավորման նախապայման։ Ուստի ստացվում է այնպէս, որ մինչև մեր օրերի գրական հայերենը ծզվող «հյուսիսափայլյան»–նազարյանական–նալբանդյանական գրական արևելահայերենն իր ակունքներով «սնված» է եղել Կո. Սարաֆյանի աշխատության ժամանակներում գործառող «քաղաքացիական հայերենից» և ըստ Գ. Զահորկյանի անցկացրած ուղեգծի՝ փաստորեն որոշ շափով դեր է խաղացել այդ աշխատությունը՝ իր լեզվական կողմով։

Այնուհետև, Գ. Զահորկյանը «Բանալի զիտութեան» գրքում գետեղված «քառարանների» մասին խոսում է արևելահայ գրական լեզվի բառապաշարն ընդգրկող բառարանների վերլուծության առնչությամբ՝ գտնելով, որ դրանք այլ տեսակետից առաջինն են։ Այս կետում ուշադրության բուն առարկան են հետևյալ խնդիրները։ Ընդհանուր գծերով բնորոշվում է Կո. Սարաֆյանի գլուքը՝ իբրև տպագրական երևույթ, նրա ընդգրկած նյութի, այլև առհասարակ խալացած դերի տեսանկյունից։ Նշվում է, որ «հայերեն–ռուսերեն բառարանը պարունակում է շուրջ 2000, ռուսերեն–հայերեն բառարանը՝ շուրջ 2500 բառահոլված»⁷⁵։ Նկատնենք, որ այս բվական տվյալները բերված են ըստ Գ. Գասպարյանի հաշվումների, ուստի մոտավոր են և անիրական⁷⁶։ Այդուհանդերձ այստեղ որոշակի տեղ է հատկացվում բառարանի գնահատությանը՝ կապված ժամանակի խոսակցական լեզվի արտացոլման խնդրի հետ, ըստ որում հիմնականում բերվում են այն դիտարկումները ու տրվում են գնահատություններ, որոնց հանդիպում ենք հեղինակի վերը նշված աշխատություններում։ Իսկ յ տարբերաւթյուն վերջինների՝ այստեղ մատնանշվում են մասնավոր լիտողություններ, ինչպես՝ գրաբարյան հոգնակիլի ձևով վերցված բառերի եզականացումը, բարբառային փոխառությունների, նորակազմությունների դիմելը, խոսակցական լեզվին բնորոշ հարադրություններ կազմելը և այլն։

Գ. Գասպարյանն իր հիշյալ աշխատության մեջ Կո. Սարաֆյանի «Բանալի զիտութեան» գլքում տեղ գտած «քառարաններին», բնականաբար, հատկացվում է առանձին բաժին⁷⁷։ Ընդամենը 4 էջի սահմաններում շատ սեղմ շարադրանքով փորձ է արվում ներկայացնելու այլ ուշագրավ ու ինքնատիպ աշխատության բառարանագրական արժեքը, նրա խաղացած դերը հայոց լեզվի երկլեզվյան, բառարանային ուսուցման գործում։ Այդտեղ

⁷⁵ Նույն տեղում, էջ 74–75։

⁷⁶ Գ. Գասպարյան, Հայ բառարանագրության պատմություն, էջ 111։

⁷⁷ Նույն տեղում, էջ 111–116։

մասնավորապես շոշափվում են հետևյալ հայցերը: Բերվում են տպագրության վայրի, ժամանակի մասին սուղ տեղեկություններ և տրվում է աշխատության ընդարձակ վերնագիրը: Նշվում է, որ այն կազմված է «ինքնուսույցի հիմունքներով», այն է՝ հնչյունական երևոյթների, վաճակի և վերջինիս դասավորության բնույթի մասին կան մանրամասն գիտելիքներ: Հատուկ նշվում է, որ «քառարանի հայ-ռուսերեն բաժինն ունի մոտ 2000, իսկ ռուս-հայերեն բաժինը՝ 2500 բառահոդված, մեծ մասամբ ժողովրդի կենցաղին, առօրյա կյանքին վերաբերող բառեր»⁷⁸:

Այստեղ անհրաժեշտ ենք համարում բերել հետևյալ առարկությունները:

ա) Հնչյունական համակարգի ուսուցման ինքնօրինակ մեթոդիկայից չի կարելի եզրահանգում անել, թե զիրքը գրված է «ինքնուսույցի հիմունքներով»: Որովհետև նախ՝ նման մեթոդիկայից արդյո՞ք բխում է, որ կազմված է եղել որպես ինքնուսույց, երկրորդ՝ հայտնի է, որ դա եղել է ռուսական միջավայրում՝ կրթարաններում, դպրոցներում և այլն, երրորդ՝ հանդիսացել է այն դասագիրքը, որով ցանկացաղները՝ աշակերտներ, ուսումնական անձինք, ռուսախոս հայեր և այլն, սովորել են հայերեն, ինչպես նաև ռուսերեն:

բ) «Քառարանների» բառահոդվածների ծավալին վերաբերող թվերը նշվում են արտաքին տպավորությամբ, առանց նույնիսկ մոտավոր հաշվումների, ելնելով էջերի քանակից, իսկ ամեն մեկի դեպքում՝ դրանց տարբերակությունից: Ըստ այդմ էլ՝ 2-րդ «քառարանը» ավելի մեծ թիվ՝ 2500 բառահոդված է «պարունակում», ինչ է թե էջերով ավելի ծավալուն է, քան 1-ինը: Մենք թվական տվյալներին այսքան խիստ չենք մոտենա, եթե դրանք թյուրիմացության տեղիք չտային և հետագայում չօգտագործվեին ուրիշների կողմից:

գ) Այս դեպքում ևս վիճակագրական տվյալները կամ պիտի չինեն, կամ լինեն ստույգ ու վերջնական, առանց ոյլեւ սխալի:

Ռ. Իշխանյանը «Քանալի գիտութեան»-ն անդրադառնում է իր այն աշխատություններում, որոնք մեծապես վերաբերում են նոր գրական հայերենի և հայ մատենագիտության պատմությանը⁷⁹:

Հայ գլուխ պատմությանը նվիրված աշխատության մեջ Կղ. Սարաֆյանի «Քանալի գիտութեան» գրքի տպագրության և առհասարակ այդ աշխատության՝ աշխարհաբարի պատմության առումով խաղացած դերի մասին նշվում է հետևյալը. «Խալդարյանի հրատարակած գրքերից առաջնեկը՝

⁷⁸ Նույն տեղում, էջ 111:

⁷⁹Տե՛ս Ռ. Իշխանյան, Նոր գրական հայերենը XVII-XVIII դարերում, Երևան, 1979: Նույնը, Հայ գիրքը. 1512-1920, Երևան, 1981:

այբբենարանը («Տետրակ այբբենական», 1781) եղավ Ռուսաստանում տպագրված հայերեն առաջին գլուխը: Այնուհետև հրատարակվել է Կլեոպատրա Սարաֆյանի «Բանալի զիտութեան» անունով հայ-ռուսերեն դասագիրք-բառարանը (1783): Այստեղ կա հայ-ռուսերեն խոսակցարան: Ուշագրավ է, որ դրված են գյուղական արևելահայերեն խոսակցություններ: 1711 թվականից հետո սա առաջին դեպքն է, որ նոր գրական հայերենի (աշխարհաբարի) արևելյան տարբերակով տպագրություն էր կատարվում: Գլուխի առաջին մասը հայ-ռուսերեն բառարան է, երկրորդ մասը հայերեն (աշխարհաբար) խոսել սովորելու ձեռնարկ: Նոր գրական հայերենը բավական մշակված է և ինչ-որ չափով հիշեցնում է ճիշտ 70 տարի անց հրատարակված «Հյուսիսափայլ» նշանավոր ամսագրի լեզուն⁸⁰:

Այս դեպքում կարևոր է այն, որ Ռ. Իշխանյանն առհասարակ բարձր է գնահատում Կղ. Սարաֆյանի զիրքը ժամանակի հայերենի լեզվական բնութագրի տեսակետից։ Այդ առթիվ հատուկ նշում է. «Կղեռպատրա Սարաֆյանի զրքի աշխարհաբարը վկայություն է այն բանի, որ նոր գրական հայերենի արևելյան ճյուղը թեև 18-րդ դարի տպագիր հրապարակումների մեջ արևմտյանի համեմատ շատ չնշին չափով է երևացել, բայց և այնպես գործածվել ու մշակվել է»:⁸²

Այսպիսով, եթե ի մի բերելու վիճենք Կղ. Սարաֆյանի «Բանալի զիտութեան» աշխատության վերաբերյալ մինչև այժմ եղած

⁸⁰ Ա. Խշանյան, Հայ գիրքը, էջ 102:

⁸¹ Ա. Իշխանյան, Հայ գրեպահները ՀՀ ԹՀՀ 132:

⁸² Նույն տեղում, էջ 133:

գնահատություններն, ապա կարելի է ասել, որ Կղ. Սարաֆյանի սույն գիրը քննության առարկա է եղել մասնակիորեն՝ կապված նոր գրական հայերենի, հայ բառարանագրության և առհասարակ հայ լեզվաբանական մտքի պատմության հանգուցային խնդիրների վերահանման ու լուծման հետ։ Գիրը կարեորագույն աղբյուր է եղել ժամանակի գրական աշխարհաբարի և հայերեն բարբառների փոխհարաբերության ուսումնասիրության համար։ Նախկինում հետազոտողներն այդ գրքին անդրադարձել են իրենց աշխատություններում հետազնդած բուն խնդիրների տեսանկյունից։ Ուստի մինչև այժմ չունենք ինչպես այդ, նմանապես շատ ու շատ գրքերին, բառարաններին նվիրված մանրամասն, առանձին վերցված և ամբողջական ուսումնասիրություն։ Դա, անշուշտ, պահանջում է տոկուն, համատեղ ջանքեր և ակնկալում է որոշակի ժամանակ։

Կղ. Սարաֆյանի գիրը լույս է տեսնում հայ ուսյալ վաճառական Գրիգոր Խալդարյանի տպարանում։ Այստեղ միանգամայն օրինական հայց է ծագում Ռուսաստանում հիմնված հայ տպագրական գործի առաքելության, ունեցած արդյունքի, այլև խաղացած դերի վերաբերյալ, որոնցով էլ ավելի է պարզ դառնալու Կղ. Սարաֆյանի սույն աշխատության գրահրատարակչական և կրթական-լուսավորչական արժեքը քե՛ իր ժամանակի համար և քե՛ առհասարակ։

Գր. Խալդարյանի տպարանը Ռուսաստանում հիմնված հայկական առաջին տպարանն է։ Այն սկսել է գործել 1781 թվականին։ Իսկ ո՞վ էր Գր. Խալդարյանը։ Նա նորօւղայեցի վաճառական էր, հայրենանվեր գործի արթուն և սքափի նվիրյալ, որ առևտրական գործերի բերումով լինում է Լոնդոնում, տեղում ձեռք է բերում հայկական տպատառեր և դրանք իր հետ տեղափոխում է Պետերբուրգ։ Իսկ այստեղ այդ անդուլ գործիչը հայթայրում է տպագրական դազզահ ու գործիքներ, այնուհետև ձեռնամուխ է լինում հայերեն գրքերի տպագրությանը։

Տպարանը կոչված էր ծառայելու Ռուսաստանի հայաբնակ վայրերում հայկական գրքեր հրատարակելու գործին։ Դրանով իսկ նպատակ էր որպում ուսումնատեսչ հայ մարդկանց, հատկապես դեռահասների մեջ սերմանելու հայկական կրթությունը։ Նման ձեռնարկումն այն ժամանակված Ռուսաստանում միանգամայն հնարավոր էր, նույնիսկ խրախուսելի ու ընդառաջելի։ Տպագրական գործի ծավալումը և հայկական կրթության ձեռնարկումն այդ շրջանում շատ հատկանշական էր։ Եվ այդ է ապացուցում այն փաստը, որ Գր. Խալդարյանի տպարանում, առաջին իսկ տարում լույս է տեսնում մի այբբենարան («Տետրակ այբբենական»)։ Իսկ յոթ տարի անց տպագրվում է Կղ. Սարաֆյանի հիշյալ դասագիրքը։ Ուստի կարելի է ասել, որ

Խալդարյանի առաջին տպագրած գրքերը հետապնդում են միայն կրթական և ուսուցողական նյութական:

Պետերբուրգում հայկական տպարան հիմնելն ամենին պատահական չէր: Նման միջոցառումն անշուշտ պայմանավորված է եղել 18-րդ դարի 2-րդ կեսին գոյություն ունեցած հայ-ռուսական հարաբերությունների առավել ամրապնդման և գործնական հունի մեջ դնելու ծրագրային նախատեսումներով: Եվ միանգամայն քնական կլինիկ, եթե հասարակական, քաղաքական ծրագրերի իրականացման ճանապարհին պատշաճ տեղ հատկացվել մշակութային խնդիրների առաջադրմանը և դրանց լուծմանը: Որ դա եղել է և իրոք այդպես է, հաստատում է այն փաստը, որ Գ.ր. Խալդարյանի տպարանը բացվում է Ռուսաստանի հայկական թեմի առաջնորդ, ժամանակի մշակութային ականավոր գործիչ Հովսեփի Արլությանի հովանավորությամբ, ինչպես նաև ժամանակի հասարակական նոր հարաբերությունների մեծ մունիսութիվ Հովհաննես Լազարյանի ամենահաս աջակցությամբ: Տպարանը բացվում է ոչ այլ ուրեք, քան Պետերբուրգում, որն, ավելորդ չէ շեշտել, այդ ժամանակ ռուսական արքունիքի նստավայրն էր, հայ-ռուսական առնչություններին գործնական լուծում և ուղղություն տվող հայ հասարակական գործիչների միջավայրը: Օժանդակ աղբյուրներից տեղեկանում ենք, որ այդ տպարանն աշխատելիս է եղել հենց Հովհաննես Լազարյանի առանձնատանը:

Հիշյալ հանգամանքներին ու մանրամասներին ուշադրություն ենք դարձնում քերես ավելի, քան առհասարակ պետք է, որպեսզի առավել ևս լինգդենք, որ բոլորովին էլ պատահական չէ նման պայմաններում Կո. Սարաֆյանի «Բանալի գիտութեան» գրքի լույս տեսնելլ: Գիրքն, ինչ խոսք, առանձնապես չի փայլում իր հրատարակչական շքեղությամբ: Այն, ինչպես այլ դեպքերում և այլ վայրերում տպագրված հայերեն շատ առաջնեկ գրքեր, ունի սովորական, պարզ ու մեկին ծեավորում, տառատեսակների ոչ շքեղ կամ սովորականից բարձր բազմացում և այլն: Ընդհակառակն՝ այս գիրքը մի շարք կողմերով զիջում է մինչ այդ տպագրված հայերեն շատ ու շատ գրքերի: Այս դեպքում օգտագործված է միևնույն տառատեսակը, չկան ներդիր նկարներ, էջագարդեր և լուսանցագարդեր, առանձնացող վերնագրեր, նախշազարդ գլխատառեր և այլն: 277 տարվա վաղեմություն ունեցող հայկական տպագրության համար նման մի գրքի լույս աշխարհ գալը բոլորովին արտակարգ երևույթ պետք է շղիտել: Դա ասում ենք տպագրության արվեստի առումով: Եվ այս ամենը խոսում է այն մասին, որ Գ.ր. Խալդարյանին հավանաբար ավելի շատ մտահոգում էր ավելի շուտ, որ առաջ գիրք տպագրելլ, ուստի և շուտով կրթություն և լուսավորություն տարածելլ,

այսինքն՝ իր ուսումնաբաղծ հայրենակիցների հոգում զարդոնք առաջացնելը։ Իսկ տպագրության հետ կապված մյուս հանգամանքները կարևորագույնի դիմաց դառնում էին ոչ այնքան կարևոր ու առաջնային։ Հակառակ դեպքում այդ մեծահարուստ մարդը հազիվ թե երկմտեր կամ կաշկանդվեր նման հարցերում։

Կղ. Սարաֆյանի «Բանալի գիտութեան» աշխատությունն աննախադեպ երևոյթ է իր բովանդակությամբ, կրթական, մշակութային նոր միջավայրում գործածության մեջ դրվելու և տարածվելու տեսակետից, ինչպես նաև ուսումնական նյութի ընդգրկման տեսակետից վերջինիս բնույթի ու ծավալի առումով։ Ակզրից ևեք կուգենայինք նշել, որ այդ աշխատությունը ժամանակին լիովին և լիարժեք կերպով խաղացել է իր դերը, ամենայն ձևով ծառայել է իր բուն նպատակին։ Իսկ նպատակը եղել է մեկը՝ նպաստել, սատարել հայկական կրթօջախներում և հայաբնակ վայրերում հայերենի և ոուսերենի զուգընթաց ուսումնասիրման, դասավանդման գործի լիարժեք ծավալմանն ու հաջող իրականացմանը։ Դա եղել է զրքի բուն նպատակը։

Ուշագրավ է նաև այն փաստը, որ մինչև սույն զրքի երեան գալը Ռուսաստանի հայկական գաղթավայրերում որեւէ մեկ այլ, նման բնույթի ուսումնական ձեռնարկ չի իրապարակվել։ Ծիշտ է, քանասիրությանը հայտնի են նմանատիպ, ավելի ստույգ՝ երկլեզվյան բառարան կազմելու մեկ-երկու այլ փորձեր, սակայն դրանք նախ՝ եղել են ձեռագիր, երկրորդ՝ այդ իսկ պատճառով մնացել են սահմանափակ, ոչ լայն գործածության վիճակում, երրորդ՝ իրենց ծավալով ու կառուցվածքով որոշակիորեն զիջում են «Բանալի գիտութեան» զրքին։ Նշենք, օրինակ, 19-րդ դ. առաջին կեսի զրիչ և քարգմանիչ Եղիազար (արքեպիսկոպոս) Տեր-Կարպետյան Առնօնցու «Համառու բառարան ի հայոց ի ոուսաց լեզու» փոքրածավալ, սակայն իր բնույթով խիստ արժեքավոր, ինքնատիպ աշխատությունը, որը մինչև այժմ մնում է ձեռագիր վիճակում⁸³։ Վերջինս, իհարկե, կազմվել է ավելի ուշ՝ քերես 19-րդ դարի առաջին կեսին, այդուհանդերձ լիովին արժանի է հանգամանալից, առանձին և լայն ուսումնասիրման գնահատության (տե՛ս ստորև էջ 97–108)։

«Բանալի գիտութեան» զիրքը տպագրվել է բավականին վճռական մի ժամանակաշրջանում, ուստի այդ տպագրությունը պայմանավորված է որոշակի հանգամանքներով։ Այստեղ հարկ ենք համարում այդ խնդրին անդրադառնալ փոքր-ինչ ընդարձակ, որովհետև այդ հանգամանքներն անքակտելիորեն առնչվում են զրքի տպագրությանը թե՛ ուղղակիորեն՝ ընդլիութ

⁸³ Երեանի Մաշտոցի անվան մատենադարանի ձեռ. № 6418:

նրա հեղինակի ով լինելը, ինչ գերդաստանից և զարմից սերվելը, թե՝ անուղղակիորեն՝ պայմանավորված հայ մշակույթի նոր վերելքով ու տարածվածությամբ:

Այսպես, հայտնի է, որ 18-րդ դարի 2-րդ կեսին հայ հասարակական կյանքում տեղի են ունենում դրական զգալի տեղաշարժեր: Դա մի ժամանակաշրջան էր, որը մեզանում հայտնի է ազատազրական պայքարի նոր վերելքով, նոր հույսերի առաջադրումով և պայքարի ընդգրկման շառավիղով: Հիշենք հետևյալ հատկանշական գծերը: Հայ իրականության ազգային ազատազրության բուն ձգտումներ են նկատվում այդ ժամանակ և մայր հայրենիքում, և հայկական զանազան գաղքավայրերում: Ամենուրեք ակնկալվում էր Ռուսաստանի աջակցությունը, որովհետև հուսադրումը բավականին խոստումնալից էր: Իսկ դա ըստ էության քաղաքական պայքարի նոր կողմնորոշում էր, այն էլ բավականին հավանական և իրականանալի, որովհետև համապատասխանում էր ոուսական կայսրության արտաքին քաղաքական շահերին ու մտադրություններին: Հայտնի է, որ այդ ընթացքում որոշակի դաշնագիր էր կնքվում Վրաստանի հետ, տեղի են ունենում կտրուկ բանակցություններ հայ հասարակական–գաղափարական զանազան խմբակցությունների, այլև հայոց եկեղեցու ներկայացուցիչների ու բանագնացների հետ⁸⁴: Դրանից բացի ոուսական կայսրության կողմից հայերին տրվում են տարբեր կարգի արտնություններ, վստահագրեր և պարտավորագրեր տարածքային և սահմանային այս կամ գործողությունը ծավալելիս արգելվների ու կանխման շիանդիպելու նպատակով և այլն: Հայ ազատազրական շարժման գործում անհամեմատ մեծ է լինում Հնդկաստանի և Ռուսաստանի հայկական գաղքավայրերի աշքի ընկնող գործիչների անմիջական մասնակցությունը: Հատկանշական է հնդկահայ գաղութի ներկայացուցիչներ Հովսեփ Էմինի, Շ. Շահամիրյանի, Մ. Բաղրամյանի և ուրիշների ծավալած հետևողական գործունեությունը: Այնուհետև, այդ ընթացքում գործուն և անմիջական մասնակցություն են հանդես բերում հատկապես Աստրախանի և Պետերբուրգի հայկական գաղքօջախների գործիչները: Նրանցից հիշատակելի են, օրինակ, Հովհաննես Լազարյանը, Հովսեփ Արդուրյանը, Գրիգոր Կամպանյանը, Մովսես Սարաֆյանը և ուրիշներ:

⁸⁴ Այս հարցում անհամեմատ մեծ է նոել հատկապես Սիմեոն կարողիկոս Երևանցու բանակցային գործունեությունը. ավելի մանրամասն տես Սիմեոն կարողիկոս Երևանցի, Զամբո, քարզմանությունը, առաջարանը և ծանոքագրությունները Վ. Համբարձումյանի, պատմաշխարհագրական բնույթի ծանոքագրությունները և քարտեզները Գ. Բաղալյանի, «Մուղնի» իրատարակության, Երևան, 2003, էջ Ա-իւ:

Բոլոր դեպքերում ծրագրվում էր հայոթյան ազատազրում օտար բռնակալությունների ժաման ճիրաններից, նախատեսվում էր ազատազրված Հայաստանում ինքնուրույն պետականության վերականգնում: Պանծալի երազանք, որի իրականացման համար էլ կազմվում էին տարրեր բնույթի հատուկ ծրագրեր: Օտար հալածանքների պատճառը, հավանաբար, հայոց անսասան վիճակն էր, քաղաքակիրք ու տոկոն կացությունն իր հազարամյա օրրանում, մշակութային և հոգևոր վերին խոյանքը, որոնք անհարիս էին վերջին հարյուրամյակներում պատուհասված պայմաններին: Հայոց ազատազրական պայքարի ծրագիրն իրականացվելու էր առհասարակ հայոթյան միասնական, համախմբված ջանքերով, վրացական արքունիքի զինակցությամբ, սակայն ոռոսական կայսրության անմիջական աջակցությամբ: Իսկ հետագայում այդ աջակցությունը պիտի լիներ մշտական հովանավորության ձևով:

Ինչո՞ւ ենք այսքան ծանրանում այս արտաքին հանգամանքին, հատկապես՝ ծավալված ազատազրական պայքարի ծրագրերին: Որպեսզի շեշտենք այն իրողությունը, որ այդ գործում իր մեծ ավանդն է ունեցել նաև Մ. Սարաֆյանը, և որ պարզ լինի, թե ինչ հոգևոր ու հայրենասիրական ակունքներից է քիչում Կղ. Սարաֆյանի նվիրվածությունը հայրենի մշակույթին և հայոց լուսավորությանը: Այսպես, 1769 թվականի հունիսի 8-ին Աստրախանի քնակիչ, մետաքաղործությամբ և նավաշինությամբ զբաղվող հայ մեծահարուստ Մովսես Սարաֆյանը Պետերբուրգում քնակվող հայ հասարակական գործիչների իրազեկությամբ և հավանությամբ Ռուսաց Եկատերինա 2-րդ թագուհուն է ներկայացնում հայերի ազատազրության և հայկական պետականության վերականգնման մի ընդարձակ ծրագիր: Վերջինս կարևոր փաստարույթը է համարվում հայ-ոռոսական հարաբերություններում և քազմից վերլուծվել ու ուշադրության է արժանացել պատմագիտության մեջ:

Իսկ ո՞վ էր Մ. Սարաֆյանը: Մեզ հասած սակավ, բայց հավաստի տվյալներով նա ծնվել է Արարատյան դաշտում, հետագայում հաստատվել է Ժամանակի վաճառաշատ Աստրախանում: Իր նյութական միջոցներով, առավել ևս հայրենասիրական անդուլ գործունեությամբ նպաստել է ոչ միայն հայ-ոռոսական հարաբերությունների ձևավորմանն ու զարգացմանը, այլև իր եռանդն է քերել հայության ազատագրության գործի կազմակերպմանն ու արմատավորմանը: Իսկ դա, ինչպես գիտենք, իրականանում է փոքր-ինչ ուշ՝ 19-րդ դարի սկզբներին:

Եվ այս ամենի հենքի վրա միանգամայն ուշազրավ է այն իրողությունը, որ «Բանալի գիտութեան» գրքի հեղինակը ոչ այլ ոք է, քան 18-րդ դարի վերջի և

19-րդի սկզբի հայ ազատագրական պայքարի անխոնջ մարտիկ Ս. Սարաֆյանի խոհեմ ու լեզվագետ դուստրը: Հայրենասեր ու ազատաբաղծ իոր ժառանգն, ահա, ծառայում է նույն վեհ գաղափարին, սակայն փոքր-ինչ այլ՝ մշակույթի հարաբերությունների ամրապնդման ելակետից: Ուստի հայ մշակույթի նորօրյա պատմության մեջ պակաս նշանակություն չունեն Կղ. Սարաֆյանի անունն ու գործը:

Կղ. Սարաֆյանի անունը քերևս շատ քշերին է հայտնի: Նա եղել է մեզանում մեկն այն նվիրյալներից, ում գիտական միտքն ու գործունեությունը ինչ-որ չափով նպաստ են քերել մասնավորապես հայերենագիտության զարգացմանը, առհասարակ հայ-ռուսական լեզվական ու մշակութային առնչությունների արմատավորմանն ու առաջընթացին:

Նա մեզանում մինչև այժմ նույնիսկ մի մոռացված անունն է եղել: Նրա մասին սույ տեղեկություններ են պահպանված մեկ-երկու գիտական աշխատություններում, գրեթե ոչինչ չկա հանրամատչելի գրքերում ու ժողովածուներում⁸⁵: Սակայն որքան էլ մոռացված, Կղ. Սարաֆյանի վաստակը մի պարտադրանք է, որպիսով նրա անունն ու գործի մեծությունը, նույնիսկ վեհությունը ընդմիշտ պիտի պահպանվեն և վերարձարձվեն ի լուր և ի տես մեզ և զալիք սերունդների, որովհետև մեր օրերում ևս գնալով ընդլայնվում և ավելի են ծավալվում և անկախաբար միասնանում հայ-ռուսական գրական, պատմական-մշակութային և գիտական կապերն ու առնչությունները: Դրանց արմատավորման և հաստատման առաջնեկներից է Կղ. Սարաֆյանը: Իր սույն ինքնօրինակ գործով նա նպաստել է այդ կապերի և առնչությունների սկզբնավորմանն և հետագա ամրակայմանը: Նա պարզապես առաջիններից մեկն է, աշքի ընկնող լեզվագետ և հայերենագետ: Իսկ առաջիններին, ինչպես գիտենք, սերունդները անվերապահորեն տալիս են առաջնակարգ դեր ու նշանակություն: Կղ. Սարաֆյանը առաջազնա հայերենագիտության երախտավորուիի է մեզանում:

Կղ. Սարաֆյանը հայ լեզվաբանության պատմությանը հայտնի առաջին կին լեզվաբան-հայերենագետն է: Նա մեզանում առաջին բանասերն է, որ 18-րդ դարում կազմել է հայերեն-ռուսերեն երկլեզվան դասագիրք:

Նրա անձի վերաբերյալ, ցավոք, այսօր քիչ բան է մեզ հայտնի: Հասել են հետևյալ սույ տվյալները. ծնվել է Աստրախանում, իսկ քե երբ, չգիտենք:

⁸⁵ Այդ երեսի հայութու, հայ լեզվագետի անվանը չենք հանդիպում մի այնպիսի համբավավոր, պատկառելի բազմահատորյակում, ինչպիսին է «Հայկական խորհրդային հանրագիտարանը» (հ. 10, Երևան, 1984): Պարզապես բաց է բողնված, վրիպել են, հակառակ դեպքում՝ հնարավոր չ անտեսել:

Բանավոր տվյալի հիման վրա նշվում է, թե նրա խսկական անունը Կղեռպատրա չէ, այլ Ռուսաստանում են նրան այդպես կոչել՝ կամ գեղեցիկ կին լինելու, կամ այդ անվանը հնչումով մոտ անուն ունենալու պատճառով։ Սուր են տվյալները նաև նրա լեզվագիտական գործունեության վերաբերյալ։ «Բանալի գիտութեան» աշխատությունը Կղ. Սարաֆյանի անունով մեզ այժմ հայտնի միակ գիրքն է։ Նշվում է նաև, որ նա 1780 թվականին Աստրախանից տեղափոխվել է Պետերբուրգ։

Կղ. Սարաֆյանի մասին խիստ դրվագանքով է արտահայտվում անցյալ դարի ռուսական մամուլը։ Այսպես, ըստ օժանդակ աղբյուրների տեղեկանում ենք, որ անցյալ դարի 1-ին կեսին լույս տեսնող ռուսական հանդեսներից մեկում տպագրված է հոդված նրա մասին։ Ըստ այդ տեղեկացման՝ հոդվածում ներկայացվում է Սարաֆյանի լեզվագիտական գործունեության համառոտ բնութագիրը, տրվում է ««Բանալի գիտութեան» աշխատության հակիրճ գնահատությունը։ Ուշագրավ են առանձնապես հետևյալ տողերը. «... այս կին գրողը հայտնի է մեզ մոտ որպես խելացի գիտնական հայուհի, որ ծզտել է իր հայրենակիցներին ծանոթացնել ռուսական լեզվին և որի համար հայերեն լեզվով հեղինակել է դասագիրք, որ պարունակում է բանալի գիտության, այբբենարան, բառարան և բարոյախոսական որոշ կանոններ »⁸⁶։

Այսուհետև, ««Բանալի գիտութեան»-ը պատշաճ մակարդակով գնահատված է նաև 20-րդ դարի սկզբի ռուս լեզվաբանության պատմության մեջ։ Այս տեսակետից հատկանշական է Ս. Կ. Բուլիչի «Ակնարկ ռուս լեզվաբանության պատմության» աշխատությունը⁸⁷։ Ռուս ականավոր լեզվաբանը մասնավորապես նշում է հետևյալը. «Սարաֆյանի գիրքը մեզանում առաջին տպագիր ձեռնարկն է հայերեն լեզուն ուսումնասիրելու համար, ընդհանուր առմամբ շատ հարմար և գործնական, բան նոյն ժամանակում լույս տեսած Գրիգոր Խալդարյանի հայ-ռուսերեն բառարանը կամ բառացանկը... (որը) գործնական առումով զիջում է օրիորդ Սարաֆյանի վերը նկարագրված ձեռնարկին»⁸⁸։ Դժվար չէ նկատել, որ Կղ. Սարաֆյանի գիտական գործունեության, հատկապես այդ գրքի վերաբերյալ հեղինակն արտահայտվում է բավականին մեծ ակնածանրով և խորը դրվագանքով։ Նման գնահատությունը ևս վկայում է այն լրողությունը, թե ինչպիսի կարելություն է տրվում այդ աշխատությանը ռուս լեզվագիտության

⁸⁶ "Дамский журнал", № 13, 1830. մեջբերում ենք ըստ Գ. Գասպարյանի նշվ. աշխ. (էջ 115). որովհետև մեզ ոչ մի կերպ չհաջողվեց ձեռի տակ ունենալ ամսագրի հիշյալ համարը։

⁸⁷ С. К. Булич, Очерки истории языкоznания в России, т. 1, С. Петербург, 1904:

⁸⁸ С. К. Булич, Указ. соч., с. 514:

պատմության մեջ: Դա ամենից առաջ բառարանագրական աշխատություն է, որն իր ընտրանքային բառապաշտով հետապնդում է մեկ կամ մյուս լեզվի գործնական ուսուցման խնդիրներ: Ուստի և պետք է կարծել, որ «Բանալի զիտուրեան» զիտրը եղել է կարևոր բառարանագրական իրադարձություն ոչ միայն հայերենագիտության զարգացման, հայոց լեզվի պատմության առումով, այլև առհասարակ հայերենի և ոռուերենի զուգադրական ուսումնասիրության, առանձնապես երկլեզվյան բառարանի միջոցով ուսում առնելու տեսակետից:

Այդ գրքի հրապարակ գալն ըստ էության մի արտացոլում է Ռուսաստանի հայ կրթօջախներում ժամանակին տեղի ունեցող մշակութային ձեռնարկումների: Հայտնի է, որ այդ ժամանակաշրջանում Ռուսաստանի հայաշատ զարթօջախներում որոշակի ուշադրություն էր հատկացվում հայերենի ուսուցման և յուրացման գործին: Ռուսաստանում հաստատված հայկական կրթօջախները գտնվում են սերտ կապերի և փոխադարձ օժանդակության մեջ: Այստեղ գրվում և տպագրվում են թե՛ բնօրրանում, թե՛ տարբեր հայաբնակ վայրերում հայ մշակույթի զարդումներին, կրթական գործին մեծապես զարկ տալուն կոչված տարբեր բնույթի ու ծավալի գործեր: Առանձնապես նշելի է ուսումնական ձեռնարկների ու դասագրքերի կազմումը: Դրանք տպագրվում են հայկական տպարաններում: Այսպես, Աստրախանի հայկական զարթօջախում 1780-ական թվականների սկզբներին հաստատվում է Հովս. Արլությանի հոգևոր ուսումնարանը: Իսկ մինչ այդ կար հատուկ կրթարան, որտեղ ոռու երեխաները պարտադիր, ըստ ամենայնի սովորում էին զանազան արևելյան լեզուներ, այդ թվում նաև հայերեն: Այնուհետև, 1788 թվականին բացվում է ոռուական գիմնազիա, որտեղ ի թիվս այլազգի երեխաների հաճախում են նաև հայ մանուկներ: Այստեղ խիստ հստկանշական է Ս. Կ. Բուլիչի մեկ այլ դիտողությունը. «Հայերեն լեզուն Աստրախանում դասավանդվել է զինվորների և տարաստիճան երեխաների համար բացված դպրոցում, որը հիմնվել էր 1764 թ. : Այդ դպրոցի ծրագրի մեջ ընդհանուր առարկաներից բացի ամրաշինական և նավաշինական առարկաներին զուգընթաց անցնում էին ասիական չորս լեզուներ: 1778 թ. այդ դպրոցը վերածվեց ժողովրդական ուսումնարանի, արևելյան լեզուների ցանցն ավելի ընդարձակվեց, ավելացվեց ևս երկու լեզու, որից մեկը հայերենը»⁸⁹:

Հետաքրքիր է այն փաստը, որ դեռևս նախանցյալ դարի կեսերին Ռուսաստանում հնարավորություն էր ստեղծված և խրախուսվում էր մայրենի

⁸⁹ С. К. Булич, Указ. соч., с. 513 (Մեջբերումն ըստ Գ. Գասպարյանի նշվ. աշխ. էջ 108–109-ի):

լեզվով դասագրքեր կազմելը՝ հայոց գաղթօջախների մանկանց և այլոց համար: Կղ. Սարաֆյանի այդ դասագրքով հայերեն են սովորել հայկական գաղթավայրերի ոռու երեխաներն ու տոհասարակ՝ ոչ հայ անձինք: Նման գնահատությունն, ինչ խոսք, վկայում է այն մասին, որ «Բանալի գիտութեան» գիրքը եղել է ժամանակի հայերենագիտության կարևորագույն ձեռքբերումներից մեկը, բառարանագրական յուրօրինակ դասագիրք-գրուցարան կրթական համակարգում:

Եվ, ահա, նման դպրոցներում հայերենի շուրջ ծագած պահանջները բավարարելու համար 1781 թվականին տպագրվում է վերոհիշյալ այբբենարանը, այնուհետև Կղ. Սարաֆյանի կազմած ձեռնարկ-բառարանը:

Մենք վերը անդրադանք լեզվաբանական-բառարանագիտական այն աշխատություններին, մատենագիտական ուսումնասիրությանը, որոնցում փոքրիշատե խոսվում է Կղ. Սարաֆյանի սույն աշխատության մասին: Դրանցում կատարված վերլուծությունն ու գնահատությունը համարելով ոչ վերջնական, այլև ինչ-որ չափով ներդրում հետազա վերլուծությունների և հետազոտությունների ճանապարհին՝ կարեռ ենք համարում շեշտելու, որ մինչև այժմ եղած գնահատություններից թերևս ամենասակավը բառարանագրական կողմին անդրադառնալն է եղել: Այլ կերպ ասած՝ ակնարկային, գրեթե քոռոցիկ է եղել «Բանալի գիտութեան» աշխատության մեջ որոշակի, թերևս ամենահիմնական տեղը զբաղեցնող հայերեն-ոռուսերեն և ոռուսերեն-հայերեն «բառարանների» բառարանագիտական վերլուծությունը: Ընդ որում կան նույնիսկ լուրջ վրիպումներ, նկատելի անհարկի շտապողականություն և այլն: Այսպես, օրինակ, գրքում տեղ գտած «բառարաններից» առաջինի՝ հայերեն-ոռուսերեն «բառարանի» բառահոդվածները նշվում են մոտ 2000, իսկ երկրորդինը՝ մոտ 2500 միավոր⁹⁰: Եթե առաջին դեպքում տարբերությունը, ինչպես կտեսնենք, շատ չնշին է, ապա ոռու-հայերեն «բառարանի» բառահոդվածների քանակն ավելորդ շտապողականությամբ մեծացված է, այսպես կոչված՝ կլորացված: Արդեն վերը նշել ենք, որ բառարանագիտական աշխատանքի առումով սա, ինչ խոսք, թերացում է: Եվ դրանից բացի, բառարանագիտական աշխատանքում, ընդ որում համառոտ շարադրանքի պայմաններում, թերևս ավելորդ մանրամասնություն է լրիվ նշել «Բանալի գիտութեան» գրքի ընդարձակ, իր ժամանակի սոսվորությամբ՝ «երկարաշունչ» վերնագիրը: Նման մանրամասներին այստեղ ուշադրություն ենք դարձնում, որպեսզի

⁹⁰Տե՛ս Գ. Գասպարյան, նշվ. աշխ., էջ 111:

անառարկելի լինի մեր այն միտքը, թե եղած ուսումնասիրությունը շատ բոուցիկ է Կդ. Սարաֆյանի սույն աշխատությունը բառարանագիտական վերլուծության ենթարկելու առումով: Ուստի միանգամայն տեղին է նոր պայմաններում, ավելի մանրամասն, բոլոր կողմերի նկատումով ձեռնարկելու այդ աշխատության գիտական, մասնավորապես բառարանագիտական վերլուծությանը:

«Բանալի գիտութեան» աշխատությունը, ինչպես նկատելի է դառնում, հայերենի և ռուսերենի հնչյունական համակարգի և բառապաշարի զուգադրական ուսումնասիրություն է: Գիրքը մեզանում տառաջին հայերեն-ռուսերեն զուգադրական քերականությունն է: Ասվածը լիովին վերաբերում է նաև նրանում տեղ գտած «բառարաններին». առաջին անգամ այս աշխատությամբ ավանդվում է ռուսերենին առնչվող երկլեզվան հայերեն բառարանների երկու տիպ: Այս առանձնահատկությունը Կդ. Սարաֆյանի աշխատությանը հաղորդում է ակնհայտ ինքնատիպություն, եթե չասենք՝ բացառիկություն:

Իբրև դասագիրք՝ այն լիովին կոչված է եղել ծառայելու հայերենի օգնությամբ ռուսերեն և հակառակը՝ ռուսերենի միջոցով հայերենին տիրապետելու նպատակին, թեև լինդիանուր դրվածքն այնպիսին է, որ առաջին պլան է մղված հայերենի ուսուցումը: Նման մոտեցումն անկասկած երկու մշակույթների առնչության և փոխադարձ հարստացման ճշմարիտ ուղու սկիզբ է եղել, լեզվական շփումների ելագիծ: Այդ նպատակով են ստեղծվել երկու լեզուների զուգակցությամբ (քարզմանական) բառարանները:

Աշխատությունը բաղկացած է չորս բաժնից, որից երկուսը բառարաններ են:

Առաջին բաժինը (էջ 5-20) այլ բան չէ, բան երկու լեզուների հնչյունական համակարգի ուսուցումը: Այստեղ տրված են հայերենի և ռուսերենի հնչյունական (գրային), հնչադասության հնարավոր դեպքերը, այսինքն՝ տվյալ հնչյունը լեզուներից մեկում կամ մյուսում ինչպես է արտասանվում, իրար հետ ինչպիսի համակցություն են ներկայացնում, գրության և արտասանության ինչ տարբերություն կամ նրբություն ունեն: Այդ երեսույթները դասագրքում բաշխված են առանձին մասերում, ամեն անգամ տրվում է հնչյունների տառադարձությունը, որով ավելի են հեշտացվում այս կամ այն տառի (հնչյունի) արտաքրությունն ու մտապահումը:

Այս առաջին բաժինը, իր հերթին, բաղկացած է երկու մասից, երկուսն էլ վերաբերում են հայերենի և ռուսերենի այրութենի տառերին, որանց գրությանը, գրային համապատասխանությանը, վանկերի քանակին և վանկակազմությանը: Ընդ որում մեկառմեկ բերվում են հնարավոր վանկեր

կազմելու խմբերը՝ երկու լեզուների համար: Հետաքրքիր է, որ նշվում են հայերեն-ռուսերեն երկուսից մինչև վեց փանկ ունեցող բառերի փնջերը, որոնց հաջորդում են ռուսերեն-հայերեն հնչյունական կապակցումների ցանկը, մեկից մինչև վեց փանկ պարունակող ռուսերեն բառերի ցանկեր՝ առանձին-առանձին: Ռուսերեն համարժեքների պատճենումով հեղինակն այս ցանկերն անվանում է միավանկ (էջ 9), երկավանկ (էջ 11), եռավանկ (էջ 11), չորրորդավանկ (էջ 12), հինգավանկ (էջ 12) և վեցավանկ (էջ 13):

Այստեղ ուշագրավ է նաև այն իրողությունը, որ առանձին ուսուցման նյութ են դառնում երկու լեզուների առավել հաճախակի կիրառվող հնչյունական կապակցությունները: Չմոռանանք, որ նման սկզբունքը տարածում է գտնում միայն հետազայում, որքանով այն նկատելի է հայ լեզվաբանության մեջ⁹¹: Այդուհանդեռձ այս բաժինը համեմատաբար ծավալուն չէ, այն կոչում ենք «հեզարան»՝ նկատի առնելով նրանում հատկապես երկու լեզուների հնչյունական-արտասանական («բառերը հեզելու՝ արտասանելու» տեսակետից) նյութի ընդգրկումը:

Գրքի երկրորդ և երրորդ բաժինները հայերեն-ռուսերեն (էջ 21–124) և ռուսերեն-հայերեն (էջ 125–243) «բառարաններն» են: Եթե «հեզարանին» հատկացված էր ընդամենը 15 էջ, ապա այստեղ դրանց թիվը (երկուսինը միասին) հասնում է 222-ի:

«Բառարանները» Կղ. Սարաֆյանի աշխատության բուն մասն են: Առաջ անցնելով ասենք, որ գրքի չորրորդ բաժինը՝ «զրուցարանը», կազմում է փոքր մաս՝ ընդամենը 40 էջ: Ուստի աշխատության առաջին և վերջին բաժինները մյուս երկուսի համեմատությամբ ծավալով շատ քիչ են, մոտ մեկ բառորդ մասը: Կղ. Սարաֆյանի «Բանալի գիտութեան» ամենից շատ և ամենից առաջ բառարանագրական աշխատություն է, մեզանում գոյություն ունեցող հայերեն-ռուսերեն և ռուսերեն-հայերեն առաջին երկինքների բառապահական (կամ բարզմանական) բառարանների նախօրինակ: Իսկ ըստ էության դրանք այլ բան չեն, քան զուգադրվող լեզուների բառապաշարի այսպես կոչված բառարանային ուսուցմանը ծառայող ցանկեր՝ բառի լայն իմաստով: Այլ կերպ ասած՝ տվյալ դեպքում գործ ունենք ոչ թե ինքնուրույն, այլ մատենակից բառարանների հետ: Այդ է եզակի պատճառն այն բանի, որ այդ բառարաններից ոչ մեկի և ոչ մյուսի անունը դրված չէ իբրև գրքի ընդհանուր վերնագիր: Կղ. Սարաֆյանը նպատակահարմար է գտել երկու լեզուների ընտրանքային բառապաշարի օգտագործմամբ կազմելու մատենակից բառարաններ և դրանց զուգադրական

⁹¹ Տես, օրինակ, գ. Բ. Զահորելյան, Է. Բ. Աղայան, Վ. Դ. Առաքելյան, Վ. Ա. Քոսյան, Հայոց լեզու, էջ 8–13:

տառադարձությամբ գործնականորեն ուսուցանել թե՝ մեկ, թե՝ մյուս լեզուն: Եվ դա, անշուշտ, հեղինակին հաջողվել է, որովհետև այդ բառացանկ-«բառարանները» կազմված են միանգամայն մատչելի ձևով, առանց ավելորդ միջամտության ու մեկնաբանումների (բացատրությունների):

Հետաքրքիր է այն փաստը, որ բառապաշարի ընտրանքը կատարված է առանց որևէ խտրականության («անխտիր»), այսինքն՝ ոչ մի կերպ հաշվի չեն առնված ուսուցման նպատակից ելնող սկզբունքները, բոլոր դեպքերում ընտրված են ընդհանուր հասկանալի կարևոր համարվող և շատ գործածական բառեր: Դրանից բացի, ընտրված բառերն այսպես կոչված «զրականացած» չեն, այլ լիովին ներկայացնում են ժամանակի «ընդհանուր» (այլ կերպ ասած՝ «քաղաքացիական») հայերենի, ըստ որում հատկապես արևելահայ տարբերակի վիճակը:

Այստեղ անհրաժեշտ ենք համարում անդրադառնալու այդ «բառարանների» պարունակած բառերի քանակին: Վերն արդեն ասվել է, որ այդ քանակը նախորդ ուսումնասիրողները նշել են մոտավոր չափով (մոտ 2000 և 2500 բառ): Ըստ որում թվական այդ ներքին տարբերությունն էլ, պարզվում է, բացատրվում է նրանով, որ բառարաններից առաջինը պարունակում է 103 էջ, իսկ երկրորդը՝ 118: Ուստի մոտավոր հաշվումները, եթե ոչ ամբողջապես, հիմնված են եղել էջերի նկատելի տարբերության վրա: Շատ էջեր ունեցողին, բնականաբար, հատկացվել է մեծ քանակի բառահոդված: Եվ դա արտաքուստ անվարանելի է, նույնիսկ՝ անխոցելի: Իսկ ըստ էության դա այդպես չէ: Ամբողջ հարցն այն է, որ նման փոքր ծավալի «բառարանների» դեպքում անպայման պիտի հաշվի առնվելին բառահոդվածներն ոչ թե մոտավոր, այլ ստոյգ հաշվարկով:

Մեր հաշվումներով «բառարաններից» առաջինը՝ «հայերեն-ռուսերեն բառարանը», պարունակում է 1970 (և ոչ թե՝ մոտ 2000), իսկ երկրորդը՝ «ռուսերեն-հայերեն բառարանը»՝ 1799 (և ոչ թե՝ մոտ 2500), ընդամենը 3769 բառ կամ «բառահոդված»: Ի՞նչ է ստացվում: Նախ՝ պարզվում է, որ «բառարաններից» երկրորդն ավելի քիչ բառահոդվածներ է պարունակում, քան առաջինը, թեև ըստ էջերի քանակի, որը և իմք է հանդիսացել նախորդ ուսումնասիրողների համար թյուրիմացության մեջ ընկնելու, ավելի ընդարձակ է: Երկրորդ՝ մի դեպքում բառահոդվածների տարբերությունը կազմում է 30, իսկ մյուս դեպքում՝ 701: Երրորդ՝ կարելի է առարկել ասելով, թե այնքան էլ մեծ չէ տարբերությունը, մասնաւոր առաջին բառարանի դեպքում, ընդամենը՝ 30:

Այստեղ ունենք հետևյալ առարկությունները: Նախ՝ նման փոքր ծավալի «բառարանների» բառահոդվածների վիճակագրությունը պիտի լինի ամբողջովին սպառիչ: Ուստի «Բանալի գիտութեան» գրքում տեղ գտած

«հայերեն-ռուսերեն բառարանի» բառահոդվածների մոտավոր հաշվարկների դեպքում 49 բառահոդվածով թվաքանակի կլորացումը ևս չի կարելի հարցի լուծում համարել: Երկրորդ՝ գրքի «ռուսերեն-հայերեն բառարանի» դեպքում այդ վրիպումը կազմում է ճիշտ 701 բառահոդված, այսինքն՝ մոտավոր հաշվարկի դեպքում կլորացվել է այնքան, որը կազմում է ամբողջի ավելի քան մեկ երրորդը: Երրորդ՝ վիճակագրական նման մոտեցումը մեկրննդմիշտ խրախոսելի չէ, քանի որ այն միշտ կարող է ապակողմնորոշել:

«Բառարանների» բառահոդվածների վերաբերյալ անցկացված վիճակագրական վերլուծությունը չի սահմանափակվում միայն բառահոդվածների քանակի սոսկական ճշգրտմամբ: Այն ավելի է խորացված, և այս առումով կարելի է նշել հետևյալը: ա) «Հայերեն-ռուսերեն բառարանում» բառահոդվածները զգալի տարրելություն են տալիս ըստ հայերեն այբուբենի տառերի ունեցած բաշխվածության, որն օրինաշափ ու բնական է հայերենի գրեթե յուրաքանչյուր բառարանի համար: բ) Ամենաշատ բառահոդված բերված է ա (310), իսկ ամենաքիչը ֆ (2) տառով: զ) Մյուս տառերն երկուստեք գրավում են միջին դյուք. մի կողմից՝ հ (131), կ (110), ս (105), մ (94), գ (86), ո (85), բ (76), պ (67), խ (61), վ (56), դ, ե (53-ական), տ (52), իսկ մյուս կողմից՝ ո ը (6-ական), է, ո (11-ական), ժ (30), զ (21), գ (22), ի, չ (24-ական), ց (25), ճ, օ (27-ական), լ (30): Մնացած տառերով բառերն ունեն միջին հաճախականություն: Նույնպիսի վիճակագրություն ենթադրելի է մյուս «Ռուսերեն-հայերեն բառարանի» համար:

«Հայերեն-ռուսերեն բառարանն» ուշագրվավ է նաև այլ առումներով: Նախ՝ բառահոդվածները կառուցված են այն սկզբունքով, որ բերվում է հայերեն բառը, տրվում վերջինիս տառադարձությունը, այլև թարգմանվում է ռուսերեն: Այնուհետև՝ բոլոր բառահոդվածների մանրամասն քննությունից պարզվում է, որ դրանք ներկայացնում են 18-րդ դարի գրական աշխարհաբարի լեզվական վիճակը, այսինքն՝ հանդիպում են ոչ միայն ընդհանուր հայերենյան, ժամանակի խոսակցական հայերենի և գրաբարի բառապաշտիքի տարրերը, այլև այն փոխառությունները, որոնք կատարված են եղել տարբեր ժամանակներում առանձին լեզուներից:

Այստեղ շատ բառեր, որքան էլ եին ու բնիկ լինեն, գործածվում են ժամանակի խոսակցական, թերևս նաև բարբառային հնչյունական արտաքերությամբ: Օրինակ՝ բուրք (փխ. բուրդ), բիրկ (փխ. պիրկ «ձիգ, լարված, կանգնած»), գագաղ (փխ. գագաթ), գիուղ (փխ. գիւղ), լուրջ (փխ. լուրջ) և այլն:

Իբրև գլխարքոն հանդես են գալիս ոչ միայն առանձին բառեր, այլև որպես այդպիսին վերցվում են որոշ բառակապակցություններ: Օրինակ՝ ազատ

արիեստ, ախորժութեամբ հայել, թխախառն դեղին, ծաղկի գլուխ, ծընկան խուփին, խլուրդ մուկն, լիմոնի ծառ, պարսնոցի կապիչ և այլն: Նման քայլի հեղինակը դիմում է հատկապես այն դեպքում, երբ տվյալ բառակապակցությունն ակնհայտութեն հանգեցվելու է ոռուերեն այնպիսի համարժեքի, որն առանձին պարզ բառ է: Սա նշանակում է, որ այդ կարգի տարբերությունը պատճառաբանվում է երկու զուգադրվող լեզուների բառապաշարի տարբերությամբ՝ պայմանավորված այդ նույն լեզուների մտածողության առանձնահատկություններով:

Բավականին զգալի են այն դեպքերը, երբ իբրև գլխաբառ ընտրված են իրար հոմանիշ երկու և ավելի բառեր, լստ որում դրանք առնված են հայերենի տարբերակային այլեայլ շերտերից: Օրինակ՝ ականջ կամ լսելիք, ազդր կամ բարձ, ագի կամ պոչ, աշքնոց կամ ակնոց, մերձ, մօտ կամ հուպ, նեղ կամ անձուկ ճանապարհ, ոմն կամ միւսն, ծիածան կամ աղեղ, ոռոգեցեալ կամ ջրեցեալ և այլն:

Տեղ են գտել նաև այնպիսի գլխաբառեր, որոնք ոչ միայն կայուն բառակապակցություններ են, այլև արտահայտություններ: Օրինակ՝ ողջ մնալ, ոչ է յարմար և այլն:

Այս և այլ կարգի բառահողվածները, որպես կանոն, ոռուերենում արտահայտված են միայն մեկ բառով, բացառությամբ կայուն կապակցությունների և արտահայտությունների բարգմանությունների: Ըստ այդմ կարելի է ասել, որ սույն «բառարանի» հայերեն կողմն աշքի է ընկնում ձևերի առատությամբ, բազմաբառությամբ, իսկ ոռուերենը համեմատաբար զուրկ է դրանցից: Դա բացատրվում է եթե ոչ այլ հանգամանքներով, ապա առնվազն 18-րդ դարի գրական աշխարհաբարի ոչ լիարժեք կանոնարկվածության փաստով:

Իսկ «ոռուերեն-հայերեն բառարանը», կապված հայերեն մասի հետ, աշքի է ընկնում հետևյալ առանձնահատկություններով: Այսուղ բառերը և տառադարձվում են, և բարգմանվում հայերեն: Քիչ չեն այն դեպքերը, երբ ոռուերեն բառը հայերեն բարգմանության մեջ արտահայտվում է մեկ բառով կամ նյան զուգահեռ, իոմանիշ բառակապակցությամբ: Նկատելի նաև այն, որ հայերեն բարգմանությունը տեղ-տեղ լրացվում է զանազան կարգի բացատրություններով (օրինակ՝ բաբոչկա – բարօշկայ-հողամադ. է սա վայրի թոշուն): Շատ հազվադեպ, բայց պատահում է, որ ոռուերեն տվյալ բառի դիմաց նշվում են հայերեն իրար հոմանիշ երկու և ավելի բառեր:

«Բանալի գիտութեան» աշխատության մեջ զետեղված «բառարանների» բառարանագիտական համեմատությունից պարզվում է, որ քիչ չեն այն դեպքերը, երբ այս կամ այն բառահողվածն երկու բառարանում էլ հանդես է

զալիս նույն կերպ, այսինքն՝ մեկը մյուսի հետ լրիվ համընկնում է: Այնպէս է ստացվում, կարծես հեղինակը երբեմն հայերեն-ռուսերեն բառարանում դրված տվյալ բառահողվածը պարզապես շուրջ է տվել ռուսերեն-հայերեն բառարանում (օրինակ՝ ներսային մասն մարմնոյ ~ внутреннія части тела, էջ 89, և հակառակ՝ էջ 138): Դա, կարծում ենք, որոշակիորեն բելադրված է եղել դասագրքի գործնական խնդիրներով, այսինքն՝ կոնկրետ դեպքում նկատի է առնվել մատչելիության և դյուրին բարգմանության հասնելու ձգտումը, որ կարող է առաջանալ ուսուցման գործընթացում:

Անկախ իրենց ծավալի տարբերությունից՝ «բառարաններն» առատ են հոմանիշներով, ըստ որում հաճախ նկատի են առնվում հայերենի գրաբար և աշխարհաբար (օրինակ՝ խօսկ, բան կամ բառ, ինչք, կայք կամ ապրանք), գրական կամ խոսակցական (օրինակ՝ ծիածան կամ աղեղ, ծովս կամ մուխ, պարանոց կամ շլինք, եղջիւր կամ պող, ողկույզ կամ ճիղ), ինչպես նաև բնիկ կամ փոխառյալ (ըստ որում իին կամ նոր, օրինակ՝ նոր կամ թագայ, շագ անակ կամ շամբալութ, պայտառ կամ նալբանդ, պտուղ, միրգ կամ եմիշ), վերջապես իին և նոր (օրինակ՝ ներս բերիլ կամ ներմուծումն), ընտիր կամ սովորական (օրինակ՝ ոռոգել կամ ջրել) տարբերակային ձևերը:

Նման տարբերակված մոտեցումը պայմանավորված է զարգացման նոր շրջանում գործառող հայերենի յուրօրինակ լրիվածքով, ինչպես նաև այն հանգամանքով, որ հեղինակը որևէ խտրականություն չի դնում այդ ձևերից մեկի կամ մյուսի միջև, այսինքն՝ սակավ ուշադրություն է դարձվում ուսուցման պահանջները բավարարող նորմավորմանը:

Կղ. Սաֆարյանի «Բանալի զիտութեան» գիրքը, իրք նոր շրջանի գրավոր աղբյուր, աչքի է ընկնում լեզվական այնպիսի առանձնահատկություններով, որոնք արտացոլում են ժամանակի հայերենի վիճակը: Դա, ինչպես վերը տեսանք, բազմիցս նշում են նախորդ ուսումնասիրողները:

Այստեղ, սակայն, ուշադրություն ենք դարձնում մի այնպիսի առանձնահատկության, որն իսպառ և ամբողջովին բաց են բողել, գրեթե անտեսել են նախորդ ուսումնասիրողները: Դա վերաբերվում է գրքում տեղ գտած լատինարան հայերենի ձևերին: Դրանք անուշադրության են մատնված եղել՝ ա) իրենց պակաս գործածության պատճառով, թ) առհասարակ լատինարան հայերենի անբավարար ուսումնասիրվածության հետևանքով: Ամբողջ հարցն այն է, որ նման կազմության ձևերն, անկախ իրենց գործածության նվազ բազմազանությունից և հաճախականությունից, փաստորեն առկա են մի այնպիսի գրքում, որը գրվել և տպագրվել է ամենևին ոչ լատինարան, այսինքն՝ ոչ կաթոլիկական-միարարական միջավայրում, այլ այդ միջավայրից բոլորովին հեռու՝ Պետերբուրգում:

Այսպես, հանդիպում ենք տարբեր կարգի մի շարք լատինաբան հայերենի ձևերի, լինչպես՝ նոյնոյ (փխ. նորին), ողորմածագունեղ (փխ. ողորմածագոյն, որ զործածվում է բազմաթիվ անգամ), լնանին (փխ. լնուն), ոռոգեցեալ (փխ. ոռոգեալ), ջրեցեալ (փխ. ջրեալ կամ հեղեալ) և այլն:

Թերևս պետք է կարծել, որ նման ձևերի երևան զալը պայմանավորված է միայն այն բանով, որ լատինաբանության հաղթահարման շրջանից հետո դեռևս խպառ չի վերացվել նման ձևերի գործածությունը, ուստի անհնարին չէ դրանց ի հայտ զալը 18-րդ դարի վերջին տասնամյակներին տպագրված գրքերի լեզվում, ըստ որում ոչ թե միտումնավոր կամ գիտակցված ձևով, այլ ինքնաբերաբար, տարածված սովորությի ուժով։ Ռուսահայ միջավայրում լատինաբան ձևերի ինքնաբերական գործածությունը հաստատում է այն իրողությունը, որ մեզանում գործառած լատինաբան հայերենը, իբրև արևեստական, ներմուծյալ լեզվական տարբերակ, արտաքին միջամտությամբ ու «հովանավորությամբ» հասնում է զգալի արդյունավետության, իսկ բուն գործածությունից դադարելուց հետո անօամ դեռևս շարունակում է իրեն զգացնել բնագրային սպրումների, ներքափանցումների ձևով⁹²։ Եվ դա տեղի է ունենում ոչ միայն լատինաբանությամբ հազեցած մշակութային կենտրոններում, այլ նաև դրանցից բավականին հեռու, ավելին՝ միանգամայն գերծ մնացած կենտրոններում։ Այս առումով նշենք, որ «Բանալի գիտութեան» գրքի պարունակած լեզվական փաստերը ուշագրավ են և միանգամայն հավաստի, խոսուն։

Այնուամենայնիվ, սույն աշխատության մեջ ընդգրկված բառարանագրական նյութին այստեղ համեմատաբար սեղմ ենք անդրադառնում: Այնինչ այդ նյութը լիովին արժանի է ավելի մանրամասն քննության: Այս աշխատության լեզվական նյութն անհրաժեշտ է մեկ առ մեկ նկատի ունենալ, օրինակ, հայոց լեզվի պատմության լիածավալ, լայն ուսումնասիրության դեպքում, որովհետև նրա բառապաշտն, իրոք, պարունակում է այնպիսի բառեր, բառերի այնպիսի իմաստային կիրառություններ, որոնք խիստ կարևորություն կարող են ներկայացնել հայոց լեզվի պատմական բառարան ստեղծելու համար:

⁹² Ավելի մանրամասն տե՛ս Վ. Համբարձումյան, Գրաքարի լատինատիպ նորամուծությունների հաղթահարումը XVIII դարում. – «Լրաբեր հասարակական գիտությունների», 1982, № 8, էջ 63–72:

ընդգրկում է երեք առանձին մաս, ըստ որում առաջինը կազմում են խոսակցությունները (էջ 245–256), երկրորդը՝ քաղաքավայրության սկզբունքները (էջ 257–375), իսկ երրորդը՝ մարդկային խղճմտանքի վերաբերյալ տարբեր ժամանակներում ապրած մարդկանց և մտածողների զանազան մտքերն ու մտորումները (էջ 276–283):

Խոսակցությունները չորս կարգի են: Առաջինը վերաբերում է դպրոցական գործին, երկրորդը՝ ճաշկերույթի մի հրավերքի, երրորդը՝ մի դասահարցման, չորրորդը՝ առանձին մի իրավիճակի:

Քաղաքավարական սկզբունքներում շոշափվում են հայրենասիրության, ծնողասիրության, ընկերասիրության, ընտանեսիրության և հավատարմության հարցեր, որոնք բոլոր դեպքերում դրվատանքի են արժանանում: Այս նույն տեղում դատապարտվում են ծովությունը, դատարկակեցությունը և այլ քերություններ:

Մարդկային խղճմտանքին վերաբերող մտքերն ու մտորումները քաղված են հիմնականում իին աշխարհի մեծերի ասույթներից, որոնք հետազոտման ժամանակաշրջանում հայությունում առաջ են բերել քեավոր խոսքի արժեք:

Ինչպես դիպուկ բնորոշում է Հ. Աճառյանը, «Բանալի գիտութեան» գրքում տեղ գտած զրույցների լեզուն «մաքուր արևելահայ աշխարհաբար է՝ խառն գրաբար ձևերով»⁹³:

Սույն զրուցարանը ևս, քնականաբար, ենթադրում է ճանուկներին ու դեռահասներին նպատակասլաց կերպով կրթելու և դաստիարակելու նպատակ: Դրանից բացի, այն ծառայում է հայերենի և ոուսերենի քնազրային ուսուցմանը: Աշխատության այդ բաժինը լրացնում է նախորդ բաժինները և մի տեսակ դառնում այն փորձաքարը, թե մինչ այս ձեռք բերած գիտելիքներն որքանով են յուրացված և ամրակայված: Մյուս կողմից հարկ է նշել, որ այդ զրուցարանը շարադրված է ժամանակի նոր զրական հայերենով, որը քավականաշափ ներծծված է զրաբարով: Այս կետում լիովին պիտի պաշտպանել Հ. Աճառյանի տեսակետը, թեև հարկ կա միաժամանակ նշելու, որ տեղ–տեղ այդ զրույցները միօրինակ չեն:

Այսպիսով, Կղ. Սարաֆյանի «Բանալի գիտութեան» աշխատությունը, իբրև 18-րդ դարի հայ քառարանազրության (նաև այլ կարգի) միավոր, արդյունք է ժամանակին մեզանում տեղի ունեցած մշակութային շարժման, յուրովի ծառայել է երկլեզզյան ուսուցման նպատակին, արտացոլում է այդ շրջանի հայերենի քառապաշտի լեզվական վիճակը: Բառարանագրական

⁹³ Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, հ. 2, Երևան, 1951, էջ 459:

այդ հուշարձանը կարևոր դեր է խաղացել մեր լեզվի զարգացման և դասավանդման գործում: Այն ինչ-որ չափով եղել է բանասեր-լեզվաբանների ուշադրության առարկան և այսօր ևս չի դադարել որոշակի հետաքրքրություն ներկայացնելոց: Այդ աշխատությունն ունի իր ուրույն տեղը հայ մտավոր զարգացման պատմության մեջ: Նրանում ամփոփված բառապաշտին անհրաժեշտ է օգտագործել հայերենի պատմական բառարան կազմելու ժամանակ:

ԳՐԻԳՈՐ ԽԱՆԴԱՎԱՆԸ ԲԱՌԱՎԱՍԳԻՐ

Հայ գրավոր մշակույթը զարգացել է մեծ ոգորումների և մաքառումների գնով: Հայ գրականության և արվեստի, հայոց լեզվի զարգացման և առաջընթացի բազմադարյան պատմությունը նույնացես չի եղել ոյուրին և անկաշկանդ: Ընդհակառակն, այդ ընթացքը հայտնի է իր անսասան վերելքներով ու ափսոսալի վայրէջքներով: Առապարհերն եղել են կաշկանդումներ, խոշընդուռները՝ խիստ վնասաբեր, որոնք երևան են եկել դաժան փորձությունների, վայրագ խորտակումների պահերին: Ըստ որում նկատելի է, որ նման տատանումները եղել են բավականին խորունկ, խև ցնցումները դարձել են գրեթե օրիհասական: Ավելացնենք նաև այն, որ ինքնուրույն ձեռքբերումն ու նվաճումը հաճախ ցավալի կերպով խարարվել են մի չարակամ ձեռքմեկնումով, նույնիսկ ոտնձգությամբ: Դա տեղի է ունեցել մայր հայրենիքում, դրսից եկած և պարտադրված միջոցների հետևանքով: Եվ իբրև փարատում դրա՝ գոյատևման վերընձյուղման ձգտումով այդ ժամանակ, սակայն, ավելացել է ներքին տոկունությունը, նաև արարման սրանչելի համակամությունը:

Հայ մշակույթը դարձել է ավելի ակնառու և առավել ինքնուրույն ու յուրօրինակ: Այն տոկուն և երկարատև ընթացքի վկայություն է, հավաստիք՝ ներքին լարվածության, անկոտրում եռանդի և բնական ինքնարտահայտման: Դա տեղի է ունեցել բնօրրանում, խև հարկադրանքի հետևանքով տարբեր ծագերում հաստատվելու պայմաններում՝ նաև կրթօջախներում: Մեր մշակույթի առաջին վկայարանը մեր լեզուն է, և ի հակառակեն մոտենալով՝ կարելի է ասել, որ մեր լեզուն առաջին հերթին մեր մշակույթն է, վերջինիս արտացոլում՝ գրավոր միջոցներով, կատարելության հասած գրական ուրույն ձևերի մեջ:

Նման պարագայում մշակութային ամեն մի առնչություն, լեզվական յուրաքանչյուր շփում եղել է փորձարկում, այլև իր դրական հետքն է քողել, ունեցել է իր հետևանքը: Հայ իրականության առաջընթացը, հայ մշակույթի զարգացումը շատ ու շատ կողմերով են իրար նման, այլև նույնական, բազում գծերով են համընկնում: Ինչպես ասում են, մեկը մյուսի արտացոլումն է:

Առաջինը լիովին նման է երկրորդին՝ իր խոյ տեսքին, նախորդը հաջորդի հիմունքն է, միաժամանակ բնույթը:

Դրա նմանությունն ունի նաև հայ քազմաղարյան գրականության առաջընթացը: Այստեղ էլ ձեռքբերումը, ինչ խոր, եղել է տեսական, խոյ կորուստը՝ գրեթե մշտապես պատահմունք: Այստեղ ևս կան վայրէջքներ, կան վերլիբացումներ, այստեղ նույնպես խարարումն ու փլուզումը հետևանք են անհաճու միջամտության, նախանձավոր խոշընդուման, քինախնդիր վերաբերմունքի:

Այդպիսին է նաև հայոց լեզվական մշակույթի դարավոր առաջընթացը: Այն քազմագան է և մեծախորհուրդ, իմաստալից, ըմբռնումներով ու գաղափարներով լեցուն, քազմաշերտ, գլուխելիքներով հարուստ: Մեր լեզվական մշակույթը մեր մտքի և հոգու գանձարանն է: Մենք չենք, օտարներն են ամեն առիթով տարբեր ժամանակներում զարմացել նրա հարստությամբ, նրա ինքնատիպությամբ: Այստեղ ամեն մի քառ մի ուրույն գաղափարի կրող է եղել, իմաստների փունջ, կոնկրետ ժամանակի վկայություն: Ինչպես ամեն մի հնամյա լեզվում, հայերենում ևս յուրաքանչյուր առարկա, երևոյթ, հարաբերություն և ըմբռնում ձևակերպված է տվյալ քառի մեջ, ընդ որում առանձին, երկարատև հոգածությամբ, դրսերված նրբորեն ու պատկերավոր:

Մեր մշակույթը մեզ համար լայն ըմբռնում է, աչքի է ընկնում զանազան կարգի առնչություններով՝ երևան եկած քե՛ նախապատմական և քե՛ գրավոր պատմության տեսական ժամանակներում: Հայտնի են հասարակական, տնտեսական, պատմական և մշակութային շփումների, հարաբերությունների քազում դրսերումներ, մեծաքիվ օրինակներ: Դրանցով, բնականաբար, հարստացել է հայ մշակույթը: Եվ վերջինս իր խոյ գոյությամբ, նույնիսկ ձեռքբերումներով իր ներդրումն ունի համաշխարհային մշակութային գանձարանը: Ձեռքբերումներն եղել են արդյունավետ, ստեղծարար հարաբերություններ՝ անկախ ժամանակի և ընդգրկման տարբերություններից:

Համաշխարհային հասարակագիտության մտքի ուշադրության շրջանակում են այնպիսի հայկական երևոյթներ, ինչպիսին են, օրինակ, Սովոր Խորենացու «Հայոց պատմությունը», Գրիգոր Նարեկացու «Մատյանը», միջնադարյան հայ տաղերգությունը, Անանիա Շիրակացու և Դավիթ Անհաղթի մաքեմատիկան և իմաստափրությունը, Գառնիի և Զվարթնոցի երբեմնի կանգուն և վերականգնված, վերականգնման արժանի տաճարները: Եվրոպական գիտությանը նպաստ են բերում ու փաստեր են հաղորդում հայ մշակույթը, հարաբերությունները հարակից տեղաբնիկ ժողովուրդների ու քաղաքակրթությունների հետ, մարդկության հեռավոր անցյալի վերաբերյալ:

Այս ամենի մեջ, այդ ամենով հանդերձ բոլորովին համահունչ և որույն դրսերում են ներկայացնում հայ-ռուսական մշակութային հարաբերությունները: Դրանք երևան են զայխ հասարակական-տնտեսական հարաբերություններով պայմանափորված, դրսերում են գրական և մշակութային ոլորտներում: Այդ հարաբերություններն ունեն շուրջ երկու հարյուրամյակի պատմություն: Դրանք լավի, արժեքավորի կապեր են, վերելքի ու հարստացման առնչություններ:

Հայ-ռուսական բառարանագրությունը երկու ժողովուրդների դարավոր մշակութային շփումների մի արտահայտությունն է: Այն ունի ավելի քան երկու հարյուր տարվա պատմություն: Հայերենի և ռուսերենի բառագանձի օգտագործմամբ ստեղծված երկլեզվան բառարանները հսկայական նշանակություն են ունեցել երկու ժողովուրդների մշակութային շփման գործում:

Այս ուղղությամբ կարեոր գործերից է, օրինակ, 1788 թվականին Պետերբուրգում տպագրված Կղեռպատրա Սարաֆյանի «Գիրք որ կոչի բանալի զիտութեան» աշխատությունը: Ինչպես վերն անդրադանք, նրանում առանձին մասերով ներկայացված են հայերեն-ռուսերեն և ռուսերեն-հայերեն բառացանկեր («բառարաններ»): Այդ գիրքը, ինչպես զիտենք, լույս է տեսել Գրիգոր Խալդարյանի տպարանում: Ավելացնենք, որ սա երկրորդ գիրքն է, ինչ հայերենի և ռուսերենի բառագանձը զուգադրվում է այսպես կոչված բառարանագրորեն, օգտագործվում է երկլեզվան (բարգմանական) բառարան կազմելու նպատակով:

Գ.ր. Խալդարյանի աշխատանքն ունի «Գիրք որ կոչի շաւլ լեզուագիտութեան» վերնագիրը: Տեղեկություն կա, որ այդ վերնագիրը դրված է «խմբագիր-հրատարակիչ» անձի կողմից⁹⁴: Պետք է շեշտել, որ այնքան էլ դիպուկ վերնագիր չի ընտրված:

Անմիջապես նկատենք, որ այս վերջին երկու բառարանների հրապարակման հարցում բավականին մեծ է եղել տպարանատեր Գ.ր. Խալդարյանի դերը: Բոլորովին անհիմն չէ, ընդհակառակը՝ վատահորեն կարելի է ասել, որ նա հայ-ռուսական բառարանագրության ուսիվիրաններից է, ավելին՝ Կղ. Սաֆարյանի հետ միասին առաջինն այդ ճյուղի տպագիր հայ բառարանագրության մեջ:

Այդուհանդերձ պետք է ասել, որ նրա անունն ու մանավանդ գործը մեզանում դեռ չեն եղել մանրամասն և լիարժեք գնահատության առարկա:

⁹⁴ Գիրքը տպագրված է 1788թ., Պետերբուրգում (նախորդից ընդամենը 4 ամիս հետո):

Պատվարժան այդ հայը ժամանակին բավականին հարուստ է եղել, սակայն ինտո մինչև վերջին լուսան սնանկացել է, պարտքերի բեռան տակ կնքել իր (Լեոյի պնդմամբ՝ վաղաժամ) մահկանացուն: Իսկ երբ կարողության տեր էր, ինչպես իրազեկ ենք դառնում կողմնակի աղբյուրներից, այն ժամանակ իր դրամն ու եռանդն ամեննին իգուր չի վատնել, ինչպես ասում են՝ քանուն չի տվել, չի մսխել անձնական, անցողիկ վայելքների համար, չի տրամադրել իրեն անիմաստ ու շվայտ կյանքի, այլ մեծ սիրով, ամբողջովին նվիրվել է հայրենասիրական, ազգապահպան առաքելությանը: Գրիգոր Խալդարյան ունեորն իր լուսան է ներդրել հայ իրականության առաջընթացի գործին:

Այսպես, դեռևս Լոնդոնում, ինչպես զիտենք, Խալդարյանը ձեռնարկում է հայերեն գրքերի տպագրությունը, իսկ 1781 թվականին այդ գործը վերսկսում է Պետերբուրգում՝ այդտեղ հիմնելով հայկական տպարան: Դա եղել է Ռուսական կայսրության սահմաններում հիմնված հայկական առաջին տպարանը:

Հայ գրքի և տպագրության բազմամյա պատմության համեմատաբար լայն ուսումնասիրությունից խմանում ենք, որ Ռուսաստանում հայ տպագրության գործին առնչվող մի շաբթ առաջնություն ունեցող ձեռնարկումներ այս կամ այն կերպ կապվում են Գ.ր. Խալդարյանի անձի և նրա հիմնադրած տպարանի հետ:

Պետերբուրգում հայկական տպարանի հիմնադրումը ժամանակի առումով միանգամայն տեղին էր, օրինաչափ և բնական: Դա բացատրվում է այդ շրջանի հայ-ռուսական տարբեր կարգի հարաբերությունների ամրապնդմամբ, առավել ևս գործնական ուղիների որոնմամբ: Այդ ուղիներից մեկն էլ մշակութային լայն առնչությունների ձեռնարկումն էր: Մյու կողմից՝ հայ հասարակական-քաղաքական, եկեղեցական գործիչներն առաջադրում էին հայ ժողովրդին արեելյան քաղաքական գրկանքներից ազատելու և ռուսական կողմնորոշում հաստատելու ծրագրեր, որոնց իրականացմանը մեծապես օժանդակելու էին ռուսական տերությունն ու ռազմական ուժերը⁹⁵: Իսկ մյուս կողմից՝ հայ մշակույթի նախանձախնդիր գործիչներն իրենց հերթին ձեռնարկում էին մշակութային բազմապիսի գործունեություն: Նախատեսվում էր, օրինակ, հայության ազգային կրթություն և հայեցի դաստիարակություն, ժամանակի գիտելիքների լիակատար տիրապետում, մտավոր կյանքի ապահով զարգացում և այլն: Այդ ընթացքում, բնականաբար, մեծ տեղ էր հատկացվելու հայ գրքին և տպագրությանը: Ուստի ժամանակի թելադրանքով

⁹⁵ Տես նաև Վ. Համբարձումյան, Սիմեոն կատողիկոս Երևանցին և նրա «Զամբո» աշխատությունը. – Սիմեոն կարողիկոս Երևանցի, Զամբո, Երևան, 2003, էջ է-ը:

պահանջվում էր նոր գրքերի հրատարակում, դասագրքերի և օժանդակ ձեռնարկների լույս ընծայում, իսկ գրավոր մշակույթի անցյալի երևելիների գործերի հրատարակում, և ըստ այդմ նախկինից եկող փորձի լիարժեք յուրացում և արծարծում նոր պայմաններում:

18-րդ դարի երկրորդ կեսը հայ-ռուսական հասարակական-քաղաքական և մշակութային հարաբերությունների բուն ժամանակների սկիզբն է: Գնալով այդ հարաբերությունները, ինչպես զիտենք, ավելի են ամրապնդվում, դառնում են անքակտելի և ամբողջական: Դրանք վերջին հաշվով պսակվում են որոշակի, շոշափելի հաջողությամբ: Այդ հարաբերությունների բովում ծնվեցին մի շարք հայ հասարակական-քաղաքական գործիչներ, մշակույթի բազում երախտավորներ, ռուսական միջավայրի հայ երևելիներ: Նրանք իրենց միտքն ու եռանդը, նյութական հնարավորությունն ի սպաս որին հայոց և ռուսաց հարաբերությունների հուսալի արմատավորմանը, ծավալմանն ու հետագա հաջողության ապահովմանը: Այդ գործում, հիրավի, մեծ է նաև Գ.ր. Խալդարյանի ծառայությունը:

Գ.ր. Խալդարյանի կյանքի, գրական-մշակութային գործունեության, ընդ որում բառարանագրական աշխատանքի վերաբերյալ մեզ քիչ բան է հայտնի: Եղած սուղ տվյալներին կարելի է ավելացնել նյա հրատարակած գրքերի հավելվածներում և «հիշատակարաններում» տեղ գտած փաստերը: Դրանց որոշ մասն էլ գտնում ենք մոտիկ անցյալի պատմագիտական և բանասիրական աշխատություններում, իսկ հնատիպ գրքի տարբեր մատենագիտական ցանկերում և այլն: Այդ տվյալների զգալի մասը գիտական շրջանառության մեջ է դրված եղել անցյալ դարի 80-ական թվականներից, ըստ որում նոյն տվյալները շատ քիչ են համալրվում և գրեթե նույնարդյամբ օգտագործվում ու վերարձարձվում են նաև հետազայում: Այսպես, դրանք գլխավորապես շոշափվում և մեկնաբանվում են Հայություն Տեր Հովհաննեացի, Գյուտ Աղանյանի, Թեոդիկի, Լեոյի, Գարեգին Լևոնյանի աշխատություններում, իսկ մեր օրերում թերևս ամենից հաճախակի Ռ. Իշխանյանի գրքերում: Անդրադառնալով Գ.ր. Խալդարյանի բառարանագրական գործունեությանը, ստորև որոշ շափով նկատի ենք առնում եղած տվյալները՝ տեղ-տեղ մտցնելով անհրաժեշտ ճշգրտում, այլև հանդես բերելով նոր մոտեցում:

Գ.ր. Խալդարյանը նորջուղայեցի վաճառական է, սերում է ժամանակի մեծահարուստ Խալդարյան տոհմից: Պարզվում է, որ այդ տոհմը Նոր Զուղայում հաստատվել է քոնագաղթի հետևանքով ոչ ուշ քան 17-րդ դարի երկրորդ կեսի սկզբներին: Երբ հետևում ենք գրավոր աղբյուրների տվյալներին, պարզվում է, որ Խալդարյանների տոհմը հիշատակվում է դեռևս 18-րդ դարի սկզբներից: Այսպես, օրինակ, 1712 թվականին Ամստերդամում Ռուկաս

Վաճանդեցու տպագրած մի գրքում ուշագրավ նշում կա այդ մասին: Խալդարյանները ճանաչված են եղել իրենց տոհմական շառավիղներով: Այդ գերդաստանը «բոնավորաց կտտամահ» հալածանքների հետևանքով տրոհվում է, փլուզվում, մաս առ մաս ապաստան է գտնում Ռուսաստանի սահմաններում, հատկապես՝ Աստրախանում: Իսկ մի մասն էլ տեղավորվում է Բաղդադում: Գ.ր. Խալդարյանը ակներևարար սերում է Ռուսաստանում ապաստանած տոհմաճյուղից: Նրա ծննդյան թիվն առ այսօր մնում է անհայտ, բայց գիտենք, որ վախճանվել է 1787 թվականին Պետերբուրգում:

1770 թվականին առևտրական գործերով, ինչպես նաև հոգու խորրում փայփայած գլուք տպագրելու նպատակով Խալդարյանը մեկնում է Լոնդոն, տասը տարի անց վերադառնում է Պետերբուրգ: Փաստերը վկայում են, որ մինչև Լոնդոն մեկնելը նա ճանապարհորդել էր Հնդկաստան: Տարիների ընթացքում նրա փայփայած երազանքը եղել է հայ մշակույթին անմնացորդ ծառայելը: Այդ իսկ մղումով Խալդարյանը հիմնադրում է տպարան, գործակցում ժամանակի Ռուսաստանի հայոց հոգեսր առաջնորդ, Էջմիածնի եկեղեցուց եկող հայապահանման գործի ցուցումներով առաջնորդվող, եռանդուն հայրենասեր Հովսեփ Արդությանի, այլև ժամանակի հայ հասարակական ականավոր գործիչ, Ռուսաստանի բարձր դասի միջավայրում համակրանք վայելող Հովհաննես Լազարյանի և ուրիշների հետ:

Հայտնի էր, որ Խալդարյանի գրահրատարակչական գործունեության մեջ որոշակի դեր է խաղացել Հովսեփ Արդությանը՝ ջերմեռանդ նվիրվածության, խոհեմ գործելակերպի և աշխատասեր վարքի տեր մի անձնավորություն 18-րդ դարի վերջերին: Հովսեփ Արդությանի մասին Լեռն գրում է «Նրան տրված չեր գրողի շնորհը, բայց և այնպես նա, չնայած իր բազմակողմանի գրադարձներին, կապվեց հայոց գրականության հետ եթե ոչ իբրև հեղինակ, գոնե իբրև իրատարակիչ: Նրա ժամանակ Գրիգոր Խալդարյան անունով մի ջուղայեցի վաճառական, գնելով Հոլանդիայում (իմա՝ Անգլիայում – Վ. Հ.) հայերեն տառեր, տարավ Պետերբուրգ, ուր բաց արավ տպարան: Արդությանն իր հովանավորության տակ առավ այդ հիմնարկությունը և մի քանի գորեր իրատարակեց, զլիսավորապես հայոց իին մատենագրության գործերից: Այսպէս էին Ներսես Շնորհալու մի քանի երկերը («Թուղթ ընդհանրական», «Յիսուս Որդի», «Հաւատով խոստովանիմ»), Եղիշեի «Պատմութիւն»-ը, «Ժամագիրք» և այլն: Կառուցելով Նոր Նախիջևանի կողքին Սուրբ Խաչ ժամագիրքը՝ Արդությանը մտածեց դարձնել այն մի գրական-իրատարակչական

հիմնարկություն, Վենետիկի Սլովարյան միաբանության պես և հենց այդ միաբանության դեմ մրցելու համար⁹⁶»:

Խալդարյանի հիմնադրած տպարանը նրա մահից հետո ևս անգործության չի մատնվում: Այն հաջողակ և հարմար միջոց էր հայ գրականությունը և առհասարակ հայ հասարակական միտքը զարգացնելու համար: Այդ տպարանի հետագա գործունեության մասին նշում է Ռ. Իշխանյանը. «Խալդարյանցի մահից հետո տպարանը մնում է իբրև Էջմիածնի սեփականություն. նրա փաստական տնօրենը դառնում է վերը հիշյալ Հովսեփ Արդությանը, որը և տպարանը տեղափոխում է ավելի հայաբնակ վայրեր, նախ Ն. Նախիջևան (իմա՝ 1789 թվականին – Վ. Հ.), ապա՝ Աստրախան (իմա՝ 1796 թվականին – Վ. Հ.): Այստեղ տպարանը շարունակում է աշխատել նաև 19-րդ դարի առաջին կեսին»⁹⁷:

Ոչ պակաս կարևոր է նաև Գ.ր. Խալդարյանի տպագրած գրքերի վերաբերյալ մեզանում գոյություն ունեցող տարբեր կարծիքներին անդրադառնալը: Ամենից առաջ ոշագրավ է, օրինակ, հետևյալ նշումը. Խալդարյանը «1780-ին անգլիական մի տպարանում (իմա՝ Ռիվլինկոտոնի տպարան – Վ. Հ.) հրատարակել է «Դաւանութիւն հաւատոյ» գիրքը: Նույն թվականին տեղափոխվել է Պետերբուրգ և 1781-ին լույս ընծայել Ռուսաստանում առաջին հայերեն գիրքը՝ «Այբբենարան»-ը: Հետագա տարիներին հրատարակել է ևս 10 գիրք» (ընդամենը՝ 12 գիրք–Վ. Հ.)⁹⁸:

Այնուհետև, ըստ Թեոդիկի տվյալների՝ Խալդարյանը հրատարակել է 17 անուն գիրք⁹⁹: Խալդարյանի հրատարակած գրքերի մատենագիտական լիակատար նկարագրությունը թերևս տրված է «Հայ հնատիպ գրքի մատենագիտական ցուցակ»-ում¹⁰⁰: Ըստ այդ ցուցակի տվյալների Պետերբուրգում լույս տեսած գրքերի թիվը հասնում է 19-ի: Դրան թերևս պետք է ավելացնել Լոնդոնում տպագրված հիշյալ («Դաւանութիւն հաւատոյ») գիրքը, որով ընդիանուր թիվը դառնում է 20: Այս թվին էլ պետք է ավելացնել Խալդարյանի հեղինակած, ըստ որում ինչպես հայտնի է, հետմահու տպագրված «Շավիլ լեզուագիտութեան» գիրքը:

Իսկ առհասարակ նույն տպարանում տարբեր ժամանակներում լույս են տեսել ավելի մեծ թվով գրքեր, ընդ որում ոչ միայն 18-րդ դարում, այլև

⁹⁶ Եթ, Երկերի լիակատար ժողովածու, հ. 3, գիրք 2, Երևան, 1973, էջ 464:

⁹⁷ Ռ. Իշխանյան, Հայ գիրք. 1512–1920, էջ 102:

⁹⁸ «Հայկական սովետական հանրագիտարան», հ. 4, Երևան, 1978, էջ 705:

⁹⁹ Թեոդիկ, Տիալ ու տառ. «Գիր»ին ծագման եւ միջազգային ու հայկական տպագրութեան վրայ ձգուած ակնարկ մը, Կոստանդնուպոլիս, 1912, էջ 177–178:

¹⁰⁰ Տես՝ «Հայ հնատիպ գրքի մատենագիտական ցուցակ (1512–1800), Երևան, 1963:

հետազոտում: Այսպես, ըստ Ռ. Իշխանյանի տվյալների, «Երեք քաղաքներում գործած այս տպարանում մինչև 18-րդ դարի վերջը տպագրվել են շուրջ 50 անուն հայերեն գրքեր¹⁰¹:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Պետերբուրգում տպագրված գրքերն իրենց բովանդակությամբ զգալիորեն զանազանվում են միմյանցից: Դրանք լինդգրկում են ինչպես անցյալի, այնպես էլ ժամանակի հեղինակների երկերը, այլև իլիմնականում ինքնուրույն երկեր են, մասամբ բարգմանութուններ:

Այսպես, ժամանակի պահանջների բավարարման նպատակով տպագրվում են Եղիշեի «Պատմոթիւն Վարդանաց» (1787 թ.), Ներսես Շնորհալու «Գիրք որ կոչի Յիսոս Ոլոյ» (1785 թ.), «Հաւատով խոստովանիմ» (1786 թ.), «Գիրք որ կոչի Ընդհանրական» (1788 թ.), Ներսես Լամբրոնացու «Դրուստ պատմագրաբար՝ ի փոխումն տեառն Ներսեսի Կլայեցոյ» (1788 թ.), Ղազար Զահկեցու «Գիրք աղօթից» (1785 թ.) աշխատությունները: Նման երկերի հրատարակությունները հատապնդելիս է եղել նաև հայրենասիրական ջերմ զգացումներ արծարծելու, ազատագրական պայքարի նոր մտորումներ արթնացնելու, հայեցի կրթություն և դաստիարակություն սերմանելու նպատակ:

Այնուհետև, երևան են զալիս եկեղեցական մի շարք գործեր ու մեկնաբանություններ, որոնց կողքին հրատարակվում են «Պատմոթյուն Սուրբ Գրոց» (քարգմ. Հարություն Դավթյան, 1785 թ.), Իլիա Մինեադիսի «Գիրք որ կոչի Վեմ զայթակղութեան» (1786 թ.) քարգմանական երկերը: Իսկ սրանք կոչվի Վեմ զայթակղութեան» (1786 թ.) քարգմանական երկերը: Իսկ սրանք կոչված էին ծառայելու հայոց եկեղեցու նորօրյա ջատագովորյանն ու ջերմեռանդ հավատի վերլուծայմանը:

¹⁰¹ Ա. Իշխանյան, նշվ. աշխ., էջ 103:

պարունակում են նոյնապիսի գրույցներ, քարզմանսկան նյութեր, քարոյական խրատներ, քարեկրության հրահանգներ և այլն:

Եվ վերջապես հրատարակվում են ժամանակի գաղափարաբանությանը ծառայող, կրոնական դավանանքի պահպանման գործի սպասավորմանը կոչված գրքեր, լույս են տեսնում ընթացիկ տարեցույցներ, օրացույցներ և այլն:

Իսկ որո՞նք են եղել Գ.ր. Խալդարյանի գործունեության բնագավառները: Մեր երկարատև պրապտումները ցույց են տալիս, որ նա եղել է հրատարակիչ, քարզմանիչ, քառարանագիր: Թերևս նորություն է նրա քանաստեղծություն գրելու փորձերի մասին նորահայտ տեղեկություններ: Այդ ժամանակներում ևս քանաստեղծություն գրելն ամենից առաջ հոգու քանաստեղծականության արտահայտությունն է: Դա քավականին հատկանշական է Խալդարյանի նման նվիրյալի համար:

Ամենից առաջ Խալդարյանը հայտնի է իրեն հրատարակիչ: Նրա տպագրական գործը մեզանում ուսումնասիրված է գրեթե ըստ ամենայնի և զնահատված է պատշաճ մակարդակով: Այդ գործը կազմում է Խալդարյանի հայրենանվեր ծառայության բուն մասը: Դրան ձգտել է ոչ միայն ինքը, այլև դրդում, քաջալերում է ստացել հայ մշակույթի երևելի գործիչներից, հատկապես՝ Հովս. Արդությանից: Դեռևս Լոնդոնում եղած ժամանակ Խալդարյանը, ինչպես նկատեցինք, ձեռք է բերում հայերեն տառատեսակներ և որպես քավարարումն Արդությանի բուն կամեցողության և ցանկության հրատարակում է «Դաւանութիւն հաւատոյ» գիրքը: Տեղին է նշել, որ այդ գիրքը քարզմանել էր ժամանակի գերմանացի նշանավոր հայագետ Յոհան Յոհանիմ Շրյողերը: Նա, ինչպես հայտնի է, հեղինակ է հայերենագիտական մի անախաղեալ աշխատության՝ «Գանձ արամեան լեզուին» (Ամստերդամ, 1711 թ.), որի գիտական վերլուծությունը տվել են շատերը, թեև պետք է նշել, որ նրանցից քչերին է այն մատշելի եղել: Ամենաուշագրավն՝ այդ գրքի հետ կապված, Գ. Զահուկյանի վերլուծությունն է¹⁰²: Այդ գրքում, ավելորդ չէ նշել, իին գրական հայերենի հետ միաժամանակ բերվում և ըստ ամենայն հանգամանաց քննվում են ժամանակի (արևելահայ) գրական աշխարհաբարի իրողությունները: Հայերենի մեջ Յոհ. Շրյողերը հմտացել էր Ամստերդամում գիտական լայն գործունեություն ծավալած թովմաս և Դուկաս Վանանդեցիներին աշակերտելու շնորհիվ: Եվ դա եղել է այն աստիճան հիմնավոր, որ նա, ինչպես տեսնում ենք, հետազում կարողացել է ձեռնարկել նաև հայերենից լատիներեն քարզմանությունը:

¹⁰²Տե՛ս Գ. Զահուկյան, Գրաբարի բերականության պատմություն, էջ 176–207:

Ուստի և երբ իրար ենք զուգակցում 18-րդ դարում հայերենագիտությամբ զբաղված տարբեր կրթօջախների, հայաշատ վայրերի մշակութային գործիչների ձեռնարկումներն ու ձեռքբերումները, միանգամայն պարզ է լաւնում այն, թե նրանք, անկախ մասնավոր խնդիրներում ունեցած տարածայնություններից և հակառակություններից, որքան համերաշխ ու միակամ են եղել հիմնական խնդրում՝ հայ իրականության մշակութային զարդարությին ծառայելու հարցում։ Այդ գործին է ծառայել նաև Գր. Խալդարյանն իր գրականության մեջ հայության գործունեությամբ։ Իսկ այն իր ժամանակի առումով եղել է բավականին արդյունավետ, լիովին բավարար։

Հետաքրքիր է անդրադառնալ Խալդարյանի տպագրած գրքերի ծավալին։

Փորձ ենք արել մոտավոր ձևով հաշվելու նրա տպագրած գրքերի մամուլները։ Պարզվում է, որ դրանք կազմում են մոտ 170 մամուլ։ Սա, ինչ խոսք, բավականին շոշափելի թիվ է, եթե հաշվի առնենք 18-րդ դարում իրականացվող մեկ իրատարակչի և նրան օժանդակող մեկ-երկու անձի հնարավորությունները։

Հայերեն գրքերի իրատարակիչ Խալդարյանը բավականաշափ տիրապետելով անգլերենին և ռուսերենին, ձեռնամուխ է եղել նաև քարգմանությունների։ Իսկ դա նշանակում է, որ նա հայ գրականության, առհասարակ հայ մշակույթի զարգացման մեջ իր ներդրումն ունի նաև իբրև քարգմանից։

Ուստմասիրությունը ցույց է տալիս, որ նրա քարգմանությամբ ռուսերեն լույս է տեսել Ներսես Շնորհալու «Հաւատով խոստովանիմ» (1786, այլև՝ 1788 թ.) երկը։ Այնուհետև, պարզվում է, որ Խալդարյանն իր տպագրած գրքերի վերջին մամուլների ազատ մնացած էջերում սովորություն է ունեցել զետեղելու անգլերենից կատարած իր փոքրիկ («աննշան») քարգմանությունները։ Այդպիսին հանդիպում են, օրինակ, «Պատմոթիւն Սուրբ Գրոց» (էջ 65–66) և «Գիրք որ կոչի Վեմ զայրակղութեան» (էջ 173–176) գրքերում։

Շնորհալու նշված երկի ռուսերեն քարգմանությունն երկու դեպքում էլ տպագրված է հայերենին զուգադիր։ Սա հավանաբար առաջին դեպքն է, որ հայ միջնադարյան հեղինակը իրատարակում է ռուսերեն քարգմանությամբ։ Իսկ դա նշանակում է, որ քարգմանության նպատակը գրաբար հայերենի և ժամանակի ռուսերենի զուգընթաց, փոխադարձ ուսուցումն ու յուրացումն է եղել՝ ի թիվս այլ, թերևս ավելի առաջնային նպատակների։ Պետք է հատուկ նշել, որ առհասարակ թե՛ Խալդարյանը և թե՛ (մանավանդ) Արդությանն առանձին նվիրում ունեն 12-րդ դարի հայոց հովանակետ Ներսես Շնորհալու համար։ Համատեղ ջանքերով ոչ միայն իրատարակում են Շնորհալու երկերից մի քանիսը, այլև դրանցից մեկ-երկուսը իրատարակում են մեկից

ավելի անգամ, քարզմանում ոռուսերեն, ավելին՝ լույս են ընծայում նույնիսկ Շնորհալուն վերաբերող Ներսես Լամբրտնացու մի գործը: Շնորհալին թերևս քավականին արդիական էր, լավագույն միջոց՝ նոր հարաբերությունների տարածման համար:

Իսկ անգլերենից կատարված քարզմանությունների նյութը տարբեր է: Մի դեպքում այն վերաբերում է հասարակական իրավունքներին, իսկ մյուս դեպքում շոշափվում են քարոյախոսական հարցեր, այսինքն՝ անդրադառնում է մարդկային նախանձին («նախանձավորությանը»): Տպագրվող գրքերում այդպիսի նյութի քարզմանաբար ընդգրկումն անշոշտ ունեցել է կոնկրետ հիմք և դրդապատճառ: Կարծում ենք, որ բոլոր դեպքերում այն երևան է եկել դաստիարակչական, քարեկրության սերմանման նպատակով:

Նման լայն, արժեքավոր գործունեության շրջանակում ուրույն տեղ է զբաղեցնում Խալդարյանի բառարանագրական գործը: Մեծ է Խալդարյանի ներդրումը հայ բառարանագրության պատմության մեջ: Այն առավել նշանակալից է լինում հայ-ոռուսական բառարանագրության արմատավորման ու զարգացման գործում:

Մինչև այժմ մեզանում այդ գործունեությունն արժանացել է քավականին սեղմ, հակիրճ բնութագրման ու գնահատության: Իսկ մեր օրերում, երբ խիստ արդիական են հայ բառարանագիտության խնդիրներին նորովի անդրադառնալը, նոր ժամանակների պահանջների դիրքերից նախկինում երևան եկած երևույթների գնահատությունն ու արժեքավորումը, եղած գնահատությունները կարող են խիստ թերի, եթե ոչ անբավար լինել: Բերենք այս հարցում եղած քազմաթիվ օրինակներից մեկը, թերևս ամենաընդարձակը. «Խալդարյանը նույնապես ջուղայեցի էր, վաճառականություն էր արել Հնդկաստանում, ապա տեղափոխվել էր Լոնդոն՝ զլիսավորապես հայոց գրականությանը ծառայելու համար: Մեծամեծ ջանքերով ու ծախսերով նա Հոլանդիայում հայերեն տառեր պատրաստել տվեց, տպարան կազմեց, բայց շուտով այն փոխադրեց Պետերբուրգ՝ գրավվելով Հովսեփ արքեպիսկոպոս Արդությանի համբավից: Իր ակնկալությունների մեջ նա չէր սխալվել: 1779-ին Արդությանը, ծանոթանալով նրա հետ, խրախուսեց նրա ծեռնարկությունը և մի շաբթ տպագրություններ արագ նրա տպարանում, գտնելով տպագրական ծախսերը հոգացող մեկենասներ: Ինքը Խալդարյանն էլ մասնակցել էր գրականությանը և եթե շատ բան չկարողացավ անել, պատճառ այն էր, որ երկար կյանք չունեցավ: Դրիմի հայերին Նոր Նախիջևանում և նրա շրջակայքը գաղթեցնելուց հետո կարիք էր զգացվում այնպիսի ծեռնարկների, որոնց միջոցով գաղթականները կարողանային սովորել ոռուսերեն լեզուն: Այդպիսի մի ծեռնարկ կազմեց Խալդարյանը, որ ինչպես երևում է, լավ

յուրացրել էր ոռուերեն լեզուն: Այդ ձեռնարկը հրատարակվեց նրա մահից հետո, 1788-ին՝ «Գիրք որ կոչի Շախի լեզուագիտութեան» վերնագրով: Դա մի համառոտ բառարան էր հայերենից ոռուերեն¹⁰³:

Հետազայում ևս եղել են նրա անձի և գործի վերաբերյալ անդրադարձ ու հատկանշական գնահատություններ: Գնալով ավելի է խորացել Գ. Խալդարյանի վաստակի, հատկապես բառարանագրական աշխատանքի վերաբերյալ հետաքրքրությունը:

Այն բավարար ուշադրության է արժանացել ոռու լեզվաբանության և հայ բառարանագրության պատմությանը նվիրված աշխատություններում: Նկատի ունենք հատկապես Ս. Կ. Բուլիչի և Գ. Գասպարյանի համապատասխան գնահատություններն ու դիտարկումները¹⁰⁴: Կարծում ենք, որ դրանք ևս նախնական քայլեր են, որոնց պիտի հետևեն բառարանագրական այդ ուշագրավ հուշարձանի վերաբերյալ կատարվելիք խորը, բազմակողմանի քննությունը և տրվելիք պատշաճ գնահատությունը: Քանի որ «Շախի լեզուագիտութեան»-ը ուշադրության առարկա կարող է դառնալ ոչ միան լեզվաբանության պատմության, այլև առհասարակ երկու լեզուների փոխադարձ շփումների, հայերեն-ոռուերեն երկլեզվության, մշակութային փոխազդեցության հարցերի տեսակետից:

Գ. Խալդարյանի «Գիրք որ կոչի Շախի լեզուագիտութեան» աշխատությունը տպագրվել է 1788 թվականին, երբ արդեն վախճանված էր հեղինակը: Գիրքը բաղկացած է չորս մասից՝ ա) «Յառաջաբանութիւն առ բարեմիտ լնթերցողս» (էջ գ-ժբ), բ) Բառք լնտիլք ազգիս հայոց և պանծալի լեզուին ոռուաց համառօտապէս դեմլնդիւմ միմեանց՝ բարզմանեցեալ» (էջ 1-138), զ) «Աղօքք տեառն Ներսեսի Շնորհալոյն... ի բարզմանութիւն Գրիգորէ» (էջ 138-153) և «Յիշատակարան զրքոյս» (էջ 154-156):

Գրի առաջաբանը և հիշատակարանը գրել է Թաղեռս Մադարյան Կոստանդնուպոլսեցին: Նրա արածը Լեռն հետևյալ կերպ է բնորոշում. «Արդությանն իր մոտ քարտուղարի պաշտոնով պահում էր Կ. Պոլսեցի Թաղեռս վարդապէտ Մադարյանին, որ հայկաբանի համբավ ուներ և գրում էր մի ճոռոմ, խրթին և ուռուցիկ գրաբարով: Սրան էր Արդությանը հանձնարարել մի ճոռոմ, խրթին և ուռուցիկ գրաբարով: Խալդարյանի այդ աշխատության համար տպագրելի գրքերի սրբագրությունը: Խալդարյանի այդ աշխատության համար նա գրեց մի ընդարձակ առաջարան, որի մեջ փառաբանում էր Արդությանին անսահման չափերով, ասում էր, որ ինքն է անվանել այդ գիրքը «Շախի անսահման չափերով»:

¹⁰³ Լեռ, նշվ. աշխ., էջ 556:

¹⁰⁴ С. К. Булич, Очерки истории языкоznания в России, т. 1, С. Петербург, 1904, գ. Գասպարյան, Հայ բառարանագրության պատմություն, Երևան, 1967:

լեզուագիտութեան», բացատրում է ձեռնարկի նպատակը և գովաբանում էր հեղինակին, անվանելով նրան զիտուն»¹⁰⁵:

Թաղեռս Մադաքյանի գրածի մեջ կա նաև ինքնազովեստի պահ՝ կապված գրքի հրատարակության ժամանակ առաջացած դժվարությունների հաղթահարման հետ: Այնպես է ներկայացվում, որ իբր բառարանի ձեռագիլը միանգամայն անմխիթար, նույնիսկ ոչ համահավաք վիճակում է եղել, և ինքն է այդ գործը գլուխ բերել և ավարտուն տեսքի հասցրել: Այնինչ որան թերահավատորեն պետք է նայել, մանավանդ երե նկատի ունենանք, որ ինչպես իրավամբ նշվում է հայ բանասիրության մեջ, Գր. Խալդարյանի սույն աշխատությունը ոչ միայն պատրաստ էր, այլև մամուխ տակ է եղել, երբ վախճանվել է նրա հեղինակը¹⁰⁶: Ուստի և գրքի առաջաբանում նշված այն տեղեկությունը, թե հեղինակի այրին (նշվում է Կատարինե Զաքարովնա ձեռվ) շատ է բախանձել սրբագրիչին գրքի տպագրությունն ավարտին հասցնելու համար, ապա դա պետք է ընդունելի համարել ոչ ամբողջովին, այլ այն խմասով, որ նկատի է առնվել սրբագրական, ոչ թե հրատարակչական աշխատանքը գլուխ բերելուն: Իսկ գրքի հրատարակիչը փաստորեն եղել է հեղինակի այրին: Այս հանգամանքն իր հերթին վկայում է, որ Կատարինե Խալդարյանը մեզանում, ինչպես նշում է Լեռն, հավանաբար առաջին հայուհին է, որ զբաղվելիս է եղել գրահրատարակչական աշխատանքով, և սա շատ ուշագրավ փաստ է:

Այժմ անդրադառնանք բառարանի պարունակած նյութին, կառուցվածքին, ինչպես նաև բառարանագրական առանձնահատկություններին:

Բառարանի նյութն ընտրված է իր ժամանակի հասկանալի ու մատչելի հայերենի բառապաշտից: Այդ մասին ամենից առաջ տեղեկանում ենք բառարանային բաժնում դրված ենթավերնագրերից, այն է՝ «բառը ընտիրք ազգիս հայոց և պանծալի լեզուին ոուսաց համառօտապէս դէմընդդէմ միմեանց՝ բարգմանեցեալ»: Այստեղ ընտիրք ոչ թե նշանակում է «կանոնավոր, կատարյալ կամ լավագույն», այլ «ընտրված, եղածից ջոկջոկած՝ ուսուցման նպատակով»: Այլ կերպ ասած՝ իբրև բառարանային նյութ տեղ է գտել երկու լեզուների ոչ թե ընտիրք, այլ ընտրովի բառապաշտը:

Ըստ որում բառամբերի ընտրության բուն իխմքը ժամանակի գրաբարն է, մի հանգամանք, որին չի համապատասխանում գրքի առաջաբանի և

¹⁰⁵ Լեռ, նշվ. աշխ., էջ 556-557:

¹⁰⁶ Հմմտ. Գ. Լեռնյան, Հայ գիրքը և տպագրության արվեստը, Երևան, 1958, էջ 164:

«հիշատակարանի» լեզուն: Դրանք շարադրված են ճոռով, խրթին և փրուսոյց ոճով, կարծես ոչ թե գրավոր խոսք է, այլ բառերի և արտահայտությունների մի «կիտվածք»:

Ավելի քան 200 տարի առաջ ստեղծված սույն բառարակ է թե՝ հայերենի և թե՛ ոուսերենի բառապաշարի օգտագործման առանձնահատկությունների օգտագործման տեսակետից: Ոուսերենի բառապաշարին վերաբերող քննությունը քողնելով վերջինիս պատմության մասնագետներին՝ անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ բառարանի հայերեն բառամբերի ընտրության և բառարանային մշակման սկզբունքներին:

Բառարանն ամենից առաջ աչքի է ընկնում հետևյալ առանձնահատկություններով: Նրանում յուրաքանչյուր բառահոդված բաղկացած է երեք մասից. արվում է հայերեն բառը, բերվում է նրա ոուսերեն (բարգմանական) համարժեքը, նախ՝ տառադարձությամբ, այնուհետև՝ ոուսերեն գրությամբ: Օրինակ՝ գրել ~ պիսատ – писать (էջ 35), դրական ~ պօլօժիղելնի – положительный (էջ 38), հոգոց հանել ~ իզղլիխատ – изыхать (էջ 80), ոունգ նի, պինչ, քիր ~ նու – нос (էջ 115), պիտանի, օգտակար, պիտանացու, պիտանաւոր ~ պոլեզնի – полезный (էջ 112) և այլն:

Ինչպես նկատելի է, բառարանի կառուցվածքը բավականին պարզ է: Դա ամենից առաջ բացատրվում է բառարանի քննություն: Այն ուսումնական բառարան է. հայերեն բառի ոուսերեն համարժեքը բերվում է հայերեն տառադարձությամբ, որպեսզի հեշտացվի ոուսերեն ձեի ընկալումը, յուրացվի նրա ճիշտ, ժամանակակից արտասանությունը: Վերջին դեպքում, քնականաբար, իլիմք է ընտրված 18-րդ դարի ոուսերենի արտասանական վիճակը (նորման): Հեղինակը ջանացել է ամեն կերպ ճշտորեն արտահայտել այդ վիճակը: Այս դեպքում հատուկ ուշադրություն է գրավում այն հանգամանքը, որ հեղինակը հանդես է բերել հնչույթաբանի որոշակի գլուխիքներ և համապատասխան հմտություն: Դա նկատվում է տառադարձության նույն նշանակումների մեջ:

Բառարանի կառուցվածքը միանգամայն համապատասխանում է Կող. Սարաֆյանի «Բանալի գիտութեան» աշխատության «բառարանների» կառուցվածքին: Այստեղ ևս բառահոդվածի կարեռը մասերն էին կազմում հայերեն բառը, նրա բարգմանության տառադարձված ձեր և բուն բարգմանությունը: Եվ քանի որ այստեղ Խալդարյանը գործ է ունեցել միայն հայերեն-ոուսերեն բարգմանական ուղղվածության հետ, ուստի տառադարձման գործը իրականացվել է միայն ոուսերեն բառերի դեպքում, այնինչ Կող. Սարաֆյանի գրքում դա վերաբերում է նաև հայերեն բառերին:

Սույն բառարանում իբրև հայերեն գլխարքու սովորաբար քերպում են բառերի ելակետային՝ ուղիղ ձևերը, ինչպես դա արքում է առհասարակ բոլոր բառարաններում: Եվ ի տարբերություն շատ բառարանների, այստեղ երբեմն իբրև բառահոդված ընտրվում են բառերի քեզ (հոլովված կամ խոնարիված) ձևերը: Դրանք ընդհանուր առմամբ լինում են ամենահաճախական կիրառության բառերի և բառային արտահայտությունների դեպքում: Օրինակ՝ ասել բայց բառարանում քերպում է ոչ միայն սովորական՝ ասել ձեռվ, այլև հրամայականի, սահմանական եղանակի անցյալ կատարյալի, գրաբարի ստորադասականի (համապատասխան՝ աշխարհաբարի լողական, պայմանական և հարկադրական եղանակներին) ապառնի ժամանակի ձևերով: ասածի ~ սկազիվածի – сказывай (էջ 17), ասացի ~ եա սկազիվալ – я сказывал (էջ 18), ասացից ~ սկաժու, բուղու սկազիվատ, ստանու սկազիվատ – скажу, буду сказывать, стану сказывать (ն. տ.), գրեա՛ ~ փիշի – пиши, գրեալ ~ պիսաննըի – писаный, գրել ~ պիսատ – писать, գրեմ ~ պիշու – пишу, գրեցի ~ եա նապիսալ – я написалъ, գրեցից ~ նապիշու – напишу (էջ 351) և այլն:

Նման բառահոդվածների գոյության փաստը խոսում է այն մասին, որ բարգմանական բառարանը տեղ–տեղ «վերածվում» է բառապաշարից բացի լեզվի քերականության ուսուցման ուղեցույցի: Այդ հանգամանքը հավաստում է, որ հատուկ նպատակներով բառարան են ներածվում ոչ միայն բառարանային, այլև առհասարակ խոսքի կառուցվածքին վերաբերող ձևեր: Դրանք, ճիշտ է, բառարանում մեծ քիվ չեն կազմում, սակայն ստեղծում են այն տպափորությունը, որ հեղինակն որոշակի տեղ է տվել խոսքի ելակետային ձևերի բառարանային ուսուցմանը:

Բավականին հետաքրքիր է այն հարցը, թե բառարանում հայերեն բառամբերն ինչպիսի ընտրության է ենթարկված: Մեր մանրամասն և տևական քննությունը փոքրիշատե ցույց է տալիս, որ նրանում բառապաշարի հիմնական մասը քաղված է գրական հայերենից: Եվ դա իրական է, որովհետև այդ շրջանում (18-րդ դարի 2-րդ կես) բուն հայերենը դիտվում էր ժամանակի գրաբարը, իսկ նոր գրական հայերենը դեռևս գերակշիռ տեղ չէր գրավում: Բառապաշարի մնացած մասը վերցված է ժամանակի գրական աշխարհաբարից, երբեմն վերջինիս խոսակցական տարբերակներից: Ուստի կարելի է ասել, որ բառարանի բառամբերը լեզվի կանոնականության տեսակետից չունի միակերպություն, ներկայացնում է հայերենի այն վիճակը, որ գոյություն ուներ այդ ժամանակում: Այսպես, գրաբարի համար սակավ գործածական դիւդանամ, լիւդանամ («լողանամ») ձևերի կողքին, իբրև հոմանիշ, առկա է լեղամ խոսակցական ձևը (էջ 83), այնուհետև արդարութիւն,

ճշտութիւն ծեսին հավասարաժեք է դիտված ղորդութիւն ծել (էջ 115) և այլն: Եվ իբրև այս տեսակետից բառարանի առավելություն ուշադրություն է գրավում այն, որ բանակի առումով զերակշռում են գրաբարյան բառերն ու ծեսերը, իսկ մյուս կարգի միավորները համեմատաբար պակաս են: Եվ դա այդպես է, որովհետև բոլոր դեպքերում բառարանը լիարժեք կերպով և ըստ էության արտացոլում է 18-րդ դարի վերջին տասնամյակների հայերենի լեզվական վիճակը¹⁰⁷.

Այս բառարանում ուշագրավ են բառային նորաբանությունները: Դա ևս կապված է հայերենի բառապաշարի արտացոլման հանգամանքի հետ: Հեղինակը լիովին օգտվել է հայերենի այն բառերից, որոնք ոչ միայն գոյություն են ունեցել վաղուց ի վեր, այլև կազմվել կամ երևան են եկել նոր պայմաններում: Դրանք այնպիսի բառեր կամ գոյություն ունեցած բառերի իմաստային նոր կիրառություններ են, որոնք չկային իին գրական հայերենում (չենք գտնում գրաբարի հայտնի բառարաններում), կամ կիրառվելիս են եղել բոլորովին այլ իմաստներով: Օրինակ՝ աճառաւոր («կոճիկավոր»), աճառեայ, անդրագոյափոխութիւն, անբացորշական, աշկիկ, աշնոց («ակնոց»)¹⁰⁸, ատամնատ («անատամ»), դամբարազատ, մաշիկ, մօրուսաւոր և այլն:

Իսկ որոշ բառեր հանդիպում են իմաստային նոր կիրառությամբ: Օրինակ՝ այգի բառը գործածվել է միայն «խաղողի այգի» իմաստով, գիտաբաղար բառը՝ սուկ «գյուղ» (ոռու. սելենից) իմաստով և այլն:

Այս և նման նորաբանությունները, բնականաբար, 18-րդ դարի գրաբարի բառապաշարի առանձնահատուկ մասն են: Դրանք կամ կազմվել են նախկինում, կամ բառարանի ստեղծման շրջանում և գործածվելիս են եղել առհասարակ, կամ էլ բառարանի հեղինակի ստեղծածն են: Երկրորդն ավելի քիչ հավանական է, թեև ամենահաճախ չի բացառվում: Հիշենք, օրինակ, Ար. Ղարիբյանի «Ռուս-հայերեն բառարանում» (Երևան, 1982) տեղ գտած բազմաթիվ նորաբանությունները, որոնք հեղինակային են, որակվում են իբրև դիպվածային նորակազմություններ, այսինքն՝ բառարանի հեղինակն ինքն է դիմել նման նորակազմություններին՝ ելնելով ոռուերեն բառը հայերեն բարգմանելու անհրաժեշտությունից: Նման մոտեցում հնարավոր է գրեթե ամեն մի բարգմանական բառարան կազմելիս, և Խալդարյանի սույն բառարանը նույնապես բացառություն չէ, կարող է պարունակել նման նորաբանություններ:

¹⁰⁷ Ավելի մանրամասն տես Վ. Համբարձումյան, Գրաբարի գործառությունը որպես գրական լեզու Ժ.Ը.Ժ. դդ., Երևան, 1990:

¹⁰⁸ «Հին հայկազյան բառարանը» (հ. 1, Վենետիկ, 1749), օրինակ, ունի աշոց ձեզ:

Այսուհետև, սովորական նորաբանություններից քացի, որքան նկատելի է, քառարանում կան նոր տերմիններ: Դրանք, ավելի ճիշտ, նոր ժամանակների զիտուրյան ու մշակույթին վերաբերող տերմինների քառարանային գրանցումներ են: Այսպես, քերևս նշելի են տպագրական գործի մեջ երևան եկած տերմիններն ու տերմինային անվանումները: Օրինակ՝ տպագիր, տպագրեալ, տպագրութիւն, տպել (էջ 127):

Քիչ չեն դեպքերը, երբ քառահոդվածը ներկայացնում է քառակապակցություն՝ համարժեք ոուսերենի կամ քառին, կամ քառակապակցությանը: Օրինակ՝ մատակ արջ ~ մեղվեղիցա – մեծածագ (էջ 85), մատակ գայլ ~ վոլչիցա – վոլչիցա (ն. տ.), մեջ գիշերոյ ~ պոլնօչ – պոլնօչ (էջ 88) և այլն:

Քառահոդվածների կառուցման ժամանակ Գ.ր. Խալդարյանը հաճախակի դիմում է հոմանիշների օգտագործմանը՝ ձգտելով հիմքում ընկած հասկացությունն արտահայտել, քննութագրել առավել լիարժեք, տարբեր կողմերով: Հմմտ. ազատել, գերծուցանել և փրկել, աճապարել, փութալ և վաղվաղել, այլակերպել և փոխակերպել և այլն: Նկատելի է, որ երբեմն քառարանում հոմանիշների շարքը հասնում է 3-ի կամ 4-ի, իսկ տեղ-տեղ անցնում է այդ սահմանը: Օրինակ՝ պիտանի, օգտակար, պիտանացու և պիտանաւոր, ռակայ, անխել, պակասաւոր և յիմար և այլն:

Երբեմն քառարանում իբրև գլխաբառ գործածվում են նաև հարադիր քայեր, այլև քառակապակցություններ: Դա արվում է այն լմբոնումով, որ նման միավորները խոսողի կողմից հայերենում զիտակցվում են իբրև հաղորդակցական մեկ պատրաստի միավոր: Օրինակ՝ հոգոց հանել ~ իզդիխատ – իզդիխատ – իզդիխատ – իզդիխատ (էջ 80), մատակ արջ ~ մեղվեղիցա – մեծածագ (էջ 85), մատակ ձի ~ կօրիլա, կօրիլիցա – կօրիլա, կօրիլիցա (էջ 85) և այլն:

Տեղ-տեղ հանդիպում են օտար քառեր (փոխառություններ): Օրինակ՝ դարանոս, իմաստասէր ~ ֆիլոսոփ – ֆիլոսոփ (էջ 83):

Կան նաև այլ կարգի խորքություններ: Այսպես, քառարանում ինքնարերաբար տեղ են գտել լատինարան արհեստական ձևեր: Այս առումով անհրաժեշտ է նշել հետևյալը: Հայտնի է, որ հայերենի կրած օտար ազդեցություններից մեկն էլ եղել է լատինարանությունը: Այն սկիզբ է առնում ոչ քե 17-րդ, այլ 14-րդ դարի 30-ական թվականներից և հաղթահարվում է 18-րդ դարի սկզբից մինչև 80-ական թվականներն ընկած շրջանում¹⁰⁹: Այդ ընթացքում ստեղծվում է մի հսկայածավալ գրականություն, որն ընդգրկում է

¹⁰⁹ Հմմտ. Գ. Զահոռվյան, Գրաբարի քերականության պատմություն, էջ 4-7 և հջ. : Վ. Համբարձումյան, նշվ. աշխ., էջ 86-97:

զիտորյան և մշակույթի զանազան բնագավառներ: Գրվում են ինքնուրույն աշխատորյուններ, կատարվում քարգմանություններ: Այդ երկերի լեզուն զրաբար հայերենի այն տարբերակն է, որն ակնհայտորեն ազդված է լատիներենից: Լատինարան ազդեցությունը հայ իրականության զանազան հատվածներում տեղ գտած միարարական շարժման արդյունք է: Հռոմի կարողիկական եկեղեցու քարոզիչները, իրականացնելով այսպես կոչված էքսպանսիոնիստական բուռն ձգտումներ, հայ իրականության մեջ քարոզչական գործունեությունից քացի իրենց ձեռնուու միջոցներով ծավալում են որոշակի մշակութային գործունեություն: Վերջինս դրական երևոյթ էր միջնադարյան սխողաստիկայի պայմաններում: Եվ այն բանից հետո, եթե լատինարանությունը մեզանում լիովին հաղթահարված էր¹¹⁰, հայերենի մի շաբը գրքերում դեռևս շարունակաբար նկատվում են լատինարան ձևեր և արտահայտություններ:

Գր. Խալդարյանի սույն քառարանի էջերում ևս դրանք հանդիպում են, թեև ոչ այնքան հաճախակի և զանգվածորեն՝ տեղ գտնելով թե՛ քառարանի մեջ, թե՛ գրքի առաջաբանում և «հիշատակարանում»: Օրինակ՝ լաւագունեղ («ամենալավ»), բարեգունեղ («ամենաբարի»), որ համարժեք է դիտված ուսերենի պրեկղբեադնըի, նախլուշշի – преизрядный, հայլուշի (էջ 54), այլև լինիցէր («լիներ, երանի լիներ», էջ ը), լինիցէին («լինեին, երանի լինեին», ն. տ), ներ գործարանիս («այս գործարանում», էջ 156) և այլն:

Այսպիսով, քառարանի կարեռը առանձնահատկությունների սեղմ բնութագիրն անգամ ակներև է դարձնում նրա նշանակությունը հայ քառարանագիտության մեջ, առավել ևս խաղացած դերը ուսական միջավայրում հայերենի ուսուցման և ըստ ամենայնի յուրացման շահեկան գործում: Սլանագամայն պարզ է դառնում Գր. Խալդարյանի ներդրումն այդ միջավայրում հայերենի արմատավորման ու առաջմղման համար: Իսկ լեզվի գործնական տիրապետումն, ինչպես հայտնի է, մշակույթի լիարժեք իրազեկման կարեռքագույն նախապայման է:

Վերն արդեն նշեցինք, որ Գր. Խալդարյանը փորձեր էր արել քանաստեղծություն գրելու: Դրա համար կան որոշ հիմքեր, որոնք ինչ–որ տեղ թեական կարող են լինել. Խալդարյանի իրատարակած գրքերից մի քանիսում հանդիպում ենք չափածո տողերի: «Ժամակարգութիւն հասարակաց աղօթից» (1783 թ.) գրքի բուն տիտղոսաթերթ–անվանաբերթից առաջ տպագրիչը գրել է «զովեստ բերկրանաց, եռանձնեայ դիմաց» քառերով սկսվող մի եռատող

¹¹⁰ Տե՛ս Վ. Համբարձումյան, Գրաբարի լատինատիպ նորամուծությունների հաղթահարումը XVIII դարում, էջ 63-72:

ոտանավոր: Այնուհետև, Ներսէս Շնորհալու «Գիրք որ կոչի Յիսուս Որդի» (1785 թ.) գրքի անվանաբերքից առաջ նույնպես դրված է «Յիսուս Որդի տուող շնորհաց» բառերով սկսվող վեցտողյան մի ոտանավոր: Նման գետեղումը, ինչպես նկատեցինք թարգմանությունների մասին խոսելիս, կատարված է «առ ի լնլոյ զպարապ տեղիս» (տպագիր էջի դատարկ տեղը լրացնելու համար, ինչպես որ հաղորդում է տպագրիչը):

Բանասիրությանն առայժմ հայտնի չէ, թե ով է այդ տողերի հեղինակը՝ Խալդարյա՞նը, թե՝ մեկ ուրիշը (գուցե՞՝ Արդությանը): Թեականության պատճառը մի հայտնի վավերագրի առկայությունն է: Հայտնի է, որ Հովս. Արդությանը գրավոր անդրադարձել է տպագրված «Յիսուս Որդի» գրքի մեջ տեղ գտած սրբագրական սխալներին: Կա այդ վավերագիր-նամակը, որում ուղղակիորեն նշվում է հետևյալը. «Քանի մի ոտանաւոր խրատ առարեցի առ քեզ դնել ի վերին Յիսուս Որդույն, դու ոչ եղել» (ընդգծումը մերն է –Վ. Հ.)¹¹¹: Բայց վերը տեսանք, որ այդ գրքի անվանաբերքից առաջ կա մի վեցտողից բաղկացած ոտանավոր: Աղությանի գրածն էլ նույն թվականին տպագրված գրքին է վերաբերում: Ուրեմն մնում է կարծել, որ Խալդարյանը ստացել է Արդությանից «ոտանաւոր խրատը», սակայն չի դրել անվանաբերքին, այլ դրել է իր գրածը, իր հորինածը:

Նույնպիսի տրամաբանությամբ էլ թերես պետք է ենթադրել, որ Խալդարյանը պիտի գրած լինի նաև մյուս՝ «Ժամակարգութիւն» գրքում գետեղված ոտանավորը:

Բոլորովին այլ հարց է, թե այդ «ոտանավորները» գեղարվեստական ինչ արժեք են ներկայացնում: Կարեոր է, որ բազմաշխատ այդ գործիչը, մտավորականը փորձեր է արել չափածո բաներ գրելու: Եվ դա պատահական չէ, ոչ էլ մեծագույն տոավելություն: Որովհետև բոլոր ժամանակներում էլ «զրոց» և «զրչի» մարդիկ առիթից առիթ իրենց զգացմունքներն ու ապրումներն են արտահայտել, քորին են հանձնել նաև չափածո ձևով: Դրան եթե ավելացնենք այն, որ այդ չափածո ասվածը բազմացվելու է բավականին մեծ քանակով, տպագրության ժամանակ, ապա ամենին պարզ կդառնա Խալդարյանի արածը՝ չափածո մեկ-երկու տող հորինելը: Սա բնական պետք է համարել նաև Գ. Ի. Խալդարյանի պես հայրենասեր անձնավորության համար:

Այսպիսով, որպես եզրակացություն կարելի է շեշտել հետևյալը: Հայ մշակույթի և առանձնապես հայ գրականության անդաստանում եղել են անուններ, որոնց գործն ու վաստակը կարծես թե մնացել է ստվերում,

¹¹¹ Տե՛ս Երևանի Մաշտոցի անվան Մատենադարան ձեռ. № 2949, էջ 34 թ:

որովհետև նրանց մասին մինչև այժմ բավականին քիչ բան գիտենք: Սակայն այդ մարդիկ մեծ գործ են արել, կարելի է ասել՝ նվիրյալներ են: Եվ որքան քննարկում, վերլուծում և գնահատվում են նրանց արածն ու ներդրումը, նույնիքան պարզ է դառնում, թե դեռ ինչքան կարելի է այդ ուղղությամբ աշխատանք ծավալել: Ամեն մի նման ձեռնարկում խիստ կարևոր է, եթե ուզում ենք հայ մշակույթի պատմությունը տեսնել առավել ամբողջական և ըստ էության բացահայտված ու արժեքավորված: Ըստ այսմ հայ բառարանագրության պատմությունը ևս կարոտ է նման ձեռնարկումների: Նա անմասն չէ այն պակասից ու քերացումից, որոնք նկատվում են հայոց լեզվի պատմության ուսումնասիրության բնագավառում, հատկապես մեր օրերի նոր պահանջների ու արդիական խնդիրների տեսակետից:

ԵՂԻԱԶԱՐ ԱՌՆՋԵՑՈՒՄ ՄԱՏԵՆԱԿԻՑ ԲԱՌԱՐԱՆԵՐԸ

Հայ բառարանագրությունը, ինչպես հայերենագիտական գրեթե ամեն մի գիտաճյուղ, աննախադեպ, բուռն զարգացում է ապրում 19-րդ դարում։ Այդ շրջանում ստեղծվում են մեծ բվով ձեռագիր և տպագիր բառարաններ։ Դրանց մեծ մասն արժանացել է բառարանագիտական վերլուծության՝ կապված հատկապես հայ բառարանագրության պատմության հանգուցային հարցերի ուսումնասիրության հետ։ Լույս են տեսել նաև կոնկրետ այս կամ այն հայտնի բառարանին նվիրված աշխատանքներ։ Սակայն դեռ մնում են զգալի բվով բառարաններ, որոնք կամ պակաս շափով են քննված, կամ ամենին չեն արժանացել որևէ ուշադրության։ Նման բառարանների գիտական ուսումնասիրությամբ ոչ միայն լրացվում է մնացած բացը կամ եղած թերին, այլև նոր հնարավորություն է ստեղծվում հետագա աշխատանքների ձեռնամուխ լինելու համար։

Այդ բառարանները ևս հայերենի բառապաշարի պատմության կարևոր աղբյուր են։ Ուստի այդ շրջանից մեզ հասած յուրաքանչյուր բառարան անհրաժեշտ է ուսումնասիրել, և դա անհետաձգելի պիտի լինի։

Նոր գրական հայերենի ձեռագրուման, զարգացման և ներկայիս առաջընթացի շատ հարցեր իրենց լիարժեք պարզաբանումը կարող են ստանալ անցյալի գրակոր աղբյուրների, մասնավոր հայերեն բառարանների մանրամասն և խորը հետազոտության միջոցով։ Այդ բնագավառում ևս կարելի է մեծ աշխատանք ծավալել, որն էլ լինելու է արդի հայերենագիտության զարգացման երաշխիքներից մեկը։

Այս տեսակետից է, որ հարկ ենք համարում առանձին անդրադառնալու 19-րդ դարի հայ բառարանագիր Եղիազար արքեպիսկոպոս (Տեր-Կարապետյան) Առնօնցու մի գործի բառարանագիտական ուսումնասիրությանը¹¹²։ Եվ դա անում ենք այն մոտեցումով, որ հայ բառարանագրական ամեն մի հուշարձան, հայերեն կամ հայերենին առնչվող

¹¹² Եղիազար Առնօնցու մասին տես «Արարատ», 1944, էջ 134–135։

ամեն մի բառարան կարող է դառնալ հատուկ ուշադրության առարկա և
քննության առնվել ըստ ամենայնի:

Եղիազար Առնջեցին մի անհայտ և բոլորովին անձանոք անուն չէ հայ գրավոր մշակույթի պատմության մեջ: Դատելով մեզ հասած սույն, կցկուոր տվյալներից՝ նա պիտի ապրած լինի Էջմիածնի հոգևորական միջավայրում, որտեղ եկեղեցական ամենօրյա գործունեությանը զուգակցելիս է եղել բառարանագրական աշխատանք:

Նրա մասին տեղեկություններ են ամփոփված Երևանի Մաշտոցի անվան Մատենադարանի «Յուցակ ձեռագրաց»-ում¹¹³: Այդ գրքի 1-ին հատորի «Անձանտների ցանկ»-ից տեղեկանում ենք, որ Եղիազար Առնօցեցին «Համառոտոքիս ճարտասանութեան» (գրված 1839 թ.) աշխատության գրիչը և հեղինակն է: Այս տեղեկությունը գետեղված է Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագիր № 3362-ում¹¹⁴: Իսկ գրքի 2-րդ հատորի «Անձանտների ցանկ»-ում նշվում է, որ նա եղել է գրիչ, քարգմանիչ և հեղինակ: Տեղեկանում ենք նաև, որ Եղիազարը քարգմանել է «Ծաղկաբաղ հեղինակ: Տեղեկանում ենք նաև, որ Եղիազարը քարգմանել է «Բառագիրք լնիքերցուածք ի Հնոյ Կտակարանէ» գործը, այնուհետև հեղինակել «Բառագիրք գլուզ ի հայ և ի ռուս լեզու» երկը: Իսկ դրանք գտնում ենք ՍՍԶ 6418-ում¹¹⁵:

գործ՝ «Նորին բառք նորաձևք մատեսիս» ուղղված է ՀՀ Արժանի հետևյալ իսկ ՍՄԶ № 6418-ի դեպքում առավել ուշադրության են արժանի հետևյալ հանգամանքները. ա) ձեռագիրն ավանդված է «Ծաղկաքաղ ընթերցուածք ի Հնոյ Կտակարանէ», բ) այն գրված է ԺԹ դարում, զ) գրիչը և քարգմանիչը նույն անձնավորությունն է՝ Եղիազարը, դ) ձեռագիրը պարունակում է նաև մեկ երկ՝ «Քառագիլը գրոց ի հայ և ի ոուս լեզու» վերնագրով¹¹⁷:

¹¹³ Տես «Յուղակ ծեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի», հի. Ա-Բ, Երևան, 1965-1970 («ՀԱՅԱՍՏԱՆ»).

(*wjunihtunli*, ԱԱԶ):

¹¹⁵ Լուսի տեղում ի շ. 1307:

¹¹⁶ Կույս տեղիում, հ. 2, էջ 150:

¹¹⁷ Առյա Մանուկյան, Խ. 1, էջ 330:

Այսպիսով, դատելով ՍՄՁ № 3362-ի տվյալներով, Եղիազար Առնջեցին հեղինակ է երկու աշխատության՝ «Համառօտոթիւն ճարտասանութեան» (էջ 4ա-92թ) և «Նորին քառ նորաձեք մատենիս» (էջ 93ա-111ա): Իսկ ըստ ՍՄՁ № 6418-ի տվյալների նաև քարզմանիչ է «Պատմաբանական լուրերցանութիւն ի գործ Հին Կտակարանաց» (էջ 1ա-141ա) և հեղինակ «Համառօտ քառարան ի հայոց ի ոռոսաց, յաղագս քառից պարունակելոց յայսմ սրբազան պատմութեան» (լիման նախորդի – Վ. Հ., էջ 142ա-158ա): Դժվար չէ նկատել, որ բերված գործերից երկուսն իրենց բուն վերնագրերով տարբերվում են ՍՄՁ-ում հիշատակված վերնագրերից: Դրանցից քացի հարկ է նշել, որ Եղիազար Առնջեցին քառարանագրական աշխատանքը զուգակցել է քանասիրականին, ինչպես նաև քարզմանականին:

Ստացվում է, որ Եղիազար Առնջեցին հեղինակ է «ճարտասանութիւն» աշխատության (Էջմիածին, 1839 թ.) և երկու քառարանագրական աշխատանքի, քարզմանիչ մեկ այլ երկի: Նա ինքն է իր աշխատությունների արտագրողն ու «գրիչը», քանի որ նրա անունով մեզ հասած հիշյալ երկու ձեռագրերն ինքնագիր են (գրված են հեղինակի ձեռքով):

Ուստի և բնագրագիտական (տեքստաբանական) և աղբյուրագիտական մանրազնին քննությունից պարզվում է, որ 19-րդ դարի հոգևորական մտավորական Եղիազար Առնջեցին հայ գրավոր մշակույթի գործին ծառայել է որպես հեղինակ, հարզմանիչ և «գրիչ»: Նա գրել է «ճարտասանութիւն» քավականին լնդարձակ մի աշխատություն, կազմել նրա տերմինների քառարանը («տերմինարանը»), քարզմանել «Հին Կտակարանի» մի համառոտություն, դարձյալ կազմել վերջինիս դժվարիմաց քառերի քացատրական քառարանը, ըստ որում այս վերջինը՝ հայերեն-ոռուսերեն զուգադրությամբ: Այդ մասին հեղինակն ունի հատուկ ծանուցում. «յօրինեալ ի քարզմանչէ սորին յԵղիազար աբեղայէ Տէր-Կարապետեան Առնջեցոյ»¹¹⁸:

Իսկ լեզվաբանական-քառարանագիտական քննության հայեցակետից ուշադրության առարկա կարող է լինել հիշյալ երկերից երկուսը՝ ճարտասանական տերմինների քառարանը և հայերեն-ոռուսերեն քառարանը: Ուստի և ստորև անդրադառնում ենք դրանց քառարանագիտական վերլուծությանը՝ դրանք կոչելով մատենակից քառարաններ:

Նախ, խոսենք առաջինի մասին:

Ձեռագրում առաջինը վերնագրված է հետևյալ կերպ. «Քառ նորաձեւ համառօտ մատենիս ի վերայ այբուբենից արարեալ յաշխատասիրողէ սորին»

¹¹⁸ Տես Երևանի Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռ. № 6418, էջ 142ա:

(ՍՄԶ № 3362, էջ 93ա): Այս ընդգրկում է հիշյալ ձեռագրի 93ա-111ա էջերը: Ծավալով, ինչպես տեսնում ենք, այնքան էլ մեծ չէ (ընդամենը՝ 37 էջ):

Սույն բառարանն ըստ էության բառացանկ է, որ ունի որոշակի առանձնահատկություններ: Այն կազմելու վերաբերյալ հեղինակը նույն ձեռագրի սկզբում նշում է որոշ մանրամասներ: Նախ, այն կազմվել է հիմնական գործի ավարտից հետո՝ հատուկ նշելով հետևյալը. «զճիգն ի գործ եղեալ արարի ի վերջոյ զբառարան յինքեան պարունակեալ բառիցն երեսահամար բուռվն ի վերայ այրութենիցն, յաղազ մերծ առ ձեռն պատրաստ ունելոյ համբակաց. և մի ժամանակ պատաղիլ տարապարտոց ի զանազան բառարանս զուցէ թէ և ի նոսա ... զիսնորելին ոչ գտանիցեն» (էջ 3թ): Երկրորդ, ինչպես դժվար չէ նկատել, բառացանկն ունի խիստ գործնական բնույթ, այն է՝ ծառայում է հիմնական նյութի ծանուցումն ու յուրացումն հեշտացնելու նպատակին: Հեղինակն այդ խկ պատճառով շեշտում է հետևյալը. «ուրեմն խնդամիտ յօժարութեամբ լնկալջիք զիմ նուէր սիրոյ գիրկս (փխ. թ-ով կամ առանց որս – Վ. Հ.) աշխատանաց յարգանս և յօգուտ հայազգի մանկանց լուսաւորութեան կարողիկէ եկեղեցոյ» (ն. տ.):

Եղիազար Առնօնեցու սույն ձեռագիր բառարանի («բառացանկի») մասին հայ բառարանագրության պատմությանը նվիրված աշխատություններում ոչինչ չի ասված:

Այս բավականին ուշագրաւ է բառահոդվածի մշակման տեսակետից: Այսպես, բերվում է գլխաբառը, տրվում է նրա բերականական բնութագիրը (հոլովումը, խոնարհումը և այլն), այնուհետև սեղմ և որոշակի բացատրությունը, խկ ամենավերջում նշվում է բնագրի այն էջը, որում այդ բառը գործածված է եղել: Ուստի կարելի է ասել, որ տվյալ դեպքում գործ բառը գործածված է եղել: Ուստի կարելի է ասել, որ տվյալ դեպքում գործ բառը կառուցված է բառահոդվածի հետ: Եվ որ դա այդպես է, ունենք իր բնույթով բացատրական բառարանի հետ: Եվ որ դա այդպես է, հավաստի է դառնում հեղինակի՝ «բառացանկի» վերջում դրված հետևյալ հիշատակությունից. «Հարկաւոր բառը համառու մատենին գրեցան հանդերձ նշանակութեամբ» (էջ 11ա):

Որպեսզի պարզ դառնա բառարանի բառահոդվածների կառուցվածքը, իրեն նմուշ բերենք հետևյալ բառահոդվածը. «Ազնուապետութիւն, թեան, իրեն նմուշ բերենք հետևյալ բառահոդվածը. «Ազնուապետութիւն, թեան, թեամբ, թեանց, թեամբք: Է բառ բարդ, ուսող յինքեան զերկոս նշանակութիւնս, որով իմանամբ ազնուաց գլխաւորն կամ գլխակարգութիւնն. երես 128» (էջ 93ա):

Ըստ այդմ, ամփոփ ձևով կարելի է ասել, որ Եղիազար Առնօնեցու սույն բառարանը կառուցված է չորս բաժնով՝ գլխաբառ, բերականական նշում, բառարանը կառուցված է չորս բաժնով՝ գլխաբառ, բերականական նշում, բացատրություն և բնագրի էջի հղում: Բացատրությունները սովորաբար բացատրություն և բնագրի էջի հղում: Բացատրությունները սովորաբար բացատրություն և բնագրի բնագրային բուն կիրառությամբ պայմանավորված և վերաբերում են բառերի բնագրային բուն կիրառությամբ պայմանավորված և

ոչ թե առհասարակ դրանց առաջնային համարվող խմատներին, և դա կարելոր է ամեն մի նման բառարանի համար¹¹⁹:

Բառարանը (ստույգ հաշվումներով) պարունակում է 521 բառահոդված: Ըստ որում հաշվել ենք նաև բառահոդվածներն ըստ էջերի: Պարզվում է, որ յուրաքանչյուր էջ միջին հաշվով պարունակում է փոքր-ինչ ավելի քան 14 բառահոդված: Ամենաշատ բառահոդված լինդգրկում է էջ 93թ-ն, որն ունի 18, իսկ ամենաքիչը՝ էջ 11ա, որն ունի 7 բառահոդված: Բառահոդվածների ընդգրկման նման տատանումն, անշուշտ, բացատրվում է բառահոդվածների մեկնաբանումների, բառարանային բացատրությունների ծավալի տարբերությամբ: Իսկ առհասարակ այդ մեկնաբանումները բավականին միօրինակ են և համաշափ:

Վերը բերված արտաքին կարգի յուրահատկություններից բացի բառարանն ունի հայերենի բառապաշտարի ընդգրկման և բացատրությունների հետ կապված որոշակի առանձնահատկություններ: Դրանք ինչ-որ չափով վերաբերում են մասնավոր դեպքերի, իսկ հիմնականում կապվում են նորակազմ կամ, ինչպես ընդունված է ասել, այլ բառարաններում «չբառարանագրված» բառերի հետ:

Հարկ ենք համարում նշելու դրանցից մի քանիսը:

Հանդիպում են ոչ միայն բառական, այլև բառակապակցական տերմիններ: Օրինակ՝ կերպարանաց նախատպին (էջ 99թ): Բառարանում գրեթե բացակայում են օտարլեզվյան բառերը (բացառությամբ մեկ-երկուսի՝ հոետոր. էջ 101ա, մամոնայ. էջ 103ա, որոնք շատ հին են՝ փոխառնված): Օտարլեզվյան բառերի բացակայությունը հավաստում է, որ հեղինակը հանդես է բերել որոշակի մոտեցում հայերեն բառերի գործածության հարցում, բոլոր դեպքերում աշխատել է բառարանը զերծ պահել օտարլեզվյան բառերի այսպես կոչված պատճենումային ազդեցությունից, մասնավանդ որ բառարանը հետապնդում է միայն ուսուցողական նպատակ:

Առավել ուշագրավ են նորակազմ բառերի հետ կապված առանձնահատկությունները: Վերջիններս, ինչպես գիտենք, բառարանին հաղորդում են գրական աղբյուրի արժեքը: Այսպես, այստեղ ևս հանդիպում են այնպիսի բառեր, որոնք չենք գտնում իին շրջանի հայերենի բառապաշտարն ընդգրկող բառարաններում, օրինակ՝ «Նոր բառզիլք հայկագեան լեզուի» (հհ. 1–2, Վենետիկ, 1836–1837, այսուհետև՝ ՆՀԲ): Ըստ այդմ էլ կարելի է ասել, որ նման նորակազմ կամ նոր «բառարանագրած» բառերը հիմնականում պետք է

¹¹⁹ Հմմտ. З. А. Потиха, Д. Э. Розенталь, Лингвистические словари и работа с ним в школе, М., 1987, с. 14:

դիտել իրեւ իր ժամանակի հայերենի բառապաշտի հարազատ տարրեր: Դրանք գործածվում են սույն բառարանում, ուստի դրանք կարելի է բնութագրել իրեւ հեղինակի ձեռնարկած թարգմանության ընթացքում երևան եկած նորակազմություններ, այսինքն՝ դիպվածային կազմություններ: Օրինակ՝ բելավան («Բելին վանող՝ հալածող՝ քշող», էջ 94բ) բառը նորակազմություն է, որ կամ եղել է իր ժամանակի հայերենի բառապաշտում առհասարակ և մուտք է գործել սույն բառարանի մեջ, կամ էլ հեղինակն ինքն է կազմել ինչ-ինչ հանգամանքների բերումով: Ինչպես այլ, այնպես էլ այս դեպքում կարելի է որոշակիորեն նշել, որ բանի դեռ մեզանում չեն պարզաբանվել այդ կարգի նորակազմությունների (այլև նոր իմաստային կիրառությունների, փոխառությունների և այլն) բնագրային (ոչ բառարանագրական) աղբյուրները, որունց համար սույն բառարանը (այլև մյուս բառարանները) ունենալու է առաջնային աղբյուրի արժեք: Այս մոտեցումը խիստ հատկանշական է լեզվի այս կամ այն փուլի բառապաշտի պատմական վերհանման տեսակետից, որի դեպքում առավել ևս բարձրանում է բառարանագրական հուշարձանների՝ իրեւ բառապաշտի «շտեմարան»-ի դերը:

Եվ սա շատ կարևոր է Եղիազար Առնօցու սույն բառարանի զնահատության համար: Այն, իրոք, այսօր ունի գրավոր աղբյուրի արժեք, ըստ այդմ էլ բառական որոշակի նյութ է տրամադրում հայոց լեզվի երբեմնի կազմվելիք պատմական բառարանի համար: Ծիշտ է, «Հառարանագրված» բառերն այսուղ այնքան էլ մեծ թիվ չեն կազմում (որանք 20-ից փոքր-ինչ ավելի են), սակայն բավականին հատարբրիր են իրենց թե՛ բառակազմական և թե՛ իմաստային կողմերով:

Դրանից բացի, լեզվի բառապաշտի պատմության համար ցանկացած գրավոր աղբյուր պետք է արժեքավորել ոչ թե նրանում տեղ գտած նորաբանությունների քանակային կողմի նկատառումով, այլ այն հաշվով, որ նրանում տեղ գտած մեկ հատիկ նորաբանությունն իսկ կարող է ունենալ արժեք և դեր խաղալ հայերենի ողջ բառապաշտի հավաքագրման և պերլուծության համար: Ըստ այսմ կարծում ենք, որ Առնօցու սույն բառարանը նույնապես իր լրացան է բերում հայոց լեզվի պատմության, նրա բառապաշտի լիարժեք ուսումնասիրության գործում:

Անդրադառնաք բառարանում տեղ գտած նորաբանություններին՝ բառակազմորեն և իմաստարանորեն:

ա) Առանձին խումբ են կազմում բարդ բառերը: Օրինակ՝ բելավան (էջ 94բ), գեղածաղիկ («գեղեցիկ ծաղիկ ունող, կամ փքքեալ գեղեցիկ ծաղկօք. էջ 95ա), գեղեցկահիւս (ն. տ.), կեղծապատիր («կեղծական և պատրողական»). 95ա), գեղեցկահիւս (ն. տ.), կեղծապատիր («կեղծական և պատրողական»). էջ 99բ), ճահալծորդ («պատշաճաւոր լծակցեալ, յարմար կամ «խարեւական»). էջ 99բ), ճահալծորդ («պատշաճաւոր լծակցեալ, յարմար

զուգաւորեալ, կամ արժանաւորապէս կցորդեալ. էջ 102թ), մոլեկոօն («քիլը, խոտորնակ կրտն»). էջ 103թ), վերջընթեր, տառապակիր (ն. տ.) և այլն:

բ) Համեմատաբար շատ են ածանցավոր բառերը՝ բաղադրված –ական, –աւոր, –ապէս, –ումն ածանցներով: Օրինակ՝ անընդմիջապէս (էջ 93թ)¹²⁰, եղերաւոր («ողբերգական, ողբական, լալական, զովք ողբացողաց»). էջ 96ա), իրաւանական (էջ 97թ), շտեմարանումն (էջ 106ա): Այստեղ կարելի է նշել նաև –եմ, –իմ բայական–ձեակազմական մասնիկներով կազմված բայերը: Օրինակ՝ բաղյօդեմ («բաղկացուցանել կամ արտադրել յօդի ինչ»). էջ 94թ)¹²¹, կալանաւորիմ (էջ 98թ), ճրագեմ («լուսաւորել, պայծառացուցանել և կամ իրը զծրագ լոյս տալ»). էջ 192թ): Բերում ենք նաև նախատառութիւն («տառից յառաջ դրումն կամ առաջին որբանութիւն տառից, կամ ըստ որբանութեան տառից»). էջ 105թ) համածանցավոր բառը, որը բաղադրված է, հավանաբար, –ութիւն վերջնաբաղդիչ ածանցով:

գ) Համեմատաբար քիչ են բարդ ածանցավոր բառերը: Օրինակ՝ ազնուապետութիւն, առոգաբանութիւն («բառից կամ բանից գեղեցիկ և յարմար արտասանութիւն կամ վերածայնումն»). էջ 94ա), դիմագրութիւն (էջ 96ա), ճառատանք(< ճառատ–անք. «ընդունայն ասոթիւնը կամ ստայոլ և անշարայար բանք, մերք առասպելաբանութիւնը». էջ 102ա):

դ) Բառակազմության առումով հետաքրքիր են նաև հետևյալ մասնավոր դեպքերը: Այստեղ հանդիպում է բաղյօդէմ բառը, որը չունի ՆՀԲ-ն, թեև ունի բաղյօդ: Այնուհետև, նշվում է փաստաբան բարդ բառը, որը չկա ՆՀԲ-ում, թեև հանդիպում են փաստաբանական, փաստաբանէմ, փաստաբանութիւն բառահոդվածները: Եվ դա բոլորովին արտառոց ու պատահական բան չէ, որովհետև հայերենում ևս առհասարակ հաճախ է նկատվում նման բառակազմությունը, այն է՝ բառակազմական միջանկյալ օղակի բացքողումով (հաջորդ օղակին կամ օղակներին վերաբերող) բառերի կազմում: Տվյալ դեպքում փաստաբան բառը կամ հայերեն գրական աղբյուրներում գործածված չի եղել, որ չի մտել, օրինակ, ՆՀԲ-ի մեջ, կամ էլ, որն ավելի հավանական է, այսպէս կոչված հետադարձ կազմություն է (հետադարձ բառակազմություն – dérivation régressive)¹²²:

ե) Այնուհետև, Առնջեցու բառարանում նորակազմ բառեր են հանդիպում նաև բառահոդվածների բացատրությունների ժամանակ: Այսպէս, հեղինակը

¹²⁰ ՆՀԲ-ն ունի անընդմիջաբար:

¹²¹ ՆՀԲ-ն ունի միայն բաղյօդ:

¹²² Հմտ. Ս. Գալատյան, Ածանցները և ածանցումը ժամանակակից հայերենում, Երևան, 1978: Է. Ա. Խալիֆման, Տ. Ս. Մակեեվա, Օ. Վ. Ռավեսկայ, Այսպէս, հեղինակը

բացատրելով փաստաբան բառահոդվածը, ինքնաբերաբար օգտագործում է պատճառախոսող բառը, որը չենք գտնում, օրինակ, ՆՀԶ-ում: Ուստի այդ բառի համար, բնականաբար, իբրև հայերեն գրավոր առբյուր կարելի է ժամանակավորապես դիտել սույն բառաբանը (էջ 110թ):

զ) Նորակազմ բառերից յուրաքանչյուրը հանդես է զալիս իբրև որոշակի իմաստի կյուղ: Այն կազմվել է հենց տվյալ իմաստն արտահայտելու նպատակով: Բառարանի ստեղծման ժամանակ նկատի է առնվում այն իմաստը, որն անմիջականորեն դրսեռքված է եղել բնագրային այս կամ այն կիրառությամբ: Ուստի բնակ պատահական չէ, որ Եղիազար Առնօցեցին բառերի իմաստային բացատրություններին կից ամեն անգամ հարկ է համարում նշել կիրառության էջը:

Նկատի առնելով այն հաճամանքը, որ մեր վելուծությունը վերաբերում է նման բառերի ոչ միայն բառակազմական, այլ նաև իմաստային և իմաստաբանական կողմին, ինչպես նաև այն, որ այդ նորահայտ բառերը կարող են օգտագործվել հայերենի ամբողջական բառարան ստեղծելու ժամանակ, ուստի առավել ոչ անմիջականորեն հասկանալի նորակազմ բառերին կից բերեցինք դրանց նախնական, անմիջական իմաստային բնութագրերը, բնորոշումները։ Դրանով, բնականաբար, ավելի է հեշտանում հիշյալ բառարանագրական աղբյուրի հետագա օգտագործման աշխատանքը։ Վերջինիս արդյունավետ օգտագործմանը, ինչ խոսք, յուրովսանն իր նպաստ է բերում Եղիազար Առնցեցու ձեռագիր մատենակից բառարանը, որում տեղ են գտել բառապաշտարային արժեքավոր տվյալներ, որոնք հետայրություն անպայմանորեն կօգտագործվեն հայերենի ընդարձակ կամ ամբողջական բառարան կազմելու ժամանակ։

Բառային նորաբանությունների հետ սերտորեն առնչվում է այն հարցը, թե
դրանցից որոնք են կենսունակություն հանդես բերել և ըստ այդմ փոխանցվել
ժամանակակից հայերենին՝ դիմանալով ժամանակի հաղորդակցական
«փորձության»-ը։ Այսպես, վերը բերված նորակազմ բառերից մի բանիսն
այսօր կարելի է դիտել իբրև գործուն բառ՝ գտնելով, որ դրանք կտրել-անցել են
ժամանակների դիմադրությունը և մտել են մեր արդի բառապաշտի գործուն,
գործածական ֆոնդի մեջ։ Այդախուին են, օրինակ, գեղածաղիկ, գեղեցկահիւս,
կեղծապատիր, վերջընթեր, տառապակիր, անընդմիջապէս, եղերաւոր,
շտեմարանումն (հատկապէս՝ առանց ն-ի), կալանաւորիմ (հատկապէս՝ ե
շտեմարիիչով), ազնուապետութիւն, փաստաբան և այլն։ Մնացած բառերի մի
շանիսն էլ երևի թե կարելի լինի գործածության մեջ դնել հայերենի
շանիսն էլ երևի թե կարելի լինի գործածության մեջ դնել հեղինակավոր,
գործառության նոր պայմաններում, եթե դրանք գործածվեն հեղինակավոր,
մնորինակելի խորում։

Այս հանգամանքը հավաստում է, որ Եղիազար Առնջեցու «Բառը նորածն համառօտ» մատենակից բառարանում տեղ գտած նորաբանությունները ոչ միայն ինքնին հետաքրքիր են, այլև լինելով հաջողված կազմություններ՝ գործածվել են ժամանակի ընթացքում և հասել են մինչև մեր օրերը: Չի բացառվում այն, որ դրան երկրորդաբար նպաստել են այլ հանգամանքներ, օրինակ՝ այլ աղբյուրներում կամ առհասարակ հայերենում տարածված լինելը: Այդուհանդերձ, նման կազմություններն այսօր վկայակոչելու ենք ըստ Առնջեցու բառարանի այնքան ժամանակ, մինչև որ ի հայտ կգան, եթե իրոք կան, այն աղբյուրները, որոնցում դրանք գործածվելիս են եղել կամ սույն բառարանի ժամանակում, կամ էլ նրանցից առաջ:

Այս մատենակից բառարանում եղած նորաբանությունների աղբյուրագիտական նման դրվածքն ըստ Էության գնահատությունն է նրա բառարանային կարևորության: Ուստի Եղիազար Առնջեցու «Բառը նորածն համառօտ» բառարանն ունի որոշակի կարևորություն քե՛ բառարանագիտական առումով, քե՛ հայոց լեզվի բառապաշտի պատմության տեսակետից: Իբրև ճարտասանական տերմինների մատենակից բառարան՝ այն ուշագրավ է հայերենի համապատասխան տերմինաբանության ուսումնասիրության համար:

Այժմ անդրադառնանք երկրորդ բառարանին:

Հիշենք, որ այն Եղիազար Առնջեցին կոչել է «Համառօտ բառարան ի հայոց ի ոռւս լեզու»: Այս բառարանը ևս մատենակից է: Այն գրադեցնում է ՍՍՀ № 6418-ի 142ա-158ա էջերը, ընդամենը 31 էջ (եթե չկաշվենք նկատելի բացթողումը):

Այս բառարանի վերաբերյալ կան միայն սույն տվյալներ: Դրանք տեղ են գտել իայ տպագիր բառարանների պատմությանը նվիրված ուսումնասիրություններում՝ կապված հատկապես իայ-ոռւսական բառարանագրության հանգուցային հարցերի մեկնաբանությանն ու գնահատությանը:

Այս բառացանկ-բառարանի մասին առաջին անգամ խոսվում է Գ. Գասպարյանի մի աշխատանքում¹²³: Այդտեղ առանձին բաժնով քննարկվում է «իայ-ոռւսերեն և ոռւս-իայերեն առաջին բառարանների» հարցը (էջ 205-216) և ակնարկ կա նաև Եղիազար Առնջեցու հիշյալ աշխատանքի մասին: Կոնկրետ դեպքում նշվում է, որ «Հայաստանում, պարսկական իշխանության օրով ... արժանի գործ է Եղիազար Առնջեցու «Համառօտ բառարան ի հայոց ի

¹²³ Գ. Գասպարյան, Հայ-ոռւսական բառարանագրության ներդրումը իայ կուլտուրայի մեջ. – «Ն. Մառի անվան լեզվի ինստիտուտի աշխատությունների ժողովածու», հ. 3, Երևան, 1948, էջ 193-291:

ոռուաց լեզու» աշխատությունը», ըստ որում տողատակին հղում կա առ ՍՄՁ № 6418-ը¹²⁴: Այսուհետև, բառարանին նույն մոտեցումով Գ. Գասպարյանն անդրադառնում է հետագա աշխատության մեջ, որտեղ նշում է հետևյալը. «Հայաստանում, սյարսկական տիրապետության օրու գրված բառարանները մնացել են ձեռագիր վիճակում, մոռացված: Դեռ նախքան ոռուական տիրապետությունը Հայաստանում կազմվել են ոռուերենին առնչված մի շարք շատ գործնական բնույթ կրող բառարաններ, որոնց մեջ հիշատակության արժանի գործ է Եղիազար Տեր-Կարապետյան Առնջեցու «Համառու բառարան ի հայոց ի ոռուաց լեզու» աշխատությունը»¹²⁵: Այստեղ ևս տողատակին բերվում է հիշյալ ՍՄՁ № 6418-ը:

Դժվար չէ նկատել, որ երկու դեպքում էլ մեկնաբանությունն ու գնահատությունը, անկախ ժամանակային տարբերությունից, որի ընթացքում թերևս զարգացում ապրած պիտի լիներ այդ ուսումնասիրության ոլորտը, ամբողջովին նույնն են:

«Համառու բառարան ի հայոց ի ոռուաց լեզու»-ի կառուցվածքի վերաբերյալ կարելի է նշել հետևյալը:

Այն կազմված է երկսյուն դիրքով, ըստ որում այբբենական հերթականությամբ: Բառականության սկսվում են էջ 143ա-ից մինչև 157ա-ն, իսկ 157թ էջը բաց է թողնված (հակառակ երեսին բանաբը ներծծելու պատճառով), էջ 158ա-ում դրված է միայն չորս բառահոդված (1-ին սյունակի վերևի մասում): մեղք, մեղք, մեսայ, մետասան:

Մեր հաշվումներով բառարանն ընդգրկում է 742 բառահոդված: Կան բառականության թե՛ խիտ և թե՛ նոսր էջեր: Ամենախիտը 145ա, 148թ էջերն են, որոնք պարունակում են 31-ական բառահոդված, իսկ ամենանոսրը, չհաշված հիշյալ 158ա էջը, 150ա էջն է, որն ունի 21 բառահոդված: Ըստ այդմ պարզ է դառնում, որ յուրաքանչյուր էջում գետեղված է միջին հաշվով 24 բառահոդված: Հարկ է նշել, որ այստեղ նույնպես այդ կարգի տատանումը բացատրվում է բառահոդվածների մեկնաբանումների դեպքում նկատվող տարբերություններով:

Եղիազար Առնջեցու սույն բառացանկ-բառարանի բառահոդվածները կառուցված են հետևյալ կերպ: Նշվում է հայերեն (գրաբար՝ թե՛ արժեքով և թե՛ ուղղագրությամբ) բառը (իմա՝ բառահոդվածը), փակագծում տրվում է նրա ձեւաբանական բնութագիրը (հոլովումը՝ ըստ եզակի սեռական և գործիական հոլովների, և խոնարիումը՝ ըստ բայի անորոշի և անցյալ կատարյալ

¹²⁴ Նույն տեղում, էջ 208:

¹²⁵ Գ. Գասպարյան, Հայ բառարանագրության պատմություն, էջ 104-105:

Ժամանակի եզակի 1-ին դեմքի ձևերի), նշվում է բառի խոսքիմասային պատկանելությունը (ասենք՝ գոյական, բայ, ածական և այլն), բերվում թարգմանությունը (մեկ կամ մի բանի բառով)՝ իբրև հայերեն բառի արտացոլումը (խմաստային համարժեքը): Ըստ այդմ նկատելի է, որ բառահոդվածն ունի 4 աստիճան՝ բառը, քերականական նշումը, խոսքիմասային արտահայտությունը և ոուսերեն թարգմանությունը: Օրինակ՝ ազգական (ի, աւ), ած., րօնյա, րօնտենի, (էջ 143ա), ածելի (տյ, եաւ), գոյ., բրիւ (էջ ն. տ.), ականաւոր (ի, աւ), ած., չնամենիտեալ (ն. տ.) և այլն:

Եղիազար Առնջեցու սույն բառարանը, բացի վերը նշվածից, աչքի է ընկնում հետևյալ հետաքրքրական կողմերով: Նրանում տեղ են գտնել ոչ միայն հասարակ, այլև հատուկ գոյականները՝ անծնանունները և տեղանունները: Օրինակ՝ Աբիմելէք (այ, աւ), գոյ., Ախմելեխ (այդպես է բնագրում – Վ. Հ.) (էջ 143ա), Բարիլօն (ի, իւ), գոյ., Բավիլոն (էջ 145բ), Բերսաքէ (ի, իւ), գոյ., Բիօսեբեյ, Բերշե (այդպես է բնագրում – Վ. Հ.) (էջ 146բ), Բենիամին (նի, աւ) Բենիամին (էջ ն. տ.) և այլն:

Այնուհետև, հարկ ենք համարում նշելու, որ հեղինակը ոլորշ հարցելում հանդես է բերում ինչ-ինչ թերացումներ: Դրանք առնշվում են առանձնապես բառագիտական, այլև ուղղախոսական-ուղղագրական ընդունելի կանոններին: Այս հանգամանքը պետք է դնել ոչ այնքան կտրտուկ մոտեցումով, այլ այն նկատառումով, որ այդ կանոններից կատարվող շեղումները, այլ կերպ ասած՝ թերացումները այնուամենայնիվ շեղումներ են թերևս իր ժամանակի լեզվական կանոններից: Այսպես, ամենուրեք ստույգ և կանոնական գրաբար ձևերի կողքին նկատելի են չնշին շեղումներ: Օրինակ՝ ճուղածու (փխ. ճուղածոյ. էջ 156բ): Կան վրիպումներ ոուսերենի նորմայից: Օրինակ՝ կին ~ ժեռա, սուրուկ (փխ. բ-ով): Թերևս խոսակցական լեզվի ազդեցության արդյունք է՝ մետասան ~ օդինացած (փխ. օդինհաճած. էջ 158ա) և այլն:

«Համառոտ բառարան»-ում նկատվում են այնպիսի բառեր, որոնք չկան ՆՀ-ում: Դրանք ևս նույնպիսին են, ինչպիսին որ էին Առնջեցու առաջին բառարանում տեղ գտածները: Սակայն, ի տարբերություն նախորդի, այստեղ դրանք անհամեմատ քիչ են, նույնիսկ մեկ-երկու օրինակ: Այդուհանդերձ, դրանք ևս արժանի են ուշադրության՝ առհասարակ հայոց լեզվի բառապաշտի պատմության տեսակետից:

Բառարանի ողջ բառացանկը մեկառմեկ համեմատել ենք ՆՀ-ի տվյալների հետ: Պարզվում է, որ այստեղ ունենք ընդամենը երեք բառ, որ բառարանագրված չէ ՆՀ-ում: Իսկ այդ նշանակում է, որ ընդիանուր առմամբ այդ բառերի նախնական գործածությունը կասկածելի է: Հակառակ դեպքում հազիվ թե դուրս մնային ՆՀ-ից: Իսկ ինչ վերաբերում է այն հարցին, թե այդ

բառերը կոնկրետ որ ժամանակում են գործածվել, ինչպիսի պարագաներում, այս մնում է մի տեսակ առկախ, և այդ հարցը առայժմ լուծելի է հարաբերականորեն: Քանի դեռ, առկասարակ, հայտնի չեն մեկ այլ աղբյուր, որ պարտնակելիս լինի այդ բառերը, այդքան ժամանակ դրանք պիտի վկայակոչվեն սույն բառարանի միջոցով: Այլ կերպ ասած՝ մինչև այս բառարանը հայտնի չեր մեկ այլ աղբյուր (հատկապես 19-րդ դարի), որը վկայեր այդ բառերի մասին: Դրանք են՝ զոհարարութիւն (թեան, թեամբ), գոյ., չափութեան մասին: Դրանք են՝ զոհարարութիւն (թեան, թեամբ), գոյ., չափութեան մասին: Դրանք են՝ զոհարարութիւն (թեան, թեամբ), գոյ., չափութեան մասին:

Բառակազմորեն դրանք առաջացել են զոհարար, հացագործ և հիմնաւոր (կամ հիմնաւորեմ) բաղադրվող հիմքերից, գոյականակերտ –ութիւն ածանցի օգնությամբ: Միաժամանակ նկատենք, որ բաղադրվող հիմքերն իբրև ինքնուրույն բառեր բառարանագրված են ՆՀ-ում, այսինքն՝ ունեն նախնական գործածություն: Այստեղ բառակազմական պատճառաբանվածությունը (մոտիվացիան) միանգամայն բնական է, լեզվի զարգացման ընթացքին համապատասխան:

Հիշյալ երեք բառերը, կարծում ենք, մեկուսացված կազմություններ չեն, այլ հանդես են բերել որոշակի կենսունակություն: Դրանք այսօր էլ գործածական բառեր են, օժտված գործառական նույն կենսունակությամբ, ինչ ունեցել են ժամանակին: Ուստի արդի հայերենում գործածվող այդ բառերն այսօր, եթե նկատի առնենք դրանց կազմության կամ առաջացման ժամանակը, կարող ենք վկայակոչել Եղիազար Առնցեցու սույն «Համառու բառարան»-ը:

Այդ բառարանում հանդիպում ենք նաև հասարակութիւն բառի գործածությանը: Հայտնի է, որ այդ բառը բառարանագրված է ՆՀ-ում: Այստեղ, սակայն, ունենք բառի իմաստային նոր կիրառության դրսերում: Եղիազարն այդ բառը դնում է իբրև ոռւս. օբականություն բառի համարժեքը (բարգմանությունը). հասարակութիւն (թեան, թեամբ), գոյ., օբականություն (եղիազար): Իսկ այդ նշանակում է, որ նոր ժամանակներում այդ բառն ինչ-ինչ հանգամանքներում ծեռք է բերել նոր նշանակություն, որը հետզիետե, աստիճանաբար բոնում է նախորդ իմաստների տեղը, դառնում է առաջնային: Այլ դեպքում գործ ունենք այնպիսի իմաստափոխության հետ, որ ընդուված է կոչել իմաստափոխություն հասարակական պայմանների փոփոխության հետևանքով¹²⁶:

¹²⁶ Հմտ. Է. Աղայան, Ընդհանուր և հայկական բառագիտություն, էջ 73–101, 102–103: Նույնը՝ Լեզվաբանության հիմունքներ, Երևան, 1987, էջ 358–376, 377–378:

Ավելացնենք, որ մենք տվյալներ ունենք այն մասին, որ 18-րդ դարում այդ իմաստով հայերենում (հատկապես նոր շրջանի գրաբարում) գործածվում է հասարակապետութիւն բառը¹²⁷, որը ոչ այլ ինչ է, քան նախկինում եղած հասարակութիւն բառի իմաստային նոր կիրառության վոխարեն նոյուվի կազմված բառ: Իսկ դրանից հետո, ինչպես տեսնում ենք, հանդես է գալիս հասարակութիւն բառը՝ իմաստային նոր կիրառությամբ: Այդ իմաստով գործածության աղբյուրն է Եղիազար Առնջեցու սույն բառարանը:

Այսպիսով, 19-րդ դարի ճեռագիր հայերեն բառարաններում ուրույն նշանակություն ունեն Եղիազար Առնջեցու «Համառոտ բառարան ի հայոց ի ոուսաց» մատենակից (քարզմանական) բառարանը և «Բառք նորածև համառոտ» մատենակից բացատրական բառարանը: Դրանք կազմվելիս են եղել գործնական նպատակով, ներկայացնում են բառարանագրական-բառարանակազմական ինչ-ինչ առանձնահատկություններ, պարունակում են այնպիսի բառեր, որոնք չեն հանդիպում գրաբարի (առևասարակ՝ հայերենի) բառարաններում (հատկապես՝ ՆՀԲ-ում): Հիշյալ բառարաններն ուշագրավ են ոչ միայն հայ բառարանագիտության, այլև հայոց լեզվի բառապաշտի պատմության համար: Հայոց լեզվի լիակատար բառարան ստեղծելու դեպքում անպայման հարկավոր է օգտագործել նաև այս բառարանների տվյալները: Այդքանով էլ արդիական է այդ բառարաններին անդրադառնալլ մեր օրերում: Իսկ իրենց ժամանակին ոյլանք, անշուշտ, խաղացել են իրենց դերը, ծառայել իրենց նպատակին:

¹²⁷ Տե՛ս Վ. Համբարձումյան, XVII–XIX դարերի գրաբար պատմագրության լեզվական բնութագիրը. – «Պատմա-բանասիրական հանդես», 1982, № 1, էջ 75:

В. Г. Амбарцумян

**Очерки истории армянской лексикографии
(конец XVII в. — XIX в.)**
(Резюме)

Армянская лексикография как отдельная область изучения армянского языка хоть и имеет определенные достижения, однако некоторые вопросы ее истории и, в особенности, теории не получили еще должного решения. Это заметно в научном анализе и оценке не только отдельных словарей, но и лексикографии вообще.

Настоящая работа посвящена одной важной сфере изучения армянской лексики—новому освещению конкретных задач лексикографии, а также оценке отдельных словарей. Ее предполагается опубликовать не целиком, а по частям (отдельными, не очень объемистыми томами).

В этом томе мы освещаем, с одной стороны, некоторые задачи теории армянской лексикографии и связанный с ними вопрос важности изучения небольших словарей, с другой стороны, сосредоточиваем внимание на тех словарях (рукописных и изданных), которые в трудах, посвященных истории армянской лексикографии (монографии, научные статьи, публикации и др.), или вообще не рассматривались, или рассматривались не непосредственно и подробно.

Стержневые задачи армянской лексикографии в соответствующих исследованиях получили частичное решение скорее в практических, чем в теоретических обсуждениях и анализе.

У нас пока еще нет твердой основы теоритического исследования

лексикографии, что должно было бы составить собственно предмет лексикографии. В начале работы мы останавливаемся на этой стержневой задаче, наиболее интересной для нынешней армянской лексикографии. С этим связан в данном случае наиболее интересный для нас вопрос о том, каковы лексикографические анализ и оценка небольших словарей армянского языка.

Аристакес Хамаданец (XVII в.) является автором двух рукописных словарей, один из которых (Рук. 2301, стр. 167а–172б) является кратким словарем озаглавленным 'Ступени слова'. Он по сей день не был удостоен какого-либо лексикографического внимания. В нем в качестве заглавных приводятся слова, содержащие от одного до шести слов, и на их основе составляются новые. Это, в сущности, – слогообразовательный словарь, так сказать, слогословарь. Он не только был полезен в свое время, с точки зрения дидактических задач, но и важен в наше время – в плане составления исторического словаря, так как в нем есть и неологизмы.

В Матенадаране рук. 7650, (1756г., стр. 41а–64б) содержит небольшой армянско-латинский словарь, который должен быть оценен не только по существу, с точки зрения лексикографического типа, но и по особенностям охвата армянских и латинских слов. Это – рукописная копия терминов, помещенных в конце труда известного философа и грамматиста XVIIв. Кл. Галаноса, которые в индо-армянской среде использовались в практических целях – для обучения.

В Матенадаране рук. 3110, 2-я половина XVIIIв., стр. 1131а–146б содержит любопытный словарь, который беспрецедентен в своем роде. Для нас это – предтеча словообразовательных словарей: даны заглавные слова, и от них образуется множество новых слов. Причем в качестве заглавных слов приводятся не только простые слова, но и аффиксы – первые или вторые словообразовательные компоненты. Примечательно и то, что в словаре есть ряд новообразований. Очевидно, словарь был составлен для удовлетворения потребности нормативно-школьного преподавания грабара.

О словаре Кл. Сарафяна в армянской лексикографии имеются только сугубо очерковые замечания. Между тем, этот труд достоен более пристального внимания, в особенности, с точки зрения сегодняшней арmenистики. Этот словарь—одно из крупнейших достижений армянско-русской лексикографии. Его цель—сделать обучение этим двум языкам более эффективным, усвоение грамматических форм закрепляя усвоением лексики. В нашем анализе широко освещается ряд вопросов, относящихся к научной ценности словаря, определенные выводы.

Гр. Халдарян—великий подвижник армянской культуры, в его типографии издан пяд ценных книг, а также посмертно—его словарь, который и в наши дни не утратил своей научной, даже дидактической значимости. Словарь имел серьезное значение в свое время: изданная в 1788г. его книга “Тропа языковедения” является важным памятником армянско-русской лексикографии.

Елиазар Аринджези (XIXв.) является автором двух трудов, достойных пристального внимания: “Армянско-русский словарь” и “Риторика” первый—двуязычный словарь, а второй—приложение, являющееся словарем ораторских терминов (Рук. 3362, стр. 93а–111а, Рук. 6418, стр. 142а–158а). Эти словари интересны не только для истории армянской лексикографии, но и для истории армянской лексики. При составлении полного словаря армянского языка следует использовать и эти словари.

Лексикография—одна из важнейших отраслей современного этапа арmenистики, и сегодня также следует развернуть работы для обеспечения ее развития и совершенствования. С этой точки зрения очень важны не только изданные, но и рукописные памятники лексикографии—независимо от их объема, времени создания и поставленных задач.

V. G. Hambardzumyan

Glimpses on the history of the Armenian Dictionarology

(end of XVII c. — XIX c.)

(Summary)

As a separate branch in the Armenian study the Armenian dictionarology has got several achievements. Still its history and especially a number of theoretical problems haven't received their complete solution yet. It is obvious not only in the scientific analysis and evaluation of certain dictionaries but in dictionarology as a whole.

This work is devoted to a very important sphere of the study of the Armenian vocabulary, the new explanation of the certain problems of dictionarology, as well as evaluation of several dictionaries. It will be published in separate studies, part by part, not in a big volume.

In this volume we will speak on some theoretical problems of the theory of Armenian dictionarology, the importance of the study of non-massive dictionaries. We'll pay our special attention on printed and manuscript dictionaries which haven't been thoroughly studied in the history of the Armenian dictionarology or they have been completely unknown.

The main problems of the Armenian dictionarology have got their partial solutions more in practical than theoretical discussions and analyses.

The theoretical study of the dictionarology which is the main subject of the dictionarology is not on a strong base. At the beginning of the work we discuss the problem that nowadays is of a great interest. It is connected with the dictionological evaluation and analyses of the Armenian non-massive dictionaries which is of great importance.

Aristakes Hamadantsi is the 17th century author of two manuscript works. One of them (MMZ 2301; page 167b–172b) is a brief dictionary named “The Degrees of the Words”. It hasn’t yet got the attention in dictionarology. The basic words consist of one to six syllables and they get their new derivatives. In essence it is a derivation forming dictionary, in one word it is a syllabodictionary. It was very useful in writing historical dictionaries not only in its time as well as nowadays because it has lots of novelty words.

The manuscript of Matenadarn 7560 (1756, page 41a–64b) contains a small Armenian–Latin dictionary which is valuable in its nature as a dictionary. It is also specific with the contained Armenian and Latin words. It is the copy of the terms on grammar and logics that the Kl. Galanos, the 17 century famous philosopher and grammar had collected in the end of his work. The copy of the terms had practical use in Armenian study courses in India.

The manuscript in Matenadaran 3110 (2nd half of the 18th century, pages 113a–146b) contains a significant dictionary which is unique in its nature. It is the first model of the Word–structural dictionary. It has the main words and its derivatives. As a main word it contains not only simple words as well as suffixes as the first or second part of the word. It’s interesting that the dictionary contains a number of new words. Probably the dictionary was aimed to satisfy the demands of the study of grabar (old Armenian) at schools.

We have only schematic discussion of the dictionary of K. Sarafian. Truly that work deserves a thorough attention especially from the point of view of contemporary Armenianology. That dictionary is the greatest achievement of the Armenian–Russian dictionarology. It aimed to make the study of both languages more effective consolidating the grammar through mastering the vocabulary. Concerning the scientific values of the dictionary we discussed and clarified a number of problems and their solutions.

G. Kaldarian is a significant figure in the Armenian culture. Lots of valuable books were published in his publishing house and among them his dictionary published after his death. Even nowadays the dictionary keeps its scientific value. It was of great importance in its time. The book “Shavikh lezvagitutyan” (Way to Linguistics) published in 1788 is a significant monument of dictionarology in Armenian–Russian dictionarology.

Yegiazar Arnjetsi is a nineteenth century author of two significant works. They are "Wordbook of Armenian and Russian" and "Rhetic's". The first one is bilingual dictionary and the second is a dictionary of rhetoric terms (MMZ 3362, pages 93a–111a, MMZ 6418, pages 142a–158a) This dictionaries are important from the point of view of the Armenian dictionarology as well as of history of the Armenian vocabulary. While forming the Armenian complete dictionaries it is necessary to use the information of these dictionaries.

The dictionarology is an important branch in modern Armenian linguistics and we need to do a broad work to secure the development and progress of that branch. For that reason both printed and manuscript dictionaries get great impotence regardless their size, the period, the aim and the role they played in their time.

ԲԱԼԱՑՄՆԿ

Ստորև ներկայացնում ենք սույն աշխատանքում իրեն օրինակ բերված
այն բառերը, որոնք չունի «Նոր հայկագյան բառարանը»՝ անկախ դրանց
բաղադրող կամ բաղադրվող հիմքերի հնարավոր գոյությունից

- աղջեւ – 30
աղին – 30
ազնուապետութիւն – 118, 119
ածելի («սայր սափրվելու համար») – 122
աղաղիր – 62
աղիսարկու (ունի աղիսարկ, աղիսարկութիւն) – 62
աղքատազգեստ (ունի աղքատազգեստեալ) – 63
աճառատր – 107
աճառեայ – 107
անբացորոշական – 107
անդրագոյափոխութիւն – 107
անընդմիջապէս (ունի անընդմիջաբար) – 118, 119
անստուած (շստա՞ծ) – 57
աշկիկ – 107
աշքնոց – 87
ապականարոյս – 58
ապարայիւն – 53
առնչափ – 59
առոգաբանութիւն – 118
ատամնատ – 107
արատաբաց – 56
արդարահաս – 62
արդարապատիժ – 62, 63
արդարավճիտ – 62, 63
արեգակնազգեստ – 62

- արժանամատոյց – 62
արժանամոյտ – 62
արտասուեղաբար – 32
բաղդատականապէս (ունի բաղդատական) – 33
բաղյօդեմ (ունի բաղյօդ) – 118
բանադիր (ունի բանալիանք, բանադրեմ, բանալլութիւն) – 62
բացառական (ունի բացառութիւն) – 43, 45
բէլավան («Բելին քշող՝ վանող») – 117
բխրապատկօրէն (ունի բխրապատիկ, բխրապատկեմ, բխրապատկեան) – 33
գեղածառիկ – 117, 119
գեղեցկահիւս – 117, 119
գերադրականակարար (ունի գերադրական) – 33
գերազուարճական – 33
գիշերավարժ – 59
գովանի – 61
գործիական հոլով («Չիք ի Հին. քեր. ») – 43, 48
դատաւորական – 32
դատողականաբար – 33
դարահոս (ունի դարահոս առնել, դարահոսեմ) – 55
դիմագրութիւն – 118
եղերասր – 118, 119
երգասաց – 56
զոհարարութիւն – 123
էախնդիր – 55
էականապէս – 33
էութենական – 32, 35
ընդարձուսական (ունի ընդարձոյս) – 33
ընդիանրականաբար (ունի ընդիանրական) – 33
քուալրականապէս – 33
ժամասաց – 55
ինքնազրաւական (ունի ինքնազրաւ) – 32
ինքնահաւան – 55
լայնածաւալօրէն (ունի լայնածաւալ) – 33, 55
լիմոնի ծառ – 87
լիոլանամ – 106
խաղասաց – 56
խորանայարկական (ունի խորանայարկ) – 33

- խորդաբարոյ – 55
խորիլտակցաբար – 32, 33
ծընկան խուփն – 87
կալանաւորիմ (ունի կալանաւոր) – 118, 119
կաղամախիտ – 32
կարգադիր (ունի կարգադրեմ, կարգադրութիւն) – 62
կարծողականապէս (ունի կարծողական) – 33
կեղծապատիր – 117, 119
կենսաւէտ – 58
հակակասէր – 62
հայրաբուխ(ունի հայրաբուլխ) – 61
հայրազեղծ – 61
հայրախողխող – 61
հայրենատեաց – 61
հարցաբան (ունի հարցաբանել) – 61
հացազործութիւն (ունի հացազործ) – 123
հաւաքաբանական (ունի հաւաքաբան) – 33
հաւրութիւն – 123
հինգավանկ – 84
հոգոց հանել – 105
ձայնաւրական (ունի ձայնաւր) – 32, 33
ձեղունազարդ – 30, 32
ձեղունազարդաճեմ – 34
ձրիավարժ – 59
ծօնաւրեալ – 32
դամբարազատ – 107
դամպարափայլաբար (ունի դամբարափայլ կամ դամպարափայլ) – 33
դիւղանամ (ունի դիւղալ, տե՛ս լիւղալ) – 106
դողանջանողական – 33
դողանջաբան – 32
ճահալծորդ – 117
ճառատանք (ունի ճառատեմ) – 118
ճշմարտաբանական (ունի ճշմարտաբան, ճշմարտաբանեմ) – 33
ճշտութիւն – 107
ճրագեմ – 118
մաշիկ – 107
մարզարեազիծ – 62

- մարդադրամն – 62
մեծահոչակական (ունի մեծահոչակ) – 33
մէջ գիշերոյ – 108
միավանկ – 84
մոլեկուլ – 118
մօրուսատր – 107
յարաբերական – 47
յաւէժնուազական – 34
յոգներանգ – 58
նախադասական (իմա՝ ներդրական իոլով) – 43
նախատառութիւն – 118
նաւակառոյց (ունի նաւակառուցական) – 56, 61
ներգոյական (իմա՝ կացողական իոլով) – 45, 47
ներկրթական – 33
ներսային մասն մարմնոյ – 88
շատաշարժողապէս – 33, 34
շարահիսօղ (ունի շարահիս) – 32, 35
շտեմարանումն (ունի շտեմարանեմ) – 118, 119
շքատր – 63
ոգետանց – 61
ունակականապէս (ունի ունակական) – 33
շարադատիչ (ունի շարադատ) – 32
շարահաւան – 32, 35
շափակցական (ունի շափակցութիւն) – 34
շաբակցականարար (փխ. փ-ով) – 33
շորրորդավանկ – 84
պակասական (ունի այլ իմաստով) – 43
պահազգեստ – 59
պատճառախոսօղ – 119
պատմական – 48
պարապնդողական (ունի պարապնդեմ) – 33
պարաւանդական (ունի պարաւանդ, պարաւանդանք, պարաւանդեմ) – 32
պղնձածիք (փխ. ծ-ով և գ-ով) – 61
պստկապահանց – 59, 61
պրատուն – 59
զախցախողական – 33
զնարաքատակ – 32

- Զրապուրպուր – 59
ուազմահատական (ունի ուազմահատ) – 32
ուամկածին – 59
ուետնաճաշակ – 32
ուետնաճաշակօրէն – 33
սաստկահողմն – 59
սերմնամատոյց – 60, 61
ստորադասական (իմա՝ վերջադրական հոլովում) – 43
սրօբէապարական – 33
վերագդեցողաբար – 33
վերնաշու – 61
վերջընթել – 118, 119
վեցավանկ – 84
տառապակիր – 118, 119
տարատրուիորէն – 33
տիրագիր – 61
տպագիր (ունի տպագրեմ, տպագրութիւն) – 108
տպել – 108
բարունապետութիւն (ունի բարունապետ) – 35
բէնականապէս (իմա՝ օրէնականապէս) – 33
բոպէաբնակ – 32, 36
ցաւագնասիրտ – 32
փաստաբան – 118, 119
փարբամաբան – 32
փրկաւէտ – 58
քանքարագիւտ – 32
քառազարդական – 33
քառանիշ սայրասուր – 59
քրէօբէախըմբական – 34
օղերձական (ունի օղերձ, օղերձել . տե՛ս ուղերձ) – 31, 32
օրինաբանողական – 33
ֆրմայ – 36

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- Աղայան Է., Ընդհանուր և հայկական բառագիտություն, Երևան, 1984:
- Աղայան Է., Բառարանագիտություն. -Գ. Զահովլյան, Է. Աղայան, Վ. Առաքելյան, Վ. Քոսյան, Հայոց լեզու, I մաս, Ա պրակ («Ներածություն, հնչյունաբանություն, բառագիտություն, դարձվածաբանություն»), Երևան, 1980:
- Աղայան Է., Կյանքի և գիտական գործունեության համառոտ ակնարկ. «Ստեփան Սարգսի Մալխասյանց (կենսամատենագիտություն)», Երևան, 1962:
- Աղայան Է., Լեզվաբանության հիմունքներ, Երևան, 1987:
- Աճառյան Հ., Հայոց լեզվի պատմություն, հհ. 1 – 2, Երևան, 1940–1951:
- Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, հհ. 1 – 2, Երևան, 1971–1979:
- Ամալյան Հ., Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձանները (V – XV դդ.), Երևան, 1966:
- Ամալյան Հ., Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձանները (XVI – XVII դդ.), Երևան, 1971:
- Անասյան Հ., Հայկական մատենագիտություն (Ե – ԺԸ դդ.), հ. Բ, Երևան, 1976:
- Աւետիքեան Գ., Միւրմէլեան Խ., Ագերեան Մ., Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հհ. 1 – 2, Վենետիկ, 1836–1837:
- Գալստյան Ս., Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում, Երևան, 1978:
- Գասպարյան Գ., Հայ բառարանագրության պատմություն, Երևան, 1968:
- Գասպարյան Գ., Հայ–ոռոսական բառարանագրության ներդրումը հայ կուլտուրայի մեջ. «Ն. Մառի անվան լեզվի ինստիտուտի աշխատությունների ժողովածու», հ. 3, Երևան, 1948:
- Գիրք որ կոչի Բանալի գիտութեան, արարեալ և բարգմանեալ ի ոռուաց լեզուէ ի հայ բարբառ և ի հայոց լեզուէ ի ոռուաց բարբառ, Կղեռպատրայ Սարաֆեան, Սանկտպետերբուրգ, 1788:
- Երևանի Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագիր №№ 2110, 2949, 3362, 6418:
- Թեոդիկ, Տիայ ու տառ. «Գիրք»ին ծագման և միջազգային ու հայկական տպագրութեան վրայ ճգուած ակնարկ մը, Կոստանդնուպօլիս, 1912:
- Իշխանյան Ռ., Նոր գրական հայերենը XVII–XVIII դդ., Երևան, 1979:
- Իշխանյան Ռ., Հայ գիրքը. 1512–1920, Երևան, 1981:
- Լեռ, Երկերի լիակատար ժողովածու, հ. 3, գիրք 2, Երևան, 1973:
- Լևոնյան Գ., Հայ գիրքը և տպագրության արվեստը, Երևան, 1958:
- Խաչիկյան Լ., Քոնայի հոգևոր–մշակութային կենտրոնը և Հովհաննես Քոնեցու գիտական գործունեությունը. Յովհաննէս Քոնեցի, Յաղագս քերականին, առաջարանը Լ. Խաչիկյանի և Ս. Ավազյանի, Երևան, 1977:
- «Կուլտուր–լուսավորական աշխատանք» (ամսագիր), № 8, 1987:
- Համբարձումյան Վ., Գրաբարի լատինատիպ նորամուծությունների հաղթահարումը XVIII դարում. «Լրաբեր հասարակական գիտությունների», № 8, 1982:

- Համբարձումյան Վ., XVIII–XIX դարերի գրաբար պատմագրության լեզվական բնութագիրը. «Պատմա–քանասիրական հանդես», № 1, 1982: ...
- Համբարձումյան Վ., Հայերեն ճեռագիր բառակազմական բառարանը. «Լրաբեր հասարակական գիտությունների», № 11, 1987:
- Համբարձումյան Վ., Հայերենի բառապաշտի բառարանային ուսուցում. «Հայոց լեզուն և զրականությունը դպրոցում», № 2, 1989:
- Համբարձումյան Վ., Եղիազար Առնջեցին բառարանագիր. «Պատմա–քանասիրական հանդես», № 3, 1989
- Համբարձումյան Վ., Գրաբարի գործառությունը որպես գրական լեզու ԺԸ–ԺԹ դդ., Երևան, 1990:
- Համբարձումյան Վ., Հայերը և հոռմեացիները. լեզվական շփումներ. «Երկիր», 13-ը նոյեմբերի, 1991:
- Համբարձումյան Վ., Սիմեոն կաթողիկոս Երևանցին և նրա «Զամբո» աշխատությունը. Սիմեոն կաթողիկոս Երևանցի, Զամբո, բարգմանությունը, առաջարանը և ծանոթագրությունները Վ. Համբարձումյանի, պատմաաշխարհագրական բնույթի ծանոթագրությունները և քարտեզները Գ. Բաղալյանի, Երևան, 2003:
- Հայկական սովետական հանրագիտարան, հ. 4, 8, Երևան, 1978, 1984:
- Հայ հնատիպ գրքի մատենագիտական ցուցակ (1512–1850), Երևան, 1963:
- Հայոց լեզվի հանգարանարան, Երևան, 1967:
- Հովհաննես Օձնեցի, Երկեր, գրաբարից բարգմանությունը, առաջարանը և ծանոթագրությունները Վ. Համբարձումյանի, Երևան, 1999:
- Ղազարյան Ռ., Նոր հայկագյան բառարանը. «Բանբեր Երևանի համալսարանի», № 2, 1968:
- Մեյե Ա., Հայագիտական հետազոտություններ, Երևան, 1978:
- Մեյթիսանյան Փ., Հայերեն նոր բառերը (բառարանագրական նյութի հիման վրա), (թեկնածուական ատենախոսության սեղմագիր), Երևան, 1991:
- Պարույր Սևակ, Երկերի ժողովածու 6 հատորով, հ. 5, Երևան, 1974, էջ 155:
- Պետրոսյան Լ., Ստեփանոս Մալխասյանծի «Հայերեն բացատրական բառարանը». «Լեզվի և ոճի հարցեր» (հոդվածների ժողովածու), հ. 1, Երևան, 1960:
- Պետրոսյան Հ., Հայերենագիտական բառարան, Երևան, 1987:
- Պողարեան Ն., Մայր ցուցակ ծեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. 4, Երուսաղեմ, 1969:
- Չահուկյան Գ., Հայ լեզվաբանական միտքը և աշխարհաբարի հարցերը 18–19-րդ դարերում (դոկտ. ատենախոս., ճեռագիր), Երևան, 1955:
- Չահուկյան Գ., Գրաբարի քերականության պատմություն, Երևան, 1974:
- Չահուկյան Գ., Ներածություն. –Գ. Չահուկյան, Է. Աղայան, Վ. Առաքելյան, Վ. Քոսյան, Հայոց լեզու, 1 մաս, Ա պրակ («Ներածություն, հնչյունաբանություն, բառագիտություն, դարձվածաբանություն»), Երևան, 1980:
- Չահուկյան Գ., Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987:
- Չահուկյան Գ., Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, Երևան, 1990:
- Սեբաստացի Մխիթար (և աշակերտը), Բառզիրք հայկագեան լեզուի, հհ. 1–2, Վենետիկ, 1749–1769:
- Սիմեոն կաթողիկոս Երևանցի, Զամբո, բարգմանությունը, առաջարանը և ծանոթագրությունները Վ. Համբարձումյանի, պատմաաշխարհագրական բնույթի ծանոթագրությունները և քարտեզները Գ. Բաղալյանի, Երևան, 2003:

- Սուքիասյան Ա.**, Ժամանակակից հայոց լեզու. («Ներածություն, հնչյունաբանություն, բառագիտություն, բառակազմություն»), Երևան, 1982:
- Տեր-Միրտչյան Գ.**, Հայագիտական ուսումնասիրություններ, Գիրք 1, Երևան, 1979:
- Յուզակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հհ. Ա-Բ, Երևան, 1965-1970:**
- Ахманова О. С.**, Словарь лингвистических терминов, М., 1969:
- Булич С. К.**, Очерки истории языкоznания в России, т. 1, С. Петербург, 1904:
- “Дамский журнал”, №13, 1830:
- Джаукян Г. Б.**, Общее и армянское языкоznание, Ереван, 1978:
- Потиха З. А., Розенталь Д. Э.**, Лингвистические словари и работа с ним в школе, М., 1987:
- Тер-Григорян Л. А.**, Фразеологические единицы и их отражение в словарях современного армянского языка (автореферат канд. дисс.), Ереван, 1988:
- Тихинов А. Н.**, Словообразовательный словарь русского языка, тт. I—II, М., 1985:
- Халифман Э. А., Макеева Т. С., Раевская О. В.**, Словообразование в современном французском языке, М., 1983:
- Djahukian G.**, Armenian Lexicography. “Dictionnaires. An international Encyclopedia Lexicography”, New York-Berlin, 1991:

ԲՈՎԱԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն	3
Հայ բառարանագրությունը և հայերենի ոչ ծավալուն բառարանները	8
Արխստակես Համադանեցու վանկարառարանը.....	26
Հայերեն-լատիներեն ձեռագիր բառարանը.....	38
Հայերեն ձեռագիր բառակազմական բառարանը	52
Կղեռպատրա Սաֆարյանի «Բանալի զիտութեան» գիրքն իբրև բառարանագրական աշխատանք.....	67
Գրիգոր Խալդարյանը բառարանագիր.....	92
Եղիազար Առնջեցու մատենակից բառարանները	112
<i>Резюме.....</i>	125
<i>Summary.....</i>	128
<i>Բառացանկ.....</i>	131
<i>Գրականության ցանկ</i>	136

[1000 դր.]

ՎԱԶԳԵՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ԱԿՆԱՐԿՆԵՐ ՀԱՅ ԲԱՌ-ԱՐԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

(XVII դ. վերջ - XIX դ.)

Հատուկ 1

Իրատարակչության տնօրեն՝ Է. Ս. Սկրտչյան
Համակարգչ. ծնավորող՝ Գ. Ա. Յարուբյունյան

Տպագրությունը՝ օֆսեթ: Թուղթը՝ օֆսեթ: Չափսը՝ 60x84/16:
Ծավալը՝ 8.75 մամ.: Տպաքանակը՝ 500: Գինը՝ պայմանագրային



Տպագրված է «Զանգակ-97» իրատարակչության տպարանում.
ԴՐ, 0051, Երևան, Կոմիտասի պող. 49/2, հեռ. (+374 10) 23-25-28,
ֆաքս (+374 10) 23-25-95, էլ. փոստ՝ info@zangak.am, էլ. կայք՝ www.zangak.am

գԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220091801

A II
91801

ISBN 99941-1-272-4

ԵՐԵՎԱՆ 2006

